



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



7999



ԱՏԵՓԵՆՈՒՄ ՆԱԶՈՒԵՐԵ


ՎԱՐԴԵՊԵՏԱՐԱՆ ԿՐՈՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԱԳՈՒԹԵՐԸ

Մ Ա Պ Ա Ա Խ Ե Խ

Ար պատրիարքական մէջ աշխատ

- թ. Քրիստոնէական հաւատի ուստի մէջ
թ. Քրիստոնէական բարոյականութիւնը
դ. Առւրե պատմագրութիւն.



Եան նույն մելութե և տպ հօնա տպ էմֆ, ձևութան մա-
տու մու էտէ. Կան շնածեց տիկ ձևութան, և ու ու ձևու-
թա էլենթեցաւ նույն. Կառա լուս. ռ. VIII, 51 — 52.

Եթէ գուք հասաստան կը մընաք իմ բանի վե-
րաց, չըշմարիս աշակերք եք ինձ. և կը ճանաչէք
չըշմարտութիւնը, և չըշմարտութիւնը կ'ազանէ-
ճեզ: Յուհաննաւ 8, 31 — 52.

Մ Ա Ս Կ Վ Ա Տ Ի Մ Կ Զ

Լուսաւուն Քաղաքական պահանջման պահանջման

1855

41475-60

38 1447

Ltn

1475



Զգաեալ 'ի սմա ընդդէմ ինչ, հաւատոյ՝ կամ վարուց, հրամայեմք տպա-
դրել: 'Ի 19 Մայիսի 1853 ամի, և յԱզգականին ույթ: 'ի Քեշենել:

Առ Եղիշեական Առարկան:

ԱՍՏԻՉՈՅ ԱՄԵՐԻԿԱՆ ՓԱԼՔԻՆ

ԻՒՐ ԱՐԵՏԻ ՖՈՒՆԴԱԿԵՑՈՒՑԱՆԵԼՈՎ

ԿՈՆԻՀՈՒՄԸ

ՀԵՂԻՆԱԿԱՐ

ՅԵՐԱԳՈՒՅՆ

Մեր ծանօթներին և անծանօթներին, որ կարդացած էին
մեր՝ երկու տարի յառաջ տիպ տուած Հոգեբանական աշխատու-
թիւնը, յայտնի կը լինի որ նորա յառաջաբանի մէջ պատճառ-
ներով և օրինակներով ցցց տուեցինք՝ թէ Հայոց հին լեզուն
չէր կարող լուսաւորութեան ձանապարհ լինել այժմեան ազգի
համար, և խոստացանք շուտով նոր հայախօսութեան հանդէս
բանալ ազգի հետ, այսինքըն՝ մեր պատուելի հայրենակիցների
հետ մտածել և խօսել այն ոճով, ինչպէս նորա կարող էին
հասկանալ, և ինչպէս պահան ջումէին նոցա այժմուս հանգաման-
քը։ Ինչ որ խոստացանք, ահա կատարումենք գործով, և մեր
նոր հայախօսութիւնը ըսկըսանումենք մի սուրբ առարկայով՝ որ-
պէս Քրիստոնէական կրօնի վարդապետութիւնն է։ Կրօնը ամե-
նայն ազգերի մեջ դաստիարակիչ մայր լինելով, այլև հիմքն ամե-
նայն ազգային լուսաւորութեան, մեք ևս արժան տէսանք այն
փոքր ի շատէ լցու՝ որ մեր նուաստութեան միջնորդութենովը
կարող էր հասանել մեր լնկելներին՝ հիմնել և հաստատել կրօ-
նի ուսման վերայ։ Այս գործումը պարտավլէմար գըտանվելուց
յետոյ, Աստուծոյ ամենակարողի յաջողելովը կ'անցանենք դէպ
ի այլ բաների քըննութիւն և տեղեկութիւն՝ ինչպէս հարկա-
ւոր էր մեր լուսապայծառ օրելումը։

Այս աշխատութեան մէջ՝ որի առաջին հատորը այժմը ըն-
ծայումենք ազգին, կանոն և օրէնք գըրեցինք մեզ՝ որ այնպէս
խօսենք մեր հայազգի հասարակութեան հետ, ինչպէս ամենայն
հայ անձը կարող էր հասկանալ մեր գըրուածը, եթէ միայն գի-
տէր իւր մայրենի գործածական լեզուն և կարդար փոքր ի շա-
տէ մտածելով։ Մեր նորախօս լեզուն չէ ոչ մի քաղաքի մաս-
նաւոր կամ առանձին բարբառ, այլ՝ մօտաւորապէս՝ այն մաքուր
և յըստակ հայախօսութիւնը որ լըսվումէ ազգի մէջ հարիւրա-
ւոր և հազարաւոր լաւ խօսողների բերանից՝ ուր և գըտանվէին

նոքա: Խօսելով մի նորահայ լեզուի վերաց՝ որ կարող էր լինել այժմեան լուսաւորութեան յարմար ճանապարհ, ոչ մտածել ենք երբէք և ոչ մտածումենք՝ որպէս թէ այդ նորախօս լեզուն պէտք է լինէր այն գուեհկական ռամկախօսութիւնը՝ խանգարված ամենայն տեսակ այլազգի բառերով. ամենելին ոչ. այդ աղաւաղեալ և վայրենացեալ լեզուովը չէ կարելի ոչինչ գործ յառաջ տանել. այլ՝ ոչ մի առողջամիտ կը թեալ անձը՝ խօսելով իւր ընկերի հետ՝ արժան կը համարէր ծառայանալ տրդէտ խառնիմաղանջի լեզուին: Ամենայն ազնուամիտ հեղինակ կամենալով օգուտ բերել իւր ազգին և ձեռընտու լինել նորա լեզուի շինութեանը՝ պարտական էր տըզմի մէջ խըրած ընկերը գէպ ի իւր կողմը վերքարշել, և ոչ թէ ինքը ցած իջանել նոյն իսկ ապականութեան մէջ: Յաւելի էր խոսառվանել այս տեղ, թէ այս մեծակլը շիռ աղգային խընդիրը փոխանակ պարզվելու և պայծառանալու ազգի առաջել՝ ևս առաւել պըզտորվել է և խառնափերնորվել է մինչև այժմ: Ի վերաց այդր ամենայնի անյօս չենք՝ որ ճըշմարտութիւնը թէ յետոյ և շատ յետոյ յաղթող կը գըտանվի, մանաւանդ՝ երբ որ ազգը փոքր ի շատէ տեսութիւն ըստանալով կարող էր ինքնին դատել իւր օգուտը և վընասը:

Հեղինակը, ևս առաւել տակաւին ըբմըշակված լեզուի հեղինակը՝ մեր կարծիքով պարտական էր բանաստեղծի պէս հնարել և ծարտարապետել. այսինքըն՝ միտ դընելով ազգային լեզուի յատկութեանը՝ նոյն իսկ լեզուի խորքիցը հանել շինել կազմել և յարմարել ինչ որ հարկաւորն էր միտք և ըզգացողութիւն բացայստելու համար՝ մեր բազմաձիւղ և բազմօրինակ լուսաւորեալ ժամանակներումը: Բոլոր Եւրոպացոց լեզուքը այդպէս են հասել այն զարմանալի կատարելագործութեանը՝ որին հասել են: Եւ ինչքան առաւել կիրթ, մաքուր և առողջ էր հեղինակի ախորժակը, ինչքան աւելի քանիքաւոր էր նա, այնքան ևս նորա հոգու ըստեղծուածքը պատուական կը լինէին, և ապագայի համար կանոն և օրէնք կը դառնային: Մատենագրութենով կը մըշակվի լեզուն, կը ճոխանայ և կը հաստատվի նա: լեզուի յառաջադիմութենովը յառաջադէմ կը լինի և ազգային լուսաւորութիւնը. բայց ազգային հարազատ լուսաւորութիւն՝ առանց բուն ազգային մատենագրութեան՝ սուստ բան է, անարմատ ծառ է: Այս խօսքերը պիտոյ է լաւ հասկանալ, և հասկացածը առողջամիտ կերպով գործ դընել:

Եւրոպացի բանագէտ և խմաստուն մարդերի բերանից ուսա-

նումենք, թէ մի ազգի համար իւր լեզուն, իւր կրօնը և իւր քաղաքականութիւնը այն մեծախորհուրդ և խորախորհուրդ անօթներն (ամանները) են, որ ընդունելով իւրեանց մէջ աստուածեղէնը և մարդկեղէնը՝ պիտոյ է ածեցուցանէին, ծաղկազարդէին և պլոտղաբեր շինէին։ Հայերը՝ ինչպէս նոցա ներկայ գրութիւնն է՝ ունին միայն երկու հոգեղէն անօթ՝ լեզուն և կը ուն. քաղաքական անօթը՝ արդարես մի անչափելի մեծակըշու անօթ՝ իւր և օտարի մեղքովը ոչընչացել է և ըստ կայ այժմուս։ Ուրեմն Հայերի իմացական և բարցական գործակատարութեան հանդէսը մընացել է լեզուն և կրօնը, թէպէտ և սոքա՝ անտուն և անհայրենիք, որբ և պանդուխտ, առանց կարող ձեռքի հովանաւորութեան։ Մի շատ թեթև հայեցուած ազգի վիճակի վերայ՝ իսկոյն յայտնապէս ուսուցանումէ մեղ՝ թէ ինչպէս էր բարցական պարտականութիւնը հասկացող և մեծատուն Հայերի, և թէ ինչպէս պիտոյ է ներգործէին մասնաւորները՝ որովհետեւ չը կար ընդհանուրը։ Մեր կարծիքով՝ ինչպէս մեծատունքը աւելի երեսելի և պատուելի էին ազգի մէջ, թէպէտ ազգը հաւասարապէս պատկանումէ և մեծատունին և աղքատին, այնքան ևս առաւել հարկ կար մեծատուների վերայ սիրել և յարգել ազգի լեզուն և ջանագիր լինել որ այդ լեզուն պատշաճաւոր ճանապարհներով յառաջ գընար և արմատ արձակէր Հայլական ընկերութեան մէջ։ Այսպիսի արդար հայրենասիրական գործի մէջ հարկաւոր չէր փառասիրութիւն. օգնութը, ազգի ճըշմարիտ օգուտը պիտոյ է լինի ամենայն խելօք և արժանի Հայի առաջին և վերջին նպատակը։

Պատշաճաւոր ազգային մատենագրութեան մի պաշտօնը կը լինէր նոյնալիս աշխատել Կրօնական լուսաւորութեան վերայ։ Հայոց իմանալի (ոչ քարից ու փայտից շինած, պատկերազարդ) եկեղեցին կը պայծառանար՝ ճըշմարիտ քրիստոնէական հոգին արմատացընելով ազգի մէջ. որ անկարելի էր առանց կրօնական դաստիարակութեան, և այդ գաստիարակութիւնը՝ անհնարին՝ առանց պատկանաւոր մատենագրութեան, որ կարող էր կամուրջ բանալ քրիստոնէական ուսման և վարքի մէջ, և այսպէս հաղորդակցել երկուսը մօտ և ամուռ եղացրակցութենով։ Ինքը Քրիստոնէութիւնը լինա է, ճըշմարտութիւն է, ամեննեին կատարեալ է. բայց եթէ նորա երկնաւոր սերմերը պիտոյ է կենդանանային քրիստոնէի սըրտի մէջ, աձէին և պլոտղաբեր լինէին, ապա անպատճառ հարկաւոր էր ժողովը թիւն քրիստոնէական դաստիարակութիւն։ Աւետարանի հաստարմատ հիման վերայ։ Արդարե՝ հեշտ և ամենա-

հեշտ էր քրիստոնէի անուն կըրել իւր վերայ, արտաքին արարողութեններով ընկերանալ քրիստոսաշէն եկեղեցուն, բայց այդպիսի քրիստոնէութիւնը ոչ մի այլ բան չէր, եթէ ոչ մեքենապաշտոթիւն և անձնախաբէութիւն։

Հայոց խըզճալի աղգը երկար ժամանակ անուսումն մընալով, շատ փոքր կամ՝ ամենեւին ոչինչ ծանօթութիւն ըսւնենալով եւրոպական բազմօրինակ լուսաւորութեան մասին, այլև բոլոր աղգի ուսումնականութիւնը իմակած մընալով արեղայրական խըցերի մէջ և քանի մի միակողմանի գիտնականների ձեռքում, կարծիք է յառաջացել աղգի մէջ՝ որպէս թէ Քերականութիւն և Ճարտասանութիւն մի այնպիսի գերազանց ուսումն է, որանով պիտոյ էր չափել և կըշոել ամենայն գիտութիւն, մինչև որ Հայոց հասարակ մարդը ևս՝ քերականութեան և ճարտասանութեան անունը տալով կամ լըսելով, մտածումէ թէ՝ ինչ իմաստութիւն կայ և չը կայ աշխարհիս վերայ՝ նոցա մէջ է պարունակված։ Այս բաները խօսելով՝ կամք չունէինք երբէք խոցել կամ վիրաւորել Հայոց քերականութեան և ճարտասանութեան պատուելի դաստուքը. այլ հաւատարիմ մընալով առաքելական բանին՝ թէ՝ „Խօսեցարուք ըզճըշնարութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. զի եմք միմեանց անդամք Նվիես. 4, 25. կատարումենք մեր պարտականութիւնը որպէս հասկացող քրիստոնեայ, և խընդրումենք որ այդ պարոնները իւրեանց ջերմուանդ գործակատարութեան մէջ՝ այսքան միայն մտածեն՝ որ մի գուցէ կամենալով անկորուստ և անարտա պահպանել Հայոց հնախօս լեզուն, զըրկվէինք բոլորովին և նորիցը. որ անբուժելի մի խոց կը լինէր մեր սըրտի վերայ. Այսպէս Հայոց անբազգ զաւակների բոլոր հայկական ուսումը եղել են հին քերականութեան չոր ու ցամաք կանոնները և հին ճարտասանութեան ձեւերը. արդարեւ մի այնպիսի կերակուր, որ ծանրաբեռնել է ուսանողի բատակնորսը՝ առանց սընուցանելու նորան, առանց կենդանական հիւթ և արիւն դառնալու և միանալու նորա հոգու և սըրտի հետ։ Այս բանիս վկայ է ամենօրեայ փորձը, և հաստատութիւն կը տայ ամենայն առողջամիտ անձը որ տեղեակ էր հայսպգի մահուեիների ողբայի վիճակին։

Թա՞ղ մեր հայ զաւակների տան ջանքը և տաղտապանքը հին քերականութեան և ճարտասանութեան վերայ, որոնց ասպարէզը օրէ օր աւելի նեղանումէ՝ ըստ որում մեր ժամանակների հարկաւորութիւնքը ամենեւին այլ են. նոյն խակ հին մատենագրութիւնը չէ կարող հոգեղին սընունդ տալ մեր ժամանակի Հային, ըստ



որում չունի իւր մէջ այն սընընդարար նիւթը և կիւթը լուց ցուցանէր նորա իմացական պիտոյը և կարօտութիւնը Շենք սում, թէ Խորենացի պատուական ծերունու գըրուածքը, Վգաթանգեղսի, Եղիշէի և միւս հնախօս հեղինակների վաստակը և անպիտան էին. քաւ լիցի այդպիսի յանդրգնութիւն և ազգուրացութիւն մեր կողմիցը. մեք ուսումն առած և կըրթված եւրապական դըպուցումը՝ քաջ գիտենք թէ ուսումնական չայի համար ինչ գին և արժէք ունին հին լեզուի յիշատակարանքը: Շենք և չենք մոռանում նոյնպէս մեր սուրբ Թարգմանչաց հրաշալի հայկաբանութենով մեզ պարզեած աստուածաշունչ գիրքը որ մեր քրիստոնէութեան աղբիւրն է, թէպէտ՝ ցաւ է ասել՝ աղբիւր ծածկեալ և Թագուցեալ՝ բատ որում անհասկանալի է ժողովը դին: Բայց եւրոպական գիտութիւնք և արհեստք՝ որոնց միջնորդութենովը կարողանացին մեր տըզայքը ծանօթանալ աշխարհի, բնութեան և մարդկութեան որպիսութեններին, ուրեմն նորանոր գաղափարներ ըստանալ, սընանիլ և ծոխանալ այնպիսի տեղեկութեններով որ հոգեպէս և մարմարպէս պահպանիչ էին ազգի զաւակներին. այդպիսի կենդանական և կենդանացուցիչ նիւթեր չը կան հին մատենագրութեան մէջ: Հայոց իմացական պիտոյը մինչեւ այժը մը անհոգ մընալով՝ թէ ինչ հետեանքներ այդ տեղից ծըսած են և կը ծնանին այսուհետեւ, այդ բանը կամ չը գիտեն մեր յարգելի Հայոք, կամ թէ գիտեն, բայց զանցառու են. թէպէտ ապա գանգատառոր են թէ Հայութիւն չը կայ մեր զաւակների մէջ, որպէս թէ կարելի էր հընձել և ժողովել առանց վարելու ցանելու և սերմանելու: Եթէ Հայոց զաւակը տեսանելով՝ թէ իւր մայրենի լեզուն անհիւթ և անծուծէ, բնական ուղիղ դատողութենով բաց է թողում մեռեալը և ձեռք է ձըդում այն կենդանի և զօրութիւն տուող նիւթը որ գտանումէ օտար լեզուի մէջ. Եթէ Հայազգի զաւակը ըստենալով իւր Հայրենի պըտզատու ծառը, պարզումէ ձեռքը գէպ ի օտարասունկ ծառը և նորա համեղ պըտզերովը յագեցուցանումէ իւր ըստամբարը, և այդպէս օտարի կերակրովը սընունդ առած ըսկանումէ և ինքը օտարանալ և այլազգանալ. այդ բանի մէջ ով է մեղաւոր և դատապարտելի. Հայոց մանժելը և սբատանին, թէ նորա անհոգ և անփոյթ հոգաբարձուքը. ինչպէս կարելի է քաղել այն տեղ վարդ ու մանուշակ ինչ տեղ ցանած են փուշ և տատասի: Հայոց զաւակը մեղաւոր չէ՝ եթէ չէ կարող Հայ լինել հոգով և սըրտով. նորա Հայութիւնը շինել են իւր համար մի,

անսպարծանք բան, փուտ փայտ, չոր ու ցամաք ծառ : Բնութիւնը և ժամանակը՝ երկաթի գաւազան ձեռքին՝ սրահանջումն իւր արդարացի հարկը՝ ուրեմն քաղցած ու ծարաւ հայ մանուկը օտարի սլատրաստութեամբը լըցուցանելով իւր պիտոյըը, արհամարհումն ապա իւր ծընող հայր ու մայրը որ նորան շինել են ուրիշի հացի մուրացիան : Հայութիւն քարոզելով, հայութիւն հրամայելով, հայութիւն սրահանջելով, ոչինչ բան չի յառաջանայ . այս տեղ հարկաւոր է գործ, գործ մեծ և հոգաբարձութիւն միաբան : Մինչև Հայոց Հայրենասէլքը պատուաւոր և քաջալերական ասպարէզ չը բանան Հայոց զաւակի առաջեւը, մինչև հաստատուն պատճառներ չը կային մէջ տեղումը՝ թէ այն Հայոց լեզուն որ կ'ուսանէր Հայոցգի մանուկը՝ լուսաւորութեան ճանապարհ էր, հաց ու ջուր կը տար, փառքի և պատուի կը հասուցանէր . մինչև բանի ընթացքը այսպէս չը լինի . զ՞ուր և անօգնու էին ամենայն խօսք և խօսուածք :

Եւ ազգի օգուտը յառաջ տանելու համար՝ ոչ ովլ ծառայ չէ, ոչ ովլ պարոն չէ . այլ ամենեքեան պարտական են մըշակ լինել, արդար և ջերմեռանդ մըշակ, մեծատունը՝ իւր առատ արծաթովը, և գիտնաւորը՝ իւր աշխատասէր գըրչովը . այս հաւասար կըշիուը շինելով և անխախտ պահելով ազգի մէջ՝ յուսալի էր յառաջադիմութիւն և պըտղաբերութիւն, ապա թէ ոչ . Հայոց ազգի այգին կը մընայ այնպէս ամսի և անապատ, ինչպէս մընացել է մինչև այժըմ . բայց և այդպէս ևս չի մընայ . ըստ որում Կոռնոս շատակեր ծերունին սովոր է կուլ տալ և ոչընչացուցանել ժամանակի անվիտան որդիքը : Ասացինք . ով որ ականջ ունի լըսելու, թողլ լըսէ :

Անկեղծ և անխարդախ սըրտով սիրելով մեր ազգը, ահա փոքր ի շատէ մեր մտածող Հայրենասկիցներին յայտնեցինք մեր ազգի ցաւերը և ցոյց տուեցինք նոցա բըժքշկութեան հընարները՝ ինչքան որ կարելի էր այդ մեր դրութեան մէջ : Այսուհետեւ թողլ ազգի յարգելի մեծատունքը և կարողը քըննեն մեր ասածները, և՝ յոյս և հաւատ դէպ ի Աստուած՝ ըսկըսանեն իւրեանց Հայրենասիրական գործը : »Զհուր և ըզջուր եղ առաջի, զի յոր կամեսցի՝ միսեսցէ ըզձեռըս իւր, զի առաջի մարդոյ է մահ և կեանք : « Սիրաք. 15, 17.

ՀԱՍՏՐԵԿԱԲԱՐ

ԽՕՍՈՒԹԱՔ ԿԵՐՈՆԻ ՈՒՍՄԱՆ ՎԵՐԱՅ

1.

Կողման Տըստիչէլ Էտիլ.

Մարդըս որ կամենումէ Ապտուծոյ և աշխարհի վերայ մը-
տածել, ըսկըսանումէ այն առարկայից որ աւելի մօտ է իւրեան,
որ իւր համար աւելի ըզգալի՛ է, այսինքըն՝ իւր անձնիցը։ Ակա-
մայ հարցընումէ. ինչ է և որպէս է մարդըս. ինչ բանի համար
սահմանված է նա։

2.

Մորդը.

Մարդըս պատկանումէ աշխարհին, այսինքըն՝ մի մասն է այն
բոլոր ստեղծուածների որ կան և ըզգացարաններով իմացվիլ կա-
րող են. բայց նա պատկանումէ այս աշխարհիս իւր տեսանելի
մասնովը միայն, և մարմնից և հոգուց բաղկացած է նա։

3.

Թա՛ Շնչ է և հըպի՛ է Տարդիլ.

Մարդը իւր իսկ մարմնովը գերազանց է աշխարհի միւս բը-
նակիչներիցը. նորա ուղիղ կայթը, նորա խօսելու կարողութիւնը,
նորա անդամների աջողակութիւնը և նորա գեղեցիկ կերպարան-
քը շինուամեն նորան իշխան արարածների վերայ։ Բայց անասուն-
ներից ևս առաւել նախապատիւ է մարդը իւր բոնահան հանդուն որ
ինչպէս մի անմարմին և անտեսանելի իր՝ իւր իսկութիւնը նորա-

նով է յայտնում, ինչ որ ներգործումն, և մարդուս մարմնի մէջ այնքան երկար կենումն, ինչքան սա կենդանի է. բայց մահով մարմնիցը բաժանվելով՝ տեսումն նոյնակէս և անմահ է:

Յովեայ 10, 8. 11. 12. Զեռք քո արարին զիս և ըստեղծին: Մորթ և միու ըզգեցուցեր ինձ. ոտկերօք և ջրօք հանար զիս: Զկեանը և զոլորմութիւն եղեր ի վերայ իմ. ոցելութիւն քո պահեաց զիս:

Ապօնու Դաւթի 138, 14. Խսոսովան եղէց քեզ Տէ՛ր, զի ահեղ և ըստանչ ես. ըստանչել են դործք քո, և անձըն իմ զիտաց յոյժ:

4.

Միտք և բանականութիւններ:

Հոգին ունի զանազան կարողաւունեւուն կամ զայռունեւուն. նա կարող է մրտածելով՝ ըզգալի և անըզգալի բաներ ճանաչել, և դատել թէ ինչ բան ճշմարիտ է կամ սուտ, բարի կամ չար, օգտակար կամ վնասակար, այսինքն՝ բաներ միմեանց հետ համեմատել և միմեանցից ջոկել. նա կարող է չափութ համցականը և անհամոն, յանհանութ և հափշել: նա ունի միտք և բանականութիւններ:

Սերաբյա 17, 5—10. Զխորհուրդ և ըզլեզու և զաջոս և զանկը և ըզմիրտ ետ նոյա խորհեց. կասարեալ ըզգայարանօք և բանաւորութեամբ զարդարեաց ըզնոս: Զքարի և ըզլար ճանոց նոյա: Եկ զաջոս իւր ի վերայ որբատից նոյա՝ ցուցանել նոյա ըզմեծամեծը գործոց իւրոց: Յաւել ի նոյա ըզշանձար արուեստից և ուխտ յաւիսնից կացոց ընդ նոյա, և զարդարութիւն և ըզգատաստան եցոց նոյա:

Ժառագլթ Պաւլոսի առ. Եփեսայիս 5, 10. 15. 16. Փորձեցէք զինչ է հաճոյ աեաւն: Տեսլիք որպէս ճշմարտիւ գընոցցէք, մի՛ իւրեւ անխմատք, այլ իւրեւ իւսաստանք: Գընեցէք ըզգամանակըս, զի աւուրդըս չարութեան են: Ապակա 3, 15. 15. Երանեալ է այր որ եգիտ զիմաստութիւն, և մահանացու որ ետես ըզշանձար: Պատուականադրյն է քան զականը պատուականը, և ամենայն ինչ որ պատուական է, չարժէ ըզնա:

Մատթ. 5, 48. Արդ՝ եղերսուք գուք կատարեալք, որպէս և հայրըն ձեր կատարեալ է:

5.

Անձնիշնան կամք: Խըզմնը պատեհ:

Բաց ի բանականութենից մարդուս հոգին ունի և ուրիշ զօրութիւնք. մարդը կարող է նորա պատուելոներին հետեւել, ընտրել բարին կամ չարը, ունի անշնչառն իսմա: նա կարող է նմանապէս իւր սըրտի մէջ իմանալ, արդեօք իւր գործերը համաձայն

էին օրէնքին, թէ ոչ. ունի լըզմէցոնն, որ խոստովանելով բարին կամ չարը որ մարդըս կամ գործել է, կամ թէ գործելու կամք ունի, ասլումէ հայութ կամ պէտք խըզմըտանք. այս բարին ու չարը իւր սրբափ մէջ իմանալու և պահելու համար՝ տուած է մի առանձին հընար, որ է մարդուն պատկանեալ յիշողական, յուշաբերական և երևակացական զօրութիւնը:

Սլաք. 15, 14. 17. Զ մարդըն խկըզեանէ յանձնիշան կամլա եառելծ Ալտուած: Զ հուր և ըզդուր եղ առաջի, զի յոր կամեցի մըմեցէ ըզճեւլս իւր, զի առաջի մարդոյ է մահ և կեանք:

Գործք Ալտաքելոց 23, 1. Եւ հայեցեալ Պաւլոսի յասեանն առէ. արք եղ բարք՝ ես ամենայն ուղիղ մըտօք գընացեալ եմ առաջի Ալտուածոյ մինչեւ ցայսոր:

Թմ. Պաւլոսի առ Հռոմայեցիտ 2, 14. Ա յորժամ հեթանոք որ զօրէնս սըն ու ունին, բընութեամբ զօրինացըն գործիցնեն. նոքա որ զօրէնսըն ու ունին, անձանց իւրեանց խկ են օրէնք:

Գործք Ալտաք. 24, 25. Եւ ի խօսելն Պաւլոսի վասն արդարութեան և ժուժիալութեան և հանդերձեալ դատաստաննեն, զահի հարեալ Փելքս, ես պատասխանի, դու առ այժմ երթ, և յորժամ ժամ լինիցի, կոշեցից ըզքեզ:

6.

Թմ. Է՞ն է նորուառ վարժանը:

Մարդուս բընութեան տրնօրէնութիւնը, այն կարգը, որի մէջ մարդըս դըրած է աշխարհի վերայ, ցուցանումն նորա կեանքի նրապատակը: Մարդըս այնպէս է բատեղծուած, որ իւր բոլոր զօրութիւնքը գործ դընելով և աճեցուցանելով, արտապին բարութիւնները ունենալով և վայելելով՝ կարող է երջանի լինել այս կեանքումը, և բարեպաշտութենով և արդարութենով՝ յառեդինան իւնուառնեն դըտանել: Եւ այս երանութեանըս, այս բարեպաշտին իստարէլունեն հասանելը՝ մարդուս վերջին նրապատակն է. այն է, ինչ բանի համար առհմանված է նա:

Ալտաք. 15, 24. Ճանապարհ կինաց՝ խորհուրդ խմասնոց, զի խորշեալն ի դըժուոց փըրկեցի:

Մասթ. 5, 48. Արդ եղերուք դուք կատարեալք որպէս և հայրըն ձեր երկ նուռոր կատարեալ է:

Մասթ. 6, 20. 21. 33. Ա յանձնեցէք ձեզ գանձըս յերկինըս, աւր ոչ ցեց և ոչ ուտիչ աղականնեն, և ոչ գոլք ական հատանեն և գողանան. զի ուր գանձք ձեր են, անդ և սիրաք ձեր լիցին: Խընդեցէք նախ զարքայութիւն Ալտուածոյ և զարդարութիւն նորա. և այդ ամենայն յաւելցի ձեզ:

7.

Թէ ի՞նչ բանեմ նական էն լրաւ այս նըլտառնին հասանէլու .

Վարդըս այդքան գեղեցիկ պարզեներով զարդարած, կարող էր նոյնպէս հեշտութեամբ հասանել իւր մեծ նըլտառնին, եթէ նորա ջանադրութեանը ըլ լինէին հակառակ զօրաւոր թըշնամիներ, ինչպէս՝ նորա դըրդմունքը, յօժարութիւնքը և ցանկութիւնքը, նորա մարմնապաշտութիւնը և կիրքը այս պատճառով հոգին հետևելով իւր նըլտառնին՝ անդադար պատերազմ ունի ըզգայական մարմնի հետ, որ շատ անդամ մեզ բարի է ցուցանում այն բանը որ հածոյական էր մեզ՝ առանց հարցաքրննելու՝ արդար էր այդ, թէ ոչ:

Սիրաքայ 10, 22. 23. Ո՛չ է սակեզեալ ամբարտաւանութիւնն ընդ մարդկան և ոչ ցասումն ցեղի կանանց. ոերմն մարդկան պատուեցի, այն որ երկընչը յԱլսուծոյ, խոկ ոերմն այն անպատուեցի որ էանց ըզգատուիրանու. Տեսան:

8.

Վարդը թէպէտ կարող է իւր ախտաւոր յօժարութեններին ընդդիմանալ, եթէ կամենսայ վերսիշեալ (յօդ. 4. 5.) զօրութեններիցը օգուտ քաղել, և իւր բանականութենովը օրըստօրէ լաւ ձանաչել՝ թէ ո՞րն էր արդար և բարի. բայց ոչ ամենեքեան կամք ունին հոգին մարմնի վերսյ, բանականութիւնը ըզգայականութեան վերսյ իշխան կացուցանել: «Ամանապէս՝ առանց բացառութեան՝ մոլորական են ամենեքեան, ունին բարյական տրկարութիւն, այլև իւրեանց ծընողներից ժառանգած մի ձրգտողընթիւն որ ըստիպումէ գործել այն բանը որ արժան չէր՝ Ըստ Բանին Տէղ»:

Թռ. Պաւլ. առ. Դապատ. 5, 24. Խոկ որ քրիստոնեանքն են, ըզմարմինը իւր եանց ի խաչ հանին կարեգըն և ցանկութեամբ հանդերձ:

Թռ. Պաւլ. առ. Հուոմ. 7, 14. 15. Գիտեմ զի օրէնքըն հոգւոր են, այլ ես մարմնաւոր եմ ընդ մեզօք վաճառեալ. զի զոր գործեմն՝ ոչ գիտեմ. ոչ եթէ զոր կամիմն, զայն գործեմ, այլ զոր ատեամըն՝ զայն գործեմ:

9.

Թէ աղջիւ հոգիքը լինշոհն հարօռ էն լուսաւորութեան, զօդութեան և Տիրի արդարութեան:

Այս պատճառով, այս և իւր աըկարութիւնը ըզգալով՝ մարդըս իւր աչքը և սիրտը կարօտով լրցուած ուղեց ցուցանումէ դէպ

ի մի այնպիսի առարկայ որ ունի իւր մէջ գերագոյն իմաստութիւն և անտարակուսելի զօրութիւն։ Այն էակը, որ մարդուս լեզուն անուանումէ Աստված, որոնումէ և գուշակումէ հոգին. որ նա՝ առաջնորդ ունենալով մի աւելի պայծառ լոյս քան թէ մարդկեղէն հանձարը տալիս է, սրբավելով աւելի վերին զօրութենով, քան թէ մարդկացին կամքը ինքն ըստ ինքեան ունի, ամրանալով մի աւելի հաստատուն յուսոյ վերայ քան թէ մարդկացին գիտութիւնը սովոր է տալ, կարողանայ հետևել իւր բարձը նպատակին, հասանել աւելի գեղեցիկ երանութեան քան թէ աշխարհացինն է, և գըտանել այնպիսի խաղաղութիւն, որ աշխարհը չէ կարող տալ։

Գործ Աւտոք. 17, 27. Ծանրեւս զբնեցեն լգնա և գըտանեցեն. նա՝ և ոչ հեռի իոկ է յիւրաքանչիւր սամեցէ և մէնջ։

10.

Աստվածածուն.

Այս անյաղթելի կարօտութիւնը հասանելու իւր առաջի դլրած նըպատակին, որ է կատարելագործութիւնը և նորանից յառաջած երանութիւնը, ակամայ կամօք ըստիպումէ մարդը՝ որ հարցանէ ինքը իւրեանից. որպէս և ուր կարող եմ գըտանել այն Աստուածը, որ իմ սիրտը խընդրումէ. ինչ տեղից կարող եմ ուսանել նորան հանցանալ, նորան այնպէս նըմանել, ինչպէս իմ հոգիս այդ մասին ակլնմկալութիւն ունի։ Եւ երկու աղբիւր են որ բացվումեն նորա առաջեւը՝ բնուանեւու և Առուբ հէրք։

11.

Աստված ճանաչելու բնուանենից։

Մարդուս ըզգայարանքը նորա մըտառութիւնը շըրջումեն դէպ ի արտաքին աշխարհը, և նորա բանական հոգին մըտածումէ այն բանի վերայ, ինչ որ նորա նըկատումեն։ Զգայութիւնները տեսանումեն բնութեան մէջ Աստուած. պատճառ որ այն բաները որ կան, պիտոյ է որ դոյացած լինին մի էակից՝ որ նոցանից յառաջ էր. բայց մի վերջին պատճառ բնութեան մէջ եղած առարկաների համար՝ հարկադըրվումէ ընդունել բանական միոքը. և այս վերջին պատճառը Աստուած է. ոչինչ ուրիշ էակ չէր կարող այսպիսի մէծամեծ, այսպիսի զուգապատշաճ, այսպիսի օգտակար գործեր յառաջացընել, և միանգամ ստեղծուածը այսպիսի

կարգում պահպանել, որպէս նոյն իսկ էակը, որ իւր էութեան ապացոյցները բոլոր բընութեան մէջ ըքանչելի և բացայսյա կերպով հանդիսացուցանում; :

12.

Բնակչութեան օբյեկտ:

Ուրեմն՝ այսպէս նոյելով՝ կարող է մարդըս քըննելով բընութիւնը, ոչ թէ միայն ըստուգել Ապտուծոյ էութիւնը, այլև գըտանել և դասակարգել այն յատկութիւնքը որ՝ երեելի բաներիցը դատելով՝ պէտք է ունենայ բոլոր էակների նախազատմառը: Մարդիկ առանց աջքով տեսանելու, ձանաչումեն նորան իւր դործերիցը, նոյնպէս՝ բարյական օրէնքով և խրզմըտանքով որ դըրած են նոցա սըրտի մէջ: Ահա այսպէս ձանաչելով Արարիչը, զանազան կերպով սահմանած են նորա համար պաշտօն և երկըրպագութիւն (Ալոն. Բնակչութեան կրօն):

Պազմ. Դաւթի 18, 2. Երկինք պատմեն ըգիտութ Ապտուծոյ, և զարարած ըստուաց նորա պատմէ հասաստութիւն:

Գործք Աւաք. 17, 27. 28. Զի թէրեւս զնննիցեն ըզնա և գըտանիցեն. նաև ոչ հետի իսկ է յեւրաքանչիւր սոմեքէ ի մէնջ: Զի նովաւ կետալք և շարժիմք և եմք, որպէս ոմանք ի ձերաց Խարսարաց ասացին՝ թէ նորա և ազգ իսկ եմք:

13.

Ապաւած ճանաշէլը յայտնէալ հրօնուց:

Իսաց միշտ փոքրաթիւ են եղած և են այն մարդիկը, որ՝ ինչպէս Սոկրատէս, Պղատոն, Սողոն՝ իւրեանց բընական լուսովը կարողանացին ըստանալ բոլորովին ուղիղ ծանօթութիւն Ապտուծոյ մասին: Անհամար սընալանք և կէս մի Ապտուծոյ էութեանը շատ անարժան կարծիքներ խառնած էին շատերի մըտածութենների հետ, և սորանով մեղք և մնապաշտութիւն անչափ տիրապետել էին: (Ճէնառառնէն՝ յունական բառիցը Էֆուս, Էֆուս.) Եթէ սորա վերայ աւելացընք այն միւս ծանօթութիւնքը մարդուս վիճակի մասին՝ այս կեանքից յետոյ, որ բանի վերայ առաւել իմաստունքը ևս կարող էին միայն ունենալ մի աղօտ և մըռայլ յօյս, բայց ոչինչ ըստուգութիւն. ապա ուրեմն իւր բանաւոր արարածների ժամանակաւոր և յաւիտենական երջանկութեան վերայ իսընամք ունեցող Ապտուծուն վայել էր, որ նա իմաստուն տնօրէնութեններով, լուսաւորեալ և արարչական կամքը իմացող

սուրբ մարդերի բերանով և նոցա կրօնապաշտական գրուածներով ուսուցանէ մեղ իւր գոյութիւնը, այլէ՝ թէ ինչպէս պարտէր արժանաւոր պաշտօն մատուցանել նորա հոգեոր էռթեանը, և թէ մարդուս հոգին ինչ յոցեր և ակրնկալութիւններ պիտոյ է ունենար, և թէ ինչպէս էր այն հանդերձեալ կեանքը, որին ըսպասումէ նա մահոց յետոյ: (Յայտնաւէն առողջապահույն: Յայտնէալ էնան, Ասուածուածուան:)

Թա. Պաւլ առ. Եփենոսիս 3, 5. Զի այլոց ազգաց ոչ ցացաւ որուոց մարդկան, որպէս և այժմ յայնեցաւ ոլլբոց իւրոց առաքելոց և մարդու ըեից հոգւավոլն:

Թա. Պաւլ առ. Եփենոսիս 4, 1. Բազում մատումք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Ապառած ընդ հարուն մեր մարդարէիւք. ի վախճան առուրցը սցանցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովիլ:

Թա. Պետրոսի թ. 1, 21. Քանզի ոչ եթէ լսու կամաց մարդկան տուաւ մարդարէութիւն երեէք, այլ և հոգւոյն ոլլբոց կըրեալք՝ խօսեցան մարդիկ յԱպառածոյ:

14.

Յայտնէալ էնան յիշառականութեան չը:

Այն սուրբ յիշառակարանքը՝ որ բովանդակումէն իւրեանց մէջ այս աստուածային յայտնութիւնքը՝ ասվումն Ապառածաշոնչ կամ Սուրբ Գիրք: Սոցա մէջ պարունակվումէ Ապառածոյ բանը, սցինքըն՝ նորա իսկական վարդապետութիւնքը իւր էռթեան վերսց և այն աստուածեղէն օրէնքների մասին, որ պահպանելով կարող է մարդը բարեկալաշտօն լինել, խաղաղութիւն և երանութիւն դրսանել: «որք քարոզումն մեղ, թէ ինչ պահտէր մեզ առնել և թողով որ հաճյանանք Ապառածուն և ժառանգելով նորա որդ իտթիւնը: Բոլոր աստուածաշոնչ գիրքը բաղկանումէ երկրու մասնից: Հին և Կոր կտակարանից: Աքաջնը գըրվեցաւ Հրէից համար և ունի իւր մէջ այն պայմանները, որանցով մի ժամանակ Ապառած Մովսեսի ձեռովով ուխտ գըրեց Հրէից հետ. իսկ միւսը պարունակումէ իւր մէջ Քրիստոնէից սուրբ Գըրքերը, որոնց մէջ նշանակած է այն ուխտը որ Ապառած իւր որդոյ Յիսուսի Քրիստոսի ձեռովով ուխտեց մարդկային ազգի հետ:

Աստուծոյ բանը և Ապառածոյ կամքը յայտնը վումն այս գըրուածների մէջ. այս պատճառով պիտոյ է ասվին Ապառածուածուն: Այլէ Ապառածոյ հոգին կար այն մարդերի մէջ, որոնց ձեռով գըրած են նորա, և աստուածային ազգեցութիւնք են գործում հա-

ւատաւոր ընթերցողների հոգու և սըրտի մէջ. այս է նոցա ծըշ-
մարտութեան ևս առաւել անտարակոյս ապացոյցը: Կոցա գըլըով-
ները իւրեանց արած հրաշքներովը և մարդարէութեններովը երե-
ւեցան Ապտուծուց լուսաւորեալ մարդեր:

15.

Հին կոսակարանը՝ բաց ի քանի մի քաղդէարէն գըրած հասո-
ուածներից՝ (զոր օրինակ Դանիէլի մարդարէութեան և Եղ-
րի գըլքի մէջ) գըրած է երլայական լեզուով և բաժանվում-
երեք կարգ: Ա. Օրէնք, կամ Մովսեսի հինգ գիրը, այսինքը՝
ծընընդոց, Ելից, Ղետական, Թուուց և Երկրորդումն օրինաց:
Բ. Կախնեաց քաջագործութենների պատմութիւնքը, որպէս՝
գիրը Յեսու Կատառաց, Երկու գիրը Սամուէլի և Եր-
կու գիրը Թագաւորութեանց. այլ Մարդարէութիւնք Եսայեաց,
Երեմիայ և Եզեկիէլի, և գիրը 12 փարըր մարդարէից՝ որ սոքա-
են. Ովսէէ, Ամովս, Միքիէ, Յովէլ, Արգիու, Յովսան, Կատում,
Ամբակում, Սովոնիա, Անդէոս, Զաքարիա, Մաղարիա: Գ. Այլ
գըրուածք կամ՝ ինչպէս ասվումն՝ սուրբ գըրուածք, այսինքը՝
Սաղմոս Դաւթի, Առակը Սաղոմնի, գիրը Յովեայ, Երգ Երգոց,
գիրք Հոռութայ, Ովքը Երեմիայ, գիրք Եսթերայ, Յուդիթայ, Դա-
նիէլի, Եղոսյ, Կեկմիայ և գիրք Մնացորդաց:

Ճանաչեն Հեն կոսակարանի գըրքերը Ազեքունդը իւսու-
թեան, կամ՝ ինչպէս սովոր են ասել՝ Եօթանանից Ճարդմանութեան մէջ
այնպէս են կարգադրած, որ Դասաւորաց գըրքից յետոյ գալիս է Հասութի-
ութեալը. Սամուէլի 2 գիրը և Թագաւորաց 2 գիրքը ասվումնն 4 գիրք Թա-
գաւորաց. սոյա հետեւումնն Խոկոյն՝ ննչպէս պատմական գըրուածք՝ 2 գիրք
Մնացորդաց, 2 գիրք Եղոսյ, գիրք Կեկմիայ, Տուքիթայ և Ե-
թերայ. յետոյ գիրք Յովեայ, Ասղմոք, Առակը, Կեղեսիաստիկս (Ժաղվոլ),
Երգ Երգոց, գիրք Խմառութեանց, գիրք Սիրաբայ, առա մարդարէը՝ այս
գասակարգով. Ովսէէ, Ամովս, Միքիէ, Յովէլ, Արգիու, Յովսան, Կա-
տում, Ամբակում, Սովոնիա, Անդէոս, Զաքարիա, Մաղարիա, Եսայի, Ե-
րեմիա, Բարուք, Ովքը Երեմիայ, Մարդարէութիւնք Եզեկիէլի և Դանիէ-
լի. և վերջումը Երեք գիրք Մակաբեյցւոց: Սովոնից Երեւոմէ որ Եօթա-
նանից Ճարդմանութիւնը ունի իւր մէջ և Անյայտից առած գըրուածները
(Յիթիու առուստութիւնը) որ կէս մի Պաղետանայի մէջ, և կէս մի Եգիպտաստումը
Երայեցի արամայեան, կամ յունական լըզուով գըրմեցան, կամ թէ վաղ
Ճարդմանվեցան յոյն լեզու և բովանդակումնն իւրեանց մէջ Հրէից մատե-
նագրութիւնքը՝ ըսկըսեալ Երբորդ գարու վերջը՝ Քրիստոսից յառաջ, մին-

չւ հարվեր տարի Քրիստոսից յետոյ: Սոքա ոչ Հրէից և ոչ նախնի Քրիստոնէից մէջ այնու շատ յարդի ըլ լինելով, և ոչ իսկ գործածական Եկեղեցումը՝ առվեցան առյապէ, որ զանազանվին այն գըրքերիցը որ ասվումեն առտուածաշունչ, առտուածեզէն գերք թիթօս Զօսունշունչուու: Զէն կտակարանի գըրուածները տաճանաված լինելով մանաւանդ Հրէից ազգի համար, մեծ արժանաւորութիւն ունին և Քրիստոնէից համար, որովհետեւ Քրիստոսիւր կրօնը հիմնաւորել է Մոլոխական օրէնքի վերայ: «Ամանապէն Զէն կտակարանի մէջ կան շատ մարդարէութիւնք որ նայումեն գէտ ի Քրիստոս. և առհատարակ որ և իցէ ժամանակի համար պիտանի և օգտակար է ընթերցանիբել նորան:

Դ. Ելեց. 24, 7. 8. Եւ առեալ ըզգիր ուխտին՝ ընթերցաւ յականջըս ժողվըրդեանըն, և առեն զամենայն զոր խօսեցաւ Տէր՝ արասցուք և լուիցաւք: Եւ առեալ Մոլոխի զարիւնըն ցանեաց ըզգուղովըրդեամբըն և առէ. ահա այս արիւն է ուխտին զոր ուխտեաց տէր ընդ ձեղ վասն ամենայն բանիցըս այսոցիկ:

Յով. 5, 59. Քըննեցէք ըզգիրըս... և նոքին իսկ են որ վրկայեն վասն իմ:

16.

Կո՞ էպահապահ:

Աւելի մաքուր և կտարեալ վարդապետութիւնք պարդեել է մեզ Աստուած Նոր կտակարանի կամ Աւետարանի մէջ, այսինքն՝ այն բարի Աւետիքովը որ Աստուած 1850 տարի յառաջ Քրիստոսի բերանով յայտնել է մարդկային ազգին: Նոր կտակարանը պատմումէ նոյնպէս Քրիստոսի կեանքը և գործերը, այլև ուսուցանումէ մեզ թէ որպէս կտարվեցաւ քրիստոնէական հաւատի հիմնարկութիւնը, և սլարունակումէ իւր մէջ այն թղթերը որ Քրիստոսի Ագարեալքը գըրած են իւրեանցից հիմնած հասարակութիւններին, և մարդարէական մի գիրք՝ յայտնութիւն Յովհաննու աւետարանը:

Յով. 6, 64. 69. Զբանըն զոր ես խօսեցայ ընդ ձեղ, հողի է և կեանք: Տէր՝ առ ով երթիցուք բանըս կենաց յաւիտենականաց ունիս: Յով. 14, 6. Ես եմ հանապարհըն և Ճշշմարտութիւն և կեանք. ոչ ոք դայ առ հայր, եթէ ոչ ինեւ:

Յով. 6, 32. Ացէ ցընսա Յիսուս. Ամէն ասեմ ձեղ. թէ ոչ Մոլոխ ես ձեղ ըղչացըն յերինից, այլ հայրըն իմ տացէ ձեղ ըղչացըն յերինից ըղշըմարիս:

17.

Ար-ը՞ Քըրակի Գործադրութեանը։

Այս գիրքը՝ ճոխ և աստուածային իմաստներ պարունակելով իւր մէջ, և մեր երանելի թարգմանիչների ճարտարապետական ձեռովով այդ երկնային գանձը պարզեւած լինելով չայց աղգին, ամենայն չայ պարտական էր օգուտ քաղել նորանից. ուսանիլ, ճանաչել և երկիւղած որբառով պատուել այս պատկառելի յիշատակարանքը. ըստ որում քրիստոնէութիւնը առանց Սուրբ գլուքի առաջնորդութեան մի անպատուղ ծառի պէս էր: Յիշաւի՝ հայկական թարգմանութիւնը Աքտուածաշընչ՝ բանագէտ մարդերի դատաստանով՝ թագաւոր է համարվում բոլոր թարգմանութենների մէջ՝ թէ Աքիայումը և թէ Եւրոպայումը. բայց (ամաչումմա ասել ծըշմարտութիւնը՝ թէպէտ լութիւնը թըշնամութիւն կը լինէր ընդդէմ Աքտուածոյ) ինչ օգուտ այդ գեղեցիկ և պատուական թարգմանութենից, եթէ նա հին լեզուով և ոճով գըրած՝ անմօտենալի էր մեր ժամանակի հայ քրիստոնէին, որ (թողնունք թէ շատերը և կարդալ ըստ գիտեն) հին լեզուին տեղեակ չէր, ուրեմն և չէր կարող իւր կրօնի և աստուածապաշտութեան աղբիւրքը ճանաչել՝ ինչպէս հրամայելով հրամայումք քրիստոնէութեան աստուածեղէն չիմադիրը: Եւ արդեօք ինչպէս կարող էր ճարագը լցու տալ, եթէ նա գըրուանի տակ ծածկած պիտոյ է մընար՝ փոխանակ աշտանակի վերայ դընվելու: Զէ. մեր կարծիքով Աքտուածաշընը պիտոյ է լինի առաջն գիրք ամենայն հայ քրիստոնէի տան մէջ. նորա գըրները պիտոյ է բաց և արձակ լինէին մեծի և փոքրի համար, և ոչ թէ միայն տան ու քըսան հին լեզու իմացող չայի համար: Այս հարկաւոր է և ամենահարկաւոր, եթէ ցանկալի էր որ աստուածաշընը գըրքի փըրկաւէտ վարդապետութիւնքը արմատանային հայ քրիստոնէի հոգու և սըրտի մէջ և պըտղաբեր գըտանվէին բարի բարի գործերով: Մեծապէս ոըխալիումն այն անձննիքը որ կարծումն թէ աստուածաշընը գիրքը լինելով քրիստոնէական վարդապետութեան հիմն՝ ըզգուշալի էր թարգմանել նորան աշխարհիկ լեզուով ըստորում այս լեզուն ըունէր այն ոյթը և աղդուութիւնը որ կարողանար քրիստոնէական լուսաւորութեան միջնորդ լինել ժողովը գիրքի համար, կամ՝ որպէս թէ աստուածաշընը գըրքի յարգը և արժանաւորութիւնը կը պակասէր, եթէ նորա հնախօսութիւնը պարզվէր նոր լեզուով և հասկանալի շինվէր ամենեցուն առ հա-

սարակ՝ որ դեռևս գլտէին իւրեանց գործածական մայրենի լեզուն։ Այսպիսի կարծիքները թէ ինչպէս անհիմն և անհաստատ էին, բացայս է ամենայն փոքր ի շատէ բանիմաց Հայի համար որ քաջ գիտէ, թէ Աստուածաշունչ գիրը ոչ թէ միայն թարգմանած է բոլոր եւրոպական նոր լեզուներով, այլև Եւրոպացոց հոգաբարձութեամբը (Վնդղացոց Բիրլիական ընկերութեան ձեռքով) փոխադրած է 140 լեզու՝ Եւրոպացից դուրս գրտանված ժողովը գներների համար։ Հատ և շատ ուրախ ենք որ նոր կոսակարանը մօտերումն հրատարակվել է աշխարհիկ բարբառով՝ աշխատութեամբ Դիմիթրիս և Զարեմբա Բաղրլեան առաքելութեան պատարանական վարդապետների։ Այս գիրը տրամադրել է Ռուսաստանի մէջ Պ. Լազարեանց տպարանումը 1836. և մի և նոյնը՝ առանց փոփոխութեան՝ Կոստանդնուպոլիսի մէջ 1850։ Խընդրումնենք որ ամենակալ Տէրը յաջողէ այդ գործի ամենայն տեղ տարածումը։

Յովհ. 5, 39. Քըննեցէք ըգգեիրը, զի գուք համարիք նոքօք ունիւ ըզկեանսըն յաւխտենականըն. և նոքին խոկ են որ վըկացն վասն իմ, որով համարեցն ունիւ կեանըն։

Յովհ. 7, 17. Եւթէ ոք կամի ըզկամըն նորա աւնել, գիտացի՛ վասն վարդապետութեանըն, յԱստուծոյ իցէ արգեօք, Եւթէ ես ինչ յանձնէ իմմէ կոսիմ։ Յովհ. 8, 51. 52. Եւ ասէր Յիսուս առ Ճըկայուն հաւատացեալըս. Եւթէ գուք կացչիք Ե բանի իմում, Ճըմարիտ աշակերաք իմ եք. և ծանիջիք ըզմշմարտութեանըն ազատեցիք ըզքեզ։

Ժմուլթ Յակոբ. 1, 21. Ճեզութեամբ ընդունիջիք ըզքանըն ընտարացու. որ կառընկն է կեցուցանել զուիս ձեր։

18.

Առ-լէ Գըրչէ նէրգործութիւննը։

Մարդուս կրօնապաշտական պիտոցը և նորա ակընկալութիւնը յայտնեալ կրօնից էր և է երկուպատիկ. այսինքըն՝ հաստատութիւն այն անտեսանելի, յաւխտենական և ապագայ բաներին, որ մարդու սիրաը գուշակումէ և յօս ունի ժառանգելու, ուրեմն նորա հաստատէ լսուածութիւննը. և ձիշը գիտութիւնը այն մասին թէ մարդը ինչ պարտական է առնելև նոյնու, որ կարողանայ Աստուծուն հաճցանալ, երջանկութիւն և երանութիւն գտանել, ուրեմն իւր պարզութիւննեւննէ հիւանդիւն։ Սորանից հետեւումէ որ քրիստոնէական կրօնի վարդապետութիւնը՝ ինչպէս այլ միւսներ՝ պէտք է բաղկանայ երկու մասնից, որոնց առաջինը ուսուցանումէ հաւատի բաները, և միւսը՝ բարոյական գիտելիք։

Ա

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՅՈՒԹԻ ՈՒԽՈՒՄՐԵՆ

ԱՌԱՋԻԿ ՀԱՏՈՒԱԾ

Կատուծոյ մասին.

1.

Կատուծոյ գոյութիւնը.

Ինչ բան աչքը տեսանումէ, սիրտը գուշակումէ, բանականութիւնը մրտածումէ, այն բանը ևս ուսուցանումէ սուրբ գիրքը. կայ մի Ապտուած. և այս հիման վերայ հաստատված է մարդուս հաւատոր: Սուրբ գիրքը թէպէտ ամենայն տեղ ենթադրումէ Ապտուծոյ գոյութիւնը, բայց նոյնպէս չէ հրաժարվում շատ տեղ բանաւոր պատճառներով քաջալերել և ամրացուցանել մեր հաւատոր նորա գոյութեան մասին, այլև յատկապէս իշխանութիւն է տալիս մեզ որ քըննելով ըստուգենք և ծրջմարտենք այդ հաւատոր: Սուրբ գիրքը նկարագրելով աստուածային էութիւնը, աչքի հանդէպ է կացուցանում մի այնպիսի աստուածեղէն պատկեր, որ բարեպաշտ սիրտը՝ անդադար մրտարերելով Ապտուած՝ կարող է կենդանացընել և ազնուագործել իւր մէջ, թէպէտ սուրբ գիրքը այնքան է մեզ տեղեկութիւն տալիս Ապտուծոյ մասին, ինչքան մեք այժմ կարող ենք հասկանալ և դիմելու հարկաւորութիւն ունինք:

Սաղմ. Դաւթի. 14, 1. Ապայ անելզգամին և որբաի իւրում, թէ ոչ գոյ Ապտուած. Ապականեցան և պրզեցան յանօրէնութեան իւրեանց:

Յովէ. 1, 18. ԶԱՊՏՈՒԱԾ ոչ ոք ետես երեւէք, բայց միածինըն որդի որ է ի ծոց հօր՝ նա պատմեաց:

Յովէ. 14, 6. 7. 9. ԱՅէ ցնուա Յիսուս. ես եմ Ճանապարհն և Ճրշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ հայր՝ եթէ ոչ նիւե: Եթէ զիս գիտէիք՝ ապս և ըգչայր իմ՝ գիտէիք, և այսուհետեւ գիտասչիք ըզնա, և տեսէք ըզնա: Որ ետես զիս, ետես ըգչայրըն:

Յովէ. 16, 12. Ե՛ւս բազում ինչ ունիմ առել ձեղ. այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ:

Գործք Ապաք. 17, 24—28. Ապտուած որ արար զաշխարհը և զամենայն որ ի նմա, նա երինից և երկրի է տէր. ոչ ի ձեռագործ տաձարըս բնակէ, և ոչ ի ձեռաց մարդկան պաշտի իւրեւ կարօս իմիք. նա տայ ամենայնի

կեանըս և շունչ և գամենայն ինչ։ Արար ի միոջէ արենէ զամենայն աղքըն
մարդկան՝ բնակել ի վերաց երեսաց ամենայն երկրի. հաստատեաց կարդեալ
ժամանակը և ասհմանագրութիւնը բնակութեան նորս՝ Խընդրել զԱսո-
ուած։ Զի թէրեւո զընելիցեն ըլմա և գամենիցեն. նա և ոչ հեռի իսկ է
յիւրագանչիւր ումեքէ ի մէնչ. զի նորմաւ կեակը և շարժիմք և եմք, որ-
պէս ունակը ի ձերոց ճարտարաց առացին թէ նորս և աղք իսկ եմք։
Տիմոթէափ առաջն. 6, 16. Որ միայն ունի զամանահութիւն, բնակեալ
և լցո անմատոց։

Հայց Աստուծոյ էութիւնը միշտ անիմանալի է մարդուս տը-
կար մըսքի համար, որ այնպէս միայն կարող է նորան մըստածէլ,
որ ամենալաւ մարդերի մշջ տեսած և պատուած յատկութիւն-
քը՝ գերազանց համեմատութենով ընծայէ Աստուծուն։

2.

Աստուծոյ միութենիչը։

Վամենաբարձըր էակը ըստ որում ամենաբարձրեալ է, ունի
քանի մի յատկացուցիչ նըշաններ, որ ոչ մի ուրիշ էակի չեն
վայելում։ Աստուծ մի է, որովհետեւ ամենակատարը կարող է
մի հատ լինել. ոյս միութիւնը Աստուծոյ՝ վկայութենով հաստա-
տումեն այն զուգապատշաճութիւնը որ տեսանվումէ բոլը ստեղ-
ծագործութեան մշջ, և այն խմաստուն տնօրինութիւնը որ մար-
դուս ժամանակառոր և յաւիսենական երջանկութեան համար ա-
րած են։ Տըզայութեան վիճակի մշջ եղած աղքերը և կրօնները
միայն՝ աստուծը են անուանում այն պէսպէս զօրութիւնները որ
կան բնութեան մշջ, այլև այն շընչաւորը որ շատ օդտակար կամ
վնասակար էին (համարական լին)։ Սորան հակառակ է քրիստո-
նեայ, հըրէայ, և մահմետական աղքերի միաստուածեան հաւատը,
այսինքն՝ մի Աստուծ հաւատալը։

Մարգար. Եսայեայ. 44, 6. Այսպէս առէ Աստուծ թագաւորըն Իս-
րայէլի. և որ փըրկեացըն ըզնա՝ Աստուծ գօրութեանց. եռ առաջն և եռ
առաջապայ. բաց յինէն այլ ոչ որ Աստուծ։

Մովզ. գ. Ելլոյ. 20, 23. Մի՛ առնելիք ձեզ աստուծըն ոսկեղէնը և
աստուծըն արծաթէեղէնը։

Պաւղ. առ Կորընթ. թռ. ա. 8, 5. 6. Զի թէսպէտ և իցեն անուանեալ
աստուծք՝ եթէ յերկինըս և եթէ յերկրի, որպէս և են աստուծք բա-
զումք և տեսարք բազումք. այլ մեզ մի Աստուծ, Հայր՝ յորմէ ամենայն,
և մեք ի նա, և մի աւք Յիսուս Քրիստոս, որով ամենայն և մեք նորմաւ։
Յովհ. 17, 3. Այս են յաւիսենական կետնը, զի ծանելիցեն ըզքեզ միայն
Ճըշմարիտ Աստուծ, և զոր առաքեցեր՝ ըզՅիսուս Քրիստոս։

5.

Աստուծոյ մատուցածան երբուրդութեաւը:

Մի Աստուած ուսուցանող քրիստոնէական կրօնին ընդդէմ չհաւատալ Աստուծոյ միամնական երրորդութիւնը. կայմ' Աստուած. բայց նա իւր ամենառաստ բարերարութիւնքը ցուցանումէ մարդուս երեք առանձին կերպով, որպէս Հայոց, Ուշէ և Սույնէ հաջէ, որ թէպէտ որոշեալ անձինք են՝ ըստ որում այլ է Զօր անձը, այլ է Որդւոյ անձը, և այլ՝ Հոգւոյ անձը, բայց ի վերայ այդը ամենայնի համարնուն, համազան, համական և համական են՝ առանց շըմոթելու նոցա ջոկ ջատկութիւնքը:

Թա. Պաւղ. առ. Եփես. 4, 6. Մի Աստուած և Հայր ամենեցուն, որ ի վերայ ամենայնի և ընդ ամենեցուն և յամենեցուն ի մեզ:

Մատթ. 28, 19. Գնացէք այսուհեաւ, աշակերակցէք զամենայն հեթանուըս, մըկըրաեցէք ըզնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն ուրբոյ:

Նախ առաջին պաշտումենք Աստուած որպէս Հայր, (ըլծոնեալ, այլ ծընող և բըզիօղ) արարիչ, պահպանիչ և կառավարիչ աշխարհի և մարդկային ազգի, և մանաւանդ՝ որպէս Հայր Յիսուսի Քրիստոսի, որ ինչպէս միածին որդի եկաւ Հօր մօտիցը աշխարհ:

Եթէ Աստուած՝ ամենների Հայրն է, ապա մարդիկ իւրեանց մէջ անդամէք են մի մեծ ազգատօնմի, որի գլուխը Ամենաբարձրեալն է. ուրեմնն պատուիր նորանց, սիրեք նորանց:

Եփես. 8, 4, 6. Այլ վառն կերակրոցըն զոհելոց՝ գիտեմք, եթէ ոչինչ խել կուռքը են յաշխարհի, զի չիք ոք Աստուած բաց ի միոյն: Այլ մեզ մի՛ է Աստուած, հայր՝ յորմէ ամենայն և մեք ի նա. և մի՛ տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն, և մեք նովաւ:

Աստուած իւր Որդւոյ (որ է ըլծոնող, այլ ծընունդ) միջնորդութենովը (Աստուծոյ բանիւը) յայտնեց իւր անձը մարդկային ազգին, փըրիեց նորան տըգիտութենից, մեղքից և կորուսից՝ ծանուցանելով նորան իւր կամքը, և հիմնելով շընորհաց արքայութիւնը:

Յով. 1, 14. Եւ բանըն մարմին եղեւ և բընակեաց ի մեզ. և տեսաք ըզքաւըս նորա, ըզքաւըս իւրեւ ըզքիաննի առ ի հօրէ, լի՛ շընորհօք և չըշմարտութեամբ:

Յով. 1, 1. Ի մըզքանէ էր բանըն, և բանըն էր առ Աստուած, և Աստուած էր բանըն:

Յով. 1, 18. Զաստուած ոչ ոք ետես երեք, բայց միածինըն որդի, որ է ի ծոց հօր՝ նա պատմեաց:

Յով. 3, 16. Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զորդին իւր միածին ետ:

Ա երջապէս Հոգին սուրբ, (ոչ ծընող և ոչ ծընունդ, այլ՝ լող) Աստուծոյ Հոգին որ առաքվեցաւ՝ մարդկային ազգին անեւ մւսութապէս օգնելու, ճանրակը շնորհական բաներումը նորա միտքը լուսաւորելու, և կեանքի մոլորական ճանապարհներումը նորան դէպ ի ուղիղը առաջնորդելու համար: Այս սուրբ Հոգին՝ ինչպէս մի ժամանակ Վաքերոց վերայ իջանելով՝ յաջողեց քրիստոնէութեան յառաջադիմութիւնը, նոյնպէս և այժմ գործակից է ամենայն մարդու, որ հետեւումէ իմաստութեան, բարեպաշտութեան և առաքինութեան:

Ասպլ. Դաւ. 142, 10. Ուսո՞ ինձ առնել ըզկամըս քո, զի դու ես Աստուծած իմ: Հոգեի քո բարի առաջնորդեցէ ինձ յերկիր ուղիղ:

Յովհ. 15, 26. Բայց յորժամ՝ եկեղեց մըսիթարիչըն, զոր ես առաքեցից ձեզ և հօրէ, ըզհոգին Տըշմարառեթեան որ և հօրէ ելանէ, նաև վկայեցէ վասըն իմ:

Թմ. Պատլ. սու Փիլիպ. 2, 13. Զի Աստուծոյ որ յաջողէ ի մեղ ըղկամին և զաւենելով վատըն հաճութեան:

4.

Աստուծոյ յաւելակէնանէանութեանը:

Երթլորդ յատկանըշանը՝ պատկանաւոր Աստուծուն միոյն՝ յաւիտենականութիւնը. ժամանակի սահմանից և փոխոխութենից դուրս է նա. որպէս առել ժամանակի՝ ազատ է նա. ոչ ըսկըսել է և ոչ էր վերջանայ. կայ և կը մընայ միշտ մի և նոյն, ինչպէս իւր էութենովը, նոյնպէս իւր կամքովը. անդունանէ է Աստուծուն:

Աստուծոյ սիրութ դէպ ի մարդկային ազգը, նորա հաճութիւնը բարի բաների վերայ, նորա գարշութիւնը չար բաներից՝ անփոխիսելի է. ինչ որ խոստանումէ՝ կատարումէ անշուշտ. նա ովանքն է: Այս բանը թող մըսիթարէ քեզ, թող ահ և երկիւր բերէ քո վերայ, թող սիրու տայ քեզ՝ որ լինիս քո կանոնների վերայ նոյնպէս հաստատ, քո խոստմունքների մէջ նոյնպէս հաւատարիմ:

Ասպլ. Դ. 104, 28. Բայց դու նոյն իսկ ես և ամք քո ոչ անցանեն:

Ասպլ. Դ. 89, 2. 4. Տէր աղաւեն եղեր մեր ազգէ մինչև յազդ. մինչև լերինք հաստատեալ էին, մինչև տանդեալ զերիկիր և զամենայն տես զերըն. յաւիտենից մինչև յաւիտեանըն դու ես: Հաղար ամ յաջու տեսաւն որպէս օր երեկի զի անց, որպէս պահ մի գիշերոց:

Յովհ. ամ. 2, 17. Եւ աշխարհը անցանէ և ցանկաւթիւնը. իսկ որ առնէ ըզկամըս Աստուծոյ, մընայ ի յաւիտեան:

Գիրք Թառոց. 25, 19. Ո՞ւ երբեւ ըզմարդ է Աստուած և զարթնուլ, և ոչ երբեւ զորդի մարդոց ի սպառնաւլ. դու առացեր թէ ոչ արացէ, խօսեցի և ոչ կացուացէ:

5.

Վաստած հոգի է:

Կմանապէս հոգին է Աստուած, և՝ ինչպէս նա միայն է և կարող է լինել՝ աժնակարգութիւն հոգի, որ թէպէտ անտեսանելի և անմարմին է, բայց իւր ամենաբարձը մըտքի, իւր սուրբ, բարի և ամենակարող կամքի գործերովը գերազանց է քան թէ մարդկեղէն հոգին: Ուրբեմըն՝ պապէս նայելով՝ հերիք չէ Աստուծոց համար մարմաւոր պաշտօնը. և Յայտնեալ կրօնի նպատակը նոյն էր, որ հաստատէ աստուածպաշտութիւն՝ հանդառն և ճշշալութենան, ինչպէս մանաւանդ Յիսուսի Քրիստոսի նախապատիւ ջանաղըութիւնն էր, քանի որ նա աշխարհի վերսց էր: Եթէ սուրբ գիրքը տեղ տեղ ընծայումէ Աստուծուն մարդկեղէն անդամներ, աչք, ականջք, ձեռք, այդ՝ այն մըտքով է, որ տըկար մարդուս համար աւելի համանալի լինի Աստուծոց ամեն տեղ ներկայ, ամենապէտ և ամենակարող լինելը:

Պաշտէր Աստուած հոգուդ մէջ, այսինքըն՝ մըտքով և սըրբավ, բարեգործութենալ և ճըշմարիտ, անկեղծ բարեպաշտութենալ. մի՛ կարծիր, որ արտաքին աստուածպաշտական արարողութենեներով կարող են դու Աստուծուն հաճացանալ, եթէ քո դործերը ընդդէմ են նորան:

Մարդ. Եսայ. 54, 4—8. Ի հակառակութիւնը և ի կըուեւըս պահէք և կըուփէք զանաւագըն. իոկ զի՞նչ պիտոյ և ինձ այնպիսւոյ աւուր պահէք. դաւ ըոլոքել ձեր սաւիս և ինձ ոչ լըսել ձեղ. ոչ զայդպիսի պահըս ընարեցի և ոչ զօրըն, յորում՝ կարկամեցուցանէ մարդ զանձըն իւր: Զի եթէ կրտացուացէս իւրեւ զանուր ըրպարանոց քո և քուրձ և մոխիր տարածանիցես, սակայն և ոչ զայն կոչեցի պահըս և օր բնիւնելի: Ո՞ւ զայն պահին պահըս ընարեցին առէ Տէր: Այլ լոյժ ըզկելնձիւըն անիբաւութեան, քամիւա ըղիսարդախութիւն բըունութեան վաճաւոց քոց, արձակեա՛ ըզնել եալը թողութեամբ և զամենայն մուրհակըս անիբաւութեան պատաւեա՛: Բըրդեա՛ քաղցելոց ըզհաց քո և զարքատըս անցարկըս տար ի տուն քո: եթէ տեսանիցես ըզմերկըս, ըզգեցուցանիջնի և յընասնեաց զաւակի քո՞ զակըն մի՛ արկանիցես:

Յովհ. 4, 24. Հոգի է Աստուած և երկրպագուացըն նորա՝ հոգւով և ճըշմարտութեամբ պահըս է երկիրպագուանել:

Հռոմացեց. 1, 10. Զի անկրկոյթք նորա և սկըզբանէ աշխարհի արարա-

Ճովքը և մասնաւոր այսինքը է՝ մըշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա. զի ոչ գըտանիցն ամենենին տալ պատառիանի:

Գործք Ացաք. 17, 24. 25. Աստուած որ արար զաշխարհը և զամենայն որ ի նմա, նա երկնից և երկրի է տէր. ոչ ի ձեւագործ տաճարը բը-նակէ և ոչ ի ձեռաց մարդկան պաշտի իբրև կարօտ խմիք. նա տայ ամենայնի կեանիը և շունչ:

6.

Ամէնակարսութեան հիման վրա աշխատանքներ:

Անկիրթ մարդու մըտքի համար ևս բացայսյոտ է Աստուծոյ կարողութիւնը և զօրութիւնը. ոչինչ կարող չէ ընդդիմանալ նորան, ոչինչ անհրնար չէ նորա մօտ. այս պատճառով ասումենք նորան անշատակառակ:

Ասկմ. 32, 8. 9. Երկնից ի առաւենէ ամենայն երկիր, և ի նմանէ դոլառ ցենն ամենայն բնակիչը աշխարհնի. նա տայ և եղեն, հրամայեաց և հաստատեցան:

Դուկ. 5, 20. 21. ԱՅԼ այնըմ որ կարողըն է առաւել քան զամենայն նիչ առանել յաճախութեամբ, քան զոր խընդբեմքըն և իմանամք. ըստ զօրութեանըն որ յաջողեան է ի մեզ. նման փառք... յաւիսենից յաւիսեանը:

Տես Սուբբ պատմագրութեան մէջ՝ Փարաւոն, Մուլէն, Պետրոս։ Ուրեմնն թողլ արեար մարգը հաւաս ունենայ դեղ ի իւր հըզօր արաւելքը, որ կարող է օդնել նորան. բայց թողլ նա Աստուծուց հըրաւը ըստահանջէ իւր համար. թողլ ըս կարծէ երբէք որ մի ուրիշ բան կը հանհիպի քան թէ հասարակաց և մասնաւոր օգախն ձեռընտու եր:

7.

Ամէնայն աւունակարսութեան հիման վրա աշխատանքներ:

Աստուծոյ մըշտնջենաւոր և հոգեոր էութեան հետ շատ մօտ կապակից է նորա ամենայն տեղ ներկայ լինելը. որովհետև ինչպէս նա՝ յաւիսենական հայր լինելով՝ ժամանակի սահմանից դուրս է, նյոնպէս իւր ներկայութենովը ոչինչ տեղի հետ կապած չէ. նա ամենայն տեղ է և ներգործումիշ ամենայն տեղ:

Սուրանից հանաչիք դու՛ ովլ մարդ, որ ոչ մի ժամանակ միայնակ չեռ. ուս բախացիք որ Աստուծոյ հոդին և զօրութիւնը ամեն տեղ ընկերակից է քեզ, երբ դու կարօտ ես խորհըրդի, օգնութեան և միվիթարութեան. բայց եւ

մայե՞ր որ Ավենաբարձրեալը աեսանումի նոյնակէս քո ամեն մի պիղչ մտա-
ծութիւնը և քո ամենայն չոր գործերը:

Սաղմ. 138, 7. 10. Յս՝ երթայց ես յուլոյ քումմի և կամ յերեսաց քոյ
ես յա՞ փախեաց ։ թէ ելանեմ յերկինը՝ դու անդ ես, և թէ իջանեմ ի
գըժսիլը, և անվըր ևս մօս ես ։ թէ առից ըզթելը իմ ընդ առաօսը
և բնակեցաց յեղերը ծովու առկայն և անդ ձեռըն քո առաջնորդեացէ
ինձ և աշ քո ընկալցի զիս:

Մարդ. Երեմիայ. 23, 23. 24. Աստուած մերձաւո՛ր եմ ես՝ առէ Տէր, և
ոչ Աստուած հեռաւոր. եթէ թաղիցէ մարդ ի թագլուսեան, և ես ոչ
աերից ընկա՞ առէ Տէր. մի՛ թէ զերկինը և զերկիր ես ոչ լընում՝ առէ Տէր։
Սաղմ. 22. 4. Թռէպէտ և զընացից ես ի մէջ ըստուերաց մահու, ոչ եր-
կեցց և չարէ, զի դու Տէր ընդիս ես ։ Յուս քո և գաւաղան, նոքա մին-
թարեցէն զիս։

Տես Սուրբ պատմաբըսւթիւն. Յակովը, Պետրոս:

8.

Ա մէնագիպութեալնը.

Եւ որովհէտեւ ամենաբարձրեալ էակը ամեն տեղ ներկաց է,
այս պատճառով ահանգէն է նոյնակէս. այսինքը՝ նա բոլորովին տե-
ղեակ է ամենայն բանի որ եղած է, որ կայ և որ լինելոց է, և
այս գիտութիւնը հասանումի ինչպէս ընդհանրականին, նոյնակէս
և մասնաւորին, այլև մարդուս խորհուրդներին, մըտածմունքնե-
րին և յօժարութեններին։

Ուրեմն և ծածկապէս բարի և երկիւղած կաց։ Դու չես կարսող Աստու-
ծուցը փախչել կամ խաւել նորան. պինդ և հասաւանն կաց, համեմելի՛ր
անարդարութեան, մի՛ որոնիր մարդու գովասանութիւն և մի՛ ալրամիր,
եթէ քո արժանաւորութիւնը չեն հանաշում։ Աստուած որ ծածկատեսն
է, յայսնի կը վարձատի՛ քեզ։

Սաղմ. 138, 1-4. Տէր՝ փորձեցեր զիս և ծանեար զիս. դու ծանեար ըզ
նըստել և ըզյաւնել իմ. ի միտ աւելը ըզյարհուրդը իմ ի հեռասանէ,
ըզյաւիրը իմ և ըզվիճակը իմ զո՞ւ քըննեցեր և զամենայն հանապարհու
յառաջադրութեանը տեսեր, զի ոչ գոյ նենդութիւն ի լեզուի իմում։

Սաղմ. 93, 9. Ուրեմն զի որ տընկեաց զանկըն, ինքըն ոչ լուիցէ կամ
որ ըստեղծ զակըն ինքըն ոչ տեսանիցէ։

Յովեաց 16, 20. Եւ արդ աչա՛ յերկինս է վրկայն իմ, և իրաւադէտն
իմ ի բարձունքու։

Յովեաց 34, 21. 22. Զե ինքըն է տեսօղ գործոց մարդկան, և զօղեաց
ինչ ոչ ի նմանէ զոր գործեցին. և չիք տեղի թաղէնելոյ այնոցիկ որ գոր-
ծեն զանօրէնութիւն։

Մատ. 10, 50. Ա. Ճ. ձեր և ամենայն խոկ հեր գըլխոց թուեալ է: Գործք Ալպեր. 15, 17. Որ առնէ զայ ամենայն, յայսնի է և յաւեւ տեանցը:

9.

Ա. Հ. Խ. Յ. Պ. Ա. Վ. Ե. Շ. *

Վաստած ամեն բան կարող է գոյացընել, բայց առնում: Ինչ որ համաձայն է իւր իմաստութեանը, և միշտ ընտրումէ ամենաբարի ձանապարհներ իւր նախատակների համար, որ՝ ինչպէս իւր միտքը կատարեալ է, կամքը բարի է, նցնպէս ամենաբարի են միշտ:

Կոյն խոկ իմաստուն Ազատուծուցը ուսոիր իմաստնափէս գործել և խոչեմութեամբ ընարել առելի յարմար, բայց միշտ բարի հընարներ՝ քո լաւ ձեւնարկութիւնը յաւաշ տանելու համար. ուսոիր մեծարել Ազատուծն նորա գործերը քըննելով, ուսոիր հաւատալ նորա աւաջնորդութեանը:

Սալմ. 103, 24. Ո՞րպէս զի մեծ են գործք քո Տէր. զամենայն ինչ իմաստութեամբ արարեր և լցցաւ երկիր ստեղծուածովք քովք:

Հռոմ. 11, 33. Ո՞վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեանն Ազատուծոյ. Ո՞րպէս առանց քըննելց են զաստատանք նորա և ստանց զըննելց են ձանապարհք նորա: Զօթ ո՞վ գիտաց ըզմիալու տեաւն, կամ ո՞վ խորհըրդակեց լինեցի նմա:

Հռոմ. 16, 26. Միհյնաց իմաստանցն Ազատուծոյ ի ձեռըն Յիսուսի Քրիստոսի. Նմա փառք յաւիտեանը յաւիտենից:

Տէս Առարք պատմ. Յալմէփ, Յուլք:

10.

Ա. Հ. Խ. Յ. Պ. Ա. Վ. Ե. Շ. *

Վաստուծոյ մօտ ամենայն բան կարելի է. բայց նա առնում: և կամենում: այն բանը միայն՝ որ ճըշմարիտ և բարի է. նա միշտ և հանապազ առեցալ է չարին և սիրում: բարին. նա ո՞ւնի է: Իւր Ազատուծոյ օրինակիցը թող առանի մարդը սիրել աւագինութիւն և առել մեղք. թող մըտածէ որ կարող է Ազատուծուն հանցանալ նա միայն, որ անարաս գընացք ունի:

Սալմ. 5, 5. Ոչ թէ դու Ազատուծ կամիս զամօրէնութիւն, և ոչ ընակեն առ քեզ չարք. մի՛ անօրէնք բնակեսցին առաջի աշաց քոյց:

Մալու. Երկ. օրինաց. 32, 4. Ազատուծ որոյ ճըշմարիտ են գործք նորա և ամենայն ձանապարհք նորա իրաւումք. Ազատուծ հաւատարիմ է և ոչ զոյ ի նմա անիրաւութիւն. արդար և անարատ է Տէր:

Թա. Պետք. մ. 1, 16. Վասն որոց գըրեալ է. և թէ եղերուք սուրբ, զի
եռ սուրբ եմ:

11.

Արդարական վայրեալ պատուհան:

Առաջից ինքն ըստ ինքեան հետեւումէ Ապտուծոյ արդա-
րութիւնը, կամ նորա էութեան այն յատկութիւնը որանով նա
վարձատրումէ բարին և պատժումէ չարը. ուրեմն ամեն մարդու
հասուցանումէ այն վիճակը, ինչ վիճակի նա արժանէ է: Ամենայն
ազատ գործողութիւն ունի իւր մէջ վարձատրութիւն կամ պա-
տիժ, և անպատճառ ըստանալու է նորան՝ յառաջ կամ յետոյ,
այս կեանքումը խրզմանքը հանդիսա լինելով կամ տան թե-
լով, արտաքին հիւանդութենով, կամ թէ այն միւս կեանքումը.
որովհետեւ Ամենագէտը մեր բոլոր գործերը գիտէ, և Սուրբը ա-
տեցող է ամենայն արարքի որ նորա կամքին հակառակ է:

Արդարութիւն գործիր ո՛վ մարդ, որ Ապտուած միշտ վարձատրէ քեզ.
թէպէս և գու կըրէիր միշտ աշխարհիս ցաւը, իմացիր որ գու կարող են
քո ուրսի մէջ շատ ուրախ և երջանիկ լինել, և հասկացիր որ կեանքի ա-
նարժան վրշտերը կարող են քո սիրու օր քանի զօր իստակէլ, ամբացու-
ցանել և սըրբել, և այսպէս՝ քո յոյը այն կատարեալ և արդարասովէս վար-
ձատող կեանքի վերայ աւելի կենդանացընել:

Երայ. 5, 10. 11. Եւ առեն. կապեացնուք զարդարըն զի գըժպըչի (անք-
նազանդ, անհաճոյ) եղլ մեղ. այսուհեաւ զարդիւնը ձեւաց իւրեանց կե-
րիցն. վայ անօրինն. չարիք ըստ գործոց ձեւաց իւրոց անցցեն ընդ նա:
Գ. իմաստութ. 12, 16. Զի քո զօրսութիւնըդ իշխան է արդարութեան
և տիրելոց ամենեցուն՝ ինայել տայ յամենայն:

Հռոմ. 2, 6. 11. Որ հասուցանէ իւրաքանչիւր ըստ գործը իւրեանց.
քանզի ոչ է ակնառութիւն առաջի Ապտուծոյ:

Գաղատ. 6. 9. Այլ ըզեարիս գործել մի՛ ձանձրասցուք, զի ի ժամանա-
կի իւրում հընձեցուք առանց լըքանելց:

Կորընթ. ք. 9, 6. Քանզի զայդ որ ուրմանէ ձըշդելով, ձըշդելով և հըն-
ձեցէ, և որ սերմանէ առատութեամբ, առատութեամբ և հընձեցէ, և

Երայ. 6, 10. Ոչ եթէ անիրաւ ինչ է Ապտուած՝ մատանալ ըգործը
ձեր և ըզնէրըն զոր ցուցէք յանուն նորա, զի պաշտէիք ըլլուրբալն և
պաշտէք:

Տե՛ս Սուրբ պատմագրութիւն. Յովսէփ, Աբեսաղոմ, Մեծատունը:

42.

Աստուծոյ Գլուհանի մեջ:

Վանաբարձրեալ էակը կամենում; նոյնպէս ամենայն մարդ սինալէս երջանիկ շինել, ինչքան կարելի է, և որպէս ճշշմարիտ հայր խրնամք ունի նոցա երջանկութեան վերայ. շատ հընթակ է Սատուած: Թու նա այս յատկութիւնը ունի, ցուցանումն ոչ թէ միայն նորա արարածքը աշխարհի վերայ, սորա կարգադրութիւնը և այն անհամար հոգեւոր և մարմնաւոր բարութիւնքը որ նորանից վայելումնք մեր առաջն շրնչից մինչև վերջնը, այլ այն բոլոր բզբացուն բատեղծուածներին պարգևած կարողութիւնը՝ բարեկեցութիւն և երջանկութիւն վայելել. բայց ևս առաւել այն բարեկենդանութեան աղբիւրը որ բացել է նա մեզ Յիսուսի Քրիստոսի միջնորդութենով:

ղեցոց, և արացեն ի վերաց նորսա ազօթու. օծցեն իւղով յանուն Տեառն...
և յարուցէ ըզնա Տէր. և եթէ մեղս ինչ եցէ գործեալ՝ թողցի նմա:
Դործք Աւաք. 28, 8. Եւ եղեւ հօրն Պատգեայ ի մերմըն և յախու թան-
չց հիւանդանալ՝ դընել. առ որ մըսեալ Պատզոս, և կացեալ յաղօթու
եղ զէնն և բրժըշկեաց ըզնա:

Այս խորհուրդը կատարումէ Հայաստանու եկեղեցին և առանց օծու-

Թեան իւղով, բայց ազօթելով և կարդալով Աքտուծոյ անունը: Այս սպառութիւնը ընդգէմ չէ՝ աւետարանական բանի:

Յակով. 5, 15, 16. Ազօթքն հաւասար փըրկեսցեն զաշխատեալն: Ազօթու արարէք և վերայ միմեանց, որպէս զի բըժըշկեցիք, քանզի յոյժ դօրաւոր են ազօթք արդարոց յօդնականութիւն:

25.

Ա. Հ. Շ. Տ. Տ.

Երկիւղած և բարի սիրտ ըստանալու վերջին աւետարգեկ հընարը է Սզօթքը, կամ մարդուս սուրբ խօսակցութիւնը Աքտուծոյ հետ՝ որի առաջն բացայայտումն նա իւր խընդիրը և շնորհակալութիւնը: Ո՛չ ամենայն ազօթք լրսելի է Աքտուծուն. պիտոյ է ազօթել Յիսուսի անունով. այսինքն՝ մեր ազօթքի խորհուրդը պիտիս պէտք է լինէր, ինչպէս տեսանումենք Քրիստոսի ազօթքների մէջ. այլև հաւատով դէպ ի Յիսուսի բոլորամասն բարեկասութիւնը, այնպիսի խնարհ վըստահութեամբ, ինչպէս Յիսուսը ցոյց է տուել իւր ազօթքների մէջ: Դէպ ի չարը ձրգտողութեան և փորձութեան ժամերումը, երկրաւոր ցատի ըռպէտմը, նմանապէս՝ այն դըժուարին բանի մէջ, ինչպէս մեր սըրտի ուղղագործութիւնն էր, ազօթքը՝ մի առատաբուղին ազքիւր միախթարութեան և զօրութեան կը գըտանլի ամենայն մարդու համար որ նորան գործ էր դընում սուրբ գըրքի պատուերներին համաձայն:

Ազօթքն ըստէպ, չերմեռանդ հակով, պարզապէս, առ ի ոըրտէ, բանականութեամբ, լի՛ հաւատով: Զանց մի՛ արա՝ քո ընասնեկան չերմեռանդութիւնը կապակցել հրատարակական աստուածպաշտութեան հիւր: Խընդիրի և երկրաւոր բարեք, բայց ո՛չ առ դաշով, ո՛չ երբէք անցաւորի վերայ մուտանալով յաւիտենականը: Ազօթքն նոյնպէս և միւսների համար:

Ապլ. 18, 15. Եղիցին քեզ հաճոյը բանք բերանց իմց և խորհուրդը ուրտի իմց առաջն քո յամենայն ժամ, Տէք օդնական իմ և փըրկիչ իմ: Ապլ. 65, 3. Լուսը ազօթից իմց, զի առ քեզ ամենայն մարմին եկեցի: Տիմոթ. ա. 2, 1. 2. Եւ արդ աղացեմ նախ քան զամենայն, առնել ազօթը, իրնեղը առաջն պաղացանը. պաղատանը. գոհութիւնը վամն ամենայն մարդկան, մանաւանդ վասն թագաւորաց և ամենայն իշխանաց. զի խսղաղութեամբ վարեցուք ըզկեանը մեր՝ ամենայն աստուածպաշտութեամբ և ոըրբութեամբ:

Մատթ. 6, 6-8. Այլ գու յորժամ կայցես յազօթը՝ մուտ ի մենեակ քո և փակեա ըզդուրութ քո, և կաց յազօթը առ հայր քո ի ծածուկ. և հոյրըն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս: Եւ յոր-

ժամ՝ կայցէք յաղօթը, մի՛ շատասուք լինիք իրեւ ըդհեթանաւըն, զի համարին թէ և բազում խօսից իւրեանց լըսելի լինիցին. արդ՝ մի՛ նմանիցէք նոյս. զի գիտէ հայրըն ձեւ զի՞նչ պիտոյ է ձեզ, մինչև ձեւ իւընդդեմ նոչ իցէ և նմանէ:

Մատթ. 20, 22. Պատասխանի եռ Յիսուս և առէ. ոչ դիակը զի՞նչ իւնդրէք. կարէք ըմպէլ ըզբաժակըն զօր եռ ըմպէլցին եմ, կամ ըմպէկըսութիւնն զօր եռ մըկըսութցին եմ. մըկըսել՝ ասեն ցընո՞ կարսկ եմք:
Յակոբ. 5, 15, 16. Վըշտանայցէ ոք և ձենչ, յաղօթս կայցէ. քերկիցից ոք, ասալնս ասացի:

Յոհ. 16, 23. 24. Եւ յայնը աւուր զիս ինչ ոչ հարյանցիցէք: Ավեն ամէն առէմ ձեզ, զի զօր ինչ իւնդրէցիցէք և հօրէ իմմէ յանուն իմ, ասացէ ձեզ: Մինչեւ այժմ ոչինչ իւնդրէցիցէք յանուն իմ. իւնդրէցիցէք և առնոցաք, զի աւախութիւնն ձեւ լըցեալ եղիցի:

Մարկ. 15, 53. Զայշ եղելսուք, ըսկեցէք և կայցէք յաղօթս. զի ոչ պետք երբ ժամանակն իցէ: Տե՛ս Սուրբ պատմ. Դաւիթ, Մարիամ, Յիսուս:


25.

Օ Հայուսութիւն՝ ոյս ռազմութէան հընարկէը գոյն ոչընէլու և ըն:

Վ,յա բոլոր օդնական հնարիները՝ որ աստուածային շընորհ հովը պարզեած են մեղ՝ մեր անձը ուղղելու և սըրբելու համար, թէպէտե ունեին աստուածային զօրութիւն, բայց ոչինչ ներգործութիւն չէին կարող յառաջացընել մեր սըրտի վերայ, եթէ մեր նոցա գործադրութեան ժամանակը չունենայինը մի անդադար չափաբաննեւն, ըզգաստութիւն ինչպէս մեր անձնի վերայ, նոյնպէս այն ամենայն բաների վերայ որ բընութեան և մարդկութեան մէջ Աստուծոյ առաջնորդութեան ներբոյ պատահումն մեր աջքի առաջը: Ամենայն բան, այն և ամենաթեթեւ ըստ երևութիւն՝ կարող էր մեղ մոլոր ճանապարհներից յետ դարձուցանել գէպ ի գիտութիւն և առաքինութիւն, եթէ միայն մեր սիրտը խլացած չէր ընդդէմ Աստուծոյ ամենակարող, ամենայն տեղ մեղ գանցող հայրական ասյնին: Մեր բարյական կատարելագործութեան համար, մեր սիրտը և գընացքը ուղղելու համար կարող էր նոյնպէս օգտակար լինել կենակցութիւնը բարեսպաշտոն մարդերի հետ, որոնց օրինակը կը բորբոքէր գէպ ի առաքինութիւն, կը տար սիրտ և քաջութիւն, կը միաթարէր և կը զգուշացուցաներ մեղքից:

Մատթ. 26, 41. Ավետին կայցէք և աղօթս աբարէք, զի մի՛ անկանիցիք և փալձութիւն. չողիս յօժար է, բայց մարմնը տըկար:

Կորլնթ. ա. 10, 12. Այսուհետև ոք համարիցի հաստատուն կալ, ըզգայշ գուցէ անկանիցի:



ԵՐԻՈՐԴ ՀԱՏՈՒՅԾ

Թէ ինչ յոյս և ակլնկալութիւն ունի քրիստոնեան
հանդերձեալ կեանքումը:

1.

Վ ա հ ը .

Մարդը ապրումէ երկրի վերսց, բայց չը գիտէ՝ ինչքան
երկար. նորա մարմինը մահկանացու է. ինչքան ևս երջանիկ լինէր
նա, ինչքան երկար ևս վայելած լինէր աշխարհային կեանքը, այնու
ամենայնիւ ազատ չէ այս վերջին պատահարից՝ որ ըսպասումէ
նորան, Տանիչ՝ որանով հոգին բաժանվումէ մարմնիցը: Այս ժամը
դառն է և ծանր, որովհետեւ դուրս է քարշում մարդը երկրա-
ւոր կեանքի վայելութենիցը, շատ անդամ յանկարծ և առանց
իմաց տարսւ, և վընուումէ իսկոյն նորա յաւիտենական վիճակը:
Վասն այս պատճառի՝ մահու մոտածութիւնը միշտ ահ և երկիւղ
է զարթուցել մարդերի սըրտումը. բայց՝ սցդ ահ ու դողը մի ան-
ձանօթ բան է Ճըշմարիս քրիստոնէի համար. նորա համար չը
կայ ոչինչ մահ, որ սուրբ գիրքը ասումէ »Հասուցումն մեղաց«
որովհետեւ նա իւր կեանքի մէջ բարեաւը յազթել է չարին, նա
պատրաստվել է մեռանելու՝ ինչքան որ կենդանի էր, և ծանա-
զումէ մահը ինչպէս մի փոխանցական ճանապարհ դէպ ի Ճըշմա-
րիս և յաւիտենական կեանքը:

Սիրաք. 41, 12. Ամենայն ինչ որ առեալ է ի հոգյ, և հող դարձցի, որ-
ովէս ամենայն ջուրք ի ծով դառնան. Ամենայն պարգևը և անիրաւ ըս-
տացուածք կորընչեցին, բայց Ճըշմարտութիւն կայ և մընաց ի յաւիտեան:
Յովք. 44, 5. Համարեալ են ամիսք նորա առ ի նմանէ. ի ժամանակ ե-
գեր և ոչ անցցէ:

Ճապալ. 12, 7. Եւ դարձցի հողն յերկիր որպէս և էրն, և հոգին դարձ-
ցի առ Ապառած որ ես ըզնա:

Յալ՛. 7, 30. Խընդիքէին ըզնա ունել, և ել ի ձեռաց նոցա. և ոչ ոք
արէ ի նա ձեռն, զի չէ էր հասեալ ժամ նորա:

2.

Յարութիւն և Աղմահութիւն.

Ոչնչ բան չէ կորչում Աստուծոյ ըստեղծած աշխարհումը. ամենայն տեղ մահիցը ծընանումէ կենդանութիւն. ոչնչ տեղ արարչագործութեան աստիճանակարգի մէջ, աշխարհի տեսարաններումը ըլ կայ մի անկանոն բան: Ամենայն տեղ իմաստուն տընտեսութենով բաշխած են զօրութիւնքը, և մարդը միայն պիտոյ է աւելի կարողութիւն ունենար՝ քան թէ հարկաւոր էր այս կեանքի համար, և կարելի էր որ նորա գործականութիւնը միայն խափանվէր յանկարծ: Մարդը՝ իւր սըրախ մէջ կրելով մի առաւել լաւ աշխարհի կարօտութիւն՝ միթէ չէր պիտոյ՝ որ ժառանգէ այս իւր հաւատի և յոյսի երկիրը. միթէ պէտք է լինէր նա բարեպաշտ և երկիւղած, բայց այդու ամենայնիւ՝ թըշուառ, թէպէտ նա պաշտումէր Աստուած որպէս մի արդարադատ էակ: ԱՇ երբէք. ամենայն գարուն, ամենայն արշալյս առաւօտու քարոզումէ ինձ՝ թէ կայ մի այլ աշխարհ որի վերին և անպատմելի երանութենին մասնակից լինել հրաւիրած եմ և ես: Իմ հոգիս պիտոյ է յարատեէ, նա անհոն է. և ես հաւատումեմ այդ բանի ըստուգութեանը, որովհետեւ ինչ որ բանականութիւնն և սէլլով թողումէ ինձ եզրակացուցանել և գուշակել, այդ ևս հաստատումէ Քրիստոսը, և դորա հաւաստութիւնը զօրացուցանումէ իւր իսկ յանութիւնն: Մեր հոգելին մարմինը ևս պիտոյ է փառաւորվի, և մեր հոգու պայծառ կամ ազօտ վիճակի համեմատ՝ նոր կերպարանք ըստանայ այն օրում՝ որ միանգամբ Յիսուսի Քրիստոսի ձայնովը յարութիւն Կ'առնուն բոլոր մեռեալ մարմինքը թէ երկիւղածների, և թէ չարագործների, և միանալով իւրեանց հոգիների հետ՝ կ'երթան յաւիտենականութիւն:

Ճանը մասձութիւն. ով մարդ՝ ինչ հոգով և ոըրառվ կը լինիս գու այն ըստէութիւնը որ քո հոգին անջանավումէ մարմնիցըդ, պյուղէս ևս կը շարտանակ վի քո կեանքը. ինչ աստիճանն առաքինութեան կամ շարագրութեան, աստանածգիտութեան կամ աստանածանվիտութեան հասած ես գու այն ժամանակը, մի և նոյն աստիճանով կը լինիս միւս կեանքումը: Քո ուեպհական՝ յաւիտենական երանութեան կամ թըշուառութեան հարտարապետը կարող ես լինել գու ինքըդ: Դու սիրումես քո անձը, եթէ գու աչ ու գոլով հոգաբարձու ես առաջնին մասին: Մեռելների յարութեան ժամանակը ինչպէս վկայումէ սուրբ գերեզ՝ մեր յատուկ մարմինը յարութիւն կ'առնաւ, բայց կը լինի աւելի գեղեցիկ և փառաւոր, զօրեղ, գուարթ, ան-

վաստակելի, և կարաղութիւնը բռուցացմ՝ որ աւելի վերին և ազնիւ ուրախութիւններ վայելել, քանի թէ մարդմասուրները երկրի վերայ: Բայց թէ չարագործների մարմինքը Ե՞նչպէս կը լինին, դորա մասին տեղեկութիւն չէ տալիս սուրբ գիրքը:

Յովհ. 5, 28. 29. Ընդ այն զի՞ զարմանայք. զի եկեղէ ժամանակ յորում ամեններին որ ի գերեզմանելու կացըն, լսեցն ձայնի նորա և եկեղէն արտաքոր. որոց ըզօքարիս գործեալ իցէ՛ ի յարութիւն կենաց, և որոց ըզօքար արարեալ իցէ՛ ի յարութիւն դատաստանաց:

Յովհ. 11, 25. 26. Ասէ ցընս (ցըՄարթա) Յիշուս. ես եմ յարութիւն և իեանք. որ հաւասաց յիս, թէպէտ և մեռանին կեցըէ՛: Եւ ամենոցն որ կենդանին է և հաւասանց յիս, մե՛ մեռցի ի յաւեխեան. հաւասանն այսմիկ: Փիլիպ. 3, 24. Որ նսորդեցից ըզմարմին խոնարհութեան մերոց, կերպարնակից լինել մարմնոց փառաց նորա, ըստ զօրութեանն՝ առ ի կարու լինելոց հնապանդեցուցանել ընդ իւր և զամենայն:

Կարլոնթ. ա. 15, 42. 43. «Սյոնպէս և յարութիւն մեռելոց. ուերմանի առականութեամբ և յառնէ առանց ասպարհութեան. ուերմանի անսորդութեամբ և յառնէ փառօք, ուերմանի տըլարութեամբ և յառնէ զօրութեամբ: Անբանին մարմին շնչառոր և յառնէ մարմին հոգեոր. եթէ դոյ մարմին շնչառոր, դոյ և հոգեոր:

Պատկ. 20, 55. 56. Խոկ որ արժանի լինիցին այնըլո՞ աշխարհի հատանել և յարութեանն որ ի մեռելոց, ոչ կանցոց առնեն և ոչ արանց լինին: Քանիզի և ոչ մեռանել ևս կարեն, զի հաւասար հրեշտակաց են և որդիք Աստուծոյ. քանիզի յարութեան որդիք են:

Յ.

ԱՀԵՂ ԷՄԾ ՎԵՐԴՅՆ դատաստան:

Մեծ և զարհուրելի փոփոխութիւնք երկրի վերայ յառաջընթաց լինելով կը ծանուցանեն ահեղ դատաստանը որ՝ մեռածների յարութենից յետոյ առնելու է Քրիստոս, որին՝ վասըն զի եղել է մարդկութեան փըրկիչը՝ այդ իշխանութիւնը և հրամանը տուել է Աստուծած: Այս դատաստանումը՝ Աստուծոյ անձառելի արդարութեան, գըթութեան և իմաստութեան համեմատ, միտ գընելով բոլոր հանգամանքներին որոնց մէջ մարդիկ թէ բարեգործ են եղած և թէ չարագործ, և այն կարողութեններին որ նորա ըստացել էին Աստուծուց, ամենայն մարդ առանց երեսալաշտութեան իւր վըճիռը կը ստանայ ինչպէս որ մասձել է և գործել է: Թա՛ երբ կը լինի այս վերջնին դատաստանը, այդ մեզ անյայտ է:

Ո՞վ մարդ, ո՞վ քրիստոնեայ, չափ գեր քեզ՝ երբ որ քո ընկերները դատումեն. Ազտուած միայն ճանաչումէ նորանց. թող նա՛ դատաստան առնենցոց: Այնուէս կացիր դու՛ որ քեզ երբէք հարկաւոր ըլ լինէր դողաւ Ազտուածոյ կամ դատաստանի առաջնութ. միշտ քո հոգու աչքի առաջնութ դեր այն վերջին պատապիսանատուութիւնը. բայց այս կենուքի անմեղ ուրախութիւնքը մի՛ թող որ պըզոսրվէն քո համար այն մարդերի դատարկ խօսքերովը որ կամենումեն աշխարհիս վերջը և յետին դատաստանի օրը սահմանեւ: Ո՞վ ըշճանաշած անմեղութիւն՝ ուրախացնը այս օրի վերսց, բայց դու, ո՞վ ծածուկ յանցաւոր, վախեցնը նորա լուսիցը՝ որ ամենայն դործ կը յայանէ և կը հրատարակէ:

Կորընթ. ք. 5, 10. Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինեւ կայ առաջի առենին Քրիստոսի, զի ընկալցի եւրաքանչեւը իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի և եթէ չար:

Հռոմ. 2, 11. Զե ոչ է ակնաւութիւն առաջի Ազտուածոյ:

Ղուկ. 12, 48. Եւ որ ոչն գիտից և արժանի գանի ինչ գործիցէ, արց ցան տակաւ. ամենայն որում շատ տուաւ, շատ խընդրեցի ի նմանէ, և որում բազում աւանդեցաւ, տուաւէւ ևս պահանջնոցէն ի նմանէ:

Մարկ. 13, 32. Այլ վան աւուրն այնորիկ և ժաման ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակ յերկինը և ոչ որդի, բայց միայն հոյր:

Պետր. ք. 5, 10. 13. Այլ եկեղէ օր Տեամս երեւ ըզգով, յորում երկինք տագնապաւ անցըն և բնութիւնք հըրով կեղեաւ լուծցին և երկիր և որ միանեցամ ի նմա գործք գտանիցնի: «Եսոյ երկիրց և նորոյ երկրի ըստ աւետեացըն հայեցեաւ ըսպառելք, յորըս արդարութիւնըն ընակէ:

Կորընթ. ա. 4, 5. Այսուհետեւ մի յառաջ քան ըզգամնակըն գտակիք, մինչև եկեղէ Տէր որ լուսաւոր առնից ըզգազննիս խաւարի և յայնից ըզգուրհուդըս սըբակց, և ապս եւրաքանչեւը գովութիւն եղիցի յԱզտուածոյ:

4.

Յաւիսինականութիւնն. յաւիսինականն էրանութիւն և յաւիսինական դատապարտութիւնն.

Այս ընդհանուր վերջին դատաստանի հետեւանքը կը լինի այն էրանակէ կամ նըշուածակը, որին կը հասանեն մարդիկ միւս կեանքումը, յաւիսենական երանութիւն, յաւիսենական դատապարտութիւն: Եթէ հարցընենք այդ վիճակը որ պիտոյ է երկիւզածները ժառանգեն, և թէ ինչ բան է այդ յաւիսենական երանութիւնը. սա՝ պատասխանումէ սուրբ գիրքը՝ է վիճակ ամենակատար ազատութեան մարմնաւոր և հոգեւոր ցաւերից և տըկարու-

թեններից, կենակցութիւն Աստուծոյ և Քրիստոսի հետ, մի միայն բարի մարդերի և մանաւանդ երանելի վարքով նընչեցեալ բարեկամնելի հետ և դասակցութիւն Աստուծոյ սուրբ հրուշակներին. այնալիսի մի գերագոյն և հաստատուն առաքինութիւն՝ որ անփորձ և ապահով լինելով առաջին երկրաւոր խափաններիցը՝ կարող է աւելի շուտով հասանել կատարելութեան. աւելի զօրաւոր և անարգել ներգործականութիւն Աստուծոյ արքայութեան համար, և այն երանացուցիչ մտածութիւնը՝ որ մարդը իւր հաւատովը յաղթել է աշխարհական ցաւերին, և բարի վարքը է ունեցել երկրի վերայ, կամ թէ Աստուծով իւր պատերազմը ընդդէմ մեղքի և ախտի յաղթութեամբ պատերազմել է:

Ուրեմն աշով և գործութեամբ գործեցէք, որ կարողանաբ երանութիւն գըտանել: Պատերազմով ըստանալ յաղթութիւն, ցաւերսվ՝ ուրախութիւն, մահով՝ կեանք. այս է քրիստոնեի հաստատուն կանոնը: Մարդուցն է միայն կախ, արգեօք այն կոչումը՝ որ նա կոչվել է Յիսուսի Քրիստոսի բերանավը՝ պիտոյ է անողուտուղ կորչի նորա համար, կամ թէ այն հայրական անօրէնութիւնքը՝ որ Աստուծ նորա համար գործ է գըրել՝ պիտոյ է արդիւնաւոր լինէին: Մարդու ունի իւր առաջնել՝ կեանք և մահ, ինչ որ կը կամնայ, այն ևո կը սահայ: Երկընքի երանութիւնը արժէ արգարեան որ մեք քաջ ուրախով աստաբեզ դուրս գտնիք մեղքի և ախտի գէմուգէմ. յաւիտենական կետնիքի անշառամ ոլուակը կը լինի մեր բաժինը, ըստ որում երկինք և երկիր կ'անցանեն, բայց Յաւիտենականի խօսքը կը մընայ յաւիտեան:

Աստօթ. 25, 21, 46. Անէ յընա աէրն իւր. աղնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուգ հաւատարիմ ես, ի վերայ բազմոց կացուցի ըզքեղ. մուտ յուրախութիւն Տեսան քո: Եւ երթիցեն նոքա ի տանջանուն յաւիտենականըս, և արգարքըն ի կեանաըն յաւիտենականըս: Տիմոթ. բ. 4, 18. Փըրկեցի զիս Տէր յամենայն գործոց չարեաց և զերծուոցի զիս յարքայութիւն իւր որ յերկինս է, որում փառք յաւիտեանըս յաւիտենից, ամեն:

Յայտն. Յովէ, 21, 4. Եւ զընչեցի զամենայն արտօսը յաջաց նոյա. և մահ ո՛չ ևս գոյ, ո՛չ սուրդ և ո՛չ աղաղակ, ո՛չ ցաւք և ո՛չ աշխատանիք ո՛չ ևս գոյ, զիս առաջնելն էանց :

Յովէ. 17, 24. Հայր՝ զոր ետուքն ինձ՝ կամիմ՝ զիս ուր ևս իցեմ, և նոր քա իցեն ընդիմ, զիս տեսանիցեն ըզիստուն զիմ՝ զօր ետուքն ցիս, զիս սիրեցեր զիս յառաջ քան ըզինելն աշխարհի:

Դապատ. 6, 7. 8. Մ' խարեիք, Աստուծ ոչ արհամարհի. զիս զոր ինչ սերմանէ մարդ, ըլոյն և հընձեցի:

Հառմ. 8, 17. Եւ եթէ որդիք, առա և ժառանդք Ապուծոյ և ժառանդակիցը Քրիստոնի. եթէ չարչարանացըն կը ցորդ լինիմք, և փառացըն հաղորդ լինելոց եմք:

Կորլնթ. ա. 2, 9. Այլ որդիս և գլբեալ է, զոր ակըն ոչ ետես և ունկնի ոչ լուսու և ի սիրս մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Ապուծոած սիրեւաց իւրոց:

Յով. 3, 5. Պատախաննի ետ Յիսուս և առէ յընա (ցընիկադեմո). ամէն ամէն առեմ քեզ. եթէ ոչ ծընցի ի վերըստին, ոչ կարէ առանել զարքացութիւն Ապուծոյ:

Տայջ՝ ինքան մեծ է երկիւղաճների երանութիւնը այն կեանք քումը, այնքան ևս մեծ կը լինի առանդաններէ լուշանակներէ: Մըշտըն ջենաւոր կենակցութիւնը չարագործների հետ, նոցա անհանգիստ խրզնմասնիքի տան ջանքը, նոցա արթուր օթեվանը, նոցա կատաղի ախտերը որոնց չեն կարող միւսանգամ հաճյանալ, և այն մասամն ջութիւնը որ երանութենից զըրկված էին. ահա քեզ նոցա վիճակի սղրումելի պատիքը, ինչպէս նկարագրում Սուրբ գիւրը Եւ եթէ մարդը յայս ունի որ Ապուծու անշուն ողօրմութիւնը չարագործին հընար կը տար իւր չարչարանքը թեթեացըները, բայց սյ՝ երկար կը տեէր և տարաժամ կը լինէր. թէպէտ սյնու ամենայնիւ այսպիսիների վիճակը այլպէս էր լինէրց քան թէ երկիւղաճների վիճակը:

Ո՛Լ մարդ՝ երկիւղիքը Ապուծուց և պահիք նորա պատուիրանքը. պատահու որ պայտիւն միայն կարելի է վերջապէս երանութիւն գլանել: Զանք արս, ըշտապիք դասակից լինել բարեգործներին և երկիւղաճներին՝ ինչքան որ ժամանակը ձեռքումը է. որովհետեւ ուրանականութեան ժամանակը պիտի անել է միայն, եթէ կամենումեն այն կեանիքումը հընձել և ժողովել:

Մատթ. 21, 41. Յայնժամ սասացէ և ցայնոսիկ որ ընդ աչեկն իցեն. երթայրէ յինէն անիծեալք և հուրըն յաւ-խաննական որ պատրաստեալ է սահանոյի և հրշամարտ նորա:

Թակուղն. բ. 1, 8, 9. Ի բոց հըրց առնուլ ըգլըրէժոյ յայնցանէ ոյք ոչ ձանացն զԱպուծոած և որ ոչ հնազանդին աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի: Ուր ասցցին զըրէժոյ ի սասակումն յաւ-խունից՝ յերեսաց Տեառն և ի փառաց զօրութեան նորա:

Դառկ. 16, 26. Եւ ի վերայ սյուըր ամենայնի զի՞ մեծ է ընդ մեղ և ընդ ձեզ. եթէ կոմիցին ասոի առ ձեղ անցանել, ոչ կարեն. և ոչ սյափ ոք մեղանել:

Մարկ. 9, 47. Ուր որդըն նոցա ոչ մեռանի և հուրըն ոչ շիջանի:

Կորլնթ. ա. 5, 10. Քանզի ամենեցուն մեղ յանդիման լինել կայ առա-

չի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմառ, զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի և եթէ ցար:

Գաղափար. 6, 7—9. Մի՛ խաբիք, Աստուած ոչ արհամարհի, զի զոր ինչ սերմանէ մարդ, ըլնցն և հընձեացէ. որ սերմանէ ի հոգին, ի հոգւոյ անտի հընձեացէ ըղիւանորն յաւիանից. այլ ըգեարիս գործեւ մի՛ ձանձրասցուք, զի ի ժամանակի իւրաւմ՝ հընձեացուք առանց լրքանելց: Տե՛ս Սուրբ ոլտումալբութիւն. Ղաղարս և Մեծատուն:

Բ

ՔՐԻՍՏՈՆԵՒՄԿԱՆ ԲԱՐՈՅԵԿԵՆՈՒԹԻՒՆ

Հասարակաբար խօսուածք.

1.

Գործելու հիմք.

Մարդու առաւել մեծ գերազանցութիւնը այն բանի վերայէ հաստատած, որ նա ունենալով դատելու հնարաւորութիւն՝ կարող է իւր խորհուրդների և գործերի հիմներին վերահասու լինել, որ նա գիտէ՝ թէ իւր արածը էն պատճառակնէ: Ինչքան առաւել սովորումէ նա իւր կամքը ստորագասել Աստուծոյ՝ իմաստուն և ողորմած հօր կամքին, այնքան ևս հեշտանումէ նորան իւր հոգու զօրութենովը յաղթել մարմնի կամ ըզգայականութեան հարկադրանքներին, այնքան ևս աւելի մօտենումէ բարյադին կարասէլունիննէ:

2.

Եթէ արժան էր՝ որ մարդուս բոլոր խորհըրդածութիւնքը և գործքը ունենային մի որոշեալ յատկանըշան, ապա պիտոյ էր որ նոքա ծրնանէին քանի մի հետապնդութիւն կանոններից: Այն օրէնքը որ սյս հիմնական կանոնները աւանդումէ մեզ, ասվումէ բարյադին օրէնք, որ կիսով չափ է հելսէն, բնական (բանականութիւն, ազատ կամք, խիղճ մըտաց), և կիսով չափ՝ ովդաքէն (յայտնութիւն աստուածային, սուրբ գիրք):

5.

Պարսկականութեան մատուցութեան:

Ինչ որ մարդը՝ այս կանոններին նայելով՝ կը համարձակվի առնել, թոյլ տուած է, իսկ է. ինչ որ նա չի համարձակվի առնել՝ ունի է: Առաջնորդ պարտ և արժան է մեղ առնել, վերջնորդութ որովհետեւ մեք՝ ինչպէս բանաւոր արարածներ՝ այս հնագանդութեան հարկաւորութիւնը և փըրկաւէտութիւնը հասկանութեանը (Պարտականութիւն):

4.

Գարդեզի օր բնագործութեամուսնութեանը և բարոյականութեանը:

Մի գործ կարող է լնել օրինապատշաճ, բայց ի վերայ պղը ամենայնի ըունենալ բարոյական յատկանը շան: Մեր պարտավընարութիւնը՝ մի՛ գուցէ որ երևէր ըստիպանքով յառաջած, պիտոյ է մեղ միշտ ազատակար և ուրախութեամբ կատարել, ոչ ինչ իւրասիրական երկրորդական դիտաւորութենով, այլ շըշմարիտ սիրով դէպ ի բարին, ձըշմարիտ վըստահութենով՝ որ այսպէս միայն կարող ենք ընդունելի լնել Ապտուծուն և նորա բարերարութեններին արժանի դըտանվել:

5.

Առաջենութեան:

Մի միայն այս բարոյական ազատութիւնը կարող է տալ մեր գործերին բարոյական ապահովութեամբ: Երբ որ նա հիմն է մեր գործերին, կարող ենք միայն հաշեւ ձրգել մեր արդիւնաւորութիւնը, կամ պակասաւթիւնը, մարդուն բարի կամ չար ասել. և ինչքան յաձախ այսպէս կը հետեւնք բարի բանին, այնքան ևս ամրութիւն կը ստանանք դորա մէջ (Առաքինութիւն). և եթէ այս առաքինութիւնը կատարվումէ՝ միտքը դէպ ի Ապտուծած ուղղելով՝ այն ժամանակը ծնանումէ Կրօնապատութիւնը:

Յակով. 1, 25. Խոկ որ յառեալ ի կատարեալ օրէնս ազատութեանըն հայեցի և ի նըմին կացցէ, ոչ եղիւ նա ըստ մոռապութեան, այլ առնելի գործոյն, նա յառնելըն իւրաւմ լիցի երանելի:

6.

Առաջ և Առաջ:

Առաքինութեան ներհակը Արատն է կամ թէ բոլոր կամքի
5*

և սըրտի վերաց թագաւորեալ ապականութիւնը, որ է բովանդակութիւնը որիշ որիշ անիրաւ գործերի (Մեղք) դէպ ի որոնց կողմը քարշումն մեղ մեր յօժարութիւնքը, ախարքը, բարսյական տըլարութիւնը և աշխարհի մոլորեցուցիչ բաները: Խնչողիս մեղքը, նոյնպէս և առաքինութիւնը ունի իւր աստիճանները, որովհետեւ նա գոյանումէ: և յայտնիքումէ՝ զանազան նապատակների վերաց իւր հիմք ունենալով: Կան մեղքեր՝ գիտութեամբ և անգիտութեամբ, կատարելով և հրաժարվելով, տըլարութենից և չափութենից, դարձեալ մեղքեր՝ մըրքով և գործով:

7.

Մէջէ հէտեւանէլ:

Ամենայն մեղքի քամակից վաղ կամ յուշ գալիս է Պատիժը՝ որպէս հոգեոր կամ մարմնաւոր ցաւ. և թէ վերջնըս չերեէր ևս խսկապէս, այնու ամենայնիւ չար խըզմընընքը՝ թէս երկար մի ջոցներից յետոյ՝ կը պատճառէ աստուածային օրէնքից անբզգամբար անցանողին սըրտացաւութիւն, ապաշաւանք և անձնարշամարհութիւն:

8.

Քը հոսանքաւան պարստութեան էրէս հայեցածք:

Վթէ կամենայինը քըննել պյն առանձին պարտականութիւնները որ մարդը՝ հետևելով բանականութեան և կրօնի օրէնքներին՝ կարող էր կատարել պյն ժամանակը հանդիպումն մեղ պյդ պարտականութենների մէջ երեք հայեցուածք՝ յառաջանալով մեր առընչութեններիցը դէպ ի մեր անձը և դէպ ի մեզանից դուրս առարկացը. պատճառ որ՝ մի մասնով կան պարտականութիւնը դէպ ի ամենու նույն էսէն, մի մասնով՝ պարտականութիւնը դէպ ի հոգ նույն էսէն, և մի մասնով՝ պարտականութիւնը դէպ ի հոգ նույն: Բոլորները հիմնած են քրիստոնէութեան գլխաւոր օրէնքի վերաց՝ որ Աքն է:

Մատթ. 22, 37. 40. Եւ Յիսուս առէ ցընս. ոիրեոցէս ըդՏէր Աստուած քո յամենայն ոըրտէ քումնէ և յամենայն անձնէ քումնէ և յամենայն մըտաց քոց: Աիրեցէս զընկեր քո իւրիւ զանձըն քո. յայս երկու պատուիրանըս ամենայն օրէնք և մարդուն կախեալ կան:



ԵՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԵԾ

Միք պարտականութիւնքը դէպ ի Աստուած։

1.

Աստուածոյ արշակոն։

Այն առաջին բանը, որին հանդէպ մարդը կարող է ունենալ պարտականութիւնք, Աստուածն է ։ պիտոյ է որ սոցա վերաց մի բառ միջէ խօսելով ըսկըսանենք քրիստոնէական բարոյականութեան վարդապետութիւնը, պատճառ, Ազտուած՝ ամենաբարձրեալ և առաջին էակն է՝ որի հետ մեր կապակցութիւն ունինք, բայց որում այս պարտականութիւնքը միւսների հիմն են, այլև մեծապէս ծանրալլըշիոները և ամենայն ժամանակ առաւելապէս օգտակարները։ Կորա զանազանվումեն այլ պարտականութեններից, նորանով՝ որ Ազտուած սորանց կատարելուցը ոչինչ օգուտ չէ ըստանում։ վասն այս պատճառի՝ մարդուս դէպ ի Ազտուած պարտականութենների վերաց խօսելով՝ պիտոյ է միաք դընել որ գլխաւոր բանը ոչ թէ այն ասացեալ աստուածապաշտական արարողութենների մէջ է՝ որ մարդուս համար են միայն, այլ Ազտուածոյ պաշտօնը մանաւանդ թէ այն սըրտի ըզգացողութենների և խորհուրդների մէջն է, որ պէտք է ունենար մարդ դէպ ի ամենաբարձրեալ էալլը։

Մատթ. հ. 10. Յայնժամ առէ ցընա Յիսուս. Երթ յետո իմ սատանայ. զի գըրեալ է. Տեսուն Ազտուածոյ քում երկիր պացես և ըննա միայն պաշտեայես։

Յայան. Յով. 22, 8. 9. Ազտուածոյ երկիր պաշ։

2.

Երիշ-շահուալլէ-ն դէպ է Աստուած։

Եթէ աստուածային ամենակարողութիւնը մասձելով՝ կարող էր մեր սըրտի մէջ յառաջանալ երկիւղ Ազտուածուց, ապա ուրեմն մեր սըրտի վըկացութեամբը գիտելով՝ որ այն ամենակարողութեան հետ զարմանալի կերպով ամենայն տեղ կապակցից են Ազտուածոյ իմաստութիւնը, սըրբութիւնը, արդարութիւնը և մարդասիրութիւնը, մեր առաջին պարտականութիւնը դէպ ի ամենա-

բարձրեալ էակը պիտոյ է լինէր Երկիւղածութիւն նորամից և երկըրպագութիւն նորա վսեմական (բարձրը) յատկութեններին։ Ճշշմարիտ քրիստոնեան ցուցանումէ Աստուծուն այս երկիւղածութիւնը և երկըրպագութիւնը՝ խոնարհ և ցած սըրտով։ Սառնասըրտութիւնը դէպ ի մարդկութեան հայրը՝ օտար մի բան է նորա համար։ որովհետև թեթեամութիւնը և կրօնի արհամարհութիւնը ապացոյց էր տրդիտութեան կամ չարութեան, դատապարտելի ազատամութեան և նախատելի ամբարտաւանութեան։ Երկիւղած քրիստոնեան կը հրաժարվէր նոյնպէս իւր՝ աստուծավայցել երկըրպագութիւնը սընապաշտական և մտացածին պատկերագըների վերայ հիմնելուց։

Սաղմ. 110, 10. Ըսկիզեն ըզգօնութեան՝ երկիւղ Տեառն։ իմստութիւն՝ բարի ամենեցուն՝ որք առնեն ըզնա. օրհնութիւն նորա մընայ յաւիտեանը յաւիտենից։

Սաղմ. 33, 8. Երկիցէ ի Տեառնէ ամենայն երկիր, և ի նմանէ գողասցին ամենայն բնակիչք աշխարհի։

Յովհ. ա. 4, 18. Եւ երկիւղ ոչ գոյ ի ոէր. այլ ոէրն կատարեալ ի բաց մերժէ զերկիւղն, զի երկիւղ ընդ առնջանոք է. խել որ երկընչին, չէ կատարեալ ի ոէրն։

Հառոմ. 8, 15. Զի ոչ առեք ըզգութին ծառացութեան միւտանգամ յերկիւղ, այլ առեք ըզգութին որդեգրութեան, որով ազաղակեմք, աբբա՛, հայր։

Աելուք. 1, 31. Ի գոնէը իմստութեան առակը իւրատու. գարշելի է մեղաստորին աստուծավաշտութիւն։

Աելուք. 2, 20. Երկիւղածք Տեառն պատրաստեցուն ըպարտը իւրեանց և առաջի Տեառն խոնարհեցուցեն զանձնիւը իւրեանց։

Յայոն. Յովհ. 3, 16. Այլ դու գալջ ես՝ և ոչ չերմ և ոչ ցուրտ, հանդերձեալ ես փըսիսիլ ի բերանոյ իմին։

5.

Այս երշիւղաճութէան յայստութէիւնը։

Այս երկիւղածութիւնը Աստուծուց՝ այնպիսի մի ըզգացողութիւն է, որանով մարդը ոչ թէ պատմից վախենալով, այլ պատկառելով Աստուծոյ էութեան կատարելութենիցը՝ չէ համարձակվում առնել այն բանը որ անիրաւ էր։ Ամենից յառաջ իւր երկիւղածութիւնը ցուցանումէ քրիստոնեան՝ սուրբ պահելով Աստուծոյ անունը, թեթեամութեամբ գործ չածելով նորան խօսակցութեան մէջ, չը սովորելով՝ նորան ամեն անգամ վըկայ բերել Ճշշմարտութեան համար (Եղիսաբէտ), չեռի կենալով անենահոյ որ շատ հա-

սարակ հոգունը շան է, և մանաւանդ ըզգուշանալով սուտ երդումն ուստի լուց, որ պիտոյ է նա համարի ամենամեծ պլղջութիւն Աք տուծոյ սրբութեամբ: Երբ որ երդումով կարող էր մի բանի ձըշմարտութիւն յայտն ըլլիլ, և այս պատճառով մեծաւորքը պահ հանջումն քեզանից՝ որ երդումն ուտես, նոյնպէս եթէ դորանով կարող էիր անմեղութիւնը հանդէս հանել և մարդու կեանք փըրկել, այն ժամանակը միայն երդումն արա, բայց և այսպիսի դիմուածի մէջ քաջ մատածիր և ըզգաստ սըրտով աղօթք արա գէպի Ազտուած որ նա լուսաւորէ քեզ, որ դու ազատ լինիս ամենայն անձնախարէութենից:

Աթաք. 1, 26. Երկիւղ Տեառն արգելու ըզմեզը:

Մէրիէ. 6, 8. Պատմեցաւ քեզ ով մարդ, զի՞նչ է բարի. կամ զի՞նչ իւնդրէ ի քէն Տէր. բայց առնել իրաւունըս և սիրել զովարմութիւն և պարաստ լինել երթարց ըզինի Տեառն Ազտուծոյ քո:

Աթաք. 23, 11. 14. 17. Զըերան քո մի՛ ընդելացուոցէս յերդումն, զի կարծանեմն մեծ է ի նմանէ. զի որ յահախէ երդնութ՝ ի մեղաց ոչ ազախի. զի թէ ուղարկէ, մեղք նորա ի վերայ նորա. և թէ անցցէ ընդ երդումնին կըրկին վընաս. և թէ ի տարապարատց երդուաւ՝ սակայն ոչ արդարանայ: Եւ ըզերան քո մի՛ սովորեցուոցէս յերդումնի:

Ելլց. 20, 7. Մի՛ առնուցուս զանուն Տեառն Ազտուծոյ քո ի վերայ մնուեաց, զի ոչ սըրբեցէ Տէր զայն որ առնուցու զանուն նորա ի վերայ մնուեաց:

Դւտակ. 24, 15. Եւ ընդ որդիին Խարայէլի խօսեցիս և առացես ցընուա. Այլ ոք այր՝ որ անիմանիցէ դԱզտուած, մեղս ընկալի:

Մատթ. 5, 54—57. Այլ ես առեմ ձեզ. ամենեւին մի՛ երդնութ, մի՛ յերկինըս, զի աթու Ազտուծոյ է. և մի՛ յերկիր, զի պատուանդան է սուից նորա. և մի՛ յերդուալէմ, զի քաղաք է մեծի արքայի. և մի՛ ի գըլուի քո երդնուցուս, զի ոչ կարեն մազ մի սպիտակ առնել կամ թուի: Այլ եղից ձեր բան, այն՝ այն, և ոչն ոչ. զի առելին քան զայն ի չարէն է:

Գաղատ. 6, 7. Մի՛ խարէիք, Ազտուած ոչ արշամարհի. զի զոր ինչ սերմանէ մարդ, ըզնյն և հընձեցէ: Տէ՛ս Սուրբ պատմ. չերովզէս:

4.

Համակարգութեան դէմուլ ի Աստուծոյ.

Եթէ այն երկիւղածութիւնը որ կը վայելը Ազտուծուն՝ յառաջանումէ մեր սըրտի վըկացութենիցը Ազտուծոյ ահաւոր մեծութեան մասին, և իւր հետ ընկերակից ունի խոնարհութիւնը, ապա

և մարդըս կը վըկայէ՝ սըրտով՝ որ պարտական էր ունենալ անպայման հնագանդութիւն դէս ի այդպիսի մի Աստուած։ Կորան պահանջումէ Քրիստոս իւր ամենայն դաւանողներիցը, ինչպէս որ ինքը հնագանդ գըտանվեցաւ։ և այս պարտականութիւնը կատարելով՝ կարող է մայսն Քրիստոսի յայտնութիւնը աշխարհի վերաց փըրկաւելու լինել մարդկեղեն ազգին։

Յաէ. ա. 5, 5. Քանզի այս է ուրըն Աստուածոյ, եթէ ըլլպատուիրանը նուանուցուք, և պատուիրանըն նորա չեն ինչ ծանունք։

Յաէ. 15, 10. Եթէ պահեցէք ըլլպատուիրանըն իմ, կացջեք ի ուր իմ, որովէու ես ըլլպատուիրանըն հօր իմոյ պահեցի և կամ ի ուր նորա։

3.

Պարունակութիւն։

Իսյու եթէ այս պարտականութեան կատարումը պէտք էր որ մեզ ծըլշմարտապէս ընդունելի առներ Աստուածուն, եթէ մեր հնագանդութիւնը պիտոյ է արդարեւ մի արժանաւորութիւն ունենար, ապա մեզ պարտական ենք հնագանդել Աստուածուն՝ ոչ թէ շահամիրութեան աղագաւ կամ թէ հարկադրանքով, այլ կամակար սըրտով և ուրախութենով։ Տես Սուրբ պատար. Ելրահամ, Յովնան, Մարիամ, Յիսուս գէթսեմանումը։

6.

Աւո գէտի և Աստուած։

Աւոր առ Աստուած այնպիսի մի ըլլպացոլութիւն է՝ որպահնուլ մեր սըրտումը գոյանումէ մի քաղցըր հաճութիւն, մի կենդանի ուրախութիւն Աստուածոյ կատարելութենների, գործերի և բարերարութենների վերաց։ Այս ըլլպացոլութիւնը հեշտ կը զարթնու մեր մէջ՝ եթէ նայենք այն անհամար շընորհներին որ Աստուած սրիուել է մեր ընըս կողմը, մանաւանդ եթէ մըտածենք այն փըրկութիւնը և յախտենական երանութիւնը որ նա Յիսուսի Քրիստոսի միջնորդութենով պատրաստել է մեզ։ Այս բոլոր թէ մարմնաւոր և թէ հոգեօր շընորհները բատացել ենք մեք առանց դոցա արժանի լինելու, առանց պահանջելու իրաւունք ունենալու։ Այս պատճառաւ պարտական ենք ամենից առաւել սիրել Աստուած, որովհետեւ նա մեզ յառաջնորդ սիրել է, օրհնել է և երանացուցել է։

Սիրաք. 1, 14. Խոզ Աստուածոյ պատուելի՛ իմաստութիւն։

Ապղ. 37, 4. ԺՆԹԱԿԵՇ ի Տեառնեշ, և նա տայէ քեզ ըզիլնեբրուա-
ծըն սըստի քու:

Յովհ. ա. 4, 19. Մեք սիբեսցաւք զԱզառւած, վասն զի նա նախ սիր-
եաց ըդմել:

Յովհ. ա. 5, 5. Քանզի այս է սէրն Ազառւածոյ, և թէ ըզպատականելու
նորա պահեացուք. և պատականքն նորա չեն ինչ ծանսնեք:

7.

ԸՆԹԱԿԱԿԱՐԱԾՄԵԼԻՆԻ ՎԱՐՈՒԺՈՒՅ.

Հայց այսպիսի մեծամեծ բարերարութինների փոխարէն՝
մարդը և քրիստոնեան պարտական է իւր Տիրոջը և Արարչին շը-
նորհակալութիւն մատուցանել. այս շընորհակալութիւնն յայտ-
նութիւնը է մարդու սէրը դէպի ի Ազտուած: Մարդըս իւր երախ-
տագիտութիւնը դէպի ի Ազտուած չէ կարող ցուցանել նիւթապէ, և
փոխարիններով, ինչպէս փոխարինումէ իւր ընկերին: Այս պատ-
ճառով սըստալ էր միշտ այն մրտածութիւնը, որպէս թէ կարելի
էր Ազտուծուն փոխարինական ընծաներով (զոհերով) շընորհա-
կալ գրանիվիլ: Ճըշմարիտ քրիստոնեան ծանուցանումէ իւր շը-
նորհակալութիւնը գովելով և փառաբանելով Ազտուած, բայց ևս
առաւել զործ դընելով աստուածային տուբըր, յօժարութեամբ
հնապանդերով նորա կամքին և հանապազ միտ բերելով Ազտուած:

Ազակ. 21, 3. Գործել զարգարութիւն և խուել ըդքըմարտութիւնն
հանց է առաջի Տեառն առաւել քան զարիւն զոհից:

Եվեկանց. 5, 20. Գոհացարուեք յամենայն ժամ՝ ի գերայ ամենայնի, յա-
նուն Տեառն մերց Յիսուսի Քրիստոսի, հօրին և Ազտուածոյ:

Յակով. 1, 17. Զե ամենայն տուբը բարեկ և ամենայն պարգեք կաար-
եալք ի վերուստ են իջեալ առ ի հօրէն լուսոյ, յորում չիք փափախումն
և իսամ շըրվեց ըստաւեր:

8.

ՎԱՐՈՒԺՈՒՄԵԼԻՆԻ ԴՐԱ ի ՎԱՐՈՒԺՈՒՅ.

Կմանասոկէս կարող էր մարդըս իւր շընորհակալութիւնը Ազ-
տուծուց յայտնի կացուցանել՝ լցուցանելով այն պարտականու-
թիւնը որ պատշաճաւոր Նշառականնէն է դէպի ինա, կամ թէ այն՝
փորձերի վերայ հիմնած միսիթարական վրկայութիւնը սըրտի՝ որ
մեք ամեն բան որ մեզ ճըշմարտապէս օգտակար էր՝ կարող էիք
յուսալ նորանից, այս նոյնպէս՝ թէ նորա ձեռը կարող էր և չարը
դէպի ի բարին առաջնորդել. այլու թէ Ազտուած այնպիսի մի հայր

է որ սիրելով իւր բոլոր և շատ ցած աստիճանի արարածները ևս՝
ոչ մինը չէ մոռանում, չէ անտես առնում, այլ նոյցա ամեններին
աւելի բարերար է քան թէ նոքա խընդրումեն և խմանումեն:

Ծայց այս վրատահութիւնը դէպ ի Աստուած չէ այնպիսի
որ Աստուծուցը հրաշտէ ակրնկալութիւն ունենար, ոչ այնպիսի՝
որ թոյլ տար անգործութիւն և ժամանակներէ և զարդարեներէ վատնո-
զութիւն, այլև ոչ այնպիսի՝ որ տեսանելով իւր գուցէ անմիտ և
չափազանց ցանկութենների անկատար մընալը՝ յուսահատվէր
ապա, կամ թէ անպիտան բաններ խընդրելով և անկարգ յօժա-
րութիւններ ունենալով՝ յոյս դընէր աստուածային օգնականու-
թեան վերայ: Չէ, այս վրատահութիւնը դէպ ի Աստուած՝ է այն
Ճըշմարիտ երկիւղածութիւնը և բոլորովին անձնատուր լինելը
Աստուծուն, որանով մարդըս իւր անձը ստորադրումէ ամենաբարձ-
րեալ կամքի ներքոյ՝ այն քաջահաւատ վրատահութենովը որ ինքը
Քրիստոս իւր կեանքի մէջ այնքան լուսափայլ կերպով ցցց է
տուել մեզ, սա է գոհացողութիւն ամենայն որպիսութեան մէջ,
համբերութիւն՝ վըշտերի մէջ, քաջալերութիւն՝ վըտանգի մէջ:
Այս վրատահութիւնը ամրանալով կատարելապէս՝ Ճըշմարիտ աստ-
ուածապաշտը զարդարումէ այն երկնային նըշաններովը՝ որոնցով
ճանաչվումեն Քրիստոսի դաւանողքը, այսինքըն՝ Համապատասխան, Ակրոն
և Յուսուն: Տես սուրբ սբատում, Յովե, Յիսուս, Մարիամ:


Աերաք. 11, 21. Կաց յուսաին քում, և ի նոյն խոռոչիք և հընա-
ջիր ի գործըն քո:

Սաղմ. 115, 8. «Ելստուցանէ ըվնսա (ըվնոնարչըս, ըզտաւապեալըս,
զալքատըս) իշխաննըս. ընդ իշխաննըս ժողովը բերեան իւրոյ:

Ղուկ. 22, 42. Հայր՝ եթէ կամի՞ անցն ըզբաժակըս զայս յինէն. բայց
ոչ իմ՝ կամք՝ այլ քոյդ լինիցին:

Մատթ. 6, 25. 34. Վասն այդորիկ ասեմ ձեզ, մի՛ հոգայք վասն ոգ-
ւոց ձերոց՝ զի՞նչ ուտիցէք կամ զի՞նչ ըմսիցէք, և մի՛ վասն մարմնոց ձե-
րոց՝ թէ զի՞նչ ալտանիցիք. ո՞չ առաքեն ոդի աւտաւել է քան ըզիերակուր,
և մարմնն քան ըզանդերձ: Մի՛ այսուհետեւ հոգայցէք վասն վազտի, զի
վազիւն վասն իւր հոգացի: շատ է աւուրն չար իւր:

Տիմոթ. ա. 6, 6. Այլ շահալաձաւ մեծ՝ աստուածապաշտութիւնն է բա-
ւականութեամբ հանդերձ:



ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԵԿԾ

Պարտականութիւնքը դէպ ի մեր անձը.

1.

ԱՌՅԱՋԱԿԱՐՆԵՐՆԵՐՆ.

Խնչպէս երկիւղածութիւնը քրիստոնէի առաջին պարտականութիւնն է դէպ ի Աստուած, նոյնպէս և ԱՅՆԿՐԻՄՈՒՅՆ առաջին պարտականութիւնն է՝ որ դէպ ի մեր անձը պիտոյ է կատարել: Այս յարգութիւնը դէպ ի մեր անձը՝ յառաջանալով այն տեղից որ մեր մեր կենդանութեան վերին խորհուրդը քաջ հականութիւնը՝ և ըրտի վըրայութիւնը մեր ներքին արժանաւորութեան մասին, որ ունի իւր հիմք այն բանի վերայ թէ մեր մտածութիւնքը և գործերը համաձայն էին բանականութեան և սուրբ գըրքի հետ: Բայց քրիստոնեան իւր արտօնութիւնքը չափից դուրս չէ պատուելու: Նա կը զգուշանայ որ չանկանի ամբարտաւանութեան արատի մէջ դէպ ի Աստուած և մարդ. նոյնպէս՝ մի օտար բան է նորա համար ցածանալ մինչեւ ի Սուրբառհույն, որ նորա ազատութիւնը կը նուազեցուցանէր:

Գաղատ. 5, 26. Եւ մի՛ լիցուք սընապարծք՝ միմեանց ձայն տալալ և ընդ միմեանըս նախանձելով:

Եփես. 1, 4. 5. Որպէս ընարեաց ըղմեղ նովաւ յառաջ քան ըզլինելն աշխարհի՝ լինել սուբբու և անարատըս առաջի նորա սիրով: Յառաջադոյն սահմանեաց ըզմեղ յորդեգրութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, ի նոյն ըստ հաճութեան կամաց իւրաց:

Յով. 7, 18. Որ յանձնէ իւրմէ խօսի, փառըս անձին իւրում իրներէ, իսկ որ խընդիք ըզմառըս այնորիկ որ առաքեացըն ըզնո՞ն նա Ճըշմարիտ է և անիրաւութիւն ոչ գոյ ի նըմա:

Հռոմ. 12, 3. Զայս առեմ շընորհօքն Աստուծոյ որ առեալ են ինձ ամենայնի որ է ի ձեզ՝ մի՛ առաւել ինչ խորհել քան զարժանն խորհեց. այլ ի խորհելն ըզգաստանալ իւրաքանչիւր՝ սրպէս բաժանեաց Աստուած չափ հաւասարոց: Տես Առուբը սպասմ. Յովուէփ, Յիսուս, Փարիսեցիք:

2.

Ամանալիքութեան։

Վարդըս ինչքան առաւել իւր անձը յարգել հակոն է՝ ըստ սրում բաժանորդ է ճշշմարիտ առաքինութեան, այնքան ևս կը ուրեմն իւր անձը, որովհետեւ առանց յարգութիւն ճշշմարիտ աշւրը անկարելի բան է։ Ծակալէտե անձնասիրութիւնը՝ մի հայեցուածով՝ տընկած է և այն մարդու մէջ որի գործը և մտածութիւնը այնպէս չեն, որ նա հայոցնեան իւր անձը յարգել։ բայց այդ չէ այն անձնասիրութիւնը որ խմանումենք այս տեղ, որ և հիմանած է այն բանի վերայ՝ որ մեր առողջավիտ և Ազոտուծոյ օրէնքին համանայն կերպով հոգասոր էինք մեր հոգեղէն և մարմնեղէն բարեկենդանութեան համար։ Մէրը պիտոյ է լինի այն բանը որի հիման վերայ պարտավորձար էինք լինում որպէս դէսլի Ազոտուած, նոյնպէս դէսլի մեր անձը, վասն զի նա՝ ամենայն որպիստութեան մէջ՝ օրէնքի հայութեան է։

Մասթ. 22, 39. Եւ երկրորդըն (պատուիրան) նըման սըմին՝ սիրեցիս զընկեր քո երրու զանըն քու։

Փիլտր. 2, 4. Մ' զանձանց և եթ գիտել, այլ խրաբանչիւր ոք՝ զընկերին։

3.

Ամանալիքութեան հոգեստ համար։

Որչափ ազնիւ և մաքուր է այս անձնասիրութիւնը, այնչափ ևս առաւել իւր ներգործութիւնը կ'ուզեցուցանէ, նա այն բանի վերայ, որ մարդուս առաւել նախապատիւ մասն է, այսինքն՝ դէսլի չառնէն։ Սորա մասին խնամատար լինելը՝ միշտ կ'երեսի մեզ մեր առաջին պարտականութիւնը դէսլի մեր անձը։ Ուրեմն պիտոյ է մեզ օրէ օր աւելի կատարելագործել մեր հոգու բոլոր կարողութիւնքը և զօրութիւնքը, ջանադիր լինել միշտ առաւել իշխանութիւն տալ նորան մեր մարմնի վերայ, մահկութեան միջոցումը օդտակար գիտութեններով ձոխացուցանել նորան, և ամենայն դիսրուկ ժամանակ գործ ածել որ կարողանացինք օր քան զօր ամել և կատարեալ դառնալ հոգով։ Քրիստոնէի ջանքը կըլինի՝ ինչպէս բարի, նյյնպէս և հիմունինը հայուսութ լինել։ Պնձնամանացութիւնը կ'առաջնորդէ դէսլի բնելը, իսկ ժրաջանութիւնը և գործունէութիւնը՝ դէսլի գիտութիւն։ Քրիստոնեան կը դիմեցուցանէ իւր հոգին դէսլի ի խմաստութիւն, իւր

սիրտը՝ դէպ ի առարինութիւն, ինչքան որ այս անկատար կենացալումը կարելի էր:

Ազակ. 24, 14. «Եղնողէս և վլցի հանձար իմաստութեան յանձնն քում. զի եթէ զայն գտանիցեն՝ և վլցի բարեաւ վախճան քո, և յոյս քո մի՛ պահանջեւ:

Մատթ. 7, 5. «Զի՞ տեսմենս ըզգիլ յական եզօր քոյ, և ի քում ահան ըզգերանը՝ «Նըշմարեւ:

Փիլիպ. 5, 12. Իբր ոչ եթէ արդէն առեւալ եցեմ, կամ արդէն կատարեւալ եցեմ, ըզշես մըսեալ եմ թէ համից, մանաւանդ թէ ըմբռանեալ իսկ եցեմ և Քրիստոնէ Յիսուսն:

Կորնել. ա. 14, 20. «Ե՛զերք՝ մի՛ արլայք լինիք մըտօք, այլ ի չարեց արլայացարնը և մըտօք կատարեալք լինիլք:

Երբացեց. 15, 9. Յաւմնենը պէտզենը և յօտարածայնը մի գանգուչքը. զի լաւ է շընորհօք հասասաւէլ ըլլիբուը և ոչ կերպկովք՝ որովք ոչ ինչ ողտեցան որք այնպէնն զընացին: Տես Սուրբ պատմ. Յիսուս տաշարի մէջ, Մարիամ:

4.

Խնամապատրութիւն Տոբինի Համար.

Բայց ոչինչ նուազ հոգացողութիւն պահանջումէ մեր գոյութեան միւս մասը, այսինքըն՝ Տարհնն: Աս՝ հրաշալի արուեսով կազմած մի գործ Ապուծոյ, ոյլը՝ ինչպէս անմահական հոգու օթեվանը այս երկրաւոր կենցաղումը, արդարեւ արժանի էր իւրնամատարութեան: Խոր հետեւ արահաննել՝ պարտականութիւն է համարում մարդքս. կան պէսպէս ձանսպարհներ՝ ոբոնցով քրիստոնեան կարող էր ոյդ նպատակին հասանել:

«Կախ և առաջ գիտէ քիստնեայ մարդք որ Ազողջութիւնը՝ անհրաժարելի հարկաւոր է երկարակեցութեան համար, որ հոգ տանելով այս մասին, կարելի էր իւր կեանքը երկարացընել, բայց անհոգ լինելով՝ կարձացընել: Այս մարմնաւոր առողջութեանը կը հասանէ նա, կէս մի՛ այն կերակուրները վայելելով որ նորան օգտակար էին, և կէս մի՛ մանաւանդ թէ լուսառութիւնն իւր անձը ամենայն վայելքի մէջ, թէ տըրտմութեան և թէ ուրախութեան մէջ:

Աթրաք. 37, 50—54. Ո՛րդեակ փորձեա՛ զի՞նչ առողջարար եցէ մարմնաց քում, և մի՛ տար նըման որ ինչ լիսաւակար է, զի ոչ ամենայն՝ ամենայնիւ օգափ. Ո՛րդեակ մի՛ ապահէր գու յամենայն փափիւթենը քո, և մի՛ շըռայլք գու և պէտպէս խորախիս, զի և բազում խորտկաց մըտանեն ցաւք: Յագահութենն ըսպաւէք մեռան, իսկ որ ըզգոյշ լինի անձնն եւրց՝ յաւելու և կեանը:

Սիրաք. 30, 15—17. Աւաղթութիւն և առողջութիւն լաւ է քան զամենացն ոսկե. և մարմին կարօղ՝ քան ըզմեծութիւն անշափ. ոչ դոյ մեծութիւն լաւ քան զառողջութիւն մարմնոյ, և ոչ դոյ ուրախութիւն քան ըզմբնութիւն մարմնոյ. լաւ է մահ քան ըզմառն կեանըս կամ յաւը յերկարըս:

Սիրաք. 34, 22. Որպէս զի բաւական է մարդոյ խրատելոյ սակաւըն, և յանկողնի խրում ոչ հեծէ:

Հումո՞ւ. 13, 14. Այլ ըզգեցարուք ըզՏէր Յիսուս Քրիստոս. և մարմնոյ խընամ մի՛ տանիք ի ցանկութիւն:

Եվկեսաց. 5, 29. Զի ոչ ոք երբէք ատեայ զանձըն իւր, այլ ոնուցանէ և դարմանէ ըզնա, որպէս և Քրիստոս զեկեղեցի,

5.

Կ արտհական-լուկան.

Մանաւանդ թէ Սբուռնութեան և հեշտախտութեան արատներիցը ժուժկալելով՝ կը պահպանէ քրիստոնեան իւր հոյնի առողջ չունենալ և իւր հոյն առողջութեան չունենալ: «Յա ականատես է այն պատիժներին որ ծնանումն այս արատներից՝ ներկայ կեանքումը արդէն, զոր օրինակ հիւանդութիւն, ցաւ, խայտառակութիւն, և գուշակումը իւր հոգու մէջ թէ ինչպէս ծանր պատուհաններ միւս կեանքումը կը լինին բաժին այդպիսի պատուիրանազանցների և անիրաւողների դէպ ի իւրեանց մարմնը և դէպ ի միւսների անմեղութիւնը:

Ով երիտասարդ և կյա, ըզգոյշ կաց որ չը ծնանի քո ուրատումը այս մեղքի հաւանութիւնը. փախնիք միայնութենից, երեսըդ գարճու անպարհեց պատիշներից, ականչ մի՛ դըմիք անամօթ ծաղըաբանութենի, մի՛ ընթեռնուր տպականիչ գրբուածներ, թռող ամուսնութենեն լինի քո հըզոր պաշտպանը ընդդէմ այդպիսի արատների: Եվխատեր զանազն կերպով, աղջթք արա յաճախ, աղջքք արա՝ երբ դուռընչից և նէրդից մօտենումէ քեզ փորձանեքը: Տէս Առողջ պատմ. Յուլիփ, Դաւիթ:

Աքակ. 4, 10. Ո՛րդեակը՝ մի՛ խաբեացն ըզքեզ արք ամբարիշտք, և մի՛ ախորժեցիս:

Մատթ. 5, 8. Երանի՛ այնոցիկ որ սուրբ են ուրատիք, զի նոքա զԱպտուած տեսցեն:

Հումո՞ւ. 12, 11. Ի փոյթ մի՛ վեհերոտք, հոդունիւ եռացիք, Տեսուն ծառայեցէք:

Կորընթ. ա. 15, 33. Մի՛ խաբեկը. ապականեն ըզքարըս քաղցումըս բանը չարք:

Պետր. առ. 2, 11. Ալեքսանդր կը ըստ ըլլամերություն և ըզնըժ-
պէհըս ի բաց մերժել ի մարմաւոր ցանկութեանցըն որ զինուորին ընդ-
պէմ ոգւաց :

Եվետաց. 5, 3—6. Այլ պատմըկութիւն և ամենայն պըզնութիւն, կամ
աղաքութիւն, և անսուաննեցի մի՛ ի միջի ձերում, որպէս և վայել է ուր-
բոց, և զալըութիւն կամ խօսք յիմարութեան, կամ խեղկատակութիւն
որ ոչ վայելէ, այլ մանաւանդ գոհութիւն։ Զայս տեղէկացեալ գիտառնկը՝
թէ ամենայն պառնիկ կամ պիսծ կամ ագահ որ է կրապարիշտ՝ ոչ ունի
ժառանգութիւն յարքայութեանն Քրիստոնին Աստուծոյ։ Մի՛ ոք ըզնեղ
խարեցէ բանիւք ոնտաւովք, զի վասն այսորիկ խեկ զայ բարկութիւն Ա-
ստուծոյ ի վերաց որդւոյն անհաւանութեան :

Թեսաղնիկ 4, 3—6. Զի այս են կամք Տեառն, ուրբեութիւնն ձեր.
ի բաց լինել ձեզ ի պատմըկութիւնէ, գիտել իւրաքանչիւր ումեք ի ձենչ
զիւր ամենն ըստանաւ ուրբեութեամբ և պատուով. մի՛ ի ցաւըո ցանկութ-
եանն, որպէս և այլ հեթանոսք որ ոչ գիտեն զԱստուծած։ Մի՛ զանցանել
և զըրկել յիշիգ յայգմիկ զեզեայը խր, քանզի վըէժիւնդիր է Տէր ի վե-
րաց ամենայնի այգորիկ՝ որպէս յատաջագոյն աստայք ձեզ և եգաք վըեց-
ութիւն :

Մատթ. 18, 9. Եւ իժէ ամեն քո գոյթակցեցանէ ըզքեղ, խընա
ըզնա և ընկեա ի քէն. լաւ իցէ քեզ միականի մըտանել ի կեանը՝ քան
երկուս ազը ունել և անկանել ի գեհեան հըրց :

6.

Պատմականութեան .

Կմանապէս կարող էիր դու պահպանել քո առողջութիւնը
և կեանքը՝ հեռի պահելով քեզ Արքայանէնից որ մի նախատելի
սովորութիւն է, որ մարդըս ցած է գըլորում մինչև դաշանա-
կան վայրենաբարցութիւն, որ կողոպտումէ նորանից խելքը և
զօրութիւնը, և ձըգումէ աղքատութեան մէջ։ Գովելի էր նոյնպէս
Աշխարհութեան որանով արիւնը և մարմնի անդամները ըստանու-
մեն օրինաւոր շարժութիւն և պահպանվումն իւրեանց զուգա-
պատշաճ գործողութեան մէջ, և այսպէս յաջողվումէ առողջու-
թիւնը և մարմնաւոր բարեկեցութիւնը :


Մարմաւոր բարեկենպանութիւն և երկարակեցութիւն գըտանելու հա-
մար՝ բարսոք էր նոյնպէս կըրթել մարմներ խիստ բաներով, այլւ կանոնա-
ւոր միջոցներով աշխատութիւն և հանդիսաւ, քուն և արթնութիւն :

Դուկ. 21, 34. Զգոյշ էրուոք անձանց, գուցէ ծանրանսցըն ոիրուք ձեր

շունցառութեամբ և տրեեցութեամբ և հոգւովէք աշխարհականօք, և յանկարծակի հասանլից ի վերայ ձեր օրըն պյու:

Հառում. 15, 14. ԱՅԼ ըլլեեցարոււր ըղՏէր Յիսուս Քրիստոս, և մարմնոյ ինսամ մի՛ տանիք ի ցանկութիւն:

7.




Բայց՝ սորանից յետոյ պարտականութիւն կոյ նոյնպէս, որ մարդը ըս՝ թէպէտե քաջ ճանաչումը իւր կեանքի ծանր խորհուրդը և խնամատար էր իւր հոգու յաւիտենական փըլլութեան համար, իւր սիրուը միշտ չափաւորապէս ուրախ և զուարթ պահէր, որ կարողանար կէս մի կատարել Աստուծոյ կամքը որ դըրել է մեր մէջ դըրզումն դէպ ի ուրախութիւն և ցընծութիւն, և կէս մի հեշտութեամբ յաղթել աշխարհային հոգսերին: Անոնինը, ճաշուացնելուն և կենցարացնելուն բաց են առնում քրիստոնէի առաջնորդ հազար հազար ուրախութեան ազրիւրներ, որանցից կարող է նա վայելութիւն քաղել:

Բայց՝ ուրախութիւն որոնելով՝ չէր պիտոյ մեծահանողէս վայելութենակը քամակից գընուլ, որ թէպէտե համցայցընումն մեր ըզգայրանքը, բայց դատարի են թալումն մեր սիրաը. չէր պիտոյ որոնել որ դու քեղ անուննելի առնենիր համելիսի մէջ, կամ թէ ուրիշների հետ հաւատար երևէիր: Աչէլի հասարակ ուրախութիւնքը էին ըստ մեծի մասին և առաւել մաքուրքը և երանացուցիչքը (ընսանեկան ուրախութիւնը): Տես Սուրբ պատմ. Յիսուսը հարտանիքում:

Ճառզով. 11, 9. Ուրամի լեր երիտասարդ ի մանկութեան քում և զւարժացաւոց լորեզ սիրա քո յաւուր մանկութեան քո. և գնո՞ դու ի ճանապահներ սըրտի քո անարատ և ի ակնիւլ աշաց քոյ. և ծանե՞ր եթէ վասն սցորդ աննայնի ածցէ ըզգեզ Աստուծութիւն ի դատասաննե:

Ալիրոք. 30, 25—25. Ուրախութիւն սըրտի՝ կեանք մարդոյ, և ցընծութիւն մարդոյ՝ երկայնութիւն աւուրզ: Ափափեա զանձըն քո և միսիթարեա ըզմիթա քո, և ըզմըրամնութիւն հետի արա ի քէն: Չե ըզբազումը եռ սրմն արբամնութիւն և ոչ զո օգուտ ի նմանել:

8.



Եթէ սցս բոլոր ըզգուշութեան կամոնները կատարելով՝

այնու ամենայնիւ տըկարացած և հիւանդացած է, մարդու մարմինը, այն ժամանակը քրիստոնեան կը ճանաչէր՝ թէ իւր կեանքը պահպանելու և առողջութիւնը միւսանգամ գտանելու համար՝ պարտական էր որոնել մի յաշնանի բըժքըշի ճարտարութիւն Ժալասութեան և սընապաշոտթեան աղադաւ անտես առնել այս պարտականութիւնը՝ մեղք էր ընդդէմ իւր կենդանութեանը, և անշընորհակալութիւն էր գէպ ի Ազտուած, որ իւր ընութեան զօրութիւնը ի զուր չէ ըստեղծել:

Յակ. 2, 4. Մորթ ընդ մորթոյ և որ ինչ մարդոյ, ընդ անձին իւրոյ տուժեցի:

Արտաք. 38, 1—7. Պատուեա՛ ըզելքիշէ ի պէտը անձին քո, զի և նա յԱզտուծոյ արարեալ է, բայց ըլքըշկութիւն ի բարձրելցն է, և ի ժագաւորէ առցէ ըզպարկւու: Բարձրեալըն ըստեղծ յերկրէ ըզելքըշկութիւնս, և այր խորագէտ ոչ ի բաց խոտեցէ ըզնասա, և ետ մարդկան ըզդիտութիւն բարձրեալըն, զի պատուեցի ի ոքանչէլիս իւր: Ասքօք ըլքիշն գիւրացւոցէ ըզպաւու և խովեփեացն պատրաստուցէ անախ ըզելքըշկութիւն:

Յակ. 5, 14. Յետ այսորիկ զըստնէ ըզնս Յիսուս ի տաճարին և առէ յընու, աչաւագիկ ողջացար, մի՛ ևս մեղանչէր, զի մի չար ևս ինչ լինիցի քեզ:

9.

Ը արտահանելուն:

Հայց եթէ քրիստոնեան պարտական է ամենայն կերպով իւր կեանքը պահպանել մինչև այն ժամը՝ որ Ազտուած սահմանդրել է՝ առանց մարդուս յայտնի լինելոյ այդ, ուրեմն ամենայն պատճառ՝ որ այդ նրանտակը թէ գիտութեամբ և թէ անգիտութեամբ կարող էր ունայնացընել՝ կը լինի Անհաղուսունէն: Եթէ մեք խառնազնաց վարբով, տըրտմութենով և խելազար վրստահութենով՝ աւելի յառաջ քան թէ սահմանած էր՝ վերջացընումենը մեր կեանքը, այս լինումէ նորով անձնասպանութիւն. բայց եթէ բրոնութենով՝ լինումէ յաշնան անձնասպանութիւն:

Այնպէս ապրիր, որ քո մեղքը չը հարկադրէ քեզ գէպ ի այս յուսահաւաքիւ թէպէտ դու դորսնով մերջացընումեն քո երկրաւոր տանշանքը, բայց քո կեանքի որինալանքների վերայ աւելացընումեն մի ուրիշ յանցանք, չը հրաւիրած գընումեն դու Ազտուծոյ՝ քո դատաւորի աւաշել. և մի՛ կարծիր որ դու հաշովել ես՝ քո անձը ըստվանելով: Ուրեմն տաք համեմերութեամբ այն վըշտին և տառապանքին որ դու ինքըդ կապել ես քո վերայ: Ազտուած էր որ քեզ ըզպացըրեց քո տառապանքը, ոչ թէ՝ որ դու յուսակտութ լինիս, այլ՝ որ դու զարմնուս և ուղիես քեզ: Ըը-

Նորհիք քեզ կեանքի օրեր, բայց ուղղվեր քեզ, ըսկըսեր նոր և նորոց, լաւ շացրու ինչ որ կարող ես լաւացընել և պատճես ստացեր քեզ նոր արժանաւորութիւն Ազսուծոյ շընորհին: Այնուհետեւ աւելի խաղաղ և վլասահագույն քան թէ այն աշարկու ժամանմք՝ երբ քո անձնական կամքը ապօտատամբվելով աստաւածացին կամքեցը՝ կըտրումէ քո երկրաւոր կենդանութեան թէ եան թէ ելը, կարող ես գու Ազսուծուն յանդիմնն գլնաւ, երբ որ նոս գան չումէ քեզ: Այն ժամանակը Ազսուծոյ շընորհը չի սրակափ քեզանից և մի հեղ վըճիւ կը լինի քո մեջընուրացւթեան վարձը: Տես Սուրբ պատմ. Յուղա:

Սիրափ. 2, 27. Որ սիրե ըզիորուսո՞ւ ի նըմին կորիցէ:

Կարընթ. առ. 6, 19. 20. Եթէ ոչ գիտեք զի մարմինը ձեր տաճար են հոգւոյն որ է ի ձեզ, զոր ունիքըն յԱզսուծոյ, և չէք անձանց Տէր, քան զի գընց գընեցայք. փառաւո՞ր արարէք զԱզսուած ի մարմինըն ձեր և յու գիտ ձեզ:

40.

Անհնապահութեան:

Քանի մի դիալուածների մէջ միայն արժան էր մարդուն ըլ խնայել իւր կեանքը. մեր պաշտօն և ընկերների հանդիսանուն կարող էին սպահանջել՝ որ մեր իշտուն և առաջնութիւնն զոհ բերէինք. այս տեղ՝ վեհերութիւնը (վախիուսութիւնը) պարտականութեան ընդդէմ բան էր: Բայց Ազսուած սրաշտաբն է ազնուասիրա մարդուն որ իւր ընկերների բաղդաւորութիւնը աւելի վեր է դասում քան թէ իւր սեւպհական կեանքը:

Ըրմիշկը, աստուածացին բանի սպասաւորը, հայրենիք պաշտամնողը և հիւանդների սպահապահքը կարող են այս դիալուածների մէջ գըտանվել. Տես Սուրբ պատմ. Յիսուս, քրիստոնէական հաւատի մարտիրոպքը:

41.

Հոգածութեան ժամանակաւոր ըստացուածի համար:

Կեանքի և առողջութեան սպահապահութիւնի հետ՝ ինչպէս որ պարտականութիւն կար՝ կից է նոյնպէս հոգածութիւնը ժամանակաւոր ըստացուածի համար, Տաղիանուն ապառատի ճառին, որով հետեւ մարդուս մարմինը սպահապահվումէ միայն նիւթական կերակրով, և այս կերակրութ՝ առաջին մարդերի դըրախափ արտաքսվելուց յետոյ ըստացուածի միայն աշխարհութեան՝ քըրտինքը երեսին: Աշխատիր որ կարողանաս ապրել՝ ձայն է տալիս մեզ ամենայն օր.

գործ դընելով .քո մարմաւոր և հոգեսոր կարողութիւնքը՝ ամենայն օր մի օգտակար գործ կատարիր, և՝ մի գուցէ որ դու .քո զօրութիւնքը վասնես առանց նախատի և անխորհըրդաբար՝ կանուխ ընտրիր .քո համար մի սահմանեալ պաշտօն՝ միտք դընելով Ապուճուց .քեզ պարգևած ընդունակութեններին և զօրութեններին, այնպէս որ խելօք մարդերի հետ խորհըրդակից լինելով կարողանաս դու .քո կեանքի ներգործականութիւնը այն բանի վերաց ուղղեցուցանել՝ ինչ բանի համար աւելի ընդունակ էին քո հոգին և մարմնը, և ինչ պաշտօնի մէջ ձըշմարտապէս երանիկ կը համարէիր քեզ:

Ապակ. 12, 11. Ու գործէ զերկիր խեր՝ լըցցի հացիւ, և որ ըդէւտ երացաց գատարկութեան՝ լըցցի աղքատութեամբ. որ ախործէ զէնեաց գեղեանը, թաղցէ ի բնակութիւնը խեր գանագանը:

Ճաշնընդ. 3, 19. Քըրտամիք երեսաց քոց կերպես ըդհաց քո. մինչեւ գարձցիս յերկիր ուստի առար, զի հող էիր և ի հող գարձցիս:

Սիրաք. 11, 21. 22. Կաց յուխտին քում և ի նոյն խոսեսջիք և հնասըկը ի գործըս քո: Մի՛ զարմանար ընդ գործըս մեղաւորի և հաւատա՛ Տեաման և յամեա՛ ի վաստակըս քո:

Ճաշնազ. ա. 4, 11. 12. Ապաչէմ ըզէւդ եղքարք՝ առաւել ևս առաւելուլ և առաւտանաւ, հանդարտել և գործել զիւրաբանչիւր, և գործել ձեռօք ձերովք, որպէս և պատուիրեցաք ձեզ, զի գընայցէք պարկէշտութեամբ առ արտաքինուրն, և մի՛ խերք կարօտեալը իցէք:

Պետր. ա. 4, 10. Օտարասէլք լինել ընդ միմեանըս առանց տըբտըննըց. իւրաքանչիւր ոք՝ որպէս և ընկալաւ շընորհըս ինչ՝ ի միմեանըս ըդնոյն մատակարարել՝ իւրիւ ըզքարւոք հաղարապէտըս ոլէսպէս շընորհայըն Աստուծոյ:

Ճաշնազ. թ. 3, 10—11. Քանզի մինչ առ ձեզն խոկ էաք՝ զայս պատուիրէաք ձեզ, թէ որ ոչին կամիցի գործել՝ և կերպէ մի՛: Արդ լըսեմք զոմանց ի ձէնջ՝ թէ ըստահակութեամբ գընան. գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալք հետաքըրերք շըրջն. սյնակիւացըն պատուէք տամիք և աղաւեմք և Տէր Յիսուս Քիրիստոս զի հանդարտութեամբ գործեցն և զիւրեանց հայ կերպէն:

Ճաշնամ. 2, 7. (Հաստուցանէ Ապտուած) և ըզփաւըս և ըզգատիւ և զանեղութիւն կենաց՝ այնոցիկ որ համբէլութեամբ ի գործըս բարութեան իւլնդըն ըզկեանըս յաւխենից:

Կորընթ. ա. 7, 20. Քայց իւրաքանչիւր ոք յոր կոչումըն կոչեցաւ, և նըմին կացցէ:

12.

Դ պահանջման վերաբերյալ, առաջարկութեան, արդիակութեան (ճշշտութեան),
շահուառարտութեան։

Մարդը իւր աշխատսիրութենովը ձեռք է բերում իւր հացը և կեանքի պահպանութեան պիտոյքը։ Մինը հընձումէ իւր աշխատանքից առատ վարձ, միւսը՝ թէպէտե շատ ժիր և աջողակ էր, այդու ամենայնիւ հարկադրեալ էր տանել կարօտութենի։ Առաջնը պարտական է զգգուշանալ շահուառարտութեանից, հարցատութիւնը գործ դընել խոհեմութեամբ և պահպանել իւր անձը այն վլտանգներից որոնց մէջ կարող էր նորան ձրգել հարցատութիւնը, յաջող ժամանակումը սովորել շահուառարտութեանը՝ առանց իւր սիրտը բանալու դէպ ի ժըլատութեան կողմը։ Բայց վերջնը պիտոյ է բաւականանայ այն փորբովը, որ իւր վաստակաս սիրութենով ըստացել է, յուսալ դէպ ի Ապոտուած և հաւատալ՝ որ ապահովանեան ևս Ապոտուածուց է, բայց ոչնչ խափան չէ Ապոտուածոյ արքայութեան մէջ մէ՛ծ և հարուստ լինել։ Մի՛ հոգա նեղարութեամբ երկրաւորի համար, Ապոտուած գիտէ, թէ ինչ հարկաւոր է քեզ։ Տե՛ս Սուրբ սրբութ։ «Կարոթ, Յուդաս։

Սիրաք. 18, 53. Եւ հանդանակօք և փախով մի առքատանար, զի և մըշակ արբշաւ ոչ հացէ ի մեծութիւն։

Սիրաք. 18, 52. Ընդ փափկութիւննը մի՛ ուրախ լինիր, և մի՛ կազիր ընդ նրմա։

Տօբիթ. 4, 12. Պարտեք բարիք են ողորմութիւնք՝ առւազի Ապոտուածոյ։

Յովհ. 6, 12. Եւ երեւ յակեցան, առէ (Քրիստոս) ցաշակերտութն։ Ժողովացէք ըզնըշաստեալ կատորութ, զի մի՛ նուչ կորիցէ։

Ղուկ. 12, 15. Եւ առէ յընսոսա. տեսէք և ըզգոյշ լերուք յամենայն աշահութենէ, զի ոչ եթէ ի մըթերից ընչեց ուրուք իցեն կեանիք նորա։

Տիմոթ. ա. 6, 9. 10. Իսկ ուր կամբն մժանասալ, անկամբն ի փորձութիւն և յորոդայթ, և ի բազում ցանկութիւննը անմիտը և լինակարը, որք ընկըզմն ըզմարդիք ի ստատկումըն և ի կորուսո։ Զի արմատ ամենայն չարեաց արծաթութիւն է, որում ունաց ցանկացեալ վըլուց ցան ի հաւատոցըն և զանձննը արկին ընդ բազում ցաւօք։

13.

Հ ուժութեան իւր պատրուի և բարի անուան համար։

Յո՞ղ վերոյիշեալ պարտականութիւնքը՝ կայ մի այլ պարտա-

կանութիւն, այսինքըն՝ աշխատել պահպանել մի բարի անուն, որի ունենալը՝ աալումէ նոյնպէս պարփէտ։ Թռէպէտ արժան չէր ունայն պատուի հետեւից վաղել և ոչինչ ժամանակ չափազանց գին դընել աշխարհի դաստութեանը (պատուամոլութիւն), պատճառ որ դա շատ անգամ անհաստատ և անարդար էր. բայց չէր պարտ մեզ բարի մարդերի կարծիքը մեր մասին մի անխըտիր բան համարել, բայտ որում ցանկալով մեր բարի անունը միշտ անարատ պահպանել, ունէինք մի շատ զօրաւոր շարժառիթ դէպ ի բոլոր առաքինութիւնքը, և հեռի կը մընացինք այն սըխալանքներից որոնց մէջ շատ հեշտ կարող էր անկանել նա որ իւր ընկերների դաստողութիւնը ոչինչ է համարում։

Մեր կարող ենք մեր բարի անուան համար խնամատար լինել՝ ամենայն չար երևութիւն փախչելով, մեր անձը ոչինչ ժամանակ ցոյց ըլ տալով անսպիտան ընկելների մէջ, այլապէս ըլ խոռելով՝ քան թէ մոտածումինք, երբէք՝ և ոչ ըլքուանքի աղագաւ ըլ համսրձակլէլով կրօնի և առաքենութեան վերաց ծաղըաբանութիւն առնել, այս ամենաթեթեւ բաների մէջ ևս պարտականութիւն համարելով մեղ՝ ամենայն կերպով հաւատարիմ և պատուաւոր գլուխնվել։ Թռէ պատիւը կորած է, կորած է ամեն բան։

Ալբաք. 41, 15. 46. Հոգ տար վասն անուան, զի այս մընայ առ քեզ քան ըղչազար մեծամեծըն գտնձըս ոոկւց։ Բարի կենաց՝ թիւ ոչ գոյ առուրց, և բարի անուն մընայ յաւիտեան։

Ալբաք. 6, 35. 36. Ի բարձութեան ծերոց կացչիր, և որ իմաստունն է, ինա յարենչիր։ Զամենայն աստուածեզին պատմութիւն կամեաց լըսել և առակը հանճարոց մի՛ վկիսեցնեն ի քէն։ Եթէ տեսանիցես վիմասունըն, առաւածոտ առնեիչիր առնաս. և ըզուեամը գրանց նորա մաշեցայ՝ տալն քո։

Ալբաք. 12, 4. Բարի՛ արա խոնարհին, և մի՛ տար ամեալըշտն։ Խոս փանեա՛ ըղչազըս քո և մի՛ տայես նըսն, զի մի՛ նոքիմքը յաղթահարենցին ըղբեզ։

Կորընթ. ա. 9, 15. Բայց ևս և ոչ ըզմի նիչ յայոցանէ արկի և գործ և ոչ գըրեցի զայդ, զի նիճ այսպէս նիչ լինիցի. լաւ է նիճ մուտանել, և ոչ զի ըզտարծանըս իմ որ ընդունայն համարիցի։

Փելիս. 4, 8. Այսուհետեւ եղբարք՝ որ նիչ չըշմարտութեամբ է, որ նիչ պարկիշուութեամբ, որ նիչ արդարաւթեամբ, որ նիչ որբութեամբ, որ նիչ սիրալ, որ նիչ համբաւ բարեաց, որ նիչ քաջութեամբ, որ նիչ գոլութեամբ, զայն խորհիջիք։

Թեեսաղ. ա. 5, 21. Յամենայն երաց չարաց ի բաց կացէք։

Դաշ. 5, 26. Եւ մի՛ լիցուք ոընազարծք, միմեանց ձայն տալով և ընդ միմեանըս նախանձելով։

ԵՐԻՈՐԴ ՀԱՏՈՒՅԾ

ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆԱՌԻԹԻՒՔԸ ԴԵԳ Ի ԸՆԿԵՐԸ

Ա.

Ընդհանուրը.

1.

Թէ ի՞նչ ե՞տո՞ն պէս են հիմնած այս պարագաներուն և ի՞նչ էլլու.

Քրիստոնէի երջանկութիւնը կը լինէր մի կիսատ երջանկութիւն, եթէ նա չէր կարող իւր գործականութիւնը թէ հոգեռապէս և թէ մարմնաւորապէս ազգել այն էակների վերայ որ Աստուած մեր հետ այս երկրի վերայ բնակալից է արել և ժառանգակից՝ երկնաւոր արքայութեանը: «Ի,որա ցանկութիւնը, փափագը և ուրախութիւնը՝ չողովունենալուն է. և այս է Աստուածոյ կամքը: Սյա բանը ըզգումն և մարդը, և այս պատճառաւ ձանաշումն որ սուրբ պարտականութեններով կապած է ինքը իւր եղբօրների և քուրերի հետ:

2.

Յարդիւնական դէպ ի իւր նույնացնելը.

Յարդիր սորանց՝ ձայն է տալիս սուրբ գիրքը և բանականութիւնը: Քո ընկերները լինելով մի և նոյն մարդկեղեն ազգից, որպէս դու, զօրութենակից քեզ և մի և նոյն վախճանի համար կարգված՝ ինչպէս դու, լիսպէս արժանի՝ են քո յարդութեանը. նորա են քո հեջանքն, քո եղայրները և քոյրերը: Սոցա վերայ նայումն մարդըս ինչպէս է հօր զաւակների վերայ, ինչպէս հոգով և սըրտով ազնիւ արարածների վերայ, որ նոյն կեանքը պայծառացընումն և գեղեցկացընումն, որ իւրեանց լուսախայլ հոգովը առաջնորդումն նորան, որ իւրեանց ձեռովը պաշտպանումն և սընուցանումն, որ օրօրոցից ըսկըսած մինչեւ գերեզման ձանապարհակից են նորան, որ և ինչպէս վիճակակիցը՝ մասնակից են նոյն ժառանգութեանը որ Ամենահերը իւր էութեան ճշշմարիտ պատկերի համար պատրաստել է մի ջնորդութենով Յիսուսի Քրիստոսի՝ բարեկամին այն բոլոր հոգիների՝ որոնց սիրելի է նո-

րա յայտնութիւնը աշխարհի վերայ։ Եւ այս մեր ընկերներիցը որ այդքան հաւասար էին մեղ ինչպէս տըկարութենով, նյոյնպէս և մեծութենով, որ այդքան մօտ էին մեր սրբանին և այդքան յաշախ մերզանից տռաւել լաւ՝ մի՞ թէ արժան էր մեղ պակասեցուցանել մեր յարգութիւնը։

Համ. 12. 10. Յեղայրիսութեան առ միմեանըս գըթաձք, և պատիւը լովիմեամբք ելանել։

Մալաք. 2. 10. Ոչ ապարէն մի՛ հայր է ամենեցուն ձեր. ոչ մի Ապառած հաստատեաց ըզգեղ. զի՞ է զի թովէք իւրաքանչիւր զեղայր իւր՝ ուրդն ձեւ զուխտ հարցն ձերոց։

Պետր. ա. 2. 12. Զամենեսուեան պատուեցէք, զեղայրոփրութիւն սիրեանք, յԱզությունիւրը, ըզթագաւորըս պատուեցէք։

3.

Ահա այս յարգութեան վերայ է հիմնըվում լուսանուակ ճայ-
ռասիրութիւնն, որ մեք՝ հետևելով սուրբ գլուխին և մեր բանաւու-
րութեանը՝ պարտական ենք ցուցանել մեր ընկերներին. որ և այս
պատճառով ոչ թէ միայն քրիստոնէւութեան գըլխաւոր բանն է,
այլև ի միամին անտարակուսելի նըշան է մեր հետևող լինելուն
Քրիստոսի, ըստ որում այդ մարդասիրութիւնը պիտոյ է երեխ
և դէպ ի մեր թըշնամիրը։ Ինչքան ճշշմարիտ, ինչքան խորին
սըրտով և ինչքան գործունեայ և ընդհանուր է այդ սէրը, այն-
քան ևս աներկեայ կ'ազնուացուցանէ մեր բոլոր կեանքը, այնքան
ևս կ'երջանկացուցանէ մեր անձը, այնքան ևս կը լինի հընար՝
մեր եղօրների և քուրերի հոգեւոր բարին յառաջադէմ առնելը։

Յարդիւնն և Սէր ցուցանումենը մեր եղայրակիցներին մա-
նաւանդ, ոչ թէ միայն ամենայն գործերի մէջ արդար դատաս-
տան առնելով նոցա, ոյլ և նշանաւթիւնն մըտածելով և վարվելով
նոցա հետ, մեր իրաւունքը չափազանց խըստութեամբ չը պա-
հանջելով, այլ պատրաստ լինելով թոյլ տալ և առեւէ շընորհել
քան թէ մերզանից պահանջել կարելի էր։

Զաքար. 7. 9. 10. Այսպէս առէ Տէր ամենակալ. դատաստան արդար
դատեցարուք, և զազրմութիւն և ըգգըթութիւն արարէք իւրաքանչիւր
եղբօր իւրոց։ Զայրին և զորքըն և ըզզանդուխաըն և ըզտընանկըն մի՛ յաղ-
թահարէք. և ոխս չարեաց ընկերի իւրում՝ մի՛ ոք կալցի և միրտըն ձեր։

Ժաղան. Ա. 1. Դարձոյ և անսի ևս զամեննայն զըրպարտութիւնը որ
լինին ընդ արեգակամբ, և ահա արտասուք զըրպարտելոցըն. և ոչ էր
որ միթթարէք ըզնուա, և ի ձեռըս զըրպարտչաց նոցա բըմնութիւնք։

Յամիչ. 13, 34, 35. **Պատուիլան** նոր տամ ձեզ, զի սիրեցէք ըզմիմեանըս, որպէս սիրեցի ես ըզէեզ. զի և գուք սիրենիք ըզմիմեանըս։ Յայ-սըմ դիտացին ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրեցէք ըզմիմեանըս։ Կորընթ. առ. 15, 6, 7. Այս ոչ խընդոյ ընդ անիլաւութիւն, այլ խըն-դոյ ընդ ըստուգութիւն։ ամենայնի տես, ամենայնի հաւատայ, ամենենի յուսոյ, ամենայնի համբերէ։

Յամիչ. առ. 5, 18. Ո՞րեւէսկը՝ մի՛ բանիւք և լեզուօք սիրեցուք, այլ ար-դեսկը և ձըշմարտութեամբ։

Մատթ. 5, 44, 45. **Ավելիցէք ըզմընամիս ձեր**, օրհնեցէք զանիծիչըն ձեր, բարի՛ արարէք ատելեաց ձերոց և աղօթու ի վերայ այնոցիկ որ ըլեկնե-ըզէեզ և հալածեն, զի եփջիք սրդիք հօր ձերոց որ յերկինըն է։ զի զա-բեզակըն իւր ծագէ ի վերայ շարայ և բարեայ, և ածէ անձրե ի վերայ արդարոց և մեզաւորաց։

Հումմ. 12, 20. **Այլ եթէ քաղցեալ է թըշնամին քո**, հայ տուր նը-մա, և եթէ ծարաւի՛ չուր տուր նըմա։ զայս արարեալ կայծակունըն հը-րոյ կուտանցես ի գըլուրի նորա։

Գետը. առ. 1, 22. **Զանձինըս ձեր ուրբել հնագանդութեամբ** ձըշմար-տութեան հալոցին, յեղքայլիրութեան առանց կեզծաւորութեան, ի տուրը ուրբաէ սիրել սերաիւ ըզմիմեան։

4.

Հագաւագարսութիւնն մէր ընդիւրի հոգէւեսը և հարժաւուոք օգտի համար։

Մարդասիրութեան առաւել սուրբ պարտականութիւնը է իշնում բանել մեր ընկերների հոգևոր բարեվիճակութեանը. ինչպէս մրգանում, այնպէս ևս նոցանում՝ առաւել սրատուական մասը հո-գին է, և սորա պարտուաբատշաճ կատարելագործութիւնը բերու-մէ առաւել վերին և տեսզական շահ։

Իսայ նոյն չափ ևս պարտական ենք յաջողեցուցանել մեր կեղայրակիցների ուրաքին բարեկեցութիւնը, նոցա մարժնաւոր և կենցաղական երջանկութիւնը։

Կորընթ. առ. 13, 5. **Այս երկայնամիս է**, քառյրանայ, ոէր ոչ նախան-ձի, ոչ ամբարհաւաձէ, ոչ հըսպարտանայ, ոչ յանդըզնի, ոչ խընդրէ զեւը, ոչ գըրգըսի, ոչ խորհի ըզչար։

Դռւկ. 10, 30, 31. **Պատուիլանի** ետ Յիսուս և առէ. այս մէ իջանէք յերսուաղէմ; յերիեալ և անկաւ ի ձեռըս տւագակաց որք մերկացին ըզնա և վէրս ի վերայ վերաց եղին, թողին կիսամահ և գընացին։ Դեպ եղեւ քահանայի միոջ իջանել ընդ նոյն ձանապարհ և առեւեալ ըզնա՝ զանց արար։

Համու. 15, 2. Այլ իւրաքանչիւր ոք և մէնջ ընկերին հաճոյ լիցի և բարին՝ վասն շմսութեան։ Յակ. 3, 13—17։

Գառզ. 6, 1. 2. Ե՛զարք՝ եթէ յանկարծ ըմբըսնեոցի ոք և մէնջ յինչ և իցէ յանդանըս, դուք որ հսկեորդ էք՝ հաստատեցէք զայնավախըն հառ- տոլ հեղութեան։ ըգոյշը լինիցիք անձանց, զի մի և դուք փորձիցիք։ ըզմիմեանց բեռն բարձէք և այնովէս կասարեցէք զօրէնուըն Քրիստոսի։

Մատթ. 18, 6. 15. Եւ ոք ոք դայթակիցուոյէ ըզմի և փոքրըկանցըն յայցանէ յիս հաւասարացնոց, լաւ է նըման եթէ կախիցի երկան եց ընդ պարանոց նորո և ընկըզմիցի և խորը ծալու։ Եթէ մեղցէ քեզ եղեայր քո, երթ՝ յանդիմանեան ըզմա, յորժամ դու և նս մեայն իցէք. եթէ լուկիէ քեզ, շահեցար զեզայրըն քո։

Յակ. 5, 19. 20. Ե՛զարք իմ, եթէ ոք և մէնջ մոլորեոցի և հանա- պարհէ ճշմարտութեան, և գարձուոց ոք ըզմա, դիսասցէ՛ զի որ գար- ձուոցէ ըզմեղաւորն ի մոլորութեան հանապարհէն իւրմէ, փըրկեոցէ զոդի իւր ի մահուանէ և ծածկեացէ ըզմազմութիւն մեզաց։

Մատթ. 18, 7. Վայ աշխարհի դայթակլութեանց. հարկ է գալ դայ- թակլութեանց. բայց վայ մարդոյն այնմիկ յոյ ձեռւըն դայցէ դայթակլութիւն։

5.

Դադաշաբարչութեան մէլ ընկերների բարոյական և իմայական լուսատո- ւութէնն համար։

Եթէ կամենայինք քըննել թէ ինչ են մեր ջոկ ջոկ պար- տականութիւնը դէպի ի միւսները, ապա պիտոյ էր մեզ նախ և առաջ այն բանի մասին հոգատար լինել՝ որ մեր ընկերները լի- նէին բայց և կազմակերպութիւն կարող էինք օգնական լինել նո- ցա բարի խըրատներով, ուսուցանելով, յորդորելով, ըզմուշացը- նելով, այս և պատճելով՝ եթէ ունէինք իշխանութիւն. բայց՝ ևս առաւել՝ բարի օրինակ տալով։

Թռեսազ. ա. 5, 11. 14. Պատն որոյ միսթարեցէք ըզմիմեանըն և շի- նեցէք զիբեարըս, որպէս և առնեքըդ կակ։ Ազաշմ ըզմեզ ե՛զարք՝ խա- տեցէք զըստահակըս, միսթարեցէք ըզմաբամիտըս, պատըսպարան լիրուք տրկարաց, երկայնամին առ ամենենին։

Մատթ. 5, 16. Այսովէս լուսաւորեոցէ լոյս ձեր առաջի մարդկան, որ- ոք զի աեսցին ըզմործըս ձեր բարին և փառաւորեոցին ըժայր ձեր, որ յերկինըս։

Յակ. 3, 15. Ո՞վ իցէ իմաստուն և հանձարեզ ի ձեզ, ցուցցէ՛ ի բար- ոք գընացից իւրաց զգործըս իւր հեղութեամբ իմաստութեան։

6.

ՍԵՐ ը՛հեւնեցն արտառուի և բարձր անուան հոգաստաբութեալը.

Ապրանից յետոյ՝ այն յարգութիւնը որ պարտական էինք ցցց տալ մեր եղօրներին և քուրերին, պահանջումն որ մեք նոցա պարին և բայի անուանը մի այնպիսի մեծակլշիռ բան համարէինք, որին՝ համարձակութիւն չը կար ձեռնամերձ լինել. ապա թէ ոչ. նոցա անձը կը վըշտացընէինք և մեր անձը կ'անարգէինք: Այս պարտականութիւնը կը լցուցանէնք՝ ըզդուշանալով բանբասանքից և հայհոյութենից, միշտ ամենալու հաւատ ունենալով նոցա մասին, նոցա համար դուրս եկած հայու համարանելիք չօգնելով տարածել, այլ մանաւանդ, եթէ նոցա սկզբանեւու սկզբանուն նելիքնեւ, միշտ նոցա լաւը բարձրացուցանէինք և գովինք, այլև լուութեամբ պահանէինք այն բանը որ նորա մեզ իրբ գաղտնիք հաւատացել էին:

Սերաք. 5, 17. Զի ի վերաց գողցն կայ ամօթ, և պարսաւանք չար՝ ի վերաց երկխօսին:

Սերաք. 6, 4. 5. 6. Եւ փոխանակ բարեկամի մի լինիք թըշնամի, զի անուն չար զամօթ և ըշնախանինը ժառանգեացէ: Անձըն չար կորուսանէ զըստացիչ իւր և առընչարութիւն թըշնամեաց արացի՛ ըզնա: Կոկորդ քաղցրենի բազում առնէ ըզքարեկամըն իւր, և լիզու լաւախոս յահախուէ ըզքարեկամութիւնը: Ոյք ունեն ընդ քեզ խալազութիւն, բազումը եղցին, խել խորհրդակից քոյ՝ մի ի հաղըրաց:

Սերաք. 19, 6, 13. 15. Մի՛ կըրկներ ըզեան զանիբաւ և ըզիխատ, և լըռութիւնն ոչնեւ վընասեացէ քեզ. յանդիման արա ըզքարեկամըն, թեւրես չիցէ խել զանցուցեալ: բազում են բանսորդիութիւնք, և դու ամենայն բանից մի հաւատար:

Սերաք. 42, 1. Ամաչեցես ի կըրկնելց բանից և լըռոյ և յայտնելց բանից գաղոնեաց. և եղցիս ամօթզամ Արշմարտապէս և գըստանիցես շընորհըս առւաջի ամենայն մարդկան:

Յակ. 4, 11. 12. Մի՛ բամբառէք ըզմիմեանըս եղքարը. որ բամբառէ վեղքայր իւր կամ գասի վեղքայր իւր, զօրէնալն գասի, խել եթէ զօրէնուն գասիցիս, ոչ առնելի օրինացն ես, այլ գասաւոր: Մի՛ է օրէնըոդիք և գասաւոր, որ կարողն է փըլիկել և կորուսանել. դու ու ես որ գասիս զընկերըն:

Պետր. ա. 4, 8. Կամ քան զամենոցն ուն սերտ ունել ընդ միմեանըս, զի ուն ծածկէ ըզքազմութիւն մեղաց:

Պետր. ա. 5, 10. Զի որ կամի ըզկեանըս սիրել և պաւարս իւր տեւ-

տանել ի բարութեան, լըսեցուոյէ ըզմէզու խւր ի շարութենէ և ըզշբր-
թունը խւր ի ըլիունը ըզմէնգութիւն:

Պետք. ա. 2, 21—25. Ի դցիլը խոկ կոչեցարուք, զի և Քրիստոս վասն
ձեր մեռաւ և ձեզ եթաղ օրինակ, զի ըդհեա երթայցէք հետոց նորա: Որ
ոչն արար մեզըս և ոչ գըտաւ նենգութիւն ի բերան նորա, որ բամբառ-
եալ՝ և ոչ փոխարէն բամբառէր, չարչարեալ՝ և ոչ պահէր ըստաւնալիս,
բայց իրաւամբք մատնէր թաղաւորին:

Հրամ. 13, 7. **Արգ** հասուցէք ամենեցուն ըզպարաբու որում ըզչարէ
ըբժարկն, որում ըզմաքսը ըզմաքսըն, որում զերկիւղը՝ զերկիւղն, որում
ըզպատիւ ըզպատիւըն:

7.

Սըստալիւն և իտի էրալիւն:

Ուրեմբն քո ընկերի հետ միշտ ծըշմարտութիւն խօսիր.
ամենայն խարէութիւն՝ անիրաւառութիւն է դէպ ի Աստուած, և
ծըշմարտութեան անարգութիւն: Հեռի կաց և ամենասփոքը խա-
րէութենից. սա կը լինի անհամար յանցանքների ճանապարհ: Եւ
հարիստոր սըտախօսութիւնքը՝ աստուածային հրամանին ընդդէմ
են. թէպէտ խոչեմութեան պատճառաւ կարող է պատահել որ
մեք ծըշմարտութիւնը թագուցանենք, որովհետեւ նորան յայտնե-
լով՝ ոչնչ օգուտ, այլ միայն վընաս կը յառաջացընէինք. բայց
այդու ամենայնիւ կրօնը ոչնչ կերպով կարող չէ ներել պղպղիսի
պատուիրանազանցութիւն:

Ով որ սըտախօս է գըտանվում խւր ընկերի մօտ, նա ևս
կարող է հեշտ խարել նորան. նա ունի խւր սըրտումը խարդա-
խութիւն գէպ ի խւր ընկերը, մարդահաճութիւն է գործում,
թէպէտ մի և նոյն ժամանակը չար և շահախընդրավական դիտա-
ւորութիւնք ընակումեն նորա մէջ: Անկեղծութիւն, բարեկրօնու-
թիւն, արդարութիւն և հաւատարմութիւն մեր կողմէցը՝ յառա-
ջացընումեն ուրիշների մէջ վըտահութիւն դէպ ի մեզ:

Աերաք. 20, 26, 28. **Չար** բիծ ի մարդ՝ ոըտութիւն: **Այլ** է գողու-
թիւն և այլ է ոըտութիւն, և երկորին ըզլսուստ ժառանգեն: **Անար-**
դաներ անձին մարդոյ և ամօթ նորա կանխեցի ի նոյն:

Աերաք. 41, 32, 33. **Ուրարգ** կաքաւել ի գըլսւի գահաւանդիք: այսպէս
և սիրտ նենդաւորի իրու ըզմէա մի ուշ ունի գըլսրման: **Չ** ըզեարին ի
չար գարձուցանելով վարանէ, և ի ցանկալիուըն բիծ դիցէ:

Եփեռ. 4, 25. **Վան** որոյ ի բայց ընկեցէք ըզըրտութիւն. խօսեցարնեք

ըղմարտութիւն խրաբանջներ ընդ ընկերի խրում, զի և մէմեանց անդամք :

Մատթ. 10, 16. Ահաւասիկ ես առաքեմ ըգծեղ իբրև զոշարըն ի մէջ գայլոց. Եղերուք պյուռհետեւ խրագէտք իբր զօձը, և միամիաք իբրւ զաղանիս :

Կորնթ. 8, 21. Քանզի խորհիմք ըութիւն՝ ոչ միայն առաջի Տեառն, այլ և առաջի մարդկան :

8.

Անդաղանձրութիւն ընկերի հէտ (Խաղաղանձրութիւն, հաշտահանութիւն)։

Եւ խրատողական մի կենցաղավարութենով մեր ընկերների հետ, և ընտիր ընտիր գըրուածներ ընթերցափելով (կարդալով) պարտական էինք հոգաբարձու լինել նոցա երջանկութեան համար։ Այս կենցաղավարութեան մէջ ցոյց տուր քեզ խոնարհ և համեստ, մեզմ և ներողամիտ, պատրաստական, քաղաքավար, պարզասիրտ, տուրբ և պարկեցու։

Դաս և շատ կարող էինք ներգործել մեր ընկերների սըրտի վերսց, եթէ նոցա հետ կենցակաղակցութեան ժամանակը՝ խաղաղասէր ցոյց տայինք մեր անձը, եթէ փախչէինք ամենայն բանից, որ կարող էր նոցա բարկութիւնը զարթուցանել, եթէ մեր արժանաւորութեան վերսց համեստ խօսէինք և առհասարակ ցոյց տայինք հէն և ներողամիտ սիրտ, որ շուտով չէր վիրաւորվում, և վիրաւորված ժամանակը ևս պատրաստ էր դէպ ի հաշտութիւն, առանց մոտածելու՝ թէ արժան էր հրաժարութիւնը մեր անարգեալ պատիւը միւսանդամ նորոգել։

Մեր ընկերների պատիւը և բարի անունը, ինչպէս և նոցա հոգու մաքրութիւնը և նոցա սըրտի խաղաղապատճիւնը կը խանգարէինք մեք, եթէ պարկեցութեան և սըրբութեան պարտականութիւնը անփոյթ առնենք։ Ոչ ումի՞ ախտասիրական խօսքերալ և շարժուածներով, պատկերներով և զըրուածներով առելթ մի տուր գէպ ի անաւակութեան և պանըրկութեան սոսկալ արատները, որ կրուսանումնեն մարմին և հուլի, այլ ևս առաւել՝ թողի քո անարատ և մաքրուր սըրտի ճըրագը լցո տայ ամենայն մարդի առաջիւ, որի հետ կինակցութիւն ունին դու։ Տես Սուրբ պատմ։ Արահամ, Ղուլա, Ղաւիթ, Յովկէի, Յիսուս։

Սիբաք. 23, 5. Զքուանըս աշաց մի տար ինձ և ըդցանկութիւն սըրտի գարձն յինէն։

Ճընընդ. 39, 9. Եւ զամենայն ինչ ետ ի ձեռըս իմ (ասուամէ Յովկէի փը Փարաւոնի Պէտափերէս անունով ներբինի դահճապեսի կընողը), և չի

ինչ ի տան տառ որ մեծ է քան զիս, և չեք ինչ գասեալ յինէն բաց ի քէն, զի տիկին նորա ես, և զիարդ առնիցեմ ըզբանըդ զայդ ըզար և ըզմեծ, և մեղմնչցեմ առաջի Ազտուծոյ:

Դմասա. 4. 12. Զի չարութիւն անըզգամութեան շըլայուցանէ ըզբարիս, և յածումըն ցանկութեան խուճապէ ըզմիտըս անմեղըս:

Թակոսալ. բ. 3. 6. Պատութիրեմ ձեզ հզեաբք՝ յանուն Տեսուն մերց Յիսուսի Քրիստոսի խորշել ձեզ յամենայն կոքօրէ՝ որ ըստահակուն կընայցեն և ոչ ըստ աւանդութանիլն զոր ընկալարուք ի մէնջ:

Կողը. 3. 12. Զզեցարուք այսուհեան իրիւ ընտրեալք Ազտուծոյ՝ սուրբք և սիրեցեալք, ըզգութ, զովըրմանթիւն, ըզքազցրութիւն, ըզխոնարհութիւն, ըզհեղութիւն, զերկայնմտութիւն:

Հում. 12. 16. 18. Եթէ հընար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան ըզփաղալութիւն կալջեք:

Մատթ. 5. 5. 9. Երանի՛ հեղոց, զի նորա ժառանգեցեն զէրկիր. երանի՛ խաղաղաբարաց, զի նորա որդիկը Ազտուծոյ կոչեցին:

Կողը. 3. 13. Կերել միմեանց, շընտրհել իրերաց, եթէ ուբուք զումեքէ տըրտունջ ինչ իցէ. որպէս Ազտուած Քրիստոսիւ շընտրհեաց ձեզ, նոյնալէս և գուբէ:

Հում. 12. 17. 19. Մի՛ լինիք իմաստուն յանձնիլս ձեր, մի՛ ումեք չարի չատուցանէք. մի՛ զանձանայ վրէժմներէք սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան, քանզի գըրեալ է. իմ է վըրէժինընդութիւն, և ես հասուցից առէ Տէր:

Եփես. 5. 3-6. Այլ պունըկութիւն և ամենայն պըզծութիւն, կամ արահութիւն, և անուանեցի մի՛ ի միջի ձերում, որպէս և զայելէ որբքոց. և զազրութիւն, կամ խօսք յիմարութեան, կամ խեղիատակութիւն, որ ոչ վայելէ, այլ մանաւանդ գոհութիւն. զայս տեղեկացեալ գիտառաջիք. թէ ամենայն պանիկ, կամ պիղծ, կամ արահ, որ է կըռապարիշա՛ նչ ունի ժառանգութիւն յարբայութեանն Քրիստոսին և Ազտուծոյ: Մի՛ ոք ըզձեզ խաբեցցէ բանիւք ոլնոտուլք. զի վասն այսորիկ խոկ գայ բարկութիւն Ազտուծոյ ի վերայ որպէսոցըն անհաւանութեան:

9.

Անդահութեան, Անշահութեան.

Ծայց ոչինչ պարտականութիւն՝ Ճըշմարտապէս մարդասէր Քրիստոնէի համար այնքան հեշտ չէր, որպէս ընկերի ուրախութեանը և տըրտութեանը մասնակից դըրունվիլ: Այս մասնակցութիւնը յառաջանումէ այն ախտակցութենից որ ամենայն բարի սըրտի մէջ բնակումէ, որ և ուրիշի բազգաւորութեան զէրայ մե-

ծաղէս ուրախանումն, և օտարի անբաղդութեան վերայ այնպէս է ցաւում որպէս թէ իւր անձին պատահած լինէր:

Վհա այս պատճառով՝ քրիստոնէի համար նախանձ ասած բանը անծանօթ կը լինի. այսինքըն՝ նա երբէք չի վըշտանայ տեսանելով ուրիշները աւելի բաղդաւոր քան թէ ինքը, ըստ որում գիտէ թէ այդպիսի ըզգացումն կարող է միայն չար սըրտիցը բըզիսել և միշտ մեղք է Աստուծոյ առաջնորդ, որ միայն պարզեւատուն էր այն նախանձելի բաղդի որ վայելումն մեր ընկերը:

Հում. 12. 15. Խընդաւ ընդ Խընդացողըն, լաւ ընդ լացողըն:

Կորընթ. ա. 12. 16. Եւ եթէ ասիցէ ունկըն, վասն զի չեմ ակըն՝ չեմ ի մարմնայ անտի, ոչ այնու չցեց ի մարմնայ անտի:

10.

Բարեկարգութեան և համայնշակարգութեան.

Իսպանականութիւնը կը կատարէ քրիստոնէան առաջ կամ թէ շընորհաւորելով մեր ընկերների կեանքի ուրախանլի անցըը՝ չէ կարելի միշտ և հանապազ պիտանի լինել նոցա: Ճըշմարիտ մասնակցութիւնը սակաւախօս է և շատագործ է, պըզանին է օգնութենով, բայց էս է, ոչորմանին է և ամենայն ժամանակ պատրաստ է համայնշակարգ գրանվիլ:

Վհա պարտականութիւնը կը կատարէ քրիստոնէան առանց երկար ու ձիգ խընդրանքի, առանց յորդորանքի և հարկադրանքի, ըստ որում գիտէ, թէ այդպիսի պարտավճարութիւնը ոչնչյարդ չունի: Քրիստոնէայ մարդը իւր բարեգործութիւնքը ծածուկ կը կատարէ, և չի թողու որ ձախ ձեռը խմանայ աջ ձեռի արածը, իւր ողորմասըրատութիւնը կը ցուցանէ ամեններին որ կարօտ էին նորան՝ առանց հարց ու փորձ առնելու՝ թէ որ հաւատից, որ վեճակից և որ աշխարհից են նորա:

Աւակ. 3. 28. (Մի՛ ասիցես յըքարեկամըդ) թէ երթ և եկողիք. և վաղիւ ասց քեզ, զի կարող ևս իցես բարի առնել:

Մատթ. 6. 1-4. Զգոյշ լերուք ողորմութեան ձերումն մի՛ առնել առաջի մարդկան, որպէս թէ և ցոյց նիշ նոցա. գուցէ՛ և վարձը ոչ ընդունեցիք ի հօրէն ձերմէ որ յերկինալըն է: Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո որպէս կեղծաւորքըն առնեն ի ժողովութեցը և ի հրապարակըն, որպէս զի փառաւորենոցին ի մարդկանէ: Ավէն առեմ ձեզ՝ այն նուկ են վարձը նոցա: Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտացին ձախ քո զի՞նչ դորձէ աղ քո, որպէս զի եղից ողոր-

մութիւնըն քո ի ծածուկ, և հայրըն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուցէ
քեզ յայնապէս :

Պետր. ա. 4, 10. Խւրաբաննիւր ոք որպէս և ընկալաւ շընորհըն ինչ՝
ի միմեանըն ըդնոյն մատակարարել իւրեւ ըգեարւոք հաղարապէտըն պէտպէս
շընորհացըն Ապօտծոյ :

Մատթ. 20, 28. Որպէս որդի մարդոյ ոչ եկրնեւ պաշտօն առնուլ, այլ
պաշտել և տալ դանձըն իւր փրկանըն փոխանակ բազմաց :

11.

Եղիսակալավար Ալեքս.

Եթէ ուրիշները լաւութիւն են արած մեզ, Եթէ նոքա մեր
կեանըը վայելացուցել են իւրեանց միրով, Եթէ նոքա մեր վըշտին
մասնակից և միմիթարիչ են դրտանվել, ապա քրիստոնեայ մարդը
շընորհակալ կը լինի նոցա ուս է ուսուն, և կ'աշխատի ամենայն կա-
րել կերպով ելուսունակեալ դրտանվել նոցա առաջեւը :

Վյս շընորհակարութիւնը պէտք չէ անպատճառ՝ որ երեկոյ
միշտ հարուստ, թանգագին պարզեներով. մի ջերմ ողջագուրումն,
մի խօսք առ ի սրբուն, մի նայեցուած լի սիրով, մի լիահաւատ
ընդունելութիւն խորհրդատուութեան՝ բաւական ապացոյց էր
բարեսիրտ մարդու համար, թէ նոքա լաւութիւնը իւր եղօր
հոգու մէջ երախտաճանացութիւն է դրտել։ Ճըշմարիտ երախ-
տագիտութիւնը վերջ չունի. նա կ'աշխատի՝ թէ և տասնաւոր
տարիներից յետոյ՝ դիպուկ ժամանակ ձեռք բերել՝ որ կարողա-
նայ պարտավլմար լինել։ Ապերախտութիւնը մի գարշելի յան-
ցանք է, մինչև որ հեթանոս ազգերը ևս պատիժ չունեին դորա
համար, սրատճառ որ մարդկային բնութեանը ամեննեին օտար էին
համարում այդպիսի քան :

Աւակ. 17, 13. Որ հատուցանէ ըզար փոխանակ բարւոյ, չար ի տանէ
նարա մի՛ պակասեցի :

Ալեքս. 15, 5. Զեք բարի այնըմ՝ որ յաձախէ ըզարիսըն և որ աղօ-
մածութեամբ ոչ շընորհէ :

Թռեսաղ. ա. 5, 18. Յամենայնի գոհացարուք, զի այս են կամք Ապօտ-
ծոյ Քրիստոնիւ Յիսուսիւ ի ձեզ։ Տես Առերք պատմ։ Եբրայեցոյ ազգը,
բըժը կեալ բորսուք :

12.

Օտարի ուսունականութիւնը լինեալ չէ լինել։

Օտարի սեպհականութիւնը պիտոյ է լինի մեր համար ան-

մերձենալի։ Քրիստոնեան համարձակութիւն չունի գողաճարու։ Դո-
զութիւնը այն յանցանքն է, որանով մեր ընկերիցը բնակութեամ-
կամ թէ նորութեանունունը յափրշտակումենք իւր ունեցածը։ նմա-
նապէս յանցանք էր ուտել ծածկաբար օտարի կերակրեզէնիցը,
թագուցանել և սրահել իւր մօտ գողացած ապրանք, առ և տուրի
մէջ խարէութիւն գործել ուստ դըրամով, անպիտան շահականունը-
կամ սուտ հաշուն, վաստ ուշադրուն հասուցանելով, չափաչանց հին
պահանջելով. պարտք առնուլ ընկերիցը այն խորհըրդով որ չը
վըճարես միւսանգամ, կամ թէ առանց իմանալու՝ թէ կարող էիր
պարտահատոյց գըտանվել. այլև մեղք էր՝ աշխատաւորը զըրկել
նորան պատկանեալ վարձիցը, և իւր դըրամը չափազանց տոկոսով
(շահակ) փոխ տալ:

Եթէ ընկերիցը մի բան գողացած է, կամ թէ միայն օտարի
սեպհականութենին վընաս է հասուցած՝ թէ գիտութեամբ և թէ
անգիտութեամբ, ապա քրիստոնեան պարտական է ծիշտ չափով
կըրկին հասուցանել ինչ կորուստ կամ վընաս նորա մեղքով հա-
սել է ընկերին։

Ելց 20, 15. 17. Մի՛ ցանկանար տան ընկերի քոյ և մի՛ անդոյ նո-
րա, և մի՛ եղին նորա և մի՛ իշց նորա և մի՛ ամենայն անսանց նորա, և
մի՛ ամենայնի զինչ ընկերի քոյ իցի։

Ղետակ. 19, 13. Մի՛ զըրկեոցես զընկեր քո և մի՛ յափըշտակեոցես։
Մի՛ աղցին (չը մընան) վարձք վարձկանին առ քեզ մինչև ցատաւօտ։

Երկորդումն Օրին. 25, 14. 15. Եւ մի լինիցի և առն քում չափ և
չափ, մեծ կամ փոքք. կըշխու ըստոյդ և արդար եղիցի քեզ. և չափ ըս-
տոյդ և արդար եղիցի քեզ, զի բազմօրեայ եղիցի և վերայ երկրին զոր Տէր
Ազուռած քո տացէ քեզ և ժաւանելութիւն։

Սալմ. 14, 5. Զարձաթ իւր և վարձու ոչ տայ, և կաշաւը և վե-
րայ իրաւանց ոչ առնոււ. որ վայս արտարոց, նա մի՛ սատանեցի յաւիտեան։

Սալմ. 36, 16. Լաւ է սակաւիկ ինչ արդարոց, քան ըզբազում մե-
ծութիւն մերաւորաց։

Եփեկել. 18, 7-9. Եւ մարդոյ բուռն ոչ լինիցի. ըդդըրաւ պարտա-
պանի գարձուցանիցէ։ Եւ զարձաթ իւր և վարձու ոչ տայցէ և առկասեօք
անդրէն ոչ պահանջիցէ. յանիբաւութենէ զայս իւր դարձուցանիցէ, դա-
տաստան արդար առնիցէ ընդ այր և ընկեր իւր։ Ըստ հրամանաց իմոց գը-
նացիցէ, զըրաւունը իմ պահիցէ և առնիցէ ըզնուա. արդար է նա, կելով
կեցցէ առէ Ագօնայի Տէր։

15.

Հայոց ազգութեան իւր շնչելով տուրութեան և հէսկառութեան հոմար:

Բայց մարդը սպարտական է իւր ընկերի սեպհականութենից առաւել՝ նորա առաջնութեանը և էտան պաշտպանել, յաջողեցուցանել և սպահանել: Առողջութիւնը պահանելու մասին՝ կարող է նա ձեռքոտութիւնը՝ խորհուրդ և խըրատ տալով թէ ինչպէս պարտ և արժան էր իւր մարմինի հետ վարվել, ոչ մի առիթ ու առաջնութեան, բայց իւր նորան և ովհաճութեան չը տալով նորան, չը մոլորեցուցանելով նորան դէպ ի անպարկեցութեան ծածուկ մեղքը, և հիւանդութեան մէջ ամենայն բարեմըսութեամբ օգնական լինելով նորան, յաջողակ բրժիշկ բերել տալով և հոգալով որ բրժըշկի արհօրենութիւնքը ճըշքալիս կատարվին և նորա տուած ձարը խելօք գործ ածվէ:

Երկորդ. Օր. 22, 8. Եւ եթէ շնեացես տուն նորաշն, արացնութըսկ շորջը ըզտանեքըն. և մի ըսպանումն գործեացես ի տան քում, որ մի անկանիցի որ անկանելոցըն իցէ ի նըմա:

Յայց. ա. 5, 15. Ամենայն որ տաեայ զեզայը իւր, մարդուսպան է, զիւելք զի ամենայն մարդասպան ոչ ունի ըդիւնանը յաւիտենականը յանձնին հստատեալ:

Տիմոք. ա. 5, 8. Դոկ եթէ ոք իւրոց, և մանաւանդ և ընտանեաց իւր նամ ոչ տանիցի, ի հաւատոցըն ուսպանալ է, և չը եռ քան զանչաւատուն է:

14.

Կ արտեհութեան:

Վաճաչար կերպով կը մեղանչէինք դէպ ի մեր եղայրակիցը՝ եթէ նոցա կեանքը վերացընէինք, եթէ նոցա մահու սպատձառ դառնայինք՝ թէ բըոնութեամբ և եթէ սցլ միւս կերպով նոցա աստուածասահման կենդանութեան սպամանը կարձացընելով: Վերջնըս կարող էր սպատագել՝ եթէ մեր ընկերները այնպիսի մեղքերի մէջ ձրգէինք, որ նոցա առողջութիւնը կը կործանէին, եթէ անըզգուշութեամբ նոցա մարմնին վընաս հասուցանէինք, անպիսան կերպուր և բընակութիւն տայինք նոցա, եթէ սպատշաճաւոր փոյթ չունենայինք նոցա մասին, երբ որ նեղութեան և վըտանգի մէջ էին, եթէ նոցա սիրու ահարեկ առնէինք, կամ թէ սընապաշտութեան սպատճառաւ հրաժարվէինք ընդունել մեր օթեվանի մէջ երկութապէս մեռածները և խեղդուածները:

Այս ես առաւել պարտ էր մեզ հոգ տանել ռոտով կեռուց
պահպանելու համար, ինչպէս ցանկալի էր մեզ որ մեր կեանքը
պահպանվի մեր համար: Այս պատճառաւ պարտական ենք մեր
ընկերի կեանքը ապահով կացուցանել մարդասպաններից և աւա-
զակներից, որպէս և՝ մեր եղայրակիցների կեանքը և սեպհակա-
նութիւնը պաշտպանելու համար՝ պարտական էինք մեր կեանքը
պատրաստութեամբ զրհ բերել հայրենիքին, ինչպէս Քրիստոս
արել է մեզ: Մեծառոքքը միայն՝ որ Աստուծոյ հրամանով դըր-
ուած են կարգ և իրաւունք պահպանելու աղագաւ, սուրբ զըրքի
թոյլուութենով իշխանութիւն ունին՝ Տոբուառականութիւն մահով պատ-
մել և այդպէս ապահովել տէրութեան հպատակների վիճակը:

Ելք. 20, 15. Մ' ըստպահնիցես:

Ճշն. 9, 6. Այ հեղու զորիւն մարդոց, փոխանոտ արեան նորա հեղցի
արիւն նորա, զի և պատկեր Աստուծոյ արարի ևս ըզմարգըն: Տես Սուրբ
պատմ. Կային, Յովանէի եղայրը, Հերովլէս:

ԶՈՐԲՈՐԻ ՀԱՏՈՒԵԾ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԻ ԴԵՎ Ի ԲԱԿԵՐԸ

Բ

Առանձինք.

1.

Պատու ու ուշու ի օտարը հոււստը.

Մարդիկ մօտ կամ հեռաւոր առ ընչութիւն, շատ կամ նուազ
կապակցութիւն ունին միմեանց հետ: Առաւել սուրբ նպատակը
որի համար կարող էր կապակցութիւն յառաջանալ մարդերի մէջ,
այն է՛ եթէ նորա աստուածպաշտութեան, արտօքին և ներքին
կրօնի պահպանութեան և յաջողութեան պատճառով ընկերանու-
մեն միմեանց: Ամենայն ազգ ունի իւր յատուկ հաւատը, իւր յատուկ
կրօնը, և ամեն մինի համար իւր սեպհականը սիրելի և թանգա-
գին է: Ամեն մարդու համար իւր հաւատը ճանապարհ է՛ այս
երկրի վերայ երջանիկ լինելու, և երկրնքումը՝ երանութիւն գը-

տանելու։ Սորան նայելով՝ պարտական է քրիստոնեան պատուել և յային իւր ընկերի կրօնական հաւատը, թէ նորան մասնակից լինէր, և թէ ոչ։ Այս պատիւը և յարդութիւնը կը ցուցանէր նա այն բանովը, եթէ ժիր և ջերմեռանդարար ներփայ գրտանելով այն եկեղեցական աստուածպաշտութենին, որին պատկանումէր ինքը, իւր հաւատարմութիւնը բարի օրինակ ընծայէր այլ այն ջերմեռանդութեան պաշտօններին, որոնց մէջ ինքը ներկայ չէ գրտանվում, խափան չը լինէր, օտարի հաւատը երկմիտ խօսքերով չը խախտէր, իւր եզրօրների կրօնական արարողութենների վերաց՝ թէ և լինին խկապէս յիմարական՝ ծաղը չառնէր և նոցա հաւատը կրօնական բաների մասին չը բրոնադատէր։

Հում. 14. 1. 3. 19. **ԱՅԼ** ըլուլիսացեալըն ի հաւատը՝ ընկալարուք մի խըզիւ երկմ՛տութեանց։ Որ ուտէն, զայն որ ոչըն ուտէն մի անդունեացէ, և որ ոչըն ուտէն, զայն որ ուտէն, մի գատեացի, քանզի Ալտուած ըլնա ընկալաւ։ Ազո սցուտէւեաւ ըդէւա երթիցուք խաղաղութեան և ըդշնութեան որ առ միմեանը։

Ղուկ. 9. 54. 55. Իբրև աւեսին աշակերտըն՝ Յակոբոս և Յովհաննէն, առեն։ Տէ՛ր կամին զի առայուք, և իցցէ հուր յերկնից և սատակեացէ ըղնոտա։ Դարձաւ՝ սաստեաց ի նոռա և առէ։ ոչ դիակէ որոյ հոգւց էր գուք։

Ղուկ. 6. 57. **Մի'** գատիք, և ոչ գատիցիք, մի պատէր և ոչ պատժիցիք, արձակեցէք և արձակեցիք։

Յովհ. 4. 23. 24. **ԱՅԼ** եկեացէ ժամնատէ, և այժըն իսկէ, յորժամ ձըմմարիտքըն երկլըրպատուք՝ երկիրպագանիցէն հօր՝ հոգւով և ձըմմարտութեամբ, քանզի և հայր այնպիսի երկլըրպագուու իւր լինդրէ։ Հոգի է Ալուած և երկլըրպագուուցըն նորա հոգւով և ձըմմարտութեամբ պարտ է երկիրպատանել։

2.

Տուրութեան հուստացնէցն պարսկական բանականութեան հայւան։

Հայութեան բանականութեան։

Վաղ և առաքինի մարդը կը լինի ուսուռնեան բայրէ հաղաքայէ, կը սիրէ և կը յարգէ իւր հայրենիքը և նորա մէջ հաստատած օրէնքները և կարգերը։ Կա գիտէ որ այն աշխարհը, որի հովանաւորութեան ներքոյ է ինքը, որ նորա իմացական և արուեստասիրական ներգործականութիւնը ամեցուցանումէ, և սընուցանումէ նորան՝ կարող էր այս պարտավըճարութիւնը պահանջնել, ըստ որում դորա վերաց է հիմած քաղաքական առահովութեան և երջանկութեան սլացմանը։ Կա կը ճարէ իւր համար պատշաճա-

ւոր տեղեկութիւն այն աշխարհի մէջ եղած պարտականութենացի և իրաւունքների մասին, ինչ աշխարհում կենումէ ինքը, մասնակից կը լինի նորա բազգաւորութեանը և ձախորդութեանը, և պատրաստաբար կը զոհէ իւր արիւնը հայրենիքի պաշտպանութեան համար, եթէ պահանջումին օրէնքը և մէրը դէպի ի հայրենական հողը: «ա կը սիրէ իւր հայրենակիցը և առաւելապէս օգնական կը լինի նոցա՝ ինչ տեղ և հանդիպէր նոցա:

Եցնալէ՞ բարի քաղաքացին չի մռանայ որ՝ ինչպէս մարդկային ընդունակութիւնը և կարողութիւնը զանազան են՝ թաղմեր երկրաւոր կարիքների ահազին բազմօրինակութիւնը՝ նոյնպէս պիտոյ էր լինէին զանազան պաշտոնէ Հնագոյնէ՝ քաղաքական ընկերութեան մէջ: «ա ոչ մինը չէ արհամարհելու, կ'ընտրէ իւր համար այն վիճակը՝ որ իւր զօրութեններին առաւել համեմատ էր, և կ'ասլիք այն վիճակումը՝ առանց նախանձելու իւր ընկերի հացին. կ'ապրի բաւական և երջանիկ՝ թէպէտ փոքր, բայց արդար վաստակով, բայց որում վըկայ է իւր սիրուր, թէ օգտաբեր է աշխարհին՝ ինչքան ներումէ իւր կարողութիւնը:

Յ.

Կ արտեհակութելիւն + պատառէնէրի պարսպականութելիւնչը:

Մի տէրութիւն՝ որի պատկանաւուքքը արժան էր որ երջանիկ լինէին, պիտոյ է սահմանեալ և կրօնապատշաճ օրէնքներով կառավարեն մի թագաւոր և մեծաւորք՝ որ փոխանակ Ապառաժոյ հոգաբարձու են կարգի, արդարութեան և բարեբարյութեան համար:

Ճնազններ նոցա. բայց ոչ, եթէ հրամայումնեն քեզ չարը որ արդեւ լումնն բանականութիւնը և սուրբ գերքը: Մի՛ վաստանիք նոցա կարդադրութիւննեքը, գատաւոր մի՛ նըստիք նոցա վերաց, եթէ քո պաշտօնի վիշտակը և իմացական կըրթութիւնը չէն տալիս քեզ այդ կարողութիւնը: Մի՛ ընկերացիք խուսվարանների և ապլուտամբալների չետ, վըճարեն օրինաւոր հորեկը և անձնաստուր մի՛ լինիք այն վըտանդաւոր ապաստամբաւութեանը որ ցանկանումէ բոլըրովին հաւասարութեան մարդերի մէջ: Մի խոսքով՝ ի՞նչ հպատակ կաց:

Սերոք, 10, 24. Ի մէջ եղքարց բազմաց որ երէցն է, նա է պատուական, և երկիւածք Տեառն յաչըս նորա:

Ապակ, 24, 21. Երկիր Ապառաժոյ որդեակ, և ի թագաւորէ. և ի միոջէ ի նոցանէ մի՛ ապլուտամբիք:

Ճռում, 15, 1-7. Ապենայն անձըն որ ընդ իշխանութեամբ է, և ֆեառան-

դութեան կոյցէ. քանդի ոչ ուստեք է Եվլանութիւն, եթէ ոչ յԱսուծոյ. և որ ենն, Ապառածոյ կարդեալ են: Այսուհեաւ որ հակառակ կաց Եվլանութեանըն՝ Ապառածոյ հրամաննեն հակառակ կաց, և որք հակառակն կան, անձանց գատառամեջո ընդունին, զի Եվլանքըն ոչ են յերկեղ բարեաց գործոց, այլ չարեաց: Վամին չերկնչել յԵվլանութենէ անափ, ըդքարիս գործեալ և ընկացիս գովառթիւն ի նրմանէ, զի Ապառածոյ պաշտօնեաց է քեզ ի բարիս: Ազգս եթէ չարտործ կցես, երկեր, զի ոչ եթէ վայրաբար տծեալ է սուսեր ընդ մէջ: Ապառածոյ ըսպասաւոր է՝ վըրէժիննդիր ի բարեկաւթիւն այնկը՞ որ ըզշարըն գործեցէ: Վասն որոյ հարկ է հնապանդ լինել, ոչ միայն վասն բարկաւթեանըն, այլ վասն խըզնի մըտաց: Վասն այնտիմ և հարկը հարկանէր, զի Ապառածոյ ըսպասաւոր են ի նոյն կանինեալք: Արդ՝ հատացէք ամեննեցոն ըզդարտըս, որում ըզձարի ըզբարկըն, որում ըզմաքն ըզմաքն, որում զերկեղ զերկեղն, որում ըզզամիւ ըզզամիւըն:

Մատթ. 22, 21. Ազնն կայսեր. յայնժամ առէ ցընսա (Յիսուս). երթայր՝ առւը ըզկացմէր՝ կայսեր, և զԱպառածոյ՝ Ապառածոյ: Տես Սուրբ պատմակրտութիւն. Յիսուս:

4.

Բարեկանը պարստահանութիւնչը.

Աւելի մօտ կապվումեն միմեանց հետ մարդիկ՝ սիրոյ և բարեկանութիւնն աղաղաւ, երբ նոքա հաւասար կըրթութիւն ունին, և միապէս ըզգումեն բարի և աղմիւ բանը: Եւ որովհեաւ ձըշմարիս բարեկամութիւնը հիմնած է փոխադարձ յարգութեան վերոյ, այս պատճառով նա կարող է միայն առաքինի մարդերի մէջ հաստատ լինել: Բարեկամութիւնը կարող է ձեռ ընտու լինել մեր անձը կատարելսպործելու և բարեպաշտօն շինելու մասին, մեզ քաջալերելու դէպ ի ժրագրընութիւն և աշխատասիրութիւն, մեզ միփիթարելու, փըրկելու վատարաղդութիւն մէջ, և մեր ուրախութիւնը երկրի վերայ պայծառացընելու:

Եթէ սիհաց էր՝ որ բարեկամութիւնը հաստացնէր քեզ այդ բարեքը, ապա ըզգուշութեամբ ընտրի և փաթմէր ամենայն մարդ որ այդ դաշնակցութեան համար սալիս է քեզ իւր ձեռքը: Բայց եթէ գու նորան արժանի ես աեսել քս մերձաւոր կենակցութեանը, այնուհեաւ հաւասարիմ կաց նորան, համարձակութիւն ունեցիր նորա մօտ. բայց մինոց պահիր ուրբաիդ մէջ այն գաղանիքը որ նա հաւատացէլ է քեզ, և մի թեթև բանով մի համժարվիլը քս հին բարեկամիցը. բայց անվատածու հեռացիր նորանից, երբ որ աեսանես թէ նա խոտորմէլ (ծըսկել) է առաքինութեան ձանապար-

Տեղը, և քո բարեկառլինութե առլազանիքը և խրբառքը անողըտուղ Են մընում:

Աերաք. 6, 7. Եւթէ ըստանաս բարեկամը, փորձիւ ըստացեր ըդնա, և մի՛ խոհ և խոկ վըտառա՛ լինիք ի նա:

Աերաք. 22, 28. Հոռատարմութիւնը ըստացեր յաղքատութեան ընդ մեր ձաւողին, զե ի բարիս նորա ուրախ լիցիս:

5.

Այսունինէքը՝ աղասպանէանտելիանչը.

Առաւել մերձաւոր բարեկամութիւնը այն է որ կայ ամուսինների մէջ: Ամուսնութիւնը սահմանադրեալ լինելով նոյն ինքըն Աստուծոյ հրամանով՝ այն մօտ կապակցութիւնն է տրղամարդի և կընոջ մէջ, որանով պիտոյ է սպահանվի մարդկացին ազգը, որանով մարդ ու կին պիտոյ է օգնական լինին միմեանց մինչև ի մահ, և աւելի հեշտ հասանեն բարոյական կատարելութեան: այն կապակցութիւնը՝ որին տալիս է եկեղեցին իւր ունիութիւնն և ունիութիւնն, որ և ըականեալ եօմներորդ դարուցը համարվումէ եկեղեցուն կոչուական, լատինական և Հայաստանու Քրիստոնէից մէջ: Քրիստոնէական եկեղեցին հիմնըվելով աւետարանական բանի վերաց կատարումէ այս խորհուրդը աղատ հաւանութենով զուգաւորվել կամեցողների վերաց՝ որպէս օրինակ Քրիստոսի հոգեւոր միաւորութեանը եկեղեցու հետ: Ամուսնութիւնը լինելով այդքան մեծ խորհրդաւոր բան, ուրեմն այն անձինքը որ կամաւոր ամուսնութենով միաւորվումեն՝ սրաբատական են հաստատ պահել այդ կապը որ շատ հազիւ, և այն ժամանակը միայն պիտոյ էր խըզել (կըտրել), երբ չէր այլ ևս կարելի՝ այդ կապակցութիւնը շարունակելով հասանել վերոյիշեալ ծանրակըշու նպատակներին:

Այսունութեան դաշը կապիր ըզգուշութեամբ և քաջ մըտածելով. կապիր նորան Աստուծով. մի՛ հարցրո՛ ինչպէս գեղվեցիկ, ինչպէս հարուստ, ինչպէս երկելի էր այն մարդը որի հետ կամենումեն ընտանի բարեկամութեան աղադաւ միաւորվել, այլ Քըննիր ըզգաստութենով, արդեօք քո սիրտը, արդեօք հաւասար ըզգացողութիւնը և հաւասար կըրթութիւն քարշումեն քեզ դէսկ ի նա: Եցէ՛ թէ բնական յօժարութիւնը միայն, կամ թէ դատողականութիւնը միայն, այլ թող երկուքը ի միասին ուղիղ կըշուով առաջնորդեն քեզ այդ կարեւոր գործի մէջ:

Եցին իսկ ամուսնութեան մէջ՝ թող տրղամարդի գըլխաւոր հոգատարութիւնը լինի իսկէալունքանիւն Աստուծուոց, ժշողն ըլունիւն ընտանիքի սպահանութեան մասին, առ ի սըրտէ սէց, նէչողաճ ըստապէն:

դէպ ի իւր կողակցի տկարութիւնը, համարձակութիւն և հաւատարմութիւն։ Սորա փոխարէն՝ կնամարզը թող ցցց տայ իւր սըրտի սիրած բարեկամին կամաւոր հնագանդութիւն և խոնարհութիւն, հեղ և ուրախ սիրտ, տընասիրութիւն, տընարարութիւն, համբերութիւն ամենայն բանում, ինչ որ նախախնամութիւնը սահմանել է նորա համար։ Միմեանց սընալանկըների վերաց ներողամիտ կը լինին ամուսինքը, և սիրոյ քաղցըր զօրութիւնովը կը որոնեն դարձուցանել մոլորեալը դէպ ի ճշշմարտութեան ձանալարհը։

Բայց եթէ ամուսինքը, կամ չամուսնացեալ անձինք համարձակվումեն այնքան ընտանի կենակցութիւն ունենալ ուրիշ ամուսինների հետ, ինչպէս թոյլ է տալիս ամուսնութիւնը միայն, այն ժամանակը պլրջումեն նորա ամուսնութիւնը (շնորհին, պատուին պատուին)։ Վախեցիր այս յանցանքիցը, որանով ընտանե կան երջանկութիւնը խափանվումէ, օտարի իրաւունքը անարդվումէ, և քո հոգու խաղաղութիւնը, այլև շատ անդամ քո մարմինի առողջութիւնը կորձանկվումէ։

Ճանանուին ։ Ամուսնութիւնը հին ժամանակներումը երեսումէ ըստ մեծի մասին բազմակընութիւնն, և կանանց վիճակը՝ ծառայուին և ըստըիցին, զոր օրինակ չպէից, Բաբեկացոց, Պարսից, Հընէկացոց և Աննէացոց մէջ։ Միայն թէ Յունաց (բաց ոչ Սպարտացոց) և Հումայեցոց մէջ՝ պատճառոր կըլթեալ և լուսաւորեալ ագլեր են՝ տեսանումները միակընութիւնն, և կանանց գըրութիւննը բաւական յարգելի, թէպէշաւ այս ազգերի մէջ ամուսնութիւնը մի լոյն քաղաքական առհմանստրութիւնն էր և չուներ ամեննեին այն սուրբը և կրօնական խորհուրդը՝ որովէո քրիստոնէական ամուսնութիւնը որ մեր ընտանեկան երշանկութեան հիմն է։

Ճանանու. 2, 24. Վասն այնորին թողցէ այր ըգհայր իւր և ըղմացը իւր և երթիցէ ըգհեա կընող իւրց, և երկցին երկուքն ի մարմին միշ Տէս Պատղ. Օժ. առ Եփես. 5, 31. Ուր Աւագեալը Համար 52 շարունակումէ այսպէս. Խորհուրդը այս մէծ է, բայց ես առեմ խակ ի Քրիստոս և յԵպ կեղեցի։

Ելից 20, 15. Մի՛ շընար։

Մատթ. 5, 28. Բայց ես առեմ ձեղ. թէ ամենայն որ հայի ի կին մարդի ի ցանկանալց նըմա, անոքն շնացաւ ընէ նըմա ի որբաի իւրում։

Մատթ. 19, 6. Ազա ուրեմնն ոչ են երկու, այլ՝ մի մարմին։ Արդ զըր Աստամած զուգեաց, մարդ մի մեկնեոյէ։

Կողընթ. ա. 7, 2, 3. Բայց վասն պունըկութեան (պունըկութենից հեռէ լինելու համար) իւրաքանչեւրոք զիւր կին կացի, և իւրաքանչեւրոք

կեն զիւր այս կալցի. կը նո՞ւ այս իւր ըզպարտըն հատուացէ, նոյնու և կիւն՝ առըն իւրում:

Կալց. 3, 18. 19. Կանոյք՝ հնագնեղ լերուք արանց ձերոց, որպէս և վայել ե՛ ի Տէր: Արք՝ սիրեցէք ըզլանացո ձեր և մի՛ դառնացուցանէք ըշնոսա:

Երայեց. 13, 4. Պատուական է ամեւնութիւն ամենն ին, և ոուրբ անկողինք. բայց ըզլունը և ըզպանիկը դատի Ազտուած:

6.

Օ՛ԸՆԿՐՈՒԵՐԻ ալաբասիական աշխատանք:

Եթէ մի քրիստոնէական ամուսնութիւն օրհնած է զաւակներով, ապա ամուսինքը ասվումեն ծընողն: Սորա և սոցա մահից յետոյ նոցա վրախանորդքը (Հոգաբարձուք և Հայրագիրք) պարտական են իւրեանց ինսամարկութեանը յանձնըված զաւակները այնպէս դաստիարակիթէ՝ որ նորա լինին յետոյ առողջ, խելօք և բարի անդամք քաղաքական ընկերութեան, և ապա՝ երկնաւոր երանութեանը ժառանգքը: Ուրեմն չէ պարտ նոցա ոչինչ բան զանց առնել, որանով կարող էին զաւակների հոգեոր և մարմնաւոր բաղդաւորութիւնը յառաջ տանել:

Խելօք դաստիարակութիւն մանկութեան ժամանակը, խիստ՝ բայց սակայն լի սիրով կըրթութիւն, անպակաս ուղարկումըն ուսումնարան, բարի օրինակ խօսքով և գործով, պահպանութիւն չար ընկերութենից և առաջնորդութիւն դէպ ի մի կանոնաւոր գործականութիւն (պաշտօն վիճակի, կոչումըն). ահա սորա են գըլխաւոր յայտնութիւնքը հաւատարիմ ծնողական ինսամարկութեան: Բայց ծնողական մէրը կարող է նոյնպէս շատ անդամ չարի պատճառ լինել (առերել, ունայնասէր շինել զաւակունքը). անմիտ խըստութիւնը և կամակորութիւնը կարող են բնութեան գեղեցիկ կապերը պատառել:

Ալբաք. 7, 27. Արդեակը իցեն քո՞ իշխանա ըզնոսա, և խոնարհեցո՛ ի մանկութենէ ըզպարանոց նոյա: Դըստերք իցեն քո՞ ըզքոյշ մէր մարմնոց նոյա և մի՛ ըրբացուցանէք առ նոսա ըզքէմըն քո: Տնւր արտաքս ըզգուուտը քո, և եղիցին կատարեալ գործ մեծ, և առըն իմաստնոց պարզեւեա՛ ըզնա:

Աւակ. 22, 6. 15. “Եղուգումըն երխոսասրդի ըստ ձանապարհաց իւրոց. նա՛ և յորժած ծերսոցի, ոչ մերժեացի ի նոյանէ: Անմըստութիւն բորբոքեալ ի սիրտ երխոսասրդի, զաւազան և խըրաս հեռի է ի նմանէ:

Եփես. 6, 4. Հա՛րք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, այլ մնուցանիջիք ըզնոսա խըրատու և ուստամք Տէսան:

Տիմոթ. ա. 5, 8. Խակ ելքէ ոք իւրոց, և մանաւանդ և ընտանեաց իրանամ ոչ տանիցի, ի հաւասարյն ուրացեալ է, և չար ևս քան գանհաւատողն է։ Տես Սուրբ պատմ։ Տօբիթ՝ որովէո հայր։

7.

Երեխայտիան արարական թիւնուն։

Հայց և երեխայրը իւրեանց կողմից կապված են սուրբ պարտականութեններով դէպ ի իւրեանց ծընողքը։ Կոքա ինչպէս իւրեանց առաւել մեծ բարերարներին՝ ամենից աւելի պատիւ կը դընեն իւրեանց ծընողներին, որոնց միջնորդութենովը Աստուած պարզեւել է նոյցա կեանք. իւրեանց ծընողներին ցոյց կը տան անձնանուէր սէր, անժըստելի հնազանդութիւն, ամենաձըշմարիտ շնորհակալութիւն։ Աստուծոյ օրհնութիւնը նոցա վերայ՝ կախ է յատկապէս այս պարտականութենների լըցուցանելուցը։ Եթէ կան եպայիններ և այլ ապահովներ, ապա կը լինին նորա միմեանց հետ խաղաղասէր, համոյակատար, և ծընողներից յետոյ՝ աւելի կը սիրեն միմեանց քան թէ ուրիշները, և ոչինչ նեղութեան մէջ չեն հրաժարվելու միմեանցից, այլ կը մընան միշտ առաւել ջերմ բարեկամ միմեանց։

Օտակիները ինչքան որ կենդանի են՝ պարտական են մընում իւրեանց ծընողներին. և տըլկար ծերութեան ժամանակը՝ տեղիք չունի զաւակը ծաղը առնել իւր հօր և մօր վերայ, այլ հընար կը որոնէ հաւատարիմ հոգատարութենով նոցա կեցութեան և բազզաւորութեան համար՝ գննեա որ և իցէ չափով պարտավլճար գըտանիլ։ Եւ եթէ զաւակը ցած վիճակից բարձըր պատիւների է հասած, չունի պատճառ ամսաչելու իւր սիրելի ծընողների մասին։ Տես Սուրբ պատմ. Յովսէփ, Յիսուս։

Յով. 19, 15. 14. Հետի եկեն յինէն եզրարք իմ. ծանեան զօտարը քան զիս. բարեկամք իմ անազարմք եղեն. անդաննեցին զիս մերձաւորք իմ, և ծանօթք իմ մատացն զանուն իմ։

Ելց. 20, 12. Պատուեալ ըղնոցը քո և ըղմայը քո, զի քեզ բարի լինիցի, և զի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրին բարութեան՝ զոր Տէր Աստուած տացէ քեզ։ Երփես. 6, 1-3. Կող. 5, 20։

Ճպնընետ. 45, 24. Եւ արձակեաց զեզբարը իւր, և գընացին. և ասէ ցընսա. մի՛ զայրանայցէք ինչ ի հանապարհի։

Աթբաք. 3, 14, 15, 18. Ո'րդեակ, զօրավելն լեր ծերութեան հօր քում, և մի՛ աըրամեցուցաներ ըզնա ի կեանլու իւր։ Եւ թէ պակասեցի յիմա-

Նալց ըղբանելու, ներեան նըմա, և մի՛ անպատռուեր ըզնաւ յամենայն գորութենէ քումմէ: Հայհոյի է որ թողու ըդհայր, և անիծեան է ի Տեսունեւ, որ բարկացանէ ըզնոյր:

Սալու. 152, 1. Զէ՞ բարի կամ՝ զի՞ վայելուչ զի՞ բնակին եղբարք ի միասին: Յովէ. ա. 3, 12. Ոչ որովէս Կայէնն ի չարէ անտի էր՝ և ըողան զեղությունն իւր. և յո՞ր սակլու ըսպան ըզնա. զի՞ եւր գործքըն չար էին, և եղօրըն՝ բարի:

8.

Ո-ռ-ց-ի-շ-է-լ-ն և աշակ-է-լ-պ-ի-ն-է-լ-ն պատրակ-է-ն-ո-ւ-լ-լ-ն-է-լ-ն:

Օրմողներից յետոյ՝ ուսուցիչներ և ուսուցիչներ հոգաբարձու են տղղաների հոգեոր բարեվիճակութեան համար: Եւ նոյն վերայ կան պարտականութիւնը: Հաւատարիմ գործակատարութեանով պարուն է նոյցա ուսուցանել իւրեանց աշակերտներին մի միայն բարու և ադրանու բան, նոյցա ծուլութիւնը յանդիմանել և պատժել, նոյցա ժրաջանութիւնը վարձատրել, բայց ևս առաւել՝ չուսուցանել և ըստ պահանջել նորանցից ունին՝ որ չէր հաստափում իւրեանց յատուկ օրինակովը. ամեննեին չունին նորա իրաւունք վատ բան ուսուցանալու: Եւ փոխարէն՝ աշակերտները պարտական էին հետևել իւրեանց ուսուցիչներին, ըստ վիրաւորել նոյցա սիրտը ծուլութենով, ապերախտութենով և վատարարոյութենով, այլև ըզզրկել նորանց իւրեանց ծանր աշխատանքի վարձիցը:

Ճողովու. 12, 9. 10. 12. Եւ եվլ ժողովզն իմաստում: և զի ուսոյց ըզգիտութիւն ամենայն մարդոց, և ունելըն քըննէ ըզգարդ առակաց. յոյժ խընդուեց ժողովզն գրաննել ըզգանելու կամաց և գընել զուղութիւնը բանից ձըշմարտութեան: Եւ աւելարդ ի նոյցանէ. որինակ ըզգիշ լեր և ստանալոց ըզգիրը բազաւմըն, զի՞ ոչ դոց վահեձան, և վարժ բազում՝ աշխատութիւն է մարմնոյ:

Իմաստ. 6, 11. Զի՞ որք պահեցին որբբութեամբ ըզգըբութիւն, որբբութիւնն, և որք ուսան ըզնա՝ գըտցին ըզգաստանատութիւն:

Կորընթ. թ. 6, 3. Մի՛ և մի՛ իւիք տայցէք պատճառը, զի՞ արատեսցի պաշտօնըն:

Երայեց. 13, 7. 17. Յիշցէք զառաջնորդը ձեր որ խօսեցան ձեզ ըղբանն Աստուծոյ, հայեցեալք յելը զնայից նորա. նըմանթղք եղելուք հաւատոցըն: Ունկընթիք լերուք առաջնորդաց ձերոց և հավատակ կացէք նոյցա, զի՞ նորա տըննին վասն ուղուց ձերոց, որովէս թէ համարըն տալոց իցեն վասն ձեր. զի իւլներութեամբ արացցեն զայն և մի՛ յոդոց համելոլ. զի՞ այն ոչ յօդուած ձեր է:

9.

Պարունակութիւն և ծառադանելքի պարսպականութիւննելու մասնակիւն:

Մարդկային ընկերութեան մէջ կան նոյնպէս պարուներ և ծառաներ. առաջնները կարող են հրամայել վերջններին՝ այն պայմանի զօրութենովը որ կամաւորապէս կապված է նոցա մէջ: Բայց պարունները պարտական են միայն լաւ բան հրամայել, և ոչ մի ժամանակ առելի չը պահանջել քան թէ ծառոյք կարող էին կատարել, արդարադատ և մարդասէր լինել նոցա հետ, շընորհնել նոցա պատշաճաւոր վարձ, առողջ և բաւական կերակուր և բնակութիւն, նյոյնպէս հոգ տանել նոցա խմացական կատարել լագործութեան մասին, տալ նոցա ժամանակ հանգըստանալու և ուրախանալու, օրինակ լինել նոցա ամենայն բարի բանում և չարհամարհնել նորանց՝ ըստ որում ցած վիճակի մարդիկ էին:

Բայց և ծառոյք ոչ մի ժամանակ չէին մոռանալու ոյն յարդութիւնը որ պարտական են ցոյց տալ իւրեանց պարուններին, և այս յարդութիւնը կը յայտնէին մանաւանդ միշտ հնազանդութենով ամենայն իրաւացի բանի մէջ: Այլ չունէին նոքա համարձակութիւն անփոյթ առնել հաւատարմութեան, արդարութեան, կարգասիրութեան, մրաջանութեան և գաղտնապահութեան պարտականութիւնը. Նոյնպէս հոգատար կը լինէին իւրեանց պարունների պատիւը և բարի անունը պահպանելու համար: Եթէ նոցա խընամարկութեանը յանձնած էին երեխայք, չէ պիտոյ նոցա մոռանալ, որ այս՝ առաւել թամագին բանն էր, որ ծընողը կարող էին նոցա հաւատալ:

Եփես. 6, 5—9. Ծանուայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւուց, աշխատ և գողաւթեամբ և միամըստւթեամբ ուրախց ձերոց որպէս և Քրիստոսի: Մի՛ առ ակննէ ծառայել իւրի մարդահանցք, այլ իւրի ծառայք Քրիստոսի առնել ըգկամըս Աշտուծոյ: Աշտօթ մըսօք ծառայել իւրի Տեառն, և մի՛ իւրի մարդկան: Գիտասջիք թէ իւրաքանչիւր ոք որ զի՞նչ առնել ըգեարին, ըգնյոն ընտունի ի Տեառնէ ևթէ ծառոյց և ևթէ ազատ: Աւ գուք տեա՛ք՝ ըգնյոն առնիվիք առ նոսա. ներելով առնել ըգպատոհաւըն. գիտասջիք թէ և՛ նոցա և՛ ձեր Տէր գոյ յերկինըս. և ակնատութիւն ոչ գոյ առաջի նորա:

Յակով. 5, 4. Ահաւասիկ վարձք մշակաց որ զործեն զանդըս ձեր՝ առձեկ են. զըրկեալըն ի ձենի աղոտակէ. և բողոք հընձողացըն եհաս յակնչըս Տեառն զօրութեանց:

Պետր. ա. 2, 18—20. Ծառոյք հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ

տերսնց, ոչ միայն բարեացըն և հեղոցըն, այլև կամակորացըն. զի և այս
ճշշմարիտ շընորհք Ավատածոյ են, եթէ բարւոք ինչ մրաօք ասնիցի ոք
վըշտաց յանիբաւի: «Քանզի զի՞նչ երախտիք լինին, եթէ յորժամ մեղմն-
չիցէք՝ տանջեցիք և համբերիցէք, այլ եթէ ըզբարիտ գործիցէք՝ չարչարի-
ցիք և համբերիցէք, այն շընորհք Ավատածոյ են:

10.

Հայուսական առաջնորդութիւն և Առաջապահութիւն պատրիարքութեան հայուսական:

Ոչ ամենեքեան հարուստ և մեծատուն են. կան և աղքատո-
ներ: Հարբատականներին պարտ է ըզգուշանալ հըպարտութեա-
նից և մեծամբառութենից՝ որ արհամարհումիշ պակասաւորները.
պարտ է նոցա օգնական լինել աղքատներին, և այսպէս իւրեանց
անձը շընորհակալ ցուցանել Ավատածուց, որ պարգևել է նոցա այն
գերազանցութիւնը: Աղքատներին դարձեալ՝ պարտ չէ նախանձել
հարբատականներին, գողանալ նորանցից, այլ մանաւանդ թէ ճա-
նաչել որ իւրեանց սիրտը՝ քանի մի հայեցուածով՝ աւելի սակաւ
ենթարկեալ է փորձանքների, և ջանալ հարկաւորագոյն պիտոյքը
ըստանալ պատուաւոր կերպով և աշխատասիրութենով: Տե՛ս
սուրբ պատր. Տօրիթ:

Արքաք. 5, 1-5. Մի՛ լինիր առաստան լինչըս քո, և մի՛ առեր՝ բա-
ւական է ինձ. մի՛ երթար ըզգէտ անձնն և զօրութեան քո, և մի՛ հը-
պարտունար ի դանձըս քո. մի՛ լինիր յանձնապատասն և առեր՝ թէ բազում
են ինչք իմ: Մի՛ ասիցեռ՝ թէ ո յաղթահարեցէ զիս, մի՛ առեր՝ թէ չար
ինչ ո՞ւ արացէ. զի Տէր նընդունալ նընդունոցէ ի քէն վըրէժ:

Տօրիթ. 4, 8. 9. Որչափ և իցէ քո՝ ըստ նըմին բազմութեան արացէս
զողորմաւթիւնաըն. եթէ սակաւ իցէ քո՝ ըստ սակաւին, և մի՛ յապավեցէս
առնել զողորմաւթիւնոըն:

Յալք. 51, 24. 25. Եթէ կարգեցի զսոկի ի զօրութիւն իմ. եթէ յա-
կանըս պատուականըս յաւացայ, եթէ ուրախ եղէ ի բարում մեծութեան
եկեցց ինձ. եթէ ի վերաց անթուաց եղի ըդձեւուն իմ:

Տիմոթ. ա. 6, 18. Զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան,
առամտու, սիրունըս, հաղըրըս լինել:

Մատթ. 25, 35. Զի քաղցեայ և ետուք ինձ ուտել, ծարաւեցի և ար-
բուցէք ինձ. օտար էի և ծոլովեցէք զիս:

44.

Փոքը ընէլլիկ և հաստիութիւնէլլիկ պարզապես մշտական է:

Հասակը ևս յառաջացրնումը զանազանութիւնն մարդի մէջ, ուրեմբն և պարտականութիւնը հասակաւորների և փորբերի մէջ: Առաջնները իւրեանց կեանքումը շատ փորձեր առած լինելով՝ պէտք է բարի խորհրդով, խրատով և օրինակով առաջնորդին փորբերին, բայց և նյժապէս պէտք է որ նորա իւրեանց կամակորութենովը, բըթացեալ ըզգայութենովը և հընացեալ կարծիքներովը չը դառնացուցանեն մանուկների կեանիքը: Սորա փոխանակ՝ փայել է հասակին մեծարանը, ծեր մարդերի տըլիարութենութիւններին՝ համբերութիւն և հաճոյականութիւն ամենայն բանով՝ որանով կարելի էր նոցա երեկոյացեալ կեանիքը պայծառացընել:

Դւտակ, 19, 32. Առաջի ալեաց յանեցն և պատուային գերեսը ծերոյն: Եւ Երկենցին յԱսուածոյ քումէէ, ևս եմ Տէր Ասուած քո:

Սիրաբ, 8, 7. 11. 12. Ի ծերութեան ըզմարդ մի' անարգեր, զի և քո ծերանաւ է: Մի' կարծիցես զանձըն քո ինսուսուն քան ըզծերըս, զի և միքեանք ուսան ի հարց իւրեանց: Քանզի ի նոյնանէ ուսոյիս զիմացուածըս, և ի ժամանակի հարկաւորութեան մարթացիս տաւ պատասխանի:

Տիա, 2, 2-8. Ճերոց ըզգասուըս լինել, սարկեշոըս, ցածնելըս, ողամբանը ի հաւատըս, և սէր, ի համբերութեան, ի ժուժկալութեան: Պատուանց նոյնպէս ի զգասութեան, և ուուրբ վայելութեան, մի' բանարկուս, մի' գինեմոլըս, այլ բարեխարարըս, զի զգասացուոցին ըզմանկամարդուն այլասուէրըս լինել, որդենէրս, ցածունս, ուուրբըս, տնարարս, բարեկործըս, հնազանդըս իւրեանց արանց, զի մի' բանն Ասուածոյ և վարդապետութիւնն հայցեցի: Զերխտասարդըս նոյնպէս աղացնչովէր ցածունըս լինել, ամենեցուն զանձըն օրինակ կայուցանել՝ դործոց բարութեան, վարդապետութեանը զանեղծութիւն ունել, ըզըրբութիւն, ըզլարկեշուութիւն, ըզքանն ողջութառութեան, անսպարսա լինել, զի որ հակառակորդն եցէ՝ յամօթ լիցի, և մի' նեչ ունիցի առել ըզմէնչ չարութիւն:

42.

Պարզապահութիւններ ունեալ ի օտարական էլլուս և ճանապարհութիւննելլուս:

Դէպի ի օտարականը և ճանապարհորդները բարեգործ կը լինի քրիստոնեան: Եթէ նորա մի այլ տեսութիւն, մի այլ իւմացողութիւն ունէին պատշաճաւորի և իրաւունքի մասին, եթէ նորա ցուցանումէին մի ջերմ սէր դէպի ի իւրեանց հայրենիքը, մի' հակառակիր նոյս: բայց ջանացիր նոցա կեանիքը քո մօտ քաղ-

ցրացուցանել, ինչքան կարելի էր: Եթէ նոքա ինչպէս ճանապարհութէս՝ տեղեալ չեն ճանապարհի, ջոյց տուր նոցա ճանապարհը: Եթէ հիւանդ և ցաւագար են, հոգ տար նոցա յառաջադիմութեան համար և խրզմացիր նոցա անօդնական վիճակի վերաց: Այնպէս արա որ նոքա խրեանց ընտանիքներից և բարեկամներից հեռաւոր լինելով՝ միսիթարիլին քո մարդասիրութենովը: Տես Սուրբ պատու: Արքահամ, Դուռը:

Դեստի. 19, 34. Խքրե ըզքնակըն ձեր լինիցի ձեզ և եկըն յարեալ ի ձեզ. Եւ սիրեցոց ըզնա իքրե զանձըն քո, զի պանդուխաք եղերուք և դուք յերկին Եփապացոց. Ես եմ Տէր Ապուած ձեր:

Յովի. 31, 32. Արտաք ոչ ագանիւր օտար, զի դուռն իմ բաց էր ամենայն եկելոյ:

Պետր. ա. 4, 9. Օտարասէրք լինել ընդ միմնանըս առանց աըստընծելոյ:

15.

Պապասաշունառ-լիւանս ունու ի հիւանդնելու, մշտածնելու.

Մեր հիւանդ, մշտանց, մշտաք ընկերները ևս արժանի են մեր սիրուն, թէպէտե լինէին մեզ ամեննեին օտար, կամ թէ մեք շըրջէինք նոցա գերեզմանների վերաց: Մերանողները պարտական ենք միսիթարել և հանդըստացուցանել, մեր հոգացողութեամբ հասուցանել նոցա բըժրշկի օգնութիւն, արթան պահել նոցա մէջ առողջանալու յօյսը, կատարել նոցա խընդիրը կրօնի միսիթարական թոշակի մատին, և թէթեացուցանել նոցա վերջին պատերազմը: Հանգուցեալները կը թաղէ քրիստոնեան պատշաճաւոր կերպով, պատրաստապէս կ'ուզարկաւորէ նոցա ապականացու մարմինը դէսլ ի վերջին հանգիստը, կը տըրտմի նոցա մահու վերաց, կը չափաւորէ նոյնպէս իւր տըրտմութիւնը, ըստ որում նոքա խաղաղութիւն են գրտել, սուրբ կը պահէ նոցա վերջին տնօրէնութիւնքը և ցանկութիւնքը, բարի միայն կը խօսէ նոցա մասին, սյրիացեալ կանանցը և որբերին խորհուրդ և օգնութիւն կը տայ, այլև հանգուցեալներին կ'ընծայէ շընորհակալութեան յիշատուի:

Արքաք. 7, 39. Մի՛ գանդալիր ի տես երթալ հիւանդին և համարեաւ ցի քեզ շընորէ: 22, 11. Մըսադիւր լաց ի վերաց մեսելոյ, զի հանգեաւ:

Արքաք. 38, 16—18. 22—24. Որդեակ՝ ի վերաց մեսելոյ իջն արաօսոր, և եքրե թէ չարիս կըրեալ իցէ ըոկիվըըն արա ողբոյ. և ըստ իբաւանց նորա զըստեա ըզմարմին նորա, և մի՛ անտես առներ ըզթաղումըն նորա: Դասմացն զաղիս, և չերմացն կոծ և արա ըզպագն ըստ արժանի նորա:

Օր և երկուք վասն բառանաց, և միսիթարեա՛ վասն տըրտմութեան։ Մի ժամացիս, զի ոչ դո դարձ։ և նըմա օգուտ ոչ առնիցես, և զինքըն չարա չարեպես։ յիշեա՛ ըզգատասամնն իւր, զի այսպէս և քոյն։ ինձ երէկ, և քեզ այսօր։ Ի հանդէլ մեռելոյ՝ հանգե՞ս արա յիշատակի նորա և միսիթարեա՛ ի նա յեւանելոյ հարւոյ նորա։

Մատթ. 9, 12. Խոկ Յիսուս իբրև լուսա՛ առէ ցընոսա, ոչ պիտոյ է բըդիշէ կարսղաց, այլ հիւանդոս։

14.

Պատրիարքականութեան բէտո է անշշրան և անքան արարածնէնը։

Անբան և անշունչ արարածնէրը ևս՝ որ Աստուած ըստեղծել է մարդուս օգտի և ուրախութեան համար, պահանջումնեն մեզանից՝ որ քանի մի պարտականութիւնք լրցուցանէինք նոցա մասին։ Մարդրս՝ հայուննէնք վերայ իշխան գըրած լինելով Աստուծուց, օգուտ կը քաղէ նորանցից խոհական կերպով։ Բայց նա ըսպանումն նորանց, եթէ միայն նոցա կեանքը վնասակար էր, բայց մահը՝ օգտակար խոր համար։ Կա հոգատար է լինում զազանների պատշաճաւոր սընուցանելու և պահապանելու համար, եթէ նորանց որպէս ընտանի անստուններ իւրեանց սեպհական ազատութենից զըրկել է։ Կա աւելի չէ պահանջելու նորանցից քան թէ իրաւունքը, խըզմարտանքը, և ողորմասըրտութիւնը կը ներէին, և ոչ մի ժամանակ անգութ չի լինի նոցա վերայ։ Բուսականքը զմայլեցուցանումն մարդու սիրտը իւրեանց փառաւոր գեղեցկութենով և բազմօրինակութենով։ և սոցա մէջ ձանաչումէ մարդը իւր ամենիմաստ, ամենաբարի, ամենակարող արարիչը։ ասկա ուրեմն տեղիք չունի նա աւերելու ոչ մի հասկ, ոչ մի ծառ, այլ կ'ուրախանաց որ արժանի էր վըրկայ լինելու այն հազարաւոր հըրաշբներին որ երեւումն բուսականների մէջ։ Կա կը զըննէ և կը ձանաչէ այն զօրութիւնքը՝ որ բնութեան գաղտնածուկ խորքերի մէջ ամիտիված կան, և այսպէս կը գոհարանէ ամենեցունց հայրը։

Վերջապէս՝ քրիստոնեայ մարդը հանդիպելով մարդկային ձարտարութեան և զարմանալի աշխատասիրութեան յէշտառիտուննէնքն, մարդասիրութեան գործերին՝ կը պատուէ նորանց և պատժապարտ յանցանք կը համարէ աւերել կամ վընասել նոցա, որանով նա կ'անարդէր իւր անձը և կը խայտառակվէր որպէս թըշնամի ամենայն բարի և ազնիւ բանի։

Ամբաք. 7, 24. Անսառն իցէ քո, դարման տար նոյս . և եթէ իցէ քեզ
պիտանի կայցեն առ քեզ:

Երկրորդ. Օր. 22, 6, 7. Եւ եթէ դիպեսցիս բունց հաւու առաջի քո
ի ձանապարչի, եթէ ի ծառ և եթէ ի գեանի, ձագուց կամ ձուոց, և
մայրըն շետառցեալ նըստցի ի վերայ ձագուցն և ձուոց, մի աւնուցուս ըզ-
մայրըն հանդերձ որդւովլքըն: Արծակելով արձակեցցես ըղմայրըն, և զոր-
գիսըն առցես քեզ, զի բարի լցի քեզ և բազմօրես լնիցիս ի վերայ երկիր:

Աւակ. 12, 10. 12. Արգարըն ողորմի անասնոյ խւոյ. աղիք ամբարըշ-
տայ անողորմք են: Յանեկութիւնք ամբարըշտայ չարք են, և արմատք բա-
րեպաշտաց՝ հասառառնիք:

Երկրորդ. Օրին. 20, 19. Եւ եթէ նըստեալ որսշարեսցես ըդքաղաք՝
աւուրըս բազումըն մարտալնչել ընդ նըմա յաւնաւլ ըզնա, մի հարկանի-
ցես ըդշատատունի նըստ, արկանելով ի նս երկասթ. այլ կերիցես ի նմա-
նէ և ըշնս մի հարկանիցես: Մի՛ թէ մարդ իցէ ծառատունկըն որ յան-
դի անդ իցէ մըտանել յերեսաց քոց ի սրանեշ:

Ճապու. 9, 18. Բարի է իմաստութիւն քանի զանիթքս պատերազմի, և
յանցաւոր մի կարուսանի ըզքարսութիւնը բազումը:



ԱՅԼԻՇ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

կամ

ՀԵԿ ԵԿ ՆՈՐ ԿԸՏԵՎԱԲԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

140-100-270.10
140-100-270.10

ՅԱՌԵՋԱԲԵՆ

Սուրբ կամ Աքտուածաշունչ գիրքը պարունակումէ իւր մէջ
ոչ թէ միայն կրօնական խըստինել, այլև պատճենենաս, որոնց մի մասը
այնպիսի ձառեր են, որոնցով սուրբ մատենագիրքը կամենումէին
օրինակներով լուսափայլ կացուցանել իւրեանց ասացուածքը, իսկ
միւս մասը նկարագըրումէ աշխարհի ընդհանուր անցքերը, որոնց
ներգործութենովը կրօնը և եկեղեցին ըսկրավեցան, յառաջացան
և յաջողութիւն ըստացան: Եթէ այս պատմութիւնքը քաղումենք
միայն Աքտուածաշունչ գրքիցը, դոքա ասվումն Առաջն պատճեննէ,
և բաժանելով Սուրբ գիրքը երկու գըլխաւոր հատուած՝ չին և
‘Նոր կոսակարան, ի հարկէ յառաջանումն նոյնպէս չին և ‘Նոր
կոսակարանի պատճեննէն:

ՀԻՆ ԿՏԸՆԿՐԵՆԵ ՊԱՏՄՈՒԹԻՒՅՑ

ԱԽ ԱԶ Ի Կ Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ

Աշխարհի ստեղծագործութենից մինչև Մոլոխ.

1.

Սուլուշնակոչութենուն. [Գ. ծանրաբար. հ. 1. 2.]

Երբ, ինչպէս և որի՛ ձեռով գոյացաւ աշխարհը և երկիւ
ըլս, որի վերաց բնակումենք՝ այս մասին առաւել հին պատմաբառ
նութիւնքը՝ Մովսէսի հինգ գիրքը՝ այնքան տեղեկութիւն են տա-
լիս, ինչքան որ հարկաւոր էր մարդուս: Եթ մի ժամանակ՝ որ այս
բոլոր աստեղները, արեգակը, լուսինը և երկիրը չը կային և
ոչ մէլ: Բայց Աքտուած չը կամենալով իւր երանութիւնը միայն
վայելել, այլ նորանից՝ ինչքան կարելի էր՝ մասը տալ միւսնե-

թին, այս պատճառով բատեղձեց աշխարհը և նորա մէջ այս երեսը, թէպէտ վաղուց և մեզ անյստ ժամանակում: Երկիրըս որ գուցէ թէ շատ վաղ կար, բայց դեռ այնպէս պատրաստած չէր որ կարողանար շընչաւոր արարածների բնակարան լինել, Աքտուծոյ ամենակարող հրամանով՝ Եղիցի՝, բատացաւ այն կազմութիւնը որի մէջ կայ այժմուս: Հընախօսք հաշուած են, որ այս պատահեցաւ իբր թէ 6000 տարի յառաջ: Այն ժամանակը՝ երկրի երեսը մի անկերպարան, անկարգ՝ հողի և ջրի նիւթ էր, խաւար, անապատ և անբընակ: Յառաջ՝ ինչպէս պատմումէ Մովկէս մարդարէն՝ հրամանց Աքտուած, որ լինի լոյս այս խառնաշրիթ նիւթերի մէջ, և բաժանեց միմեանցից ցերեկ ու գիշեր: Ազա ժողովվեցան երկրային մասունքը, պինդ և ծանր նիւթերը ցած իջան՝ որ գոյանց ամուր հող, և ջրերը պատշաճաւոր սահմանի մէջ մըտանեն: Այսպէս, հողը ամրութիւն բատացած՝ կարող էր իւր աստուածատուր զօրութենովը բուսականը յառաջացուցանել: Կանաչապատ զարդարվեցաւ երկիրը հազարաւոր հրաշալի բուսականներով՝ ըսկիսեալ ցած մասունիցը մինչև բարձրահասակ ծառը, և սրբածառախայլեալ արեգակի մեղմ լուսովը՝ որպէս մանուկ նորածին ներս մըտաւ տիեզերական մարմինների շարքը: Բայց երկիրը տակաւին մի անբընակ մարմին էր, որ ըսկլըսեց կախիլ տիեզերի մէջ: Այն ժամանակը Աքտուած կենագործեց գազաններ հազարաւոր տեսակով, մեծութենով, կերպարանքով և թուով. թրոչուններ՝ օգումը, ձըլիներ՝ ծովումը, միւս անհամար կենդանիք՝ երկրի վերաց և ներբռյ, մեծ և փոքր, բայց բոլորը իմաստնապէս կազմած և անթիւ աստիճաններով: Ավեներեսան՝ այս պըտղաբեր երկրի վերաց գըտանումին իւրեանց՝ կերակուր և բնակութիւն, և ամեն մինը իւր կերպով այնքան կատարելապէս ըստեղծուած էր, որ իւրաքանչիւր արարած մինչև այսօր ևս վըկայութենով հաստատումէ այն խօսքը որ կարդումենք Աքտուածաշունչ գըրքի ճակատումը. «Եւ ետես Աքտուած, զի բարի է»:

Վայդրմ միայն պատրաստ էր երկիրը ընդունել իւր վերաց արարածների իշխանը, մարդըս: Ավենայն օգտակար և ուրախացնցիւ բաններով զարդարած մի բնութիւն բնկալաւ մարդըս իւր մէջ, երբ որ Աքտուած՝ ինչպէս պատմումէ սուրբ գիրքը՝ ըստեղծեց նորան մի կոտոր հողից, և՝ որ չը լինէր նա միայն՝ տուեց նորան օգնական որ պիտոյ է շատ մօտ կապակից լինէր նորա հետ: Այս առաջին երկու մարդու անունները ասվումեն Ադամ և Եւայ որ բոլոր մարդկութեան նախածնողքն են: Մարդըս պէտք է տի-

թէ երկրին. այս պատճառով պիտոյ է որ նա բոլոր միւս արարածներիցը գերազանց լինի. և սորա համար Ապտուած ըստեղծել է նորան «ըստ պատիերի խրում» և բառ նմանութեան», զարդարել է նորան կատարեալ մարմնով, անմահ հոգւով որ ոչինչ միւս արարած չունի երկրի վերաց:

Աշխատ, սցինքրն՝ յառաջուց չեղած նիւթից այս հըրաշըները գործեց Ապտուած: Թժկալէտ նորա ամենակարող խօսքը բաւական էր՝ չ բոտէում բոլորը դցացրնելու համար, բայց Առոր գիրը՝ կամենալով մարդուս տըկար իմացութեանը ոգնել, և իւր ընթերցողների մրտադրութիւնը ուղղեցուցանել դէպ ի հարկաւոր փոփոխութիւնը աշխատելու և հանգըստանալու մէջ, այլև ի միասին կամենալով շաբաթատօնի սահմանադրութիւնը իիշատակել, պատմում՝ թէ Ապտուած վեց օրումը կատարեց իւր արարչադրութիւնը և եօթներորդումը հանգըստացաւ իւր գործերիցը:

1. Ապտուած՝ ամենախրող, ամենիմաստ և ամենողըմ է:
2. Ճանաչիր քո արժանաւորութիւնը՝ ինչպէս իմանալի էակ և արարածների իշխանն:
3. Պատուիր ամուսնութեան վիճակը ինչպէս պատուարժան և Ապտուածուց կարգած:
4. Առուբբ պահիր կերպակէն:
5. Աշխատութեան և հանգըստի փոփոխութիւնը ամրացուցմանը հոգի և մարմին:

2.

Ապտուած երիտա հարցու կեռեանը և նոյն գլուխ անցները. [Ճաշներ. 4. 5.]

Վդամ և Եւայ երջանիկ էին իւրեանց անմեղութենովը, իւրեանց մէջ և իւրեանցից գուրս ունէին ամենայն բան որ կարող էր ուրախացուցանել նոյն կեանքը. հարկադրեալ չէին ծանր աշխատանքով կեանքի պիտոյը ձեռք բերել: Կարգած լինելով իշխան արարչագործութեան վերաց որ նոյն չորս կողմը օրէ օր աւելի գեղեցիկ ծաղկազարդվումը, իւրեանց սըրտումը ուրախ և գոհ էին, բատ որում խորհրդով համաձայն էին Ապտուած կամքին: Այսպէս ապրումէին նոքա այն գեղեցիկ աշխարհումը, որ Ապտուած բնակարան էր սահմանել նոյն, որ և ասվումէ. Դպսակարգ յէրէմ Ապելելքումը: Կոյց թոյլ էր տուած արձակ համարձակ վայելը բնութեան բոլոր պարգևը. մի ծառից միայն՝ որ Առոր գիրը անուանում՝ «ծառ գիտութեան բարւոյ և չարի» չը կար նոյն հրաման ուտելու, և եթէ ուտէին, ասած էր՝ որ կը մեռա-

նին։ Այս ժամանակը ըսկըսեց բանականութիւնը ամենայն տեսակ երկրտութիւն զարթուցանել այս արգելման մասին՝ Եւսցի սըռ տումը, այսպէս խօսելով. ամենայն կենդանիք համարձակվումեն այդ ծառիցը ուտել, ամենայն կենդանոյ առողջարար է այդ պըռ տուղը. դա այդքան սիրելի է աչքի համար. մեք միայն պիտոյ է ըստ մօտենացի՞ք այդ ծառին։ Եւսան կարծեց, որ գուցէ թէ Աստուած նոյցա միայն չէ կամեցել շընորհել այդ ախորժ պըռողի վցելումը։ Ցանկութիւնը սաստկացաւ. կերաւ Եւսան, օձը նորա մէջ էր. մրտածութիւնը որ զարթուցել էին նորա սըրտումը արգելած բանի ցանկութիւնը՝ յաղթեցին արգելմանը. իւր տըլամարդին ևս տուեց այն պըռողիցը։ Բայց անհնազանդութեան հետեւից շուտով հասաւ պատիժը. նոյցա աչքերը բացվեցան։ Աղամ և Եւսայ լըսեցին Աստուածայ ձայնը՝ որ համար էր պահանջում նորանցից։ Դո՞լ ընկաւ նոյցա սիրտը՝ լըսելով այս ձայնը. թափ կացան Աստուածուց, կամեցան իւրեանց անձը արդարացընել, բայց լըսեցին աստուածային վըմիուը՝ որ այն երջանիկ վիճակը որ մինչ չեւ այժմ տեւել էր՝ վերջացել է նոյցա մեղանչելովը։ Եւսցին ասաց Աստուած. այսուհետեւ տըրտմութենով կը ծնանիս որդի, քո տըլամարդին ըստորադրեալ կը լինիս. իսկ Աղամին ասաց՝ աշխատութենով և ցաւով կը գործես երկիրը, քո երեսի քըրտինքով կ'ուտես քո հացը, մինչեւ միւսանգամ հոլ գառնաս։ Ահա այսպէս արտաքսեց Աստուած, կամ թէ մանաւանդ Աղամ և Եւսայ ինքեանք արտաքսեցին իւրեանց անձը այն երանական օթւանից որ աստուածային սէրը սահմանել էր անմեղութեան համար։ Այս պատութիւնը շատ ծիշտ պատիշացուցանում է սըրտի կրուսած դըրախտը։ Կոյցա տան ջող խըլճմըտանքը արտաքսեց նորանց այն երջանկութեան աշխարհիցը՝ որին անարժան էին գըտանված իւրեանց անհնազանդութենովը գէպ ի Աստուած։

1. Մի՛ կարծիք՝ որ մի քան գու աւելի լաւ գիտես քան թէ Աստուած։
2. Դուռ կարսղ ես աշխարհի վերայ երջանիկ լինել, եթէ կամնաս։
3. Փախի՛ք ամենայն մոլորեցաւցել բանից՝ թէ ներսից և թէ գուրսից լինել այն։
4. Չար խըլճմըտանքը միշտ կըցորդ է երկիրը հետ. յաղթիք ամենայն գըրգման գէպ ի մեղք։
5. Մի՛ մեղք ծնանումէ միւս մեղք։
6. Ոչինչ մեղք չի մընց անոկատիժ։

5.

Կոյն և Հովհաննես. [Ծառելութ. էլ. 4. 5.]

Մարդուս հին պատմագլորթի առաջին թերթը ապականածէ մի սարսափելի յանցաճքով: Աղամի որդիքը Կային և Հարել վառվեցան բարկութենով միմեանց վերաց: Վռաջինը և աւելի հասակաւորը, որ երկրագործ մարդ էր, խոռվաբարաց և թըշնամական սըրտով պատարագ բերեց Աքտուծուն դաշտի պրոտոգներիցը, և Հարել աւելի կըրտսերը, որ հանդարտ մի հովիւ էր՝ մեղմ և քաղցըր բնութենով՝ պատարագ բերեց Աքտուծուն իւր ոչխարների անդրանիկներիցը: Կայինը տեսաւ որ Աքտուծոյ օր հնութիւնը առաւել է իւր եղոր վերաց, և նորա պատարագը աւելի հաճոյ է Աքտուծուն, քան թէ իւրը, ըստ որում Հարելի բերած պատարագի ծուխը ուղիղ էր բարձրանում, որ՝ այն ժամանակի դատողութեանը հետեւելով՝ բարի ընդունելու թեան նըշան էր: Կայինը բարկանալով այս բանի վերաց՝ բապանեց դաշտումը իւր Հարել եղացըր. և իրը անըզգամութենով կամենումը իւր եղոր յիշատակը և իւր յանցաւոր գործը քերել իւր սըրտիցը. բայց ինչ տեղ և գրտանվումը, ամենայն տեղ մի գաղտնաբարբառ ձայն հարցընումը նորան. ուր է քո եղացըր: Դեր ջապէս բացվեցան Կայինի աչքերը իւր զարհուրելի գործի վերաց. խըզմամբ բարձրանալով ըսկըսեց խօսել. քո մեղքը աններելի է, անտուն և փախըստական պիտոյ է շըրջիս դու երկրի վերաց. ամենայն մարդ՝ անգութ եղացըրասպան կը ճանաչէ քեզ և կ'ունենաց իրաւունք նոյնակէս ըսպանելու քեզ. բայց ասաց Աքտուծած. ով որ կը սպանէ Կայինը, եօթընոպատիկ վըրէժ կը վըճարէ: Այսպէս հեռացաւ Կային այն հողեցը՝ որ արբուցել էր իւր եղոր արիւնովը:

Կայինի սերունդը նըման էին իւրեանց նախահօրը և նըշանաւոր գրտանվեցան իւրեանց ախտերով, բիրտ վարդով և անիրաւութենով: Բայց սոցա մէջ յայտնըվեցան նոյնակէս քանի մի անձինք որ առաջին անդամը ընտրեցին իւրեանց համար կանոնաւոր պարապմունք, որ և հընարեցին արուեստ և վաստակ: Յովքէլ շինեց առաջին հովուական վըրանը, Յովքաղ ցոյց տուեց երգի և քընարի գործածութիւնը. Թռովքէլ էր առաջին դարբինը: Հարելի փոխանակ Աքտուծած բաշխեց նախածընողներին այլ որդի Սէթ անունով, որի որդիքը և թուները էին Ենովս, Ենոք, Մաթուսաղա: Սոքա երկիւղած էին և ըսկըսեցին պաշտել և եր-

կըրպագել Աստուծուն և շատ երկարակեաց եղան երկի վերաց, մանաւանդ թէ վերջինը՝ որ 969 տարի ապրեց:

1. Զգնյշ կացիր նախանձից, անգոհ մի՛ լինիր քո վիճակիցը:
2. Աովբեր յաղթել քո առաջն չար յօժարութեններին:
3. Մի՛ զարմանար որ անյաջող է դործըդ, եթէ դու երկիւղած չես:
4. Կայենի պատմութենից ուստիր չար Խրդականքի տանջանքը:
5. Ճարտարութիւն և յաջարակութիւն մեայն չեն կարող մարդու հաջոյացընել Աստուծուն:
6. Ճարմանների օրինակը՝ շատ ներդործութիւն ունի զաւակների վերաց. դու հացիր Աստուծուց որ պարզեց է քեզ բարի ծընալք: Եթէ ունիր անիրաւ ծընալք, մի՛ հետեւիր ամենայն բանի որ առանուամբ նայա մէջ:

4.

‘Ե՞ս · | Ճաշէներ · Գլ · 6 —]

Յանցաւոր մարդերի օրինակը այնքան վսասակար ազգեցութիւն ունեցաւ Եղամի երկիւղած սերտնդների վերաց, մինչեւ մեղք, անիրաւութիւն և ամենայն տեսակ արատներ ըսկըսեցին օրէ օր աւելի զօրանալ երկրի շուտով բազմացած բնակիչների մէջ: Եւ որպէս համեցան մարդիկ երկայնամիտ Աստուծոյ շընորհած ժամանակը գործ ածել իւրեանց անձը ուղղելու համար, այս պատճառով՝ վերջապէս վընուեց նա՝ որ բոլորովին արմատախիլ առնէ նորանց երկրի երեսիցը. » Ջընջեցից զամենայն մարմին զոր արարի՝ յերեսաց երկրի» ասաց Աստուծուած: Մի տուն միայն՝ իւր գըլխաւորի երկիւղածութեան համար՝ ողորմութիւն գըտաւ Աստուծոյ առաջեւը, այսինքն առնը՝ ‘Եսի՝ որ Մաթուսադացի թուն էր: ‘Երան կամեցաւ Աստուծուած փըրկել և նորանով մարդկեղէն ազգը պահպանել: Այս պատճառուաւ հրամացեց Եսին մի մեծ նաւ պատրաստել և մըտանել նորա մէջ իւր ընտանիքով, և ամենայն ցամաքային անաստններից երկու երկու հատ վեր առնուլ իւր հետ, որ նոցա ցեղը բնաջնն չը լինի: ‘Ես կատարեց ինչ որ հրամացած էր. և երբ որ ինքը և իւրայինքը ապահովութիւն էին գըտել այն նաւի (Տապանի) մէջ, այնուհետեւ պատառվեցան աղբիւրները, և երկընքից քառասուն օր և քառասուն գիշեր այնքան անձրեւ թափվեցաւ, որ երկրի երեսը մինչեւ ամենաբարձր սարերի գըլխուիը ծածկվեցաւ ջըրհեղեղով և ջընջեցաւ ամենայն հասակ՝ մարդից մինչեւ անասուն, բաց ի Կոյից և նորա հետ եղածներիցը: Իբր մի տարուց յետոյ թուացաւ և նուազեց ջուրը՝ այնպէս որ կենդանի մընացած ութ

մարդը (Նոյ, իւր կինը, իւր երեք որդիքը՝ Աւեմ, Քամ, Յարէթ, և նոցա կանսցը) կարող էին դուրս գալ իւրեանց նեղ բնակարանիցը և տարածվիլ երկրի վերաց։ Մի զեղեցիկ աղեղն կամար կապեց երկիցնքի երեսին՝ ինչպէս հաստատութիւն այն նոր ուխտին որ Ապսուած դըրեց նոցա հետ այն միջոցումը՝ երբ նոքա իւրեանց ըսքանչելի փրկութեան համար շընորհական զոհ մատուցին Ապսուածն։ Եւ ասաց տէր Ապսուած. «Ոչ ես յաւելց անիծանել զերկիր վասն դործոց մարդկան. այսուհետեւ զամենայն աւուրըս երկրի՝ սերմըն և հուճք, ցուրտ և տօթ, ամառն և գարուն, ըլտու և ըլդիշեր մի՛ դադարեցեն»։ Ապա Նոյ սոյդի տընկեց և գինի պատրաստեց, բաց և ըզգաց նոյնպէս նորա չափազանց գործածութեան վնասակար հետևանքը. բատ որում արբեցաւ և արհամարհանք տեսաւ իւր զաւակիցը։ [Ճշնլնդ. գլ. 9.]

1. Օդուա քաղիք այն ժամանակիցը որ Ապսուած տուել է քեզ՝ քո վարքը ուղիւլու համար։
2. Ապսուած կը դրսանէ երկիւլած մարդը և կը սրահպանէ նորան հրաշալի կերպով։
3. Ըընորհական կաց Ապսուածն որ օգնական է եղել քեզ վրանդի մէջ, եթէ կամենումնես յսո ունենալ նորա հաստատ ովզըմութեան վերաց։
4. Ամեն բան չափաւո՞ր վայելիր. միշտ պարկէշա կաց ուտելու և ըմպելու մէջ։
5. Մի՛ արհամարհէիք քո հայրը, թէպէտ և արփար լիներ նա և որինաւանքներ գործէր։

5.

«Ե՞՞կ հերուեդու. [Ճշնլնդ. գլ. 10 —]

Վաստէս՝ Նոյի որդիքը սրահպանելով բաղմացուցին մարդկային ազգը, որ նորանցով տարածվեցաւ Ապիսցի աշխարհումը։ Խնչքան որ մեծանումէր ժողովը թիւը, այնքան ևս հարկաւոր էր արօտատեղի նոցա ոչխարների և տաւարների համար, և այնքան ևս հեռանումէին միմեանցից. բայց այս՝ սիրելի չէր նոցա։ Բոլորեքեսն խօսումէին մի լեզու։ Այն ժամանակը վըձիռ կապեցին որ մի մեծ դաշտավայրում մի քաղաք և մի շատ բարձըր աշտարակ շինեն, որի ծայրը վերանալով մինչև երկինք՝ կարող էր ամենեցուն տեսանելի և ձեռ ընտու լինել՝ շուտով մի տեղ հաւաքվելու՝ եթէ վըտանդ հանդիպէր։ Բայց Ապսուածուն համոց չէր, որ երկրի վերաց մի տեղ միայն հարըստանայ ժողովը դուռ և բազմութեամբ. վասն այս պատճառի ցըրուեց նորանց գէպ ի ամենայն կողմեր, մի հրաշալի կերպով խառնակելով նոցա լեզուն, այնպէս որ նորա

դադարեցին շինել քաղսպը, որ և այս անցրից լսուացաւ անունը բառի է, այսինքն՝ կառավարումէ:

1. Մարդը մըսածումէ, Ազտուած կառավարումէ:

2. Երկիրը ամենայն տեղ Ազտուծոց հան է, մարդը պարտական է միայն իւր հետ առնել բազը ամենայն տեղ:

6.

Աբրահամ. [Ճանաչութ. հւ. 11.]

Մարդիկ՝ ասուուածային պատուհաններով ուղղելով իւրեանց գընացը և հարժարվելով իւրեանց նախահարքների անկիրթ և անկարդ վարքերիցը՝ ասլրումէին երկար ժամանակ՝ որ քան զօր աւելի բազմանալով և տարածվելով երկրի վերսց, և հաւասարով մի ճշշմարիտ Ազտուած: Բայց փոքր առ փոքր խանգարվեցաւ նոցա ասուուածպաշտութիւնը. ըսկըսեցին երկըրապագութիւնն տալ արեգակին, լուսնին և աստեղներին, ըստ որում սոքա աւելի անկանուումէին նոցա աչքի տակ, այլ՝ զանազան գազանների որ առաւելապէս նոցա օգտակար կամ վնասակար էին. այն և այնպիսի մեռած գնացած մարդերի որ գերազանց էին հանդիսացել իւրեանց արդիւնաւոր գործերովը, քաջ էին գրտանվել պատերազմի մէջ, իմաստուն՝ խաղաղութեան ժամանակը: Այս մարդերի պատիերները շինելով քարից, փայտից և մետաղից՝ երկըրապագումէին նոցա, զոհ էին բերում նոցա և նոցա պատուի համար կարգումէին պէսպէս պաշտօն: և արարողութիւնք: Ահա այսպէս յառաջացաւ կըրապաշտութիւնը. այսպիս ներս մըտան ժողովը մէջ մոլորական հասկացողութիւնք: Ազտուծոյ և աստուածային բաների մասին, որոնց ցով մարդիկ խարումէին իւրեանց անձը և անհանց էին լինում Ազտուծուն: Բայց Ազտուած ըը կամենալով թոյլ տալ որ այս մոյորութիւնը և սնազաշտութիւնը առաւել տարածվի, ընտրեց Աեմի ցեղեցը մի երեելի, հարուստ՝ բայց երկիւղած մարդ Աբրահամ անունով, և հրամայեց նորան իւր բազմաթիւ ընտանիքով հեռանալ կրտասաշտ Քաղդէացոց աշխարհիցը և գընալ պըտղաբեր Քանանու երկիրը (այն տեղ որ յետոյ պիտոյ է լինէր Խարայէլացոց հայրէնիքը)՝ մի նոր կրօն հաստատելու համար: Ասկըրօնը ըսկըրումը պարզ էր, բայց կար նորա մէջ ապայ ժամանակի մովսիսականի հիմք: Աբրահամը՝ կենդանի Ազտուծոյ համար սեղաններ շինեց, և քարոզվեցաւ ճշշմարիտ Ազտուծոյ անունը:

Աբրահամը թէպէտ երկիւղած մարդ էր, բայց շատ ցաւերի ունէր տանելու. նորա ամուսնութիւնը անզաւակ լընաց, մինչև

Ապարա՝ խոր ծերութեան մէջ որդի ծընաւ՝ խահակ: Աբրահամի հաւատը փորձելու համար՝ Աքսուած պահանջեց նորանից՝ որ իւր միամօր որդի Խահակը զոհ բերէ նորան: Բայց Աբրահամը ամեն բանի մէջ հաստատ պահեց իւր աստուածահաւատ, Երկիւղած և առաքինի հըռ չակէալ անունը, և այս պատճառով բազմօրինակաբար արժանացաւ աստուածային շընորհին: «Որա պատրաստական հնաղանդութիւնը վարձատրեց Աքսուած՝ թոյլ չը տալով զոհել իւր որդին, և նորա Երկիւղածութիւնը՝ այն բանով որ ուխտ դըրեց Աբրահամի հետ՝ թէ նորա զաւակը և՛ մեծ բազմաթիւ աղդ կը դառնայ և՛ նորանով շատ միւս աղգեր օրհնութիւն կը ստանան: Ճըշմարիտ Աքսուածոյ Երկրպագողները կը պատաշոներից բացորոշէլու համար և նորանց որպէս թէ մի նշանաւոր դաշնակցութենով միաւորելու պատճառով՝ Աբրահամը Աքսուածոյ հրամանով սահմաննեց թըրլիաստութիւն իւր արու զաւակի մէջ:

1. Ինչպէս Աքսուած առաջնորդումէ քեզ, պիտոյ է զընսա. և զընսա յօժարութեամբ և համարձակ: Պատճառ որ Աքսուած միշտ և ամենայն տեղ պաշտպան է Երկիւղած մարդուն:
2. Ակապար վըշտակութենի փոխարէնը յառաջ կամ թէ յետոյ կը հասուցանէ Աքսուած:

7.

Դաստիարակություն:

Աբրահամի հետ կենակից էր նորա աղգական Դովտը. բայց սոցա հովիւները շատ անգամ միմեանց հետ վէճ և կը ուիւ ունեին, որովհետև ոչսար և անսառոն շատ լինելով՝ Երկիրը բաւական չէր միասին բնակելու համար: Այս պատճառաւ Աբրահամը հարկադրեալ գրուանվեցաւ առաջարկել իւր Եղօրորդուն, որ անջատվէին միմեանցից: Այսպէս՝ Դովտ տեղափոխեցաւ Սոդոմ քաղաքը, որ շատ գեղեցիկ աշխարհ էր, բայց մարդիկը՝ չար: Աբրահամը մընաց Քանանումը: Ասդոմի թագաւորը պատերազմ ունենալով Դոդողագոմորի հետ՝ որ Ելամի թագաւոր էր, քաղաքացիներից շատերը և Դովտը նոցնակէս զըրկվեցան իւրեանց կայրից և գերի գընացին: Երբ այս լուրը հասաւ Աբրահամին, սա՝ 318 մարդով ըշտապէց օգնութիւն տալ Դովտին և փրրիկեց նորան և միւս գերիները թըրչնամու ձեռքից: Աբրահամի վերադառնալու ժամանակը՝ հացով և գինով յառաջ զընաց նորան Ապահմի թագաւոր և Աքսուածոյ բարձրէլց քահանայ Մելքիսեդէկը՝ որ այն յաղթող զօքը և նորա զօրսպարը օրհնէ և շընորհակա-

լութիւն մատուցանէ Աքտուծուն։ Աբրահամը դէպ ի Առղոմի յաղթված թագաւորը շատ վեհանձնութիւն ցոյց տուեց՝ տիրապետեալ կալուածներիցը այնքան միայն յետ սահմանով իւր մօտ՝ ինչքան հարկաւոր էր՝ այն տրղամարդերը վարձատրելու համար որ նորա հետ պատերազմ էին գընացել։

Առղոմացոյ պլրջագործութիւնքը մինչև այն աստիճան գօրացել էին որ Աքտուած մրտքումը դըրեց կործանել այն քաղաքը՝ որ այդքան անսպատվումէր իւր պատուիրանքը։ Բայց այս աստուածացին խորհուրդը դեռևս ըստ կատարված, երեք տղամարդ հանդիպեցան Աբրահամի մօտ, որ պատվով լնդունեց և հիւրասիրեց նորանց։

Արանցից տեղեկացաւ Աբրահամը, որ Աքտուած ուղարկել է նորանց՝ Առղոմ և Գոմոր քաղաքները սատակելու համար, և խընդրեց որ խընային նոցա, ըստ որում գուցէ թէ կը գըտանվէին այն տեղ մի քանի բարի մարդիկ, և մի՞թէ կը կամենար Աքտուած կործանել արդարը ամբարըշտի հետ միասին։ Ղովտը հիւրասիրապէս ընդունելով Աքտուծոյ հրեշտակը՝ իմացաւ որ Աբրահամի բարեխօսութիւնը ի զուր չէ եղել։ Ղովտի քաղաքակիցը լիրը և անսպարկեցա գըտանվելով դէպ ի նորա հիւրքը, և Ղովտը յանդիմանելով իւր քաղաքակիցը այս մասին, պատուէր ըստացաւ իւր ընտանիքին տեղեկութիւն տալ Աքտուծոյ գալոց պատուհասի մասին, որ ըզդուշանան և փախչեն։ Ղովտը ծանուցումն արեց. բայց ծիծաղեցին նորա վերաց. և ինքը ծանրաշարժ գըտանվեցաւ այն սահմանեալ առաւօտուն՝ երբ որ պիտոյ է դուրս գընար քաղաքիցը. Բայց Աքտուծոյ հրեշտակինը վեր կալան Ղովտի և նորա ընտանիքի ձեռքից և դուրս հանեցին. Խըրատեցին որ ոչ ովլ յետ չը նայէ. Ղովտի կինը յետ նայեց և աղի քար դարձաւ։ Առղոմ և Գոմոր կործանվեցան՝ կըրակ և ծըծումք թափիվելով երկրնքիցը. միւս առաւօտուն Աբրահամը կարող էր միայն կըրակի բոցի բարձրանալուցը ձանաչել՝ թէ որ տեղում կանգնած էին կործանված քաղաքները։ Այժմեան հառեալ ժանալ այն տեղն է, որ տեղ նորա մի ժամանակ գըտանվել են։

1. Այն մարդերից հրաժարվէն խոհեմութեամբ՝ որոնց հետ չես կարող խսդացաւ թենիւնով կինաւ։
2. Օդներ քո ընկերին, ինչքան կարող ես գու, երբ նա վըշտի և վըտանղի մէջ է։
3. Պատիւ տուր նորան՝ ում պատիւ կը վայելէ։
4. Թարշամանիւներից հետ վեհանձըն կաց. այն ժամանակը ցոյց կը ասցիր որ

քո ձեւնարկութենների նըստատակը շահամիլնդրութիւն չէ, այլ նոյն
խեկ գործը:

5. ՄԵՇ Խարվիք, Ապառած չէ արհամարչիք:
6. ՄԵ Քարի Խոռք՝ մի քարի տեղ կը հստանի:
7. Ազնայն մարդու քաջըը և սիրովագին հանդիպիր դու չը գիտես ով
է քո արնումը իշխանած մարդը:
8. Ապառածուց թագչել կարող չէ չար մարդը:
9. Բարի և երկիրած մարդուն պաշտպան է Ապառած:
10. Եւ չար մարդերի մէջ կարելի է քարի մընալ:
11. Որի համար գըժուար էր չարեցը հօսժարվիլ, նա գեռ ևս քարի չըր:

8.

Յանձնէ. [Ճաշկէնք. հ. 23.]

Եւ Խաահակին զանազան վըշտեր հասած էին, բայց նա փոր-
ձով խմացել էր. եթէ Ապառած իմ հետ է, ոլ կարող է ընդ-
դէմ խմ լինել: Կա ունէր Ռեերեկա կընոջց երկու որդի՝ Եսաւ
և Յակովը, որ թէպէտ երկուորեակ էին, բայց բնութեամբ ամեա-
նեին աննըման միմեանց: Եսաւը որսորդ և խոշորաբարոյ մարդ
էր, բայց Յակովը մեղմ և հանդարտ: Խաահակին աւելի սիրելի
էր Եսաւը, և Ռեերեկային՝ Յակովը: Պատահեցաւ միանդամ՝ որ
Եսաւը դաշտից տուն դալով՝ տեսաւ որ Յակովը սապնաթան էր
եփել: Խընդրեց այն կերակորիցը, բայց Յակովը փոխարէն պա-
հանջնեց Եսաւի անդրանկութեան իրաւոնքը. սա վաճառեց իւր
անդրանկութիւնը և հասաւ իւր նպատակին, թէպէտ անազնիւ
հընարքով:

Երբ ծերացել էր Խաահակը՝ կամեցաւ իւր տունը կարգի
գընել. և ի հարկէ հայրը միոք ունէր առաւել ընտիր բաժինը
իւր սիրելի Եսաւին հասուցանել: Մայրը որ աւելի էր սիրում
Յակովին՝ աշխատեց խսիանել այս բանը, բայց ընտրեց սորա
համար մի չըգովիլ ճանապարհ. նա խըրաս տուեց Յակովին որ
Եսաւի պէտ կերպարանավոխ լինի և գընայ կուրացած հօր առաջնը:
Խաահակը կարծելով՝ թէ օրհնում; Եսաւին՝ աւելի առատ և քարի
շընորհներ խընդրեց Ապառածուց Յակովի համար: Բայց երբ որ
Եսաւը տուն եկաւ և դիմեց հօր մօտը, Խաահակը խմացաւ խա-
թէութիւնը, թէպէտ օրհնեց Եսաւը ևս, բայց այս անցքը Եսաւի
սըրտումը գոյացըրեց մի անշիջանելի ատելութիւն դէպ ի իւր
եղբայր Յակովը, այնպէս որ սա իւր կեանքը անապահով կար-

ծելով իւր ընտանիքի մէջ՝ մօր խորհըրդովը թողեց հայրական տունը և գընաց իւր քեռի Լաբանի մօտ:

Դանապարհումը մի երեկոյ Յակովը քոնը տարաւ դաշտի մէջ՝ մի քար գըլսի տակը դըրած: Քընի մէջ մի գեղեցիկ տեսիլ տեսաւ Յակովը. Ազտուծոյ հրեշտակները՝ մի սանդուղ կապած երկրնից մինչեւ երկիր՝ Ելանումէին և իջանումէին, և Տէր Աստուածը վերևումը կանգնած՝ ասումէր «Ես եմ Տէր Ազտուած Արրահամու և Խասհակայ հօր քո. ես ահաւասիկ ընդ քեզ եմ պահել ըլրեզ յամենայն ճանապարհը քո, յոր և գընացես և դարձուցից ըլրեզ յերկիրը յայս»: Երբ Յակովը զարթեց քրնիցը, սիրուահու ու դող ընկած ըսկըսեց խօսել «Անեղ իմն է տեղիս այս, և ոչ է սա՝ եթէ ոչ տուն Աստուծոյ, և այս է դուռն երկնից»: Կա ուխտ դըրեց որ՝ եթէ Աստուած կը պահապանէ նորան իւր ճանապարհներումը և ողջութեամբ կը դարձուցանէ իւր հօր տունը, այս տեղու լինելոց է նորա համար տուն Աստուծոյ (Բենէլ): Յակովը շարունակեց իւր ճանապարհը դէպ ի Լաբան և խոստացաւ եօթն տարի ծառայէլ Լաբանի տանը՝ եթէ կը տաց նորան իւր Ռաքէլ գուստորը՝ որի հետ Յակովը խառան եկած ծանօթացել էր մի ջըրհորի մօտ: Բայց որովհետեւ Լաբանը այս եօթնամեայ ժամանակից յետոյ՝ Ռաքէլի փոխանակ տուեց Յակովին առաւել հասակաւոր Լիա դուստրը, պատճառ բերելով թէ մեր երկրումը օրէնք չէ փոքր աղջնելը մեծից յառաջ մարդու տալ, ապա Յակովը յանձնն առաւ դարձեալ եօթն տարի ծառայէլ՝ որ ըստանայ Ռաքէլը: Յակովը հասատարմութեամբ ծառայած լինելով իւր մօրեզօրը, սորան ցանկալի էր որ Յակովը երկար մընայ Լաբանի տանը, որ և խոստացաւ բաշխել նորան բոլոր խայտաձամուկ գառները իւր հօտի մէջ: Յակովը հնարագիտութենով ձեռք բերեց Լաբանի բոլոր պատուալին ոչխարները և հարթստացաւ բառ բաւականին: Ես մասին տըրտունջ յառաջացաւ Լաբանի և նորա զաւակների կողմիցը, այնայէս՝ որ առաջն խաղաղութիւնը և միաբանութիւնը խախտվեցաւ նոյսա մէջ, և Յակովը հաստատեց մըսումը որ իւր բազմաթիւ լնտանիքով դառնայ իւր հայրենիքը: Ճանապարհ ընկաւ Յակովը առանց Լաբանի գիտութեան. սա հասաւ նորա քամակից, հրաժարական ողջյն առեց իւր դուստը ըլրներիցը որ Յակովի հետ էին, և հաշովեցաւ իւր փեսայի հետ:

Յակովը շարունակեց իւր ճանապարհ՝ ուրախանալով որ միւսանգամ տեսանելոց է իւր հայրենիքը՝ Միջագետք Ասորոց, բայց նոյնպէս երկիւղ ունենալով իւր Եսաւ եղօր բարկութենիւ

յը որ դուցէ դեռևս չէր շիջած։ Այսպէս՝ կասկածի և երկիւղի մէջ լինելով՝ Յակովին մի աստուածային տեսիլ հանդիպեցաւ, բայ որում երեւեցաւ նորան որ մի տղամարդ պատերազմում; իւր հետ, որ և չը կարողանալով յաղթել Յակովին՝ ձեռք ձրգեց նորա զլատի ամոլաջիլքը և թույացրեց նորան։ Յակովը այն տեղը՝ ուր այս տեսիլքը պատահել էր՝ անուանեց «Տեսիլ Աստուծոյ»։ յետոյ աճքը վեր բարձրացրեց Յակովը և տեսաւ որ ահա իւր Եսաւ եղացրը 400 մարդով գալիս է. բայց գործը աւելի յաւ վեր ծացաւ, քան թէ կարծումէր նա։ Եսաւը եղացրական խաղաղ սըրտով հանդիպեց Յակովին, ընդունեց նորա պարգևները, հաշտվեցաւ նորա հետ և գընացին ի միասին։ Յակովը շնեց Բեթելումը սեղան և թաղեց այն տեղ բոլոր կուռքերը որ մինչ այժմ իւր ընտանիքը ունէին իւրեանց հետ։ Դերջագէս եկաւ իւր ծերացեալ Խասհակ հօր մօտը, որ 180 տարի հասակով վախճանեցաւ։ Բայց Յակովը իւր պատերազմումը Աստուծոյ հետ դիմացկոտ գլուխնվելով՝ ըստացաւ անունըս Խոհոյէւ։

1. Ճըշմարիստ ծընտաղան սէրը թոյլ չի այց՝ առանց բաւական պատճառ ուի մի գուշակը միւսոյ նախապատիւ համարել։
2. Ազնուամիտ մարդը ոչինչ ժամանակ իւր տուած խօսքը յետ չի առնու։
3. Բարեկամք, ազգականը և եղացը ու քոյր պարտական են այնպիսի սիրով միմւոնց հետ լինել, որ ժամանելումէիւն բաժանելու ժամանակը ոչինչ երկպատակութիւն ըլ ծընանի նոյա մէջ։
4. Ազգելեալ հընարներով աշխատել հասանել իւր նորատակներին՝ մեղք է։
5. Հօր օրհնութիւնը կը շնէ որդիների տունը, բայց մօր անէծքը կը կործանէ նորան։
6. Խարեւայ և ապօրէն հընարքով ըստացուածը ոչ մի բազւաւորութիւն, ոչ մի օրհնութիւն չի կարող բերել։
7. Բարի խըշմըտանքը ամենահանդիսա գըլիսի բարձն է։
8. Հաւատարիմ՝ կայ այն պաշտօնի մէջ որ յանձնըն ես առել։
9. Քո մըշակներին վըշարիք խոստացած վարձը՝ տայմանեալ ժամանակում։
10. Քո աշխատաւորներին առեիթ մի՛ առեր՝ որ քեզ քո ժըլատութեան և անարդարութեան համար խաբեն։ Վաս պարոնների ծառացքը՝ վատ կը լինին։
11. Ա՛յնու կայ՝ որ քո մեծաւորը ցանկայ քո առելի երկար մընալուն պաշտօնի մէջ։
12. Քո հայրենիքի սէրը թո՛ղ երբէք ըլ տաւնանայ քո ոըբաի մէջ։
13. Զար խըշմըտանքը միշա ահ ու գողի մէջ է։

14. Ըստացած վիրաւորութիւնքը մուտայի՛ր, և պատրաստութեամբ տուր
ձեռըդ դէպ ի հաշտութիւն։
15. Դըբած ունաըդ կատարի՛ր։

9.

Յունակ. [Ճանաչում. էլ. 37 — 40.]

Յակովի տասերկու որդիների մէջ աւելի փոքրը Յովսէփի՝
իւր երկիւղածութենովլը առաւելագէս սիրելի էր հօրը, և այս
պատճառով նորա չարասիրտ եղքարքը վառվեցան նախանձով և
ատելութենովլ դէպ ի նա։ Այս նախանձը և ատելութիւնը աւելի
սաստիացաւ ոչ թէ միայն նորանովլ որ հայրը նախարարիւ շը-
նորհ էր ցուցանում Յովսէփին, այլև սորա տեսած քանի մի ե-
րաշներովլ որ այն կողմըն էին ակնարկում, թէ փոքր Յովսէփի
եղքարքը միանգամ պիտոյ է երկլրպագութիւն մատուցանէին նո-
րան։ Ամենը կատարվեցաւ նոյնպէս շուտովլ Յակովը միանգամ
դաշտ ուղարկեց իւր Յովսէփ որդին որ տեսանէ թէ ողջ են եղ-
բայրները, և լուր բերէ հօրը։ «Եղա վըմիո կապեցին որ բազա-
նեն Յովսէփը. բայց Առուբէն եղքարքը ըլ թողեց որ արիւն թա-
փեն, և խորհուրդ տուեց որ ձրգեն նորան մի փոսի մէջ անա-
պատումը։ Այս միջնորդումը պատահեցին նոցա իսմայելացի վաճա-
ռականներ որ աւզտերովլ խունկ և ռետին (գաղպէ) էին տանում
Եգիպտոս, սոցա վերսալ վաճառեցին Յովսէփը. քրսան դահեկա-
նովլ, բայց նորա պատմումանը շաղախած այծի արիւնով բերեցին
Յակովին և հաւատացրեցին հօրը թէ մի յափըշտակող գաղան
պատառել է նորա սիրելի որդին։ Բայց ինչ վատթարութիւն Յա-
կովի որդիը արել էին, Աքտուած դէպ ի բարին առաջնորդեց։
Այս վաճառականքը Եգիպտոսումը ծախեցին Յովսէփը Փարա-
ւոնի Պետափրէս անունովլ դահճապետի վերսա, որ նորան իւր
տան մէջ վերակացու կարգեց և օրբստորէ աւելի սիրեց այն գե-
ղեցիկ և առաքինի պատանին. բայց Պետափրէսի իինը արատուոր
սիրովլ վառվեցաւ Յովսէփի վերսա և կամեցաւ մոլորեցուցանել
նորան։ Ո՞չ՝ ասաց Յովսէփը՝ «և զիարդ առնիցեմ ըզբանըդ զայդ
զզչար և ըզմեծ և մեզանչեցեմ առաջի Աքտուծոյ» և դուրս փա-
խաւ այն մոլորեցուցիչ կընոջ մօտիցը որ ապա զըրպարտութենովլ
հարկադրեց իւր տրդամարդին որ բանտ դընէ Յովսէփը։ Բայց և
այս տեղ Աքտուած Յովսէփի հետ էր։ Բանտապետը հաւատ
ըստացաւ դէպ ի Յովսէփը և վերակացու դըրեց նորան կալա-
նտորների վերսա որոնց մէջ կային և թագաւորի տակառապետը

և մատակարարը։ Այս երկուսի տեսած երազները պատմեց Յովակիր, և որի մասին ասած էր թէ իւր ազատութիւնը և իշխանութիւնը վերքատին կը ստանայ, նորանից խընդրեց որ իւր պաշտօնը միւսանգամ ըստացած միտք բերէ Յովսէփի վիճակը։ Յովակիրի երազահանութիւնը կատարվեցաւ։ Յետոյ և Եղիսպոսի երազահանը մի խորհըրդաւոր երազ տեսաւ. երբ որ Եղիսպոսի երազահանը և խմաստունքը ըլ կարողացան թագաւորի երազը մերկնել, այն՝ միւսանգամ իւր պաշտօնին հասած՝ տախտապետը միտք բերեց Խարայէլացի պատանին՝ որ բանառումըն էր։ Փարաւոնը Հրամացեց յատաջ բերել Յովսէփիր, և աս աջողակութեամբ և թագաւորին հաճոյանալով մի այնպիսի մեկնութիւն տուեց երազին, որ շատ խորհըրդաւոր էր այն աշխարհի համար։ Յովսէփը ասաց. եօթն տարի շատ լիութիւն կը լինի բոլոր Եղիսպոսի մէջ, բայց սորանից յետոյ գալու է սով եօթն տարի. ուրեմըն պիտոյ էր լիութեան ժամանակումը կերակուր ժողովել և պահէլ սովի օրերի համար։ Փարաւոնը հիանալով Յովսէփի իմաստութեան վերայ՝ յանձնեց նորան այս մեծ գործի հոգաբարձութիւնը և գրլիսաւոր կարդեց նորան Եղիսպոսի վերայ՝ հրաման արձակելով՝ որ բոլոր ժողովուրդը հնազանդ լինի Յովսէփի բերանին, և Փարաւոնը միայն իւր աթոռավը վերաբոյն լինի քան թէ Յովսէփիր։ Յովսէփը բոլոր Եղիսպոսի մէջ՝ լիութեան տարիների արդիւնքը ժողովեց և համբարեց շատ ցորեան ինչպէս ծովի աւաղ։ Բայց երբ որ եկան սովի տարիները, բացեց ցորենի ըշտեմարանքը, և լիութիւն և առատութիւն տարածվեցաւ ժողովրդի մէջ։ Հեռաւոր կողմերից գալիս էին Եղիսպոս ցորեան գընելու. երեկցան և Յովսէփի եղաբքը, որովհետև Քանանումը ևս սով էր։ Յովսէփը իսկ կյան ձմռաչեց իւր եղաբքը, թէսիտ սորա ըլ գիտէին որ այն փառաւոր ըզգեստով զարդարված, երեկլի տեղակալը իւրեանց եղայրն էր որ ինքեանք մերկ և զուրկ փոսի մէջ թողած էին։ Յովսէփը երկար ժամանակ ոչինչ նըսան ըլ տուեց, վարվեցաւ նոցա հետ կամածամիտ կերազով, և արտաքուստ՝ խըստապէս, որ կարողանայ իմանալ թէ արդեօք ուղղել են նորա իւրեանց բարքը։ Բայց վերջապէս՝ երբ նորա կըրկին անգամ եկան կերակուր տանելու, Յովսէփը ըլ կարողացաւ իւր սըրտի ըզգացմունքը ուրանալ, յայտնեց նոցա իւր անձը և խօսեց՝ արտասուքը թափելով. «Ես եմ Յովսէփի եղայրն ձեր, զոր դոք վաճառեցէր յԵղիսպոս, բայց մի ինչ տըրտմիք, և մի խիստ թուեցի ձեզ, զի վաճառեցէր զիս այսըր, քանզի ի փըրկութիւն առաքեաց զիս Ապտուած առաջի ներ։ Արդ փութացեալ ելքը առ հայրըն իմ և

ասացէք ցընա. պյուղէս ասէ որդին քո Յովսէփ. արար զիս Աստ-
ուած Տէր առենայն երկրիս Եղիպտացոց. արդ՝ եկ էջ առիս և
մի՛ հեղգար և բնակեսցես յերկրիս Գեսեմա: Այսպէս հրաժար-
վեցաւ Յովսէփի խւր ամօթապարտ և զարմացած եղօրներից և
մեծամեծ պարզեներով արձակեց նորանց և ըզգուշացրեց՝ ասե-
լով. «Մի՛ զարմանացցէք ինչ ի ճանապարհիւ: Աւրախացաւ Փա-
րաւոնը՝ լըսելով իւր սիրելի գործակալի աղնիւ արարքը և ոչ թէ
միայն պարզեատրեց Յովսէփի եղօրներին, այլև հրաման տուեց
Յովսէփին որ սայլ և յարմարութիւն պատրաստէ իւր բնտանիւ-
քի դարձի և տեղափոխութեան համար: Ճերունի Յակովը շատ
ուրախանալով այս լուրի վերայ թէ իւր Յովսէփի որդին Աստու-
ծոյ բարանչելի առաջնորդութենովը պահպանված է, տեղափոխ-
վեցաւ Քանանից Եղիպտոս, և Յովսէփի որդիական սէրը քաղ-
ցրացրեց իւր ծնովի մընացած օրերը: Երբ Յակովը խոր ճերու-
թեան մէջ վախճանեցաւ, նորա մարմինը՝ ինչպէս հրամացած էր՝
տարան Քանան և թաղեցին Արքահամի գերեզմանաւարնումը: Եւ
Յովսէփը՝ որ մինչև իւր վերջը ոչ մի բանով վըրէմիւնդիր չե-
ղաւ իւր եղօրների անիրաւութեանը՝ կրտակ արեց որ նորա ոս-
կերը վեր առնուն իւրեանց հետ, երբ որ Աստուծ Երբայցոց ազ-
գին վերըստին կ'առաջնորդէ դէպ ի իւրեանց հայրենի աշխարհը:

1. Ճընսպներին պարտ չէ իւրեանց նախապատիւ սէրը դէպ ի այս կոմ-
միւս զաւակը՝ երկեցուցանել նոյնա:
2. Ժաէ և Յավսէփի վատարազդութիւնը նորա բաղրաւորութեան պատմաւ-
ելու, բայց այդ՝ նորա եզօրների արժանաւուրութիւնը չէր: Մէր գոր-
ծերի հետեանքը չեն միշտ մեր ձեռքումը:
3. Մի սիսալնը լինումէ միւս սիսալնէների աղբեւր: Հօր գերազանց շը-
նորհը դէպ ի մի որդին՝ յաւաջնորդումէ եղայրական ատելութիւն և
նախանձ. և ցանկութիւնը հեռայցընելու ատեցեալ եղայրը՝ ճանապարհ
է տալիս այս ցանկութեան կատարմանը, և սորանից ծընանումէ խա-
րէութիւն:
4. Մարդը մըսածումէ, բայց Աստուծ անօրինումէ:
5. Վատթար իշխանք — վատթար ծառայք:
6. Աստուծուն պիտոյ է աւելի հնազանդէլ քան թէ մարդուն. ոչ մի մարդ
կորող չէ բըռնադասնել միւսին որ հնազանդի նորան չար բանի մէջ:
7. Հաւատարիմ կաց պաշտօնիք մէջ:
8. Պահէր քո անմեղութիւնը. պարինշտ կաց խօսքիդ և գործիդ մէջ:
9. Վիրաւորեալ հըպարտութիւնը սիրումէ բամբասէլ:
10. Երկիւլոծ առաքինութիւնը կը բարձրանայ:

11. Բաղդաւորութեան մէջ մի՛ մոռայիր բարեկամը՛ որ անբաղդութեանը՝
մէջ օդնական եղաւ քեզ:
12. Խմառունների և փաճաւունների խորհուրդը լրսի՛ր:
13. Այն կապերը՝ որմնցով բնութիւնը կապել է քոյլ և եղբայր, ոչինչ
ժամանակի գորութիւն չէ կարող քակել: Յավակիք ճանաչեց իւր եղբարքը:
14. Բաղդաւորութեան, լիութեան և մանկութեան միջյուրի՛ մըտածի՛ր ա-
պագայի վերայ և հոգ տար նորա համար:
15. Բաղդաւորութեան մէջ մի՛ արհամարհիր քո աղքատ և ցած վիճակի
աղդականըը:
16. Վեհանձըն կաց գեղ ի վիրաւորապը քեզ:
17. Խւրաբանչիւր որդի, խւրաբանչիւր գուստը որ հեռացած են հայրենա-
կան աշխարհից, թա՛ղ՝ ինչպէս կարող են՝ աշխատեն միւսանդամ՝ տեսա-
նել իւրեանց ծընողը, թէ և այս կըրկին տեսութիւնը լինէր այն կեան-
քամը միայն:
18. Որդեանինը՝ ձեր սիրավը պայծառացրէք ձեր ծընողների երեկոյա-
ցեաւ օրերը:
19. Պատուեցէք հանկուցեալների վերջն կամիքը:

Այսպէս Յակովը սերունդ Խարայէլացիրը բնակումէին Ե-
ղիպտոսի մէջ. բայց այս երկրի թագաւորքը շուտով մոռացան
Յովսէփի ցցց տուած բարեգործութիւնքը, և այս խաչնարած ժո-
ղովրդի մեծանալը և բազմանալը օր բառ օրէ ծանրանումէր նոցա
ացքին: 400 տարուց յետոյ Խարայէլացիր աճել էին մինչև 600000
զինուորական տրղամարդ: Սոցա թիւը նուազեցուցանելու հա-
մար, այլև նոցա վրտանգաւորութիւնը Եղիպտոսի ապահովութեան
մասին՝ ինչքան կարելի էր խափանելու պատճառով, Փարաւոնի
գործավարը ըսկըսեցին օրէ օր աւելի ծանրաբեռնել Խարայէլա-
ցոց ազգեր՝ տան ջելով նոցա կեանքը խիստ բաներով, զոր օրինակ՝
կաւ կախել տալով, աղխասարկութենով, երկրագործութենով, քա-
զաքների շինութենով: Բայց երբ որ տեսան թէ և այս տառա-
պահը արգելք չէ նոցա բազմանալուն, հրամայեցին Եբրայեցոց
մանկաբարձներին որ արու զաւակները ծնանելուց յետոյ մերու-
ցանեն խոկոյն. բայց որովհետեւ սոքա խըղձալով շատ անգամ՝
չէին կատարում այն պատուէրը, վասն այս պատճառի հրաման
տուեց թագաւորը որ Խարայէլացոց բոլոր արու մանուկները՝ ջու-
րը ձըգեն: Այս ճանապարհով կարծումէր Փարաւոնը հնազան-
դութեան մէջ պահել իւր Խարայէլացի հպատակը և խափանել
սոցա բազմանալը: Բայց իսկ և իսկ այս տան ջանքները օգտակար
եղան Խարայէլացոց ժողովը թիւնին: Յակովը և նորա որդիքը բերել
էին իւրեանց հետ ճըշմարիտ հաւատը դէպ ի Ապառուած. և եթէ

այս չարչարանքը չէր եկել նոցա ազգի վերայ, ոչ թէ միոյն երբէք չէին մըտածելու որ թողուն Եգիպտոս, այլ մանաւանդ՝ ամենայն օր ականատես լինելով Հեթանոսների կռապաշտութեանը և սովորելով սիրել նորան, կասկածելի էր որ ամեննեին շիջաներ նոցա մէջ ձըշմարիտ կրօնագիտութիւնը։ Արդարեւ օգտակար բաներ, այսինքն՝ ճարտարութեան և արուեստասիրութեան մասին՝ շատ էին ուսել Խարսչլացիք Եգիպտոսումը, ըստ փոքր էր մընացել որ նորա կւրեանց՝ դէպ ի ձըշմարիտ Աստուած հաւատը վոխէին այն տեղեկութենների հետ։

ԵՐԿՐՈՒԴԻ ՀԱՍՈՒՅԾ

Մոլսէսից մինչև Սաւուղ.

1.

Մոլսէս. [ԵւՀՀ. 42. 1.4—]

Վիջնորդութենով Խարսչլացոց ազգին՝ որ Եգիպտոսումը մի ահագին բազմութիւն դառնալով՝ վրտանգաւոր էր բուն քաղաքացիների համար, կամեցաւ Աստուած սահմաննել ձըշմարիտ կրօնը և միաստուածեան հաւատը։ Այս սրատձառաւ յաղթահարեալ ժողովը մի մէջ վերաբերեց մի մեծ տղամարդ և սպահանեց նորա կեանքը այն բոլոր անողորմ սահմանադրութենների մէջ որ Եգիպտոսի թագաւորը արած էր՝ Խարսչէի արու մանուկները բնաջնջն առնելու համար։ Այս տղամարդը Մոլսէսն էր, որի նոյն խոկ անունը յայտնումէ իւր երեխայութեան գըլխի անցըը, ըստ որում նշանակումէ չառչառ։ Մի կին Ղեւի ցեղից՝ այս հայածանդի ժամանակումը մի որդի ծընաւ։ նորա մայրական սէրը հընարք գըտաւ մինչև երեք ամիս իւր մանուկը թագուցանել տան մէջ։ բայց իմանալով՝ որ այս բանը աւելի երկար անկարելի էր, շնեց մի պըրտուեայ տապանակ (զամիշի սընդուկ), ծեփեց նորան կըպրածիւթով, փակեց նորա մէջ իւր մանուկը և դըրեց թագաւորական ըզօսարանումը։ Եկղոս գետի մօտ, ինչ տեղ Փարաւոնի ընտանիքը լուացվելու սովորութիւն ունէին։ Փարաւոնի դուստրը որ եկել էր լուացվելու, գըտաւ այս տեղ Մոլսէս մա-

նուկը, գութ ընկառ նորա վերաց, վեր առեց և տարառ իւր հետ՝
որ սըմուցանէ սպալատումը։ Այս յոյաք ունեցած էր և սիրող մայ-
րը, որ խորտիսութեամբ սինակն էր կարողացել տընօրինել որ
Փարաւոնի դուստրը այն մանուկի համար դայեալ ընատքէ նոյն
իսկ մայրը։ Այսպէս սպահամնվեցաւ Մովսէս, և թագաւորական
սրաբատումը ապրելով մինչեւ ԿԾ տարեկան լինելը՝ ալճիւ ձանապարհ
գրուաւ իւր բնական ընդունակութիւնը կատարելագործելու և
գիտութիւնը ըստանալու որ նորա համար օտար մընացած կը լի-
նէին։ Մովսէսին պատահէց միանգամ ականատես լինել որ մի
Եգիպտացի զարկումէր մի Երբայցի մարդ։ բորբոքվեցաւ սիրո-
ւը, ըսպանեց Եգիպտացին և թաղեց նորան աւազի մշջ. բայց
երբ որ մի այլ սպատահմանի իմացաւ որ իւր արած գործը յայտ-
նըլել է, փախաւ գընաց Մադիամի երկիրը Յոթոր քուրմի մօտ։
Այս տեղ Մովսէսը հովեւ գըրվեցաւ նորա ոչխարների վերաց և
կին առաւ նորա Աեսպիովիա դուստրը։ Եգիպտատումը, թէպէտ
և առաջին թագաւորը մեռած էր, բայց այնու ամենայնիւ Մով-
սէսի հայրենակիցը մի և նոյն դառն և արտասուելի վիճակում
էին, ինչպէս յառաջ։ Մադիամի երկումը մի առանձին կերպով
հրաւեր եկաւ Մովսէսին այն մեծ գործի համար որ նա Աստու-
ծոյ կամրջով պիտոյ է կատարեր։ Քորեր սարի տակը Մովսէսը
միանգամ արածումէր իւր աների ոչխարները։ յանկարծ նորա
աչքի առաջնը վառվեցաւ մի մորենի և մի աստուածացին ձայն
հրամայեց նորան որ Խարայէլացոց տառապեալ ազգը Եգիպտասի
ծառայութենից հանէ, և տանի միւսանգամ իւր հայրենիքը։ Մով-
սէսը՝ սցդպիսի գործի համար տըկար և անբաւական համարելով
իւր անձը՝ Աստուած խոստացաւ նորան իւր ամենակարող օգնու-
թիւնը, տուեց նորան իշխանութիւն՝ որ քանի մի նըշաններով
և հըրաշքներով Փարաւոնի և Խարայէլացոց առաջնը ներկայա-
նոց ինչպէս մի աստուածընտիր մարդ և առարեալ սցդ գործի
համար, սպատուիրեց Մովսէսին որ իւր եղբայր Ահարոնը գործա-
կից առնու իւր հետ, որ սա թագաւորի և ժողովը գործի առաջնը
խօսի փոխանակ նորա։ Մովսէսը արեց ինչ որ նորան հրամայել
էր Աստուած։ Ահարոնի հետ միասին հանդիպեց Փարաւոնին և
իւր եղբօր քաջասիրո ճարտարախօսութիւնը քամակ շնուրով իւր
համար՝ ազաքեց թագաւորը որ՝ ինչպէս Աստուծոյ կամքն է՝ ար-
ձակէ Երբայցոց ժողովուրդը գրնալ տօն կատարել անապատու-
մը։ Բայց Մովսէսը ոչ թէ միայն ոչինչ ըլ կարողացաւ յառա-
ջացընել աստուածանդէտ Փարաւոնի մօտ, այլև Եգիպտացոց գոր-

ծավարքը ըսկըսեցին ևս առաւել տառապեցուցանել Խորայէլացոց ազգը։

Մովսէսը կըրկին անդամ՝ յանդիմանակաց եղաւ Փարաւոնին, բայց սա Մովսէսի հըրաշքները ևս տեսանելով՝ կամակոր մընաց և խրստասիրտ պատասխան տուեց. «Ո՛չ արձակեմ զԽորայէլ»։ Այնուհետև՝ ինչպէս Մովսէսը յառաջուց ասած էր՝ եկան հասան Եգիպտացոց գըլիսին տեսակ տեսակ պատուհաններ. ջուրը նեխվեցաւ, անհամար գորտեր երևեցան, զազրալի ճըճիններ անհանդիստ արեցին մարդ և անսառունի մէջ. կարկուտ և մարախ ապականնեցին դաշտերը, երեք օր խաւար պատեց Եգիպտոսի վերայ, անդրանիկ ծընածները մահացան, թէ մարդ, թէ գաղան։ Ահա այսպիսի պատիժներով կամեցաւ Աստուած Փարաւոնի սիրտը շարժել՝ որ արձակէ Խորայէլի ժողովուրդը։ Թռէակէտ շատ անդամ՝ թագաւորը կամեցած էր ազատութիւն շընորհէլ ժողովը ին, բայց վըտանդը անցանելուց յետոյ՝ միւսանդամ խրստաւը տվումէր։ Այսպէս խակ պատահէց և վերջին անդամը, երբ ոչ թէ միայն թոյլ էր տուել, այլև հրամայել էր Խորայէլացոցը որ անյապալ դուրս դընան Եգիպտոսից։ Խորայէլացիք իւրեանց հանդիսաւոր հրաժարական սեղանը (¹) ճաշակած դուրս էին եկել Եգիպտոսիցը, և ահա ապաշաւեց թագաւորը, և ցաւելով որ այնքան բազմաթիւ աշխատասէր ժողովուրդ ձեռքից թողել էր, ըշտապեց զօրքով նոյց հետևից մինչև Արաբիայի ծովածոցը։ Մօտ հասաւ Փարաւոնը, բայց չէր կարող Խորայէլացոց բանակը տեսանել, որովհետեւ մի թանձըր մառախուղ պատել էր միջոցը Խորայէլացոց և Եգիպտացոց մէջ։ Ի վերայ այսըր ամենայնի ահ և դող ընկաւ Խորայէլ սիրտը. Բայց Մովսէսը Աստուծոյ ըսկանըլի սնօրէնութեամբ մի սաստիկ հարաւային հողմ բարձրանալով գիշերը և պատուելով կարմիր ծովի ջըրերը, ցամաք ճանապարհով ծովի մէջից անց կացըրեց ժողովուրդը։ Առաւօտը լուսացած՝ կամեցաւ և Փարաւոնը նոյն ճանապարհով անցանել, բայց Մովսէսը աստուա-

(1) Այս սեղանի պատրաստութիւնը էր՝ արաւ, տարեար և անարատ ոչխար, ոչ թէ եփած. այլ կրակով խորսված, գլուխը, տակը և փորստին միասին, այլև բաղարչ հայ։ Այս սեղանը՝ որ Զարդի Տետրան ասվեցաւ Խորայէլացոց մէջ և ամենայն տարի տօնվումէր որպէս յիշատակ ելաննելուն Եղիպտոսից, վայելեցին Խորայէլացիք՝ գոտիները մէջքին, կօշիները ոտերին և գաւազանը ձեռքերին։

ծային հրամանով ձեռքը ձրգեց ծովել վերայ, և դարձաւ ջուրը
իւր տեղը և սատակեց Փարաւոնի բոլոր զօրութիւնը:

Այս անցըի ներգործութիւնը փոքր չեղաւ. Խարայէլացիք
հաւատ ըստացան դէպ ի Աստուած և դէպ ի Մովսէսը, և ըսկը-
սեցին օրհնել և փառարանել Աստուած: Բայց շուտով թու-
լացաւ նոցա հաւատը՝ երբ ապրուատի և ըմպելի ջըրի կարօտու-
թիւն տեսան. ըսկըսէցին տըրտըն ջել. երանի թէ մընացած լի-
նելինը Եգիպտոսումը: Ամենայն միջոցում կըրկնումէին այս գան-
դատը, և ամենափոքր առիթ բառանալով՝ բարեասումէին իւրեանց
առաջնորդը: Ինչքան ևս Մովսէսը հրաշքներով և բարեգործու-
թիւններով նոցա կարօտութիւնքը լցուցանումէ՛ր, կամ թէ սպատիժ-
ներով սաստումէ՛ր նոցա. ինչքան ևս բացայսյու տեսանումէին նո-
քա որ Աստուած անապատումը ևս ինսամատար էր նոցա պիտոյը-
ներին, ի վերայ այդ ըր ամենայնի նոր ի նորոյ ըսկըսանումէին նորա
փոքրահոգի մըսածել և անհնազանդ լինել, մինչեւ կրապաշտու-
թեան մէջ ևս ընկան, ինչպէս իւրեանց դրացի հեթանոս աղբե-
րը, որոնց սնապաշտութիւնը առելի հաւանելի էր նոցա քան թէ
Խարայէլի Աստուծոյ ծանր օրէնքը: Այս օրէնքը բառացան Խարայ-
էլացիք խկապէս Աստուծուց. որոս և կայծակին յայտնեցին Ա-
ստուծոյ ներկայութիւնը. մի մութն ամսի մէջնց՝ որ ծածկեց Սի-
նայի սարը, որ Մովսէսը և Ահարոնը միայն իշխանութիւն ունէին
վեր ելանելու, ներքեռումը հաւաքված ժողովուրդը բառացաւ այն
սուբը Տան պատգամքը որ պիտոյ է. լինէին նոցա կրօնի հիմնա-
կան ըսկըլըունքը: Երբ Մովսէսը սարից ցած էր եկել, զոհեց
Աստուծուն: Միւսանգամ վեր ելաւ սարը. բայց որովհետեւ քա-
ռասուն օր յետ մընաց այն տեղ, ժողովուրդը անհամբերացաւ և
պահանջնեց Ահարոնից՝ թէ «Արի և արա՛ մեղ աստուածըս որ
առաջնորդեսցն մեղ»: Ահարոնը շխնեց նոցա համար մի ոսկե-
ղին որթ՝ որին ըսկըսէցին երկըրպագութիւն տալ և ասել՝ «Այս
են աստուածը. քո՛ Խարայէլ, որ հանին ըզեեզ յերկըէն Եգիպ-
տացւոց»: Մովսէս սարիցը ցած գալով՝ զարհուրեցաւ իւր ժողո-
վորդի մոլորութեան վերայ: Աստուծուց բառացեալ երկու քա-
րեղին տախտակը զարկեց գետնին այնպէս՝ որ խորտակվեցան,
ոչընչացրեց այն կուռքը և հրամացեց ըսպանել երեք հազար
մարդ: Ազա պատրաստեց երկու այլ տախտակ, միւսանգամ գը-
նաց Սինայի սարը և գըրեց նոցա վերայ Աստուծոյ ուխտը: Այս
տախտակները սուրբ պահէվցան յետոյ:

Մովսէսը քառասուն տարի ման ածեց Խարայէլի ժողովուրդը
անապատի մէջ. և այս միջոցումը իւր տուած աստուածպաշտա-

կան և քաղաքական օրէնքներովը հաւատ հաստատեց՝ թէ Աստուած նոցա ազգի աստուածն է և նոցա դալոց երկրի թագաւորն է։ Ազբատամբութիւնը, այլև դրացի ազգերի կռապաշոռութիւնը նոր ի նորոց ըսկիսաննելով Խարայէլացոց մէջ, հարկաւոր եղաւ նոցա երկար մընալը ամուլ անապատի մէջ։ Այս Մովսէսը ևս այնքան բազգաւոր ըս գրտանվեցաւ որ իւր ազգը տանի աւետեալ երկրը։ Մի բարձըր սարի վերայ կանգնած՝ կարողացաւ միայն աչք ձըգել Քանանու պըստպաէտ դաշտերի վերայ, հաւաքեց իւր չորս կողմը այն ժողովուրդը՝ որ շատ անդամ՝ ազերախտ էր գըստանվել դէպ ի նա, աղօթք արեց նորա համար, սիրտ տուեց որ հետևեն այն բաներին որ նոցա ինչպէս աստուածային կամք յայտնել էր ինքը, ներկայացըրեց նոցա առաջնել Յեսու՝ Կաւեց որդին՝ որ այնուհետեւ պիտոյ է լինէր նոցա առաջնորդ, օրհնեց նորանց և մեռաւ իւր հասակի 120 տարումը։

1. Ինչ դիսաւորաթիւն և ունի Ազտուած մարդուո համար, կարող է յառաջ տանել իւր խորհուրդը, թէ լինէն շատ և շատ ներհակ աղդ դցութիւնը։
2. Ճնառական ունքը Շնարակէտ է՝ դաւակի կեաները պահպանելու մատնի։
3. Վեցութիւնը ուրբայական պալատի մէջ շաւերեց գեռահասակ Մովսէսի սիրտը. անարան կաց դու և բարձրաւորութեան և բարեկինդանութեան մէջ. տե՛ս չարը, բայց մի՛ չետեւիր նորան։
4. Ուրիշների բըռնաւոր գործերը տեսանելով՝ կարող էր մարդուո սիրտը բորբոքվել աղնիւ բարիսութենով. բայց համան չը կար վրբէժիւնիւր լինել չար գործին, որ նիքը Ազտուած կը դատէ։
5. Երբ որ մարդուո նեղութիւնը շատ մեծացել է, այն ժամանակը շատ մօտ է և Ազտուած։
6. Մի՛ կարծիր որ ամենայն գործի համար աջողակ ևս գոււ. համեստութիւնը հաճոյ է Ազտուածոյ և մարդու։
7. Ոչ ումի խափան մի՛ լինիր որ նա միանիամ՝ ուրախութիւնն վայելէ. զինորհներ այդ բանը ամենայն մարդու որ քո պաշտօնի մէջ է։ Բայց ևս առաւել մի՛ արդելիր ոչ ովի պաշտօնը իւր հաւատի մատնի։
8. Մարդը նեղութեան մէջ լինելով՝ շատ անդամ՝ բարի խորհուրդներ է յըզանում, բայց երբ որ անցաւ նեղութիւնը, մառանումէ նորան։
9. Այն օրերը՝ որսնց մէջ պատահէւ է քեզ յիշաակի արժանի մի բան, թնդ առաւելազիս պատաելի մընան քո աչքումը։
10. Ով որ կամենումէ վեստել ուրիշներին, շատ անդամ՝ առաւելազիս իմաստումէ իւր անձնին։
11. Մարդը անցեալը աւելի լաւ է համարում՝ քան թէ ներկան. բարձրա-

սանքուելը որ Խարայէլացիք առևտումէին Մավլանի երեսին՝ ըշտագ և ան-
ժամանակ էին :

12. **Ազատաւծ** ամեն օր պարզեւում է ինչ որ պիաց է մեղ։ Այն հանապարհ-
ներաւմը՝ որմեցով նա առաջնորդում է մեղ, միշտ մեր հետ է նա իւր
կարողութենովը և սիրովը :
13. **Ազատաւծ** պատուհանը պիաց է որ ըզգուշացնէ մեղ։
14. Կարճմշտութիւն, յանդը նեռութիւն, երկմշտութիւն, անմշտածութիւն,
անհաղղնութիւն. ոռքա էին Խարայէլացոց պարասութիւնքը անապա-
տի մեջ։
15. Ումին յանձնած է ուրիշների մարմնաւոր և չուկեսր երջանկութեան
հողարարձութիւնը, նա չէ կարող միշտ քաղցրակատ լինել. պիաց է
նոյնոքն, որ բարկանաց և պատճէր։
16. **Մեռանող** ծնալների, տղգականների և բարեկամների խընդիրը թող
սուրբ մընայ մեր համար։
17. Ով որ իւր կեանքը լսու է զործ ածել և ունի աեղեք նայելու մի ա-
ռասաղես բարի ուրմանածի վերաց, նա կը մեռանի խաղաղ որբառով։
18. **Աքժանաւորութիւն**, բանագիտութիւն և փորձառութիւն կը որոնին
և կը յայտնելովն։

Զ.

Յէսուս Կառարայ. [Դ. Յէս. Կառ. Հէլ. 1.2.]

Վայս տղամարդը առելիք քաջ զօրական էր քան թէ, Մովսէոր և
ըստ ամենայնի յաջողակ՝ նորա ըսկլըսածը գրլուխ տանելու համար։
Եա յառաջուց լըրտեմներ արձակելով՝ Քաղերի հետ ի մլասին ա-
ռաջնորդեց Խարայէլացոց ազգին դէպ ի Քանանու երկիրը։ Բայց
ուն առ ուն կարողացան նորա խոստացեալ երկիրը առնուլ Քանա-
նացոց ձեռքից։ Յէրիքով և միւս շատ քաղաքների տիրապետե-
ցին նորա, և 51 փոքրիկ թագաւորների և իշխանների յաղթեց
Յեսուն։ Սա սահմանեց թըլիատութիւնը ընդհանրապէս, տօնեց առա-
ջին զատիկը և տիրապետած երկիրը բաժանեց Խարայէլացոց տաս-
երկու ցեղեց վերաց, այնովէս որ Յուդայի ցեղը ըստացաւ ամենից
մեծ բաժինը։

Յեսուն դեռ ևս չը մեռած ներքեւ դըրեց իւր իշխանու-
թիւնը, բայց Խարայէլացոց սըրտին կապեց սյս խօսքերը. «Ազա-
տած տուեց ձեզ սյս երկիրը, որի վերաց չէք աշխատած դուք.
տուն և տեղ ըստացաք. քաղաքներում որ դուք շինած չէք. դուք

վայելումէք այն այգիքը և թըզենիքը որ ինքներըդ տընկած չէք·
այժմը վախեցէք Տէրոջցը, պաշտեցէք նորան ուղղութենով
և արդարութենով. բայց ես և իմ տունըս պաշտումենք Տէրը,
որովհետեւ նա սուրբ է ։ Ժողովուրդը խոստացաւ հնազանդ լի-
նել Աստուծուն, և ինչքան կենդանի էր Յեսուն՝ հաւատարիմ
մընաց իւր խոստմանը :

1. Աստուած՝ իմաստութենամը. է ընտրում մարդ և ժամանակ իւր նպա-
տակներին հասանելու համար :
2. Ինչ որ Աստուած Խորայէլացաց ազգին խոստացել էր՝ կատարվեցաւ
ըստուգաղեա՛ թէւ երկար ժամանակց յետոյ: Աստուծոյ խօսքը ճըշ-
մարիս է, և նորս խոստումը հաւասարիմ է:

3.

Տառն և լուս Դաստիարակչւ. [Դ. Դ. Պ. հ. 1. 5.]

Յեսուի մահուց յետոյ Քանանու աշխարհը առանց մի ծայ-
րագոյն դըլիսաւորի մընաց: Այս բանըս տեսանելով յարձակվեա-
ցան Հըրէից վէրայ սահմանակից ազգէրը և մանաւանդ ծովե-
զերեայ Փըզըշտացիքը, որ և յաղթող գըտանվեցան: Հըրէայը
հակամիտեալ լինելով դէպ ի կուապաշտութիւն, շատ անգամ
կըրին ծառայացան իւրեանց հեթանոս դրացիներին: Այսպիսի
տառապանըների հասանելով՝ աղաղակումէին դէպ ի Աստուած.
սա բազումողորմ էր և լըսումէր նոցա աղազանքը. շատ անգամ
վէր էր կացուցանում լուսաւորեալ տղամարդեր որ պիտոյ է
խաղաղութիւն տային ժողովը ին՝ արտաքրուստ և ներքուստ, և
պահպանէին նորա հաւատը դէպ ի կենդանի Աստուածը: Պա-
տերալը մէջ զօրավարք էին սոքա. խաղաղութեան ժամանակը՝
առաջնորդք: Սոքա ասվումէին Դատաւորք. և թէպէտ ձիշդ յայտնի
չէ՝ թէ ինչքան միջոց կառավարել են սոքա, բոյց Սուրբ գըրքի
մէջ յիշատակվումն սցաբան. Դառնէնէ՛ Քաղէրի փոքր եղայրը
(28 տարի Յեսուից յետոյ), որ փըրիկեց Խորայէլ ազգը Քուսար-
սաթեմ Ասորոց թագաւորի ձեռից. Ասուն որ նենգութեամբ
ըսպանեց Մովարացոց թագաւոր Եգղոմին. Սահմանը՝ Անաթի որ-
դին որ գութանի մանուկ սատակեց վեց հազար մարդ այլազգիւ-
ներից. Դէռնէն՝ մարդարէ կին որի ժամանակովը Խորայէլացիք
Յայէլ կնամարդու քաջութենովը յաղթեցին Քանանացոց թագա-
ւոր Յարինային, Գէռնէն՝ յաղթողը Զեբէի և Ասամանայ թագա-
ւորներին Մադիամու, Աստիւլէ՛ անգութ եղայրապան. Թառնը որ
23 տարի առաջնորդ էր Խորայէլին. Յայէլ՝ 22 տարի դատաւոր Խա-

բայէլացոց. Յեկենյէ, Եսէն, Խըն, Աբոն, Սաման, Հենէ և Սահման (5075 տարի՝ աշխարհի ստեղծագործենից յետոյ):

Քանի միների գործքը միայն արժանի են յատուկ յիշատակութեան. ըստ որում և փոքր մի լսերը սոցա մէջ՝ բիրտ զօրականը էին քան թէ առաքինութեան օրինակ, թէպէտ՝ նայելով այն ժամանակի բարբ ու վարքին և կրօնի արգիտութեանը՝ չէ կարելի նորանց շատ խըստիւ դատել:

4.

Աբենէն. [Դ. Դաստիարակութեան 9.]

Թէ ինչպէս Աստուած պատող է չարին, ուսուցանումէ Արիմելէրի պատմութիւնը: Այս Արիմելէրը կուրացեալ պատուասիրութենով և աղահութենով ըսպաննել էր իւր եօթանատեն եղարբը. մինը միայն վերկվեցաւ, այսինքըն՝ Յովաթամ որ ամենից փոքրահասակն էր նոցա մէջ: Երեք տարի տիրեց Արիմելէրը Խարայէլի վերայ. սա պատերազմ ունէր Ախիլիացոց հետ, առեց և կրծանեց Ախիլիոր. ըսց մօտենալով մի ամուր աշտարակի՝ որ տեղ տղամարդ ու կին և քաղաքի գլխաւորները պահսկանութիւն էին գլուխէլ՝ մի կին մի երկանաբար վայր ձըգեց Արիմելէրի գլւխին, այնպէս՝ որ առ ի մահ վերաւորված գետին գլրորվեցաւ. ըսց ըլ կամենալով մի կընոջ ձեռքով մեռանել, հրամացեց իւր կապարձակիր տըզային՝ որ սըրով ըսպանէ նորան. սա կատարեց իւր տիրոջ հրամանը: Ահա այսպէս Աստուած վըրէժիւնդիր եղաւ Արիմելէրին, այն անդընթեան համար՝ որանով կոտորել էր իւր եղարբը:

1. Մի՛ գլուրվեր գէպ ի պատուասիրութիւն և աղահութիւն. նոքա կը շնեն քեզ մեղաւոր և յանցաւոր:

2. Ո՛չ մի չար գործ չի մընաց առանց փոխարէնի:

5.

Յեկենյէ. [Դ. Դաստիարակութեան 11.]

Այս քաջասիրտ տղամարդը զօրավար ընտըրվեցաւ՝ երբ որ Խարայէլացիք պատերազմ ունէին Ամոնացոց հետ. և ուխտ դըրեց՝ որ եթէ յաղթութենով յետ դառնաց իւր հայրենիքը, զոհ կը բերէ Աստուածուն ինչ որ իւր տան դրոնիցը դուրս կը գայ նորա հանդէպ: Յեփիթայէ յաղթահարեց թըշնամին և վերադարձաւ. ուրախութեամբ և ցընծութեամբ յառաջ գլնաց Յեփիթայէ

մի հաստիկ դուստրը որ շընորհաւորէ իւր սիրելի հօր ողջութեանով գարձը սյն վստանգաւոր պատերազմից, և ողջունէ նորան իրքւ յաղթող: Յեփթայէ տեսաւ իւր գուստրը, միտք բերեց իւր դըրած ուխտը, և սըրտի ցաւից պատառեց իւր հանդերձը. բայց ինչ օգուտ այս տեղ գանգատելուց և լալուց: Աղնուասիրտ աղջեկը ինքը իրախայս տուեց յուսաբեկեալ հօրը որ կատարէ իւր ուխտը, և համբերութեամբ թոյլ տուեց որ զոհեն իւրեան: Սորանով սովորութիւն ընկաւ խրայէլի աղջեկերի մէջ՝ ամեն տարի չորս օր իւրեանց քուեր գըլիի անցրը արտասուել:

1. Հաւատան որ ոչինչ բանով չես կարող հալիքդել Աղոտած որ նու այս կամ թէ միւր իւրնդիբըդ կատարէ: «Ետ առատապէս պարզեւում; քո իւրնդիբւաց և իմանալուց յաւած»;
2. Եթէ մի մարդ կարող էր քեզանալ հանդիսա դասնել, պարապըճար լինել, լաւ էր որ ըլ վախենայիր և մահուց ևս, քան թէ թոյլ տոյիր որ նու իւր հոգու փըրկաւթիւնը կորուանմէ:
3. Ինչ որ խստացել ևս, կատարիր ինչքան ևս գլխուար լիներ. բայց մի գուցէ թէ և քեզ այնպէս պատահէ՝ ինցու Յեփթային, մասձեր օրինաւոր ինչ որ խստանումես, և լպգոյշ կացիր անխոչեմ ախտա դրութենից:
4. Յեփթայէ ըստանեց իւր գուստրը. և թէ ունեցած լիներ աւելի կատարեալ գիտութիւն կրօնի մասին, պէտք է որ իմանար թէ մարդարահութիւնը արդելած է Աղոտածուց:

6.

Առ ճշուն. [Գ. Դաստիարակ. հա. 13.]

Ամիսանը զարմանալի յատկութեններով մի տղամարդ էր, մահաւանդ թէ գերազանց՝ մարմանաւոր ուժով և պլնդութենով որ սյն ժամանակիներումը շատ յարգելի էին: Բայց սյս գատաւորը սրակասաւոր էր նոյնպէս շատ բաներով, պատճառ որ մարմանաւոր ախտասիրութիւնը աւերել էր նորա սիրոր: Առ միշտ պատերազմ ունէր Փըլըշտացոց հետ, որ նորան անարգած էին, որոնց և աշխատումը ամենայն կերպով վըրեմիսընդիր լինել. և սյս մասին շատ ձեռընտու եղաւ նորան իւր մարմնի ոյժը: Փըլըշտացիր ըմբրունեցին և կապեցին նորան չուաններով. բայց նա սրատառեց կապերը, վեր կալաւ մի էշի ծընօտ և նորանով ջարդեց իւր թընամիներից մի մեծ բազմութիւն: Ո՛չ ով կարողանում չէր իմանալ, թէ որ կողմիցն է նորա տկարութիւնը: Վերջապէս նորա թընամիներին յաջողեցաւ՝ Դալիլա անուն մի պառնիկ կը-

նոջ ձեռքով ափ ձբգել նորան, ըստ որում Դավիթ կինը Ամբարտիանի գրիսի մազերը ի բաց քերելով թուլացրած էր նորա ջրելու ի զօրութիւնը, և սցագէս Ապտուծոյ հոգին վերացել էր նորանից, ողատճառ որ նա ուխտաւոր լինելով՝ քակել էր իւր ուխտը: Փըղը շըշտացիր հանեցին Ամբիանի աչքերը, կապէցին երկաթի կոտորով և փակեցին բանտի մէջ որ ցորեսն աղայ: Բայց Ամբարտիանի վըրէժխընդրութիւնը դադարած չէր: Պատահէց միանդամ որ Փըղը շըշտացիր իւրեանց չաստուածին տօն կատարելով՝ բանտից դուրս քերեցին Ամբիանը որ նորա հետ խաղան և զրւարձանան: Ամբիանը կանգնացրած երկու սիւների մէջ տեղում՝ որոնց վերայ հաստատած էր տունը, ձեռք ձբգեց սիւներին, թափ տուեց ուժով, և տունը որի վերայ կանգնած էին մինչեւ 3000 մարդ՝ կրծանիվեցաւ խօսին: Ամբիանը և նորա հետ միասին անհամար մարդիկ ըսպանվեցան այն տեղ:

1. Մարմնաւոր գեղիցկութիւնը և ոժը չը լինելով կըցրող առւոքենութիւնն՝ չեն կարող պաստարժանութիւնն տալ:
2. Ապատիբութիւնը անընդունակ է չինում մարդու գեղ և ամենայն բարի հակամիառութիւն ուլրափ, ուտումէ և քանդումէ: մարմին և չտէի:
3. Աշխատիք քո պակասաւոր կողմը ճանաչել, որ քո բարձր և խալապաւթիւն թըշնամին քո պակասաւորութիւնը դործի չը շնէ քեզ լիսանելու:
4. Վըրէժխընդրութիւնը անօդնուած է:
5. Ճապը մի՛ առնիր ոչ մի անբարդ մարդու վերայ թէւեւ իւր մեղքով անբարդութեւ էր:
6. Եթէ կամենումն լաւութիւն յառաջացընել, մի՛ լինիք ծառաց քո որը տի ձբգառութեններին և ցանկութեններին:

7.

Հետու ժահանաց: [Ա. Թառհ. հլ. 1.]

Իւր պաշտօնի մէջ թոյլ և անփոյթ գըտանվելը թէ ինչպէս պատժապարտ բան է, դորան ուսուցանումէ այս դատաւորի օրինակը, որ բըսան տարի կառավարիչ էր Խարսիշլացոց աղգին: Թէ ինչ պատճառաւ վերեւում ասածը կարելի է նորա վերայ գործ գընել, բացայայտ է այն թոյլ հոգացողութենիցը որ նա ունեցել է իւր Ոփնի և Փենէէս որդիների զաստիարակութեան համար, որ անպիտան տըզայք էին, որ խափանութէին ժողովը զի՞ զոհը, անըզգամութենով յափըշտակութէին պղընձի սանից սյն միուը որ սահմանած էր հասարակաց սեղանի համար, և ուխտաւոր կանանց հետ անառակութիւն էին գործում: Կնքը Ապտուած մար-

գարելի բերանով ըղուշացըրեց Հեղի քահանան և յայտնեց նորան իւր աստուածային խորհուրդը՝ թէ պատժելոց է հայրը, որովհետեւ չէր իրատում իւր վատարարոյ որդիքը: Բայց Հեղին անփոյթ լինելով Աստուծոյ բարկութիւնը հաշտեցուցանել՝ ասումէր. «Տէր՝ որ ինչ բարի է առաջի իւր, ինքըն արասցէ՞»: Այս միջոցումը պատերազմ բացվեցաւ Փրզըտացոց Հետ. երբ որ Խարայէլի տղամարդը տկարացաւ այլազգիների առաջեւը, Խարայէլացոց ծերքը փըրկաւէտ համարեցին դուրս տանել Ուխտի տապանակը (^(*) որի հետ գնացին և Հեղի քահանայի որդիքը: Տաղնապեալսըրտով ըսպասումէր Հեղին որ ըստանսց իւր ազգի յաղթող լինելու համբաւը. բայց Խարայէլան բանակիցը շրւտով լուր եկաւ՝ թէ Հեղի քահանայի որդիքը ըսպանվեցան, պատերազմը անյաջող եղաւ և ուխտի տապանակը գերի գընաց այլազգիների ձեռքը: Այս բաներից զարհուրելով իննըսուն և ութամեայ Հեղին՝ վայր ընկաւ աթոռիցը և աւանդեց հոգին:

1. Ո՛վ ծընտղեր՝ ըգբայշ կացէք չափեց դուրս ներողամիտ լինելուց դէպի է ձեր որդիքը:

2. Վատարարոյ զաւակները ցաւ են պատրաստում իւրեանց ծընտղերի ուրամին, և շատ անդամ լինեւմն առիթ նոցա մահուն:

8.

Առաջնական. [Ա. Յանձ. 1—12.]

Խարայէլացոց վերջին դատաւորը եղաւ Սամուէլ որ մի արժանապատիւ մարդ էր: «Ես՝ ըսկըսած մանկութենից ըսպասաւոր էր ուխտի տապանակի մօտ, նորա երկիւղած ծընողքը Եղկանա և Անա՝ նորան երեք տարեկան յանձնել էին վերոյիշեալ Հեղի քահանայի վերատեսչութեանը:

Վամուէլը բարի մանուկ էր, և Հեղիու որդիների չար օրինակներիցը անփորձ պահեց իւր անձը: Անց մանուկը, դարձաւ երկիւղած մի պատանի և ապա՝ մի արդիւնաւոր տըղամարդ, որ

(*) Աս ակացիս ծառից շնչած և ոսկեղեն տախտակներով պատած մի արկը էր, որի ծածկոցը՝ զուտ ոսկի լինելով՝ ցուցանումէր Աստուծոյ աթոռը, և սորա մէջ պահպանէին Օքէնքի տախտակը: Խարայէլացոց մէջ սովորութիւն էր՝ ճախորդ պատերազմի ժամանակում՝ ուխտի տապանակը դուրս տանել զօրքի առաջեւը, որ ինչպէս Աստուծոյ ներկայութիւն՝ սիրա տարզուականներին:

ինչպէս Դատաւոր՝ Խարայէլացոց ազգը փոքր առ փոքր կըրկին հեռացրեց կուապաշտութենից, ջարդեց և հալածեց Փըլքշտացիքը, և որպէս յիշատակ այս յաղթութեանըս կանդնեցըրեց քար՝ անուն տալով նորան Անհենչը (վէմ օգնականի), և դրոշմելով նորա վերայ այս բառերը. «մինչև այս տեղ օգնեց մեզ Տէրը»: Կա ձըշմարիտ սրբով ծառայութիւր Աստուծոյ բանին և ամենայն կերպով աշխատումէր այն խաղաղութեան միջոցները՝ որ ձարել էր ժողովրդի համար՝ գործ ածել բարեվաշտ մտածութիւնը զարթուցանելու վերայ, որ և յատկապէս յառաջացրեց նա շնելով մարգարէից ընկերութիւնը (Եկեղեցի մարգարէից): Երբ որ ծերացած էր Սամուէլը՝ գատաւոր կարգեց իւր որդիքը, բայց որովհետեւ սորբա ըը նմանեցան իւրեանց հօրը, ժողովուրդը խընդրեց Սամուէլից որ մի թագաւոր ընտրէ նոցա համար, ինչպէս որ դրացի տշխարհները ունեին: Սամուէլը հասկացրեց նոցա այն վընասները որ պիտոյ է յառաջանային սպասիսի փոփոխութենից, և պատմեց նոցա թագաւոր մարդու իրաւոնքները. թէ նա ժողովրդի տրլայրը և աղջլունքը իւրեան ծառայ և ըստրուկ կը շնիէ, հարկ և մըշակութիւն կը պահանջէ նորանցից՝ փոխանակ այն ազատ վիճակին որ այժըմ վայելումէին նորա Աստուածպետական կառավարութեան ներքոյ: Բայց ի զուր եղաւ Սամուէլի ասածը: Այս միջոցումը՝ Սամուէլը ծանօթացաւ պատանի Սաւուզի հետ, որ իւր հօր կորուսած իշանը եկել էր որոնելու նորա մօտ: Աստուած՝ այս պատանին որ երկելի էր մանաւանդ իւր բարձըր հասակովը՝ որոշեց ինչպէս իւր յատուկ ընտրած թագաւորը Հըրէից համար, և հրամայեց Սամուէլին որ օծէ նորան: Սամուէլը պահէց իւր մօտ Սաւուզը որ կենցաղավարվելով նորա հետ՝ այնպէս փոփոխ իւր բոլոր բնաւորութիւնը, մինչև ամեներեան որ յառաջուց տեսած էին և ձանաշումէին նորան, ըսկըսեցին հարցընելը և Սաւուզ ընդ մարգարէս իցէ: Սամուէլը ժողովեց յետոյ բոլոր ժողովուրդը, մի ծանր ձառ կարդաց՝ յայտնելով Հըրէայ ազգի ապերախտութիւնը դէպ ի այն բարերարութիւնքը որ Աստուած մինչև այժըմ ցուցել է նոցա. «Եւ դոք այսօր անարդեցիք Աստուած որ ձեր փըրիին է այն ազգերի ձեռքից որ ըըջապատումեն ձեզ և նեղումեն ձեզ, և ասացիք. ոչ, այլ պիտոյ է մեր վերայ թագաւոր կացուցանես», Ապա հրաժարվեցաւ իւր դատաւորական պաշտօնիցը, ներկայացրեց ժողովը իւր խընդրած թագաւորը որ մի գըլխաչափ բարձըր էր քան թէ միւսները, և թագաւորութեան բոլոր իրաւոնքները զըրեց և տուեց ազգին. ժողովուրդը աղաղակեց «կեցցէ արքայ», և վըկայութիւն տուեց

իւր մինչեւ այժմը՝ կառավարող՝ Դատաւորին՝ թէ սա ոչ ով ներկացըրած չէ, ոչ ումի անիրաւութիւն արած չէ, ոչ ովկա պարզեառած չէ։ Սամուելը խոստացաւ որ՝ թէ, պէտ պատուհեանք չետեւ ուղղապէս գործակից լինելու կառավարութեանը, բայց այդու ամենայնիւ կազօթէ, դէով ի Աթոռած իւր հայրենական աշխարհի համար։

1. Մանկութենից սովորոծ՝ ըսփահատակ կասարած։
2. Եւ չարերի մէջ կարելի է բարի մընալ։
3. Մի աշխարհ՝ որ գուրսից առահաղութիւն ունի, կարող է ժամանեակ և զօրութիւն գործ ածել իւր բնակիչների իմացական և ներքին օդակ վերաց։ Ուրեմնն ինչքան կարելի է, խաղաղութիւն ունեցեք ամենեւ ցուեց հետ։
4. Լաւ ուսումնարանները՝ ժողովրդների ճշշմարիտ բարձրաւորութեան հիմն են։
5. Լաւ ծընողը ևս ունին շատ անդամ՝ վասարարոց զաւակներ։
6. Կորասիրութենուլ մի՛ հետեւը ամենայն բանի. փորձեր ամենայն բան և ազա վե՛ր կալ ընակըրը։
7. Անշաղագավարվելը բարի, անիւն և խելքը մարդերի հետ՝ անշափ ներդորածութիւն ունի մեր կըրթութեան վերաց։
8. Ժակե ազնուատիրա մարդը տեսաներ որ նորան յետագաս են առենում, չն կամենում աւզիդ հանաւել, այնու ամենայնիւ նու չէր գաղաքելուն ինչքան որ կարող էր՝ հաբարձու լինել անշընորհակաների մասին, և գարձուցունել դալոց ձախորդութիւնը։
9. Ջանք արեկ՝ որ անարատ պարծանեք թաղուք ձեղանից յեաց։
10. Եթէ ուշը չէր կարող ուրիշ ոչնչ առնել, զոնեաց կարող էր գեռ ևս աղօթք սունել։

ԵՐԵՒՐԻ ՀԱՏՈՒԵԾ

Սաւուղից մինչեւ Խաբելսնի գերութիւնը.

1.

Սաւուղի. [Ա. Թագ. հ. 15]

Վայս առաջին թագաւորը Խարայիլ լաւ կառավարեց ըսկըզ-
բումը. յաջողապէս պատերազմ տուեց իւր ժողովըրդի թշնա-
միների հետ. բայց երբ որ պատերազմ ունենալով Ամազեկի հետ՝
պատուիրանազանց գլուխնվեցաւ Աստուծոյ առաջներ և կարծումէր
իւր անձը արդարացընել ասելով՝ «Ամազեկայ ածի զայդ զոր
ապրեցյց ժողովուրդը՝ զընտիրըս խաշանց և զարջառոց, զի
զոհեսցեն տեառն Աստուծոյ քում, և զայլըն սատակեցին, այս
պատճառաւ անհանց գլուխնվեցաւ Աստուծուն, որ Ասմուելի
բերանովը պատասխան տուեց Սաւուղին. «Այս լաւ է ունկըն-
դրութիւն քան ըզզոհ ընտիր, և հնազանդութիւն» քան ըզջարս
խոյոց»: Այսուհետեւ ձախորդութիւն ձախորդութենի վերաց եկաւ
հասաւ Սաւուղի գլխին: Ասմուելը սուգ էր առնում Սաւուղի
վերաց, բայց յանկարծակի հրաման բատացաւ Աստուծուց թագա-
ւոր օծանել բեթղէհեմացի Յեսուի առաւել կըրտսեր որդի Դա-
ւիթը: Աստուծոյ հոգին վերացաւ Սաւուղիցը որ մոածելով իւր
անյաջող պատերազմական գործերը՝ տըրիսութիւն էր գալիս սըրտի
վերաց, խաւարեցընումէր միտրը, մինչև որ խելազարվումէր նա:
Սաւուղը լըսելով Դաւիթի երգեցողութեան, քնարածութեան և
խմաստութեան համբաւը՝ հրամացեց որ բերեն այն մանուկը իւր
մօտ, և շատ սիրեց նորան և պահեց իւր ապարանքումը: Երբ
Սաւուղի վերաց տըրտութիւն էր գալիս, Դաւիթը առնումէր քը-
նարը և նուագումէր ոյնպէս քաղցըր որ Սաւուղի սիրոը թեթե-
ւանումէր և միտքը պայծառանումէր: Բայց ըստ որում Սաւուղի
աչքերը օրէ աւելի բացվումէին այն բանի վերաց թէ փոքրիկ
Դաւիթը պիտոյ է ժառանգէ նորա թագաւորութիւնը, որ սորա
քաջագործութիւնը աւելի փառաբանվումէին ժողովըրդի մէջ,
այս պատճառաւ Սաւուղը զառվեցաւ բարկութենով և վըրէժ-
խընդրութենով դէպ ի Դաւիթը և շատ անզամ հընար էր որո-
նում ըսպանել նորան: Եթէ Դաւիթը ը լինէր ազնուամիտ մարդ,

շատ հեշտ կը լինէր նորան սատակել իւր թըշնամին, որովհետեւ
շատ անգամ Սաւուղի կեանկը Դաւթի ձեռքումն էր. բայց սա
ըստ կամեցաւ ձբգել ձեռքը և ապականել Աստուծոյ օծածը, այլ
քանի մի անգամ մըտանելով քընած և թըմրած թագաւորի վը-
րանը՝ բաւականացաւ վեր առնուլ միայն նորա գեղարդը, կուժը
և մի կոտոր նորա հանդերձից՝ որպէս նըշան թէ կարող էր՝ Եթէ
կամենար՝ վըրէժխընդիր լինել իւր հալածողին: Դաւթի այսպիսի
ընթացքը շարժեց Սաւուղի սիրտը. սա ձանաչեց իւր անխոհե-
մութիւնը և այսուհետեւ դադար տուեց իւր յաջորդին: Երբ որ
միանգամ այլազգիքը եկան պատերազմով Խարցէլի վերոց, զար-
հուրեցաւ Սաւուղը, աղաղակեց դէպ ի Աստուած, բայց սա պա-
տասխան ըստ տուեց. ապա դիմեց Սաւուղը մի կախարդ կընջ
տուն Այենդովը քաղաքումը և աղաչեց նորան որ հանգուցեալ
Ասմուէլի հոգին վեր հանէ և հարցընէ նորան՝ թէ ինչ պիտոյ
էր առնել ընդդէմ պատերազմող այլազգիներին: Ասմուէլի պա-
տասխանը ուրախաբեր չեղաւ. Ասմուէլը յայտնեց թէ Աստուած
կործանելու է Սաւուղի թագաւորութիւնը, վաղեւը կը սատակիլին
ի միասին նա և իւր որդիքը, և Խարցէլացոց բանակը կ'անցանէ,
այլազգիների ձեռք: Այնուհետեւ բացվեցաւ պատերազմը. մեռան
Սաւուղի որդիքը, և ինըը սաստիկ վիրաւորված և ըլկամենալով
գերի գընալ թըշնամու ձեռքը՝ հրամացեց իւր կապարձակիր տը-
ղացին որ խոցէ նորան, բայց կապարձակիրը չը կամենալով՝ ինըը
Սաւուղ վեր առեց սուրը և ընկատ նորա վերայ: Դաւթիթը լսե-
լով Սաւուղի վերջը, լաց և արտասուր թափեց մեռած թագա-
ւորի համար, և շատ սուրգ արեց իւր սըրտակից բարեկամ Յով-
նաթանի մահու վերայ: Բայց ինչպէս Սաւուղի, նոյնպէս և նորա
որդու մարմինը գիշերով Փըզըշացոց բանակիցը գողացան և բե-
րեցին նորա՝ որոնց լաւութիւն էր արած Սաւուղը: Այս ազնիւ-
գործը շատ գովելի և յարգելի գըտանվեցաւ անյիշաչար Դաւ-
թի աչքումը:

1. Քո հաւասարմութիւնը և չերմեւանգութիւնը պաշտօնիտ մէջ թող-
աւէ առելի երկար քան թէ ըսկըզբէ ժամանակումը:
2. Պարա է Աստուած ամենայն բանից առելի սիրել, երկընչէլ նորանից
և հաւատ ունենալ դէպ ի նա:
3. Սամուէլը խորվիլ էր Սաւուղի ընսաւորութեան վերայ. համործակու-
թիւն ըւնինք գատել մի մարդ նորա արտաքին կերպարանքից:
4. «Եռաշղթածութիւնը՝ մի մեղմ, հոգեղացածաւ բարեկամ է տըրտմաւթեան
ժամանակիներումը:»

5. Մի՛ բարկանար ուրիշների վերայ, եթէ արժան էր որ ինքը քո վերաց բարկանայիր :
6. Մեծանձնութիւնը և աղևուահոգութիւնը կը փափկացընէ և ամենալուշտ սիրու :
7. Եթէ Ազատուած խեցն չէ լսուամ մեր Խընդիրքը, չէ պիտոյ կորուտանել մեր հաւատը :
8. Տաղնապի և մատանչութեան մէջ՝ շատ անդամ՝ ազաւինումներ ոնպապաշտական բաների ըզգայշ կացիր սորանցից :
9. Հաւատաւալ՝ թէ հանկուցիւալ բարեկամների հոգիքը կորոնկ են երևել մեզ, անդասշաճ բան է :
10. Եւ թշնամու անդապղութիւնը ըզգալի է աղնիւ ոըրտի համար :
11. Ազերախոսութիւնը պատճառ էր՝ որ Ասւուզը հալածումը Դաւթին բայց նոքա որոնց Սաւուզը իւր կենդանութեան օրերումը լսուութիւն էր արած, շընորհական գլուխնեցան գէպ ի նա, երբ որ մեռած էր :

2.

Դաւթին. [Բն. Թագէ. հւ. 2—]

Վւելի բաղդաւոր և օրհնութենով առատ էր Դաւթի թագուորութիւնը: Վերևումը խօսվեցաւ քանի մի բան սորա մասին: Դաւթի մանուկ տարիների պատմութեանը վերաբերվումէ նորա սրբակից բարեկամնութիւնը Սաւուզի որդու Յովսաթանի հետ: Սա թէպէտե՝ ինչքան կարելի էր՝ աշխատումը Դաւթի կեանքը պահպանել այն վըտանգից որ պատրաստումը Դաւթին այն իւր որդուն ամեննեին աննըման հայրը. Յովսաթանը թէպէտե շատ փոյթ ունէր հօր սըրտի մշջաւելի լաւ կարծիք տընկել այն ազնիւ երիտասարդի մասին, բայց ոչ միշա պըտզարեր դըտանվեցան նորա բարի ջանադրութիւնքը: Կոյնապէս՝ Դաւթի մանուկ հասակումը անցած բան է նորա պատերազմը անբարտաւան փըղըշտացի Գողիաղի հետ՝ որ պահանջումը թէ երբայնցի ազգիցը մի տղամարդ դուրս գայ և կըռուի նորա հետ այն պայմանով՝ որ եթէ մենամարտ Եբրայեցին յաղթէ նորան, ասկա Փըղըշտացիք ծառայ կը լինին Խորայէլացոց: Ոչ ով ըս վըտահացաւ, թէպէտ Սաւուզ թագաւորը խոստանումը իւր դուստրը այն տղամարդին տալ՝ որ դուրս կը գոյ Դողիաղի առաջ: Գողիաղի այս պահանջումը մը լըսեց պատահմանք փոքրիկ Դաւթիթը՝ Յեսաէի կըրտսեր որդին որ իւր հօր ոչսալները արածեցընումը, որ և հաց էր տարել իւր եղօրներին Խարայէլացոց բանակումը: Սա յանձն առաւ սցդ մենամարտութիւնը: Գողիաղը տեսանելով որ Դաւթիթը՝ աննը-

շան կերպարանքով մի մարդ՝ փայտ ու սլարսատիկ ձեռքին՝ վերաց
է գալիս, ծաղը արեց նորա վերաց. բայց Դաւիթը հանեց մաղա-
խից իւր սլարսաքարը և այնպէս յաջողակ նետեց Գողիաղի ձա-
կատին, որ իսկցն գետին գըլորվեցաւ. մօտ եկաւ Դաւիթը և նոյն
իսկ այլազգու սրովը կըսրեց նորա գըլուիը և բերեց Երուսա-
լիմ՝ որալէս յաղթութեան նըշան։ Թագաւորի սրոտին աւելի
խոց քան թէ ուրախութիւն եղաւ. Դաւիթի քաջագործութիւնը
որ սլարզերես հանեց Խարայէլի պարծանքը. նոյնպէս՝ ըստացաւ
նա այն սլարզես որ թագաւորը խոստացէլ էր, այլ միւսանդամ
այլազգիներին յաղթելով՝ կին առաւ Սաւուզի միւս գուստրը՝
Մեղքող անունով։ Թակապէտ Սաւուզի մեռանելուց յետոյ նորա
Յեքուսթէ որդին՝ հօր զօրավարի Արենների գործակցութենովը՝
թաղաւոր նըտեց Խարայէլի տասն և մի ցեղի վերաց, բայց եր-
կու տարուց յետոյ՝ տան մէջ անկողնումը քընած՝ ըսպանվեցաւ
Ռիքարի և Բաամայի ձեռքով։

Դաւիթը երկիւղած մարդ էր, և այս սլատճառաւ իւր բոլոր
հոգացողութիւնը ուղղեց աստուածային սպաշտօնի բարեկարգու-
թեան վերաց. յաղթեց շատ հեթանոս ազգերի, Երուսաղէմը իւր
տէրութեան մայրաքաղաք շինեց, հրամայեց ուխտի տապանակը
այն տեղ տանել և բակլսեց շինել մի փառաւոր ասլարանք որի
համար նիւթեր և ձարստարապետներ բերել տուեց Փիւնիկայի
Տիւրոս քաղաքից, որի թագաւոր Քիլամի հետ վաճառաշահա-
կան գաշնաւորութիւն էր կապել։ Երբ Դաւիթի զօրավար Յովա-
քը դարձանագործութենով ըստանել էր Սաւուզի տան համախոչ
Արենները, Դաւիթը պատուեց մեռածի մարմինը, հրամայեց հան-
դիսով թաղել նորան և գընաց հանգուցելու դագաղի հետեից,
պատժեց նոյնպէս Արենների ըսպանողը։ Դէպ ի Սաւուզի տա-
նից մընացած զաւակի շատ ողորմած գրտանվեցաւ. Դաւիթը և
հրամայեց որոնել և հասուցանել իւր մօտ Յովաթանի դեռ
ևս կենդանի որդին, որ երկու ոտով կան էր. սորան յետ տուեց
իւր պապի բոլոր անդերը և իւր սեղանակից շինեց։ Արդարեւ
բարեսէր մարդ էր Դաւիթը, և իւր թագաւորութիւնը մեծ եր-
ջանկութեան հասցըրեց, բայց՝ ինչպէս վկայումէ Սուրբ գիրքը՝
ազատ չեղաւ արատաւոր գործերից։ Զար օրինակ՝ միանգամբ այն-
պէս կուրացաւ իւր անհամեսա ախտովը դէպ ի Ուրիխի քետա-
ցոյ Բերսարեէ կինը, մինչև գողացաւ նորա ամուսնութիւնը և
ըսպանել տուեց այն կընոջ տղամարդը՝ հրովարտակ գրելով իւր
զօրավար Յովաթին՝ որ պատերազմ ունէր Ամոնացոյ հետ, այս-

պէս. թէ Ռւրիա քետացին այն աեղումը կանգնեցրնես ուր աւելի սաստիկ էր պատերազմը: Այս յանցանքները պըզտորեցին Դաւթի կենդանութեան օրախութիւնքը, խոռվեցին նորա սըրտի անդորրութիւնը: Խնչքան որ կենդանի էր Դաւթիթը՝ միշտ մեղադրումը իւր անձը այս մասին: և թէ ինչպէս ծըշմարիտ սըրտով էր նորա զըզջումը, դորս համար վլայսումեն մինչև այսօր նորա փառաւոր երգերից շատերը՝ որ չին կտակարանի մէջ պահված են, Սաղմոսք Դաւթի « անունով: Եօթն տարի և վեց ամիս թագաւորեց Դաւթիթը Քերբրոն աշխարհումը Յուդայի ցեղի վերաց միան: ապա ընդունեցին նորա իշխանութիւնը և միւս տասը ցեղերը: Մի այլ անգամ Դաւթիթը սնափառութեամբ մոլորվելով՝ կամեցաւ իմանալ թէ իւր զօրութիւնը. հրամայեց որ հանդէս առնեն ժողովը ինը և թուեն նորան: յայտնը վեցաւ որ 1,300,000 պատերազմող մարդ կային նորա թագաւորութեան մէջ: Այս գընացը հաճոյ չեղաւ Ազտուծուն որ՝ ինչպէս իւր տհաճութիւնը վերսիշեալ մեղքի վերաց հասկացը բել էր նորան բերանով Կաթան մարդարէն (որ Դաւթի դաստիարակն էր և հայրանը ման բարեկամը), նոյնպէս և այժմ Դադ մարդարէն բերանով իւմաց արեց նորան որ շուտով գալու է մահ տարաժամ, որ և եկաւ հասաւ և առաւօտից մինչև ձաշը սատակեց Եօթանասուն հազար մարդ:

Հայց՝ ամենից առաւել վիշտ և ցաւ պատրաստեց Դաւթի սըրտին իւր վատարարոյ Աբեսոզոմ որդին: Աս խոռվեցուցանումը ժողովուրդը ընդդէմ իւր հօրը՝ ընկերասէր կեղծաւորվելով և իւր տունը տանելով այն մարդերը որ թագաւորի մօտ դատաստան ունէին, ժողովը ի սըրտումը կասկածանք զարթուցանելով իւր հօր արդարութեան մասին, և ցած ձանապարհներով բարեկամներ ձարելով իւր համար: Այս հերիք չէր. Աբեսոզոմը այնքան կուրացաւ իւր պատուասիրութենովը, մինչև զօրը ժողովեց և գընաց Երուսաղէմի վերաց, որ իւր հայրը արբայական աթոռից ներբեւ ձրգէ: Դաւթիթը փախաւ Երուսաղէմից և ձանապարհին անարդանը և հայցոյութիւն ըստանալով Սեմէից որ Աստողի աղդասոհմիցն էր, համբերեց այս ցաւերին՝ համարելով նորանց Ազտուծոյ պատուհաս, և հարկադըրվեցաւ զէն վեր առնուլ ընդդէմ իւր յատուկ որդուն: Բայց Դաւթիթը Երուսաղէմից դուրս ելանելու ժամանակը յետ էր թողել այն տեղ իւր բարեկամ Քուսի արաբացին, այն մըտքով՝ որ նա արտաքուստ միաբան ձեւանց Աբեսոզոմին, որսաց նորա խորհուրդը և հասուցանէ Դաւթին: Այս Քուսի արաբացին խըրատներ տուեց Աբե-

սողոմին, որ օգտակար էին Դաւիթ թագաւորին, և Աքեսողոմի առաջին խորհրդատու Աքիտովիլը տեսանելով որ իւր խըրաաը չընդունվեցաւ, գընաց տուն և խեզզվեցաւ: Դաւիթը ընդդէմ իւր որդուն պատերազմելով ևս՝ աղնիւ ընթացք ցցց տուեց. Հայրական սիրաը ըս մոռացաւ երբէք որ ապրատամբողը իւր յատուկ որդին է, պատուէք տուեց զօրավարներին որ խնային նորա պատանեակ Աքեսողոմին: Երբ որ յաղթութեան լուր բերեցին Դաւիթին, սորա առաջին հարցուփորձը այն եղաւ. ողջ է արդեօք իմ Աքեսողոմ մանուկլը բացց երբ որ լըսեց նորա մահը (Յովաբ զօրավարն էր որ երեք նետով զարիւց Աքեսողոմի սըրտին, երբ նա գեռ ևս կենդանի կախ էր ընկած կաղնի ծառիցը), այս արձակիւց լալով և սըրգալով՝ «Որդեանկ իմ Աքեսողոմ, Աքեսողոմ որդեակ իմ, ո տացր ինձ ըզմահ փոխանակ քո, ևս փոխանակ քո Աքեսողոմ որդեակ իմ, որդեակ իմ Աքեսողոմ»: Այս յաղթութենից յետոց Խարսցէլը միաբերան կըրկին խընդրեց որ Դաւիթը թագաւորէ նոցավերսց. ամենեթեան միւսամ յանձն առան հնազանդել նորան, և Աւեմին յառաջ եւկաւ և թողութիւն խընդրեց և գրտաւ Դաւիթի մեծանձնութենից: Միւսները՝ որ նորան օգնական էին եղած անբազութեան օրերումը, ինչպէս Բերզելի ծերը՝ օրհնեց Դաւիթը և բարեշնորհ գըտանվեցաւ դէպ ի նոցա զաւակը:

Երբ որ Դաւիթը ծերացած էր, նորա Աղոնիա որդին՝ Յովաբի օգնականութենովը կամեցաւ թագաւոր նըստել: Այս բանը խմացուցին Դաւիթին, բացց սա հրամացեց «Կաթանի և Ասդովկ քահանայի ձեռքով որպէս ժառանգ թագաւորութեան օծել և հրատարակել Բերսարէից ծընած Առղոմն որդին որ խմասուն Կաթանի առաջնորդութեան ներբց ծանօթացած էր կառավարութեան գործերին: Դաւիթը իւր մեռանելուց փոքր մի յառաջ մօտ գանչեց իւր Սողոմն որդին, խելօք խըրատներ տուեց նորան թէ աստուածացին և թէ մարդկացին բաների մտսին, և կընքեց իւր կեանքը՝ թագաւորէլով քառասուն տարի:

1. Այն ցաւերովը որ պիտոյ է կըրէր Դաւիթ իւր մանկութեան օրերումը, ևս սովորեց աչքը գէպ ի Ազտաւած ուղղեցոցանել և հետեւ նորան:
2. Երջանենէ է այն մարդը որի կողքին անբազութեան միջոցումը կանգնած է մի հաւատարիմ բարեկամ:
3. Ազմարատանութիւնը հանգիստում կործաննանից յառաջ. համեստութիւնը յաղթումէ:
4. Մի՛ դատիր մարդը գուբոի երեսութովը:

5. Ոչխար պահող հսկելները շատ մնալամ մընումնեն ալբէտ և ծոյլ. Դատ-
ւիթը սովորած էր շատ քաջ պարսաբարել, որ գործնով կարուղնայ
իւր ոչխարները պաշտպանել վայրենի գաղանների երեսից. Նա երգումէր
քընարավ և դորանով փարաստմէր Աստուղի տընբուժիւնը, և սովո-
րեց բնութեան մէջ՝ Աստուղած որոնել և գըտանել, և այսպէս իւր
սիրով հակեցուցանել գէոր և երկիւղածութիւն:
6. Ով որ Աստուղ հետ գաշնաւոր է, նորան կը յաջողէ ամենայն բան:
7. Բարի իշխանաւոր նոմ է, որ իմաստումն կարեւը աշխատումէ Աստու-
ծոյ երկիւղը և բարի վարք օրէ օր աւելի արմասացուցանել իւր ժողո-
վրդի մէջ:
8. ՄԵՇ և աղմիւ բան է՝ ըլ փոխարինել զաւակներին այն չարը ո՞ր տ-
րել են մեղ նոյս ծընողը. չարի փոխանակ՝ բարի հաստուցէր:
9. Եւ ամենալաւ մարդուն հանեփառամնեն պըզոր միջներ. այս պատճառ-
ուով արթնւն կաց և աղջթք արաւ: Աստաբարդութեանը ունել էր
Դատիթը համբերել, բայց բարդաւորութեան մէջ ըլ կարսպացաւ իւր
անձը չափաւորել:
10. Փախիք առաջին հրապուրանից դէոր և հեշտախտութիւնը. առ՝ ամենայն
միւս մեղքից աւելի՝ լինումէ մայր ուրիշ մի յանցանիքի (Ամսունութեան
դալութիւն, և ըսպանութիւն):
11. Դատիթը մեղնչել էր, բայց իւր մեղքը հանաչեց և զըզաց իւր մէջ
և սորանով իւր ողբանի հանդրասութիւնը միւսոնդամ գըտաւ: Աշա-
ռածամակախը՝ եթէ վայր է ընկել, կարո՞լ է կըսկին սարի վերայ կանգ-
նել. բայց չարը կը կործանիլ:
12. Եթէ մեք հրաման ենք տուել մի յանցանիք առնելու, կամ՝ թէ թոյլ
տայինք որ նա պատահէր, թէսկէտ իրաւունիք կամ՝ կարսպութիւն ունե-
նիք արգելու նորան, դա այնքան պատժապարտ բան էր որպէս թէ
մեք ինքները արած լինէինք:
13. Աքեսաղմը մարդոհաճութիւն էր առնում, որովհետեւ նորա գիտաւորու-
թիւնը այն էր միայն, որ նորանով շահ և օգուտ քաղէ իւր համար:
14. Ինչքան ծանըր մեղնչեց Աքեսաղմ՝ դէոր և իւր հայրը, բայց և վե-
րայ այդըր ամենայնի ենցղէտ անշիջաննելի է ծնողական ուերը դէոր և այն-
պիսի զաւակները որ նըման էին Աքեսաղմին:
15. Ժաղութիւն արա քո թընամիներին, մի՝ մաւանար քո բարերաները:
16. Ո'րդեակներ՝ հետեւեցէ՛ ձեր ծնողների խըրաններին և ըզգուշացուցիչ
խոսքերին որ հիմասծ են երկարաժամանակնայ փորձերի վերայ:

5.

Սույնն. [Դ. թագ. 1—]

Առղոմնը ըսկըսեց իւր թագաւորութիւնը գովանի կերպով, այսինքն՝ աղօթելով առ Ապառած՝ որ տայ նորան սիրտ լսելու և արդարութեամբ դատելու ժողովուրդը, խելամուտ լինելու իւրաւին և անիրաւին։ Կա չը խընդրեց երկրաւոր բարութիւն։ Վասն այս պատճառի Ապառած պարզեց նորան որպէս այդ, նյնպէս և հանձար և իմաստութիւն, որ նորա խընդըրուածն էր։ Շուտով պատահեց մի դատաստանական գործ որանում խակցն երեւցաւ Սողոմոնի իմաստութիւնը։ Եկան թագաւորի մօտ երկու մայր, և նորանցից մինը ըսկըսեց խօսել։ Ես և ոյս կինը մի տան մէջ էինք և քանի մի օրից յառաջ որդի ծընեցինք։ այն մօր որդին մեռաւ գիշերը՝ ըստ որում նա երեխայի վերաց քընել էր։ Ես քընի մէջ լինելով՝ բերեց իւր մեռած մանուկը և դրբեց իւր ծոցըս, բայց վեր առաւ իմ մանուկը և զըրեց իւր ծոցը։ Ագաւոտուն զարթեցի որ դիեցուցանեմ մանուկըս, և ահա մեռած էր, նայեցի և տեսոյ որ իմ մանուկըս չէ։ Միւս կինը հաստատումէր սորա ներհակը։ Թագաւորը հրամայեց որ սուր բերեն և կենդանի մանուկը երկու կոտոր առնեն և տան կէսը սորան և կէսը՝ նորան։ Այն կինը որի մանուկը կենդանի էր՝ մայրական սիրտը այրվելով՝ աղաղակեց, ովլ Տէր։ Հրաման արա որ մանուկը՝ կենդանի տան այն կընօջը և չը սովանեն նորան։ բայց միւս կինը սառը սըրտով ասումէր. թան՝ ոչ իմրա լինի, և ոչ նորան։ կըտրեցէր մէջնցը։ Սողոմոնը ձանաչելով որ կենդանի մանուկի ձըշմարիս մայրը նա էր որ աղաչեց պահպանել երեխայի կեանը, վըձիռ տուեց։ Նորան տուէր մանուկը. նա է գորա մայրը։ Այսպիսի իմաստութեան օրինակներ շատ տուեց Սողոմոնը, այնպէս որ ամենայն տեղ տարածվեցաւ նորա համբաւը և մինչեւ օտար աշխարհներից գալիս էին թագաւորներ՝ լրսելու և հիանալու նորա մեծ հանձարի վերաց։ Մինչեւ այսօր ևս կան Ապառածաշունչ գըրըի մէջ Սողոմոնի ասած բաներից հատուածներ (Սողոմոնի Առակը, ժողովովը և Երգոց երգը) որ ըստուգութիւն են տալիս այն խօսքին որ կարդումէնք երրորդ թագաւորութեան գըրըի մէջ՝ թէ Քաղաքացաւ իմաստութիւն Սողոմոնի յոյժքան ըղիանձար ամենայն նախնեաց մարդկան և քան զամենայն իմաստնոց Եգիպտոսի։ Սողոմոնը հընձումէր այժմը ինչ որ սերմանել էր իւր Դաւիթ հայրը, որ յառաջուց յաղթած լինելով

այլազգի թըշնամիներին՝ հաստատել էր ժառանգի թագաւորութեան խաղաղութիւնը, և եթէ կային դեռևս քանի մի անցագթ մընացած քանանացի ազգեր, նորա ևս հեշտութեամբ հնազանդվեցան Առղոմնի ձեռքի տակ: Երկիրը վայելումէր օրհնութիւն և խաղաղութիւն նորա թագաւորութեան ժամանակումը, և Սողոմնի իմացաւ սյս ապահովութեան օրերը դէպ ի բարին գործ դընել: «Կա ջանազիր էր նոր նոր առևտրական դաշնաւորութեններով օտար ազգերի հետ՝ աւելի լուսաւորել իւր ժողովուրդը, և իւր թագաւորութեան չորրորդ տարումը բակրսեց շնել Մօրիա սարի վերաց սյն տաճարը որ յառաջուց մըտքումը դընել էր Դաւիթը, բայց չէր կարողացել յառաջ տանել, ըստ որում միշտ պատերազմերի մէջ էր եղած: Սողոմնի թագաւոր Քիրամի հետ խաղաղութեան դաշն կապեց, որ սա Առղոմնին շնութեան փայտ տայ Լիբանանու սարիցը, և Սողոմնի իւրաքանչեւր տարի հասուցանէ Քիրամին քրսան հազար քոռցորեան, և քրսան հազար սափոր մըզած իւղ: Տաճարի շնութեան վերաց աշխատումէին միասին և Խարացէլացիք և Քիրամի հպատակը և Բիբլացիք: Եօթն տարու մէջ գըլուխ եկաւ տաճարը, մի հրաշալի շնուտած, որ և զոհով, աղօթքով և հանդէսներով նուիրեց հիմնարկուն և տեղափոխեց նորա մէջ Աւետի տապանակը:

Սողոմն թագաւորը արդարեւ չէր ազատ պըմնասիրութենից և շըռայլութենից. սյս պատճառաւ պէտք էր ծանըը հարկեր դընվէին ժողովրդի վըլին. և սյն ասիական սովորութիւնը բազմաթիւ կանացը պահէլու՝ առիթ տուեց մոլորութեան և ծանապարհ բացեց կռապաշտութեան համար՝ որանից յառաջացաւ թագաւորութեան աւերումը և ներս մըտաւ կռապաշտութիւն: Նորա կանանց մէջ կային շատ հեթանոս օտարականներ, զոր օրինակ՝ Եգիպտացի, Մովաբացի, Ամոնացի, Եղովմացի, Ասորի, Քետացի և Ամոնվրհացի, ինչ ազգերի հետ վըձուել էր Ասուած՝ որ ինասմութիւն չունենան Խարացէլացիք: Այս հեթանոս կանանց համար Սողոմնը ոչ թէ միայն կըռբատըներ շնեց Երուսաղէմի մօտ, այլ և ինքը կամենալով այն կանանցը հաճոյանալ՝ գընաց երկրապագութիւն տուեց նոցա չաստուածներին, որպէս Սիրոնացոց գարշելի Աստարակէին, Ամոնացոց զաղորուի Մեղքոմին և Մովաբացոց Քամովս կուռքին: Այս վարքին անհաւան գրտանվեցաւ ժողովուրդը. յետոյ Արագոնը՝ հակառակորդ վեր կենալով ընդդէմ Սողոմնին, գընաց Դամասկոս և թագա-

ւոր նըստեց այն տեղ և թըշչնամի մընաց Խարայէլին, ինչքան
կենդանի էր Սողոմոնը: Սա թագաւորեց քառասուն տարի:

1. Ազատուծով ըսկըսիր և Ազատուծով վերջացրաւ, պահ է ամենալաւ կեան-
քի ընթացքը:
2. Յառաջ խընդրեցէք Ազատուծոյ արքայութիւնը և նորա արդարութիւնը.
միւս այլ բաները կը յաւելանան դորա վերաց:
3. Մայրական սէցը ոչինչ ժամանակ անգործ չի մընայ:
4. Խմանառութիւնը և առաքինութիւնը սիրելի է ամենայն ուրատի:
5. Եթէ կամենումես իմաստուն խըստա քո կեանքի որ և իցէ որպիսու-
թեան համար, ապա բաց արա Սողոմոնի Ապահները: Եթէ վըսանե-
կաց որ մի գուցէ քո միրաը կապիի ժամանակաւորի և երկրաւոր վայել-
չութիւնների հնտ, այլև՝ եթէ կոմմունամես ազատ լինելով մարմաւոր
ախտերից և մոլորամիտա տըրամութենից, պատշաճաւոր հանդիսա զըտա-
նել կեանքիդ մէջ, ապա կարգա Սողոմոնի Ճշռուածուն: Կամոնումես ու-
նենալ աչքիդ հանդէպ երկնային սիրոց և երջանկութեան որպահերը
հարսնաւիսացի օրինակով, ապա ձեւդ առ Սողոմոնի Երկրու էրէն:
6. Մեր գործերից քանի միները չնկա կարալ ինքները գրչուի առնել,
բաց և այն շատ արժանի բան էր՝ բարին ատրածել ժաղավորդի մէջ:
7. Քո երկիւղածութիւնը թնով յառաջ տանէ քո մատնակցութիւնը Ազա-
տածային պաշտօնին, և քո լիներների չը բանաւանդաւթիւնը:
8. Աւելի դըժուար է տանել բաղդաւորութեան և լիւթեան քան թէ:
անքաղցութեան և աղքատութեան:
9. Անկարգ ցանկութիւններ՝ թէ և լինեին նորա քո ամենալաւ բարեկամ-
ներինը, մի կատարիր:
10. Մատնաւորների ցանկութիւնը պիտոյ է յետագաս լինի հաստրակաց օգտին:
11. Մասածիք՝ թէ նու կարու է ծնանել քո գործերիցը:

Սողոմոնի մահուց յետոյ բոլոր Խարայէլի թագաւորութիւնը
պիտոյ է ժառանգէր նորա որդի Ռոռովալիք. և այս մասին համա-
ձայն էր նոյնպէս ժողովուրդը, բայց այն պայմանով՝ որ այն ծանր
ծանր հարկերը որ նորա հայրը դըրել էր ժողովը վերաց՝ թե-
թեւանային: Բայց Ռոռովալիք ծեր և փորձառու մարդերի բարի
խորհուրդը արհամարհէրով և իւր մանուկ լիներների խօսքին
ունկնդիր լինելով՝ ոչ թէ միայն չը կատարեց ժողովը վերաց՝ իւրա-
ւացի խընդիրը, այլև գուռղարար պատասխան տուեց. իմ հայ-
րըս խըրաստել է ձեզ գանով (ծեծելով), բայց ես կը խըրասէմ
ձեզ խարազանով: Այս անզութ պատասխանը այնդիսի յուսա-
հաստոթիւն և ահ ու դող բերեց ժողովը վերաց, մինչեւ տասը
ցեղ դուրս եկան Ռոռովալի իշխանութեան ներքելից. Յուղուէ և

բէնէամնէ ցեղը միայն հաւատարիմ մընացին նորան, և այսպէս բաժանվեցաւ թագաւորութիւնը երկու մասն՝ Յուդայ և Իսրայէլ, որոնցից վերջնը իւր համար թագաւոր ընտրեց եվլրաթացի Յերոբովամը։ Այս բաժանումը տեսեց մինչև երկու թագաւորութենաների կործանումը։

Յուդայ և Իսրայէլ թագաւորութենաների պատմութեան մէջ յիշատակի արժանի անցրեր շատ փոքր կան. բայց նորա մէջ սպառնակվում; այն մեծախորհուրդ խըրասոր, թէ մի ազգ հրաժարվելով իւր դէպ ի Աստուած հաւատիցը և ապականելով իւր վարը՝ յառաջ կամ յետոյ սփառոյ է, կործանվի անպատճառ։ Քանի մի թագաւորներ միայն՝ առանձին յիշատակութեան արժանի էին

4.

Յերոբոամը և նոր յաղութաջր Իսրայէլի արքունութեան վեհույ։

[Դր. Թագակ. հլ. 12—]

Յերոբովամը թագաւորելով այն տասը ցեղի վերայ որ առվրստամբվել էին Ռոբովամից, հաստատեց իւր աթոռը Սիկիմ քաղաքում, և կասկածելով թէ մի գուցէ նորա հաբատակը ձանապարհորդելով դէպ ի Երուսաղէմի տաճարը՝ աւելորդ կապակցութիւն ունենան Յուդայի ցեղի հետ և առա անհնազանդ լինին իւրեանց թագաւորին, երկու ոսկեղէն երինջ շինեց՝ ասելով ժողովրդին. «Ճերիթ լինի ձեզ գընալ Երուսաղէմ. ահա քո աստուածքը որ հանեցին քեզ Եգիպտոսից»։ Այս երկու երինջների մինը դըրեց Դան քաղաքումը, միւսը՝ Բեթէլումը։ Ճիւանդացաւ Յերոբովամի որդին, և հայրը ուղարկեց որ հարցընեն սիլոնացի Արիա մարգարէիցը թէ արդեօք մեռանելու է արբացի որդին։ Արիա մարգարէն պատասխան արեց. գընացէք ծանուցէք Յերոբովամին, թէ Աստուած ասումէ՝ որովհետեւ դու ըլգընացիր Դաթի ձանապարհովը, այլ անարժան գործեր գործեցիր, օտար աստուածներ շինեցիր, արհանարհեցիր և բարիացուցիր ինձ, վասն այս պատճառի քո տան վերայ պատուհասներ կը բերեմ, կը սատակեմ քո բոլոր զաւակը, որ մինը ևս ըլ մընայ։ Մեռաւ Յերոբովամի որդին նայն իսկ բոպէումը, երբ մայրը՝ մարգարէի տուած պատասխանը բերանին՝ տուն մըտաւ։ Յերոբովամը թագաւորեց 22 տարի։ Նորանից յետոյ աթոռ նբառեց նորա որդի՝ Կաղարը որ իւր մեղքերով ամենեխն հաւասար էր իւր հօրը։ Այս երկու տարուց յետոյ ըստանվեցաւ բաասայի ձեռքով՝ որ փոխանակ նո-

րա թագաւոր նըստելով՝ արմատախիլ արեց Յերորովամի բոլոր տունը և ոչ մի շրնջաւոր ևս կենդանի ըլ թռղեց՝ ինչպէս Աստուած սիլճնացի Արքայի բերանովը ծանուցել էր: Ելա և Զամբի շուտով միմեանցից յետոյ եկան ու գրնացին, մինչև Ամրի իւր հակառակորդ թամնի անունով իշխանին յաղթելով՝ թագաւոր ընտրվեցաւ, որ և շինեց Սամարիա քաղաքը Ասմորոն սարի վերայ և հաստատեց այն տեղ թագաւորանիստը, բայց ոչ մի առարինութենով գերազանց ըլ դտանվեցաւ քան թէ իւր նախնիքը: Ամենից առաւել ձանապարհ տուեց կրապաշտութեանը

Աստուած, [Դ. Թագաւոր. էլ. 16 — 17]

մի յանցաւոր և վատաքարոյ թագաւոր՝ որ տիրեց Խարացէլի վերայ 22 տարի: Սորա անըզգամ կինը Յեզարէլ անունով՝ հեթանոս էր և Սիղմանացոց արքայի դուստրն էր: Սորա գործակցութենովը ներս մրտաւ Խարացէլի մէջ կոապաշտութիւնը և գարշելի Բահաղի երկըրապագութիւնը: Սա էր՝ որ Խարացէլի մարգարէրը կոտորել տուեց, թող այն հարիւրը որ Արդիու հաղարապետի հովանաւորութեամբը պահպանվեցան, և Եղիա մարգարէն: Թէպէտ Աստուած կամեցաւ երբեմն Աքաարի սիրտը դէպի բարին ուղղեցուցանել, բայց այս ըլ տեւեց երկար: Աքաարը միւսանգամ մոտացաւ Աստուածոյ բարերարութիւնքը, զոր օրինակ՝ այն յաջողութիւնը որ պարզեել էր նորան՝ երբ նա պատերազմ ունէր Ասորոց թագաւորի հետ: Եղիա մարգարէն ամենայն կերպով ջանադիր գրտանիվեցաւ՝ որ հասկացընէ Աքաարին թէ յիմարութիւն էր իւր յոյսը դընել կըսբերի պատկերների վերայ, և մարգու ձեռով շինած աստուածների պաշտօն մատուցանել: Այս մըրքով՝ Եղիա մարգարէն ասաց Աքաարին. թող հրամայէ որ Խարացէլի ժողովուրդը և Բահաղի սուտ մարգարէրը հաւաքվին Կարմելոս սարի վերայ, սեղան շինեն և զահ բերեն, մի կողմը՝ Բահաղի պատկերին, միւս կողմը՝ Ճըմարիտ Աստուծուն: Եւ այսպէս սահման դըրեցին, որ աստուածը կըսակի մէջնց պատասխան կը տայ, նորան ևս պիտոյ էր սպաշտել որպէս Ճըմարիտ աստուած: Բահաղի մարգարէրը ազաղակեցին դէպի ի իւրեանց կուռքը, թէպէտ՝ զուր և անօդուտ. բայց՝ երբ որ Եղիան ըսկըսեց աղօթել, երկընքից կըսակ ի թաւ և կերաւ զոհը և սեղանը՝ այն ջըրի հետ ի միասին որ Եղիան թափիել էր նոցա վերայ: Կենդանի Աստուածոյ զօրութիւնը այսպիսի յաղթող վկայութեամբ հաստատվելով՝ հրամայեց Եղիան որ ըմբըռնեն Բահաղի մարգար

րէրը և կոտորեն նորանց Կիսոնի հեղեղատի վերայ։ Մի միայն թագաւորը և թաղուհին կամակորվելով փակեցին իւրեանց սիրտը ընդդէմ Եղիսյի Խընդըրուածներին և խըրատներին։ նորա ևս առաւել վատթարացան և սաստկացըրեցին իւրեանց անողորմ և բըռնաւոր գործերը։ Երրորդ թագաւորութեան քըսանևմիերորդ գըլխումը պատմութիւն է լինում, այսպէս։ «Արովթ յեղոցիւացին մի այդի ուներ Աքաարի տան մօտ։ Թագաւորը ցանկացաւ այն այդին գընել։ բայց Նարովթը սիրելով իւր հայրենական ժառանգութիւնը, ըստ կամեցաւ նորան թողուլ ձեռքիցը։ Այս բանը այնքան անհաճոյ թուեցաւ թագաւորին որ ոչ ուտելու և ոչ ըստ պելու սիրու ուներ։ Բայց անըզգամ Յեղաբէլը հընար գըտաւ։ նա հրամացեց որ Նարովթի վերայ սուտ յանցանը դընեն, մահապարտ շնեն նորան և քարիծեն։ Ազա լուր բերեց թագաւորին՝ թէ ահա ոչինչ արգելք չը կոյ։ Նարովթի այդին իւրացուցանելու համար, ըստ որում այդու տէրը մեռած է։ Բայց սակայն՝ եկաւ հասաւ պատուհասը այն արբացական ամուսինների գըլխին որ այդքան անպատկառ էին Ազտուծոյ պատուիրանին։ Աքատրը մեռաւ այն պատերազմումը որ Իսրայէլացիք ունեին Ազորոց հետ, և նոյն տեղումը՝ ուր Նարովթը քարկոծվել էր, եկան շըները և՝ ինչպէս Եղիան մարգարէացել էր՝ լիզումէին Աքաարի արիւնաթաթաւ դին՝ որ սայլի վերայ դըրած բերեցին։ Բայց և անիրաւ Յեղաբէլը հընձեց իւր ցանածը։ Յէու՝ թագաւոր նըռտեց յետ Ոքողիսյի և Յովրամի որ Աքաարի որդիքն էին, և ներս մըսանելով Իսրայէլի մէջ՝ հրամացեց պատուհանից վայր ձըգել Յեղաբէլ կինը որ ոյնպէս ունակոխ եղաւ քազմութեան մէջ՝ որ ոչինչ չը մընաց բաց ի նորա գագաթից, ստերից և ձեռերից որ նոյնպէս շըների կերակուր եղան։

Յառականութեան մասն 2-1

Այս թագաւորը հրամացեց այլել Բահաղու արձանները և կործանել նորա բագինը (կըուբատունքը), բայց պահեց ոսկուց շնած որթերի Երկրպագութիւնը։ Կորա ժամանակներումը դեռ ևս կենդանի էր Եղիա մարգարէն և նորա աշակերտ և բարեկամ Եղիսէն։ Եղիան հարկադըրված էր Յեղաբէլ թագուհու բարկութենից անապատ փախչել, և Ազտուած պաշտպանեց նորան այն տեղ և հրամացեց նորան որ Յէուն՝ թագաւոր օճանէ Իսրայէլի վերայ, և Եղիսէն՝ մարգարէ փոխանակ իւր։ Կա կատարեց Ազտուծոյ հրամանը և Երախտաւոր գըտանվեցաւ դէպ ի Ե-

զիսէն որ այս պատճառաւ մըտերիմ սըրատվ սիրումնը և մեծարումնը իւր ուսուցիչը, այնպէս որ շատ ցաւելի էր նորան մուածել, թէ մի օր բաժանվելու է նորանից: Եղիսան իմանալով թէ հասել է իւր վախճանը, գընաց Եղիսէի հետ դէպի Յորդանան, և գետից անցանելու ժամանակը՝ ասումը Եղիսէին. իւրնդրիր ինչ որ կը կամենացիր որ առնեմ քեզ մինչև վերացած չեմ քեզանից: Եղիսէն իւրնդրեց. «Թաղլ. քո հոգին կըրկնապատիկ իջանէ իմ վերաց: Մինչև Եղիսան հասկացընումը Եղիսէին թէ ինչպէս դըժուար էր նորա խընդիրը, որ այնու ամենացնիւ կատարվելու է, և թէ միայն Եղիսէն տեսանէր Եղիսայի ամբառնալը, ահա երեւցան հրեղին կառը և երիվարներ որ օդը շարժելով բարձրացուցին դէպի երկինք Եղիսէի սիրելի ուսուցիչը: Յիրաւի՝ Եղիսայի հոգին իջել էր Եղիսէի վերաց. նա շասա հըրաշքներ դործեց, բորոտութենից բըժքնեց Ասորոց զօրավար Կեեմանը՝ եօթն անդամ լրւանալով նորան, և հրաժարվեցաւ այն պարզեներիցը որ առաջարկումը նորան Կեեմանը, և այս կերպով ըստացաւ սիրովներ կենդանի Աստուծուն: Եղիսէի ազահ ծառան որի անունը Գեեզի էր՝ մնածելով թէ իւր տէրը ոչինչ վարձ չառաւ իւր բըժքիկագործութեան համար, և կամենալով ինքը մի լան շահիվլ՝ զլնաց այն Ասորի զօրավարի քամակիցը և իւր տէրը անունով խընդրեց նորանից մի տաղանտ արծաթի և երկու փառաւոր հանդերձ, որպէս թէ մարգարէի նոր եկած աշակերտների համար: Ասորի իշխանը տուեց ուրախութեամբ. և կըրկնապատիկ: Բայց Եղիսէն՝ իւր հոգու մէջ տեսանելով իւր ծառայի անիրաւութիւնը, պատմեց նորան՝ Կեեմանի բորոտութիւնը նորա վերաց փոխելով: Եղիսէն լընակումը յառաջ Յերիքովումը և շատ բարեգործութիւն արեց այն տեղումը. բըժքնեց վատառողջ ջըբերը որ անզաւակութեան պատճառ էին, մի այրի կընոջ՝ որի որդիքը պիտոյ է ծառայ գառնային հօր պարտատէրներին, այնքան իւղ տուեց որ այրի կինը վաճառելով այն իւղը կարող էր պարտապըճար լինել: «Կանապէս՝ Սովմընա քաղաքումը կենդանացրեց բարի և երջանիկ ամուսինների մի հատիկ որդին, և սցավիսի գործերով ըստացաւ իւր ժողովըդի մէջ եղած ուղղամիտ մարդերի շընորհակալութիւնը. թէպէտ այս պատուական մարդուն միանդամ հայհոյութիւն ևս հանդիպեց անըգդամ մանուկների բերանից, զոր օրինակ՝ Բեթէլ քաղաքումը:

Յէռուից յետոյ թագաւորեց Խարայէլի վերաց նորա որդի Յուղաբաղը տասն և եօթն տարի, և չարագործ դըտանվեցաւ Աստու-

ծոյ առաջնել: Աս երեք տարի իւր մահուց յառաջ ընտրեց իւր
թագավիր՝ իւր որդի Յովասր: Յովափաղը յաղթվեցաւ Ապորոց
ձեռքով, բայց Յովասր յաղթեց նոցաւ սորանից յետոյ

Յէրոբնչամ էրէնորդը [Դա. Թագ. հւ. 14.]

թագաւորեց Խարայէլի վերայ 41 տարի, նորոգեց տէրութեան հին
սահմանը, և թագաւորութիւնը վերըստին ծաղկազարդեալ պայ-
ծառացաւ առ ժամանակ մի: Բայց սորանից յառաջացան ամբար-
տաւանութիւն և զեղիսութիւն մեծամեծների մէջ որ ըրբաւոր-
ների հետ վարվումէին խրատութենով և անխրզմութեամբ, ոյն-
պէս որ Վատուած միւսանգամ մարգարէր վեր կացըրեց՝ այս ամ-
բարըշտութիւնը խրատելու և ժողովըրդի կուպաշտութիւնը հա-
լածելու համար: Այս մարգարէներից մինը՝ Ամավսէ էր որ այնքան
անուանի հանդ խսացաւ, մինչեւ թագաւորի խորհրդակից Ամասիան
արտաքսել տուեց նորան. միւս մարգարէն էր Յովսէ որ երկըորդ
Յերօբովամի թագաւորութեան վերջումը ապրել է և Յերօբո-
վամից յետոյ անիշխանութեան ժամանակումը, որ տեսեց 23 տա-
րի: «Ա, ջանադիր էր հեռացընել այն ապականութիւնը, ծու-
լութիւնը՝ և կուպաշտութիւնը որ՝ ժողովըրդը անիշխան մը-
նալով՝ առաւել ևս զօրացել էին նորա մէջ: Յովսէ մարգարէն
Խարայէլի հեռանալը Յելովայից պատկերացընումէ ինչպէս ան-
հաւատարմութիւն ամուսնական ընկերութեան մէջ:

Վ,յս անիշխանութեան ժամանակից յետոյ՝ Զաքարիա վեց
ամիս թագաւորեց Խարայէլի վերայ, Սելլում՝ մի ամիս միայն. Մա-
նայնմ՝ թէպէտե հարկատու էր Վարոց, թագաւորեց 10 տարի:
Փակիա իշխան էր Խարայէլի վերայ 10 տարի, բայց Փակիէ, որի
խառնագընաց վարքի վերայ բարձրածայն գանգատումէր Միքէ
մարգարէն՝ կառավարեց Խարայէլի տունը՝ 20 տարի: «Եղան յա-
ջորդ Ովսէէն ըստանեց նորան:

Ուշնէ՝ Խարայէլի Անդրէն Լոհուարը. [Դա. Թագ. հւ. 15.]

Վ,յս թագաւորի ժամանակումը Ապմանասար՝ Ապրեստանի
իշխանը տիրապետեց Խարայէլի աշխարհին: Փակիէի մահուց յե-
տոյ 8 տարի երկար ներքին խոռվութիւնը դըղըրդումէին վասա-
բաղդ Խարայէլի թագաւորութիւնը: Աերջապէս Ովսէէ՝ ինչպէս
Վարոց հըսպատակ՝ թագաւորական աթոռ նըստեց և պահպանեց
նորան 9 տարի: բայց յետոյ կատարվեցաւ Խարայէլի վերայ ինչ
որ Վատուած Աքիա մարգարէի բերանովը յառաջուց ասել էր

Յերոբովամին, թէ՝ Որովհետեւ դու չարագործ գլուխնվեցար աւելի քան թէ քո նախնիքը, և շնորհով քեզ օտարոտի աստուածներ և կուռքեր՝ բարկացուցիր ինձ, ապա ձախորդութիւններ կը բերեմ ևս Յերոբովամի տան վերայ, կը սաստակեմ նորա աղջառոհմը, վեր կը կացուցանեմ այնտիսի թագաւոր Խարայէլի վերայ, որ կործանէ Յերոբովամի տունը, քար ու քանդ առնէ Խարայէլը, դուրս տանէ իւր հայրենի բարելից աշխարհիցը և գետի սյն կողմը ցան և ցիր առնէ նորան, բատ որում մեղանչեց Յերոբովամը և մոլորեցրեր Խարայէլը։ Ասդմանասարը յաղթեց Խարայէլ տասը ցեղին, և իւր թագաւորութենից ժողովուրդ ուղարկեց տիրապետեալ գաւառները։ Այս տեղափոխեալ Ազորիքը խառնելով իւրեանց կրօնը հրէականի հետ՝ յառաջացաւ Սամարական կրօնը՝ որի հետեղը շնորհին յետոյ մի սարի վերայ տաճար և շատ ատելի եղան Հըրէաների ազբումը։ Ահա այսպէս՝ իբր հազար տարի անցած՝ Հըրէից դուրս գալուց յետոյ Եզիդի գոգիպոսիցը, Քանան միւսանդամ ընկաւ հեթանոս թագաւորների ձեռք։

Վայ բոլոր բաները պատմումէ Հին կոտակարանը Թագաւորութեան չորս գլուխերի մէջ։

1. Յերոբովամը իւր շահախընդրութեան պատճառով իւր հապատակներին առնելիք տուեց գէու ի կուռքաշուութիւնը։
2. Ամբան չէ որ գէու ի մարդ մէրը այնպէս զօրսաւոր լինի որ կարողանայ մուզրեցուցանել մեղ գէու ի չարը։ (Աքասար)
3. Ով որ ականջ դընել ըլ գիտէ, ովտոյ է փորձով ըզքայ տայտէս հանգ գիտեց և Աքասար թագաւորին։
4. Անչափ փոքրաչուութեան նըշան էր՝ հաց ու զըրից հրաժարվել՝ որովհ հետեւ մեր մի յոյը ունայնացել էր. նցիւկէո ցածամըստութեան ապացոց էր՝ մեր երջանկութիւնը մի ընչեն բանի մէջ որոնել։
5. Մի՛ ցանկանար այն բանին՝ որ գու չունիւ մի՛ ձըդիր քո աչքը օստարի կոցքի վերայ. աղաչութիւնը և անշափաւորութիւնը հեշտութիւնով խոտորմեցուցանումէ գէու ի յանդաւորութիւն։
6. Հայրէնի ժառանգութիւնը պատվումէ բարի մարդը։
7. Արիւնէ զլութիւնը և մարդասորմանութիւնը որ արած էին ձեռով հնամարդու՝ որին բնութիւնը տուել է աւելի հեղ և մեզմ սիրա՞ կը ընկապատախի վըրդովիցուցիչ և դարձելի էին։
8. Զարարոցութեան պատիճը երկար յետ չի մընայ. նախախնամութիւնը շատ անդամ պատժումէ այն աեղ, ինչ տեղ մեք մեղանչել լնիք։
9. Լաւ բանը՝ կիսով չափ արած՝ բաւական չէ և արժանի է միայն կէազմականութեան։ (Յէու)

10. Եթէ մերայինների համար դըժուար էր անջատվել մեզանից, այդ ցուցանուամէր միշտ, որ նոքա լաւութիւն են ըստայել մեզանից: (Եղիս)
11. Բարի, ըղբացող մարդը որոնումէ միշտ՝ իւրայինների համար թեթևացընել հրաժարման ցաւը: (Եղիս)
12. Մի կեանիք և վարք՝ լի օրչուութենու և սիրով թողումն նոյնովէս օրչուութեամբ և սիրով՝ յիշատակ: (Եղիսէ)
14. Մարգարէնների ջանքը կատապաշտութիւնը ջննիելու համար, անալըտուղ դըտանվեցան: Այժմեան ուսուցիչների փոքրէրը աւելի լաւ էին այդ մասին:
15. Դըժուար էր հարցատառթենի վըտանդներիցը աղասավել: (Յերոբովլար՝ բ)
16. Մեծատունները և հարցատականքը ոչ միշտ կամաւորապէս լըսումն ճշշմարտութիւնը: (Ամստիս)
17. Արգարտութիւնը բարձրացուցանում; մի ժողովաւրդ, բայց յանցաւորութիւնը կործանիչ է մարգարութեան համար: (Ովսէէ)

Ուորդական և նորա յաշուրքն Յունակուկ Թառնառունիւնի անոնք և վեհույ:

Ուորդակամը ամենասպարսաւելի սառնասըրտութեամբ տարաւայն խայտառակրութեանը, որ իւր հպատակների աւելի մեծ մասը դուրս էր եկած նորա իշխանութեան տակից: Ըսկըզբումը թէպէտկանը ունելը նա պատերազմ բանալ բնդդէմ ապրատամբեալ ցեղերին; բայց զուր եղաւ այս առաջարկութիւնը: Աստուած Սամեամարգարէի բերանովը ասաց նորան որ հրաժարվե այդ բանիցը, որ մի դուցէ թէ անհնազանդութենով աւելի ևս մեղանչէ Աստուծուն: Ուորդակամը լըսող գրտանվեցաւ: Երուսաղէմը մընաց նորա փոքրիկ թագաւորութեան մայրաքաղաքը. և նա կառավարեց Յուդայի տունը 17 տարի: Անյաջող պատերազմ ունենալով Եգիպտասի թագաւոր Սաւսակիմի հետ՝ որ եկաւ Երուսաղէմի վերայ և յափըշտակեց Աստուծոյ տան բոլոր գանձերը, այլև թագաւորի տան ոսկի և արծաթը, բացվեցան Ուորդակամի աչքերը և հասկացաւ իւր սըրտի անողորմութիւնը: ‘Նորանից յետոյ թագաւոր նըստեցին կէս մի լաւ, և կէս մի վատ իշխաններ, բայց Յուդայի թագաւորութիւնը երևելի գրտանվեցաւ՝ առաւել հաստատ մընալով դէպ ի կենդանի Աստուածը հաւատի վերայ, և առաւել լաւ կառավարելով քան թէ Իսրայէլի թագաւորքը:

Աստ.

Այս թագաւորը աթոռ նըստեց Ուորդակամի որդի Արիայից յետոյ՝ որ կառավարել էր Յուդայի տունը երեք տարի: Ասա թագաւորեց 41 տարի և քանի մի դիպուածներում պակառահաւատ

գըտանվեցաւ դէպի ի Աստուած, բատ որում նա մարդու մօտ աւելի օգնութիւն որոնեց՝ քան թէ Աստուածոյ մօտ: Բարի խրատը Անանիա մարդարէի՝ որ Աստուած ուղարկել էր նորան, վարձատրեց նա բանտարկութենով: Բայց այս Ասա թագաւոր իւր կառավարութեան ըսկըզբումը ամենայն կերպով հոգաբարձու եղաւ կռապաշտութիւնը միւսանդամ վերացընելու Յուգոցի տընիցը: Նա կործանեց իւր մօր կռապաշտական անտառները, և փոխարէն այն օգնութեանը՝ որ Աստուած հասուցել էր նորան Արաբացոց հետ ունեցած պատերազմումը, ուխտ դըրեց իւր սըրտի մէջ՝ որ յետոյ իւր ժողովըրդի հետ միասին Աստուած խնդրէ միշտ: Կորա որդի

Յուղութեանը

Երկիւղած իշխան էր որ թագաւորութիւնը միւսանդամ հասցըրեց իւր առաջին ծաղկեալ վիճակին և կարողութեանը: Կա ամեն տեղ դատաւորներ կարգեց և պատուիրեց նոցա արդարութիւն և գըթութիւն: Բայց առաւելապէս աշխատաւոր գըտանվեցաւ՝ կռապաշտութիւնը խափանելու համար, ամենայն կողմ ուղարկեց ուսուցիչներ որ պարտական էին քարոզել ժողովըրդի մէջ Աստուածոյ համարեամ թէ բոլորովին մոռացած՝ պատուիրանքները: Այս պատճառաւ շատ պատուելի էր ոչ թէ միայն իւր հպատակների աչքին, այլև Տէր Աստուածը նորա աշխարհին խաղաղութիւն պարգևեց դուրսիցը: բատ որում ոչ ովէ էր համարձակվում նորա հետ կըուի բանալ: Կոյն իսկ Փըզըշտացիրը և Արաբացիրը մեծարանը ցոյց տուեցին նորան: Իւր երկիւղածութիւնը և իւր հաւատը դէպի ի Աստուած գործով հաստատեց նա պատերազմի մէջ, որ հարկադրված էր յանձն առնուլ ընդդէմ Մովարացոց և Ամինացոց որ ներս էին մրտել նորա աշխարհը: Որպէս պատերազմող իւր սեպհաման իրաւունքի համար՝ դուրս գնալուց յառաջ ազօթեց դէպի ի Աստուած, սիրտ տուեց իւր զօրքին՝ որ հաւատ ունենաց դէպի ի նա միայն, և յաղթող հանդիսացաւ: Յովասիսատի յաջորդքը շատ ամն ըման գըտանվեցան նորան: Յովլրամի, Որովիայի, Գողովիայի, Յովարի և Ամասիայի մասին ոչինչ գովասանական բան չը կայ ասելու. սորանցից քանի միները թագաւորեցին երկար միջոց, բայց արինհեղութեամբ աթոռ նըստեցին և աթոռից կործանվեցան: Առցա օրինակներովը օրըստօրէ զօրացաւ կռապաշտութիւնը. սոքա ըսպանեցին իւրեանց եղաքրը (զոր օրինակ՝ Յովլրամ), զոհեցին իւրեանց որդիքը (որպէս Որովիա և Մանասէ), և անմեղ արին շատ թափեցին:

Աղջուկ.

Ողիսաս որ ասվումէ և Աղարիսա, շատ բանով լաւ գըտանվեցաւ քան թէ իւր նախնիքը: Կորա քըսան և հինգ տարի թագաւորութիւնը փօքր ի շատէ միւսանգամ բարեկարգեց նեղացած աշխարհի վիճակը, բայ որում երկրագործութիւնը և խանարածութիւնը յառաջ տարաւ նա, ամուր բերդեր շինեց, այլազդիների (Արարացոց և Մինեցոց) հետ յաջողակ պատերազմեր տուեց: Ողիսաը իւր որդին թագակից բնարեց. բայց իւր թագաւորութեան յետին ժամանակիներումը մեծամուլթ և ամերարտաւանելով՝ պատժը ցաւ բորսութեան ախտովը, որ և հարկադրեց նորան իւր կեանքը վերջացընել անմիմիթար միայնութեան մէջ: Կորա որդի Յովաթամբը բարի իշխան էր, որի թագաւորութիւնը օրհնեց Աստուած:

Եղիշելում.

Յուգայի թագաւորութիւնը պէտք է բարձրանար իւր անարդութեան վիճակիցը. բարի Յովաթամբց յետոյ աթոռ նըստեց պատուական Եղեկիասը: Կա հրամացեց պըզծեալ տամարը սըրբել, պատրաստել և միւսանգամ նուիրել ձըշմարիս Վստուծուն, հրամացեց որ քահանացը մաքրեն իւրեանց անձը այն կրապաշտութեան դարշութենիցը որին մինչեւ այն ժամանակը ծառայել էին: Ժողովուրդը ուրախացաւ այս բանի վերայ. կրապաշտութեան խաւարը պիտոյ է փարատվեր միանգանյան. պասերի տօն կատարեցին միւսանգամ: Եղեկիայի թագաւորութեան միջոցումը՝ Ասորեստանի արքոյ Սենեքերիմը կամեցաւ տիրել Յուգայի աշխարհին, ինչպէս նորա հայր Ասպանասարը հնազանդեցուցել էր Խրացէլը իւր ձեռքի տակ: Եղեկիասը ազաշանկով և ընծաներով որոնեց յորդորել նորան դէպ ի հաշութիւն. բայց Սենեքերիմը ընդունելով բնձայրը, այդու ամենայնիւ շարունակեց պատերազմը և հայկական թուղթ ուղարկեց Հրէից ազգին, որ նոքա իւրեանց յայսը ըս դընեն Աստուծոյ վերայ, բայ որում Եղեկիայի Աստուածը չէ կարող փըրկել նորա ժողովուրդը իմ ձեռքից: Ազօթք արեց Եղեկիաս թագաւորը, և Աստուած օգնեց նորան: Մի գիշերի մէջ՝ քաղաքը պաշարող Ասորոց կողմից մեռան 185,000 հոգի, այնպէս որ Սենեքերիմը բատիպվեցաւ խալին թողուլ քաղաքը և հեռանալ: Այս ժամանակումը ապրել է և Եսայիսա մարդարէն, որ շատ անգամ միմիթարումէր թագաւորի սիրտը, և որի ծանրակըշու գըրուածքը մընացած են մինչեւ այսօր: Մի ծանր հիւանդութենով մահուն մօտեցած լինելով Եղե-

կիսար, ձայն տուեց Եսայիսա մարգարէն. «Կարգի՛ դիր տունը՝
պատճառ որ պիտոյ է մեռանիս»: Բայց թագաւորը ցանկանալով
դեռ ևս աւելի բարութիւն գործել, աղաջեց Աստուած՝ որ մինչեւ
վաղիւը կենդանի մընար: Աստուած կատարեց նորա խընդիրը և
թողեց որ ապրի դարձեալ 15 տարի: «Նորա՝ կռապաշտութենով
ամեննեին մալորեալ Մանասէ որդին գերի ընկաւ Ազորոց ձեռքը.
բայց որովհետեւ զբջաց և ապաշխարեց, ազատութիւն գլուա:
Սորա որդի Ամոնը լսու չէր քան թէ հայրը, բայց վաս ծնողի որդի

Յանձնութեան

երեսուն և մի տարի թագաւորելով Յուղայի վերայ՝ բարեգոր-
ծութիւն շատ արեց և ջանադիր գլուանվեցաւ կռապաշտութիւնը
բոլորովին արտաքսել իւր աշխարհիցը: Սորա ժամանակումը Քեշ-
կիսա քահանան վերըստին գլուաւ մովսիսական օրինագիրը որ
Յովսիսա թագաւորը հրամացեց նոր ի նորոյ հրատարակել ժողո-
վըրդի մէջ և միւսանգամ կատարել պասերի տօն: Յովսիսաը մե-
ռաւ վերաւորված լինելով այն պատէրազմումը որ ունէր Եգիպ-
տացոց հետ. նորա հալատակը արտասուք թափեցին իւրեանց
բարեգործ թագաւորի գերեզմանի վերայ:

Սորա փոխանորդը անհամոյ եղան Աստուծուն, որ թէպէտ
և ըզգուշացընումէր նորանց իւր մարգարէների բերանովը, բայց
նորա և ժողովուրդը անփոյթ լինելով՝ օրէ որ աւելի ատելի գլ-
տանվեցան Աստուծոյ աքին: Յովսիսա երեք ամիս թագաւորած
լինելով Յուղայի վերայ, եկաւ «Եքաւով փարաւոնը և զըրկեց
նորան իշխանութենից և ապա տարաւ Եգիպտոս: Սորա եղբայր
Եղիակիմը (որ ասվումէ և Յովսիկիմ)՝ «Եքաւովի հրամանով աթոռ
նըստեց, և տամն և մի տարի թագաւորելուց յետոյ՝ եկաւ «Կա-
րուղողոնսորը և նորան գերի տարաւ բարելոն:

Անձնութեան

Վայ թագաւորը բարեկացոց իշխանութեան ներքոյ տասն և
մի տարի թագաւորելով Երուսաղէմումը, վերջապէս ապրատամ-
բէց «Եաբուգողոնսորից՝ ըլ լըսելով Երեմիա մարգարէի ըզգու-
շացուցիչ Խըրատներին: «Կարուղողոնսորը յարձակվեցաւ քա-
ղաքի վերայ, կործանեց նորան, աւերեց 470 տարի յառաջ շե-
նած Սողոմոնեան տաճարը. հրամացեց թագաւորի զաւակները նո-
րա առաջնը կոտորել, կուրացըրեց Մեդեկիսախ աչքերը և նորան՝
աշխարհի մեծամեծների հետ միասին՝ տանել տուեց բարելոն:

Ահա թէ որպիսի տըխուր կերպով Աստուծոյ ըսպառնալիքը կատարվեցան այս անբազդ թագաւորի վերայ՝ երբ որ Յուղայի թագաւորութիւնը 154 տարի աւելի երկար տևել էր քան թէ Խարսցէլինը։ Այն մարդարէքը՝ որ Աստուծած ժամանակ առ ժամանակ վեր էր կացուցանում, ոչ թէ միայն ջանադիր էին ժողովուբդը իւր հաւատի վերայ հաստատ պահէլու, ոյլև քարոզումէին յառաջուց՝ թէ գալոց օրերումը պիտոյ է լինի մի ընդհանուր ուղղագործութիւն կրօնի՝ մի մեծ Փըլկչի և մարդկութեան բարերարի ձեռքով։ և այսպէս ժողովըդի մէջ եղած բարի անձինքը յստ ունէին որ գալոց է մի աւելի բազգաւոր ժամանակ։

1. Աստղամիտ ցանկութեններին կատարումն առու՝ ննջքան կարող ես գու։
2. Հետեւ աւելի՝ ծեր քան թէ պատանի բարեկամներիդ խորհրդին։
3. Օդնութեն խընդրիր նորանից՝ որ կարող է ըստուգատէն օդնել։ (Ազու)
4. Երկիւղածութիւնը և արդարաւութիւնը կը պահպանեն թագաւորը և կը բարերազգէն նորա ժողովուրդը։ Բիրտ և կոպիտ մարդը ես յարդութիւն է ցուցանում առաքնութեանը։ (Յովուափաս)
5. Ասպեինի վարքը՝ որ ըստայել ես, յետ մի գընիր միւսանդամ։ անհաւատարմութիւնը կը պատէ Աստուծ։ (Ողջաս)
6. Եզկիս թագաւորի աւելի երկար ապրելու ցանկութեան պատճառը աղնիւ էր։ նա կամենումէր աւելի երկար բարեգործ գլանովիլ, և վասն այս պատճառի Աստուծ կասարեց նորա խընդիրը։
7. Աստուծ դիակ՝ որ շատ մարդ կարող է միայն նեղութեններով ուղղվել։ (Մանասէ)
8. Օտարի ձախորդութիւնը թողը ըզդուշացուցիչ օրինակ լինի քեզ։ իսեւ լըքացեր առցիշների փորձերովը, և ազա հարկաւոր չէր քո յասաւկ փորձնութիւնը իմաստնանալ, ինչպէս ձրէից աղջը որ իւրեանց տչքով աեսած էին թէ ապրուտամբութիւնը ճըշմարիս Աստուծուց կործանել էր Խարսցէլի տանը։

ՅԱՐԵԼԾՆԻ ԴԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԵԾ

Բարելծնի դերութենից ըսկըսեալ մինչև Քրիստոսի ծընունդը.

1.

Ճշհէյ Գլուխի տնօքէիլ Բառիւլի հէնդուլի մը և նորանից յեղոյ.

Խնչպէս պատօհածումէ շատ անգամ, որ մարդը մի բան որ
մի ժամանակում կարող էր կատարել, բայց կամք չունի, և միւս
ժամանակում կամք ունէր կատարելու, բայց չէ կարող. այսպէս
ևս հանդիպեց Հրէից ազգին Բարելծնի դերութեան մէջ: Ճա-
ռայական վիճակի չարչարանքը, իւրեանց հայրենական աշխարհից
օտարանալը փափկացրեց նոցա առաջն խրատարբառութիւնը. նո-
քա համկացան իւրեանց անմըսութիւնը: Այս, Հրէից ազգը հե-
թանոս ժողովըրդի մէջ բնակելով՝ ամեննեին հեռի մընաց կուպաշ-
տութենից. իւրեանց կրօնը վերըստին սիրելի էր նոցա աչքին. նո-
քա կարօտացան այն երկրին ուր Աբրահամը, Խսահակը և Յակոբը
պաշտել էին Աստուած, թէպէտնոցա դըրութիւնը այնպէս ծանր
չէր, ինչպէս պիտոյ էր մըստել: Հրէից շատերը պաշտօնեաց
կարգվեցան Բարելացոց տէրութեան մէջ. ըստ պակասեցան և մար-
գարէ մարդեր որոնց ասածներին աւելի հաւատ էին ընծայում այ-
ժըմ քան թէ յառաջ, բայց որում տեսանութիւն՝ թէ առաջն
մարգարէների գուշակութիւնը կատարվեցան: Այսպէս՝ Հրէից
ազգը միւսանգամ հածոյացաւ Աստուծուն՝ որ տեսանելով նոցա
ուղղութիւնը՝ թոյլ տուեց որ նոքա եօթանասնամեսյ գերութենից
յետոյ՝ ինչպէս Երեմիաս մարգարէն յառաջուց ասած էր՝ վերա-
դառնան իւրեանց հայրենիքը: Բարելացոց թագաւորութեանը տի-
րեցին Մարք, ասպա Պարսիկը, որոնց թագաւոր Կիւրոսը ոչ թէ
միայն ազատակամ թոյլ տուեց Հրէից ազգին յետ գընալ Քա-
նան, այլև օգնական եղաւ տաճարի միւսանգամ շինութեան մա-
սին և յետ տուեց տաճարի սուրբ ըսպասը (ոսկի և արծաթի ա-
նօթները) որ տարել էր իւր հետ Կաբուգոդոնոսորը: Բայց Հրէ-
սայը սովորած էին նայել Քաղղէացոց աշխարհին՝ որպէս թէ իւր-
եանց հայրենիքն էր, պատճառ որ այն տեղ ապրուստ և երջան-
կութիւն էին գըտանում: Վասն այս պատճառի՝ 50,000 հոգի մի-
այն օդուտ քաղղէցին Կիւրոսի թոյլտուութենիցը, և Զօրաբարե-

լի և Յեսուի առաջնորդութեամբ Եկան խրեանց աշխարհը, շինեցին այն տեղ սեղաններ և ընորհակալութիւն տուեցին Աստուծուն: Խակոյն առաջն տարումը ըսկըսէցին Յառաքաջոնքը (ըստ ուրում գերութենից յետ դարձած Հրէայցը ըստ մեծի մասին պատկանումէին Յուղայի ցեղին) շնել տաճարը, բայց խափանվեցաւ դրօքը, որովհետև Սամարացիք՝ որ բնակումէին Հրէաստանի շըրջակայրում՝ չարախոսած էին Կիւրոսի յաջորդ Արտաշէսի մօտ, բայց Դարեհը թագաւորելով Պարսկաստանի վերայ՝ արքունի դանձատընից ևս օգնութիւն տուեց Յուղայեան Հրէիցը՝ որ այնուհետեւ շարունակեցին և աւարտեցին տաճարի շնութիւնը:

Բարելոնի գերութենից վերադարձած Յուղայեանց քամակիցը Եկան շուտով և միւսները՝ Անգէասի և Եզրի առաջնորդելով: Օքէպէտ աշխարհի վերայ կարգվեցան բուն Հրէայ կուսականներ, բայց ծայրագոյն իշխանութիւնը՝ ըսկըսեալ այս ժամանակից՝ ձեռքից ձեռք անցաւ: Պարսից թագաւորութեանը տիրեցին Յոյնք, և այսպէս Հրէայը Յունաց իշխանութեան տակ ընկան: Աղէքսանդրի մեծի մահուց յետոյ մասնատվեցաւ նորա թագաւորութիւնը, և այնուհետև Հրէայը հարկադրվեցան խոնարհել Եղիպտոսին: Այս տէրութեան շատ գիտուն թագաւորը՝ Պտոլէմայոս Փիլադելֆոս անունով՝ հրամացեց Հրէական սուրբ գլուխածը թագավորմաննել յունարէն: Երբ Հրէայը յետոյ Ասորաց հպատակ դարձան, Անտիոքոս Եպիփանէս թագաւորի կողմից միւսանգամ հալածանքի մէջ ընկան, ըստ որում նա կամենումէր յափշտակել նոցա քաղաքական և կրօնական աղատութիւնը. բայց այն ժամանակումը կըրկին վեր կացաւ մի քաջական տուն, այսինքն Մակարայցիք՝ Մատաթիա բարեպաշտ քահանայի առաջնորդելով: Մոքա կործաննեցին հեթանոսական սեղանները. Յուղա մակարայց յի՛ Մատաթիայի որդին տիրապետեց Երուսաղէմին և վերըստին նորոգեց մարտը աստուածալաշտութիւնը: Անտիոքոսը զող զողաց խր անողորմ չարչարանքների վերայ որ հասուցել էր Հրէից ազգին, որ այնուհետև մի քանի ժամանակ ունէին իւրեանց յատուկ թագաւորները Մակարայց ցոյ ցեղից, զոր օրինակ՝ Ամիմոն, Յովհաննէս Հիրկանոս, Արիատոբոլոս: Բայց ազգի մէջ խոսվութիւնը ծագելով վերջացաւ և ժողովրդի յոյսը խր ինքնէշխան վիճակի մասին Այս հանգամանքների մէջ՝ շուտով յաջողեց չոռմայեցոյ տէրութեանը հնազանդեցուցանել իւր ձեռքի տակ Պալեստինայի աշխարհը, թէպէտ այն համարձակութիւն էր տուած Հրէից ազգին ունենալ իւր կրօնապաշտութիւնը, իւր

քահանայրը և իշխանքը։ Օգոստոս Հռոմայեցաց կայսրը թագաւոր նըստացըրեց մի բուն հրեայ՝ Հերովդէս անունով, որ խոհեմբայց խիստ մարդ էր, որ և կամնալով իւր անձը սիրելի առնել Հրեաց աչքում՝ մեծացըրեց և գեղեցիկացըրեց տաճարը։ Սորանից յետոյ աթոռ նըստեց Արքելասոր, և ապա թագաւորեց Գալիլայի աշխարհի մէջ Հերովդէս Անտիխատրոսուր։ Այս մի ջոցումը՝ Պալեստինայի միւս աշխարհները կառավարումէին տեղակալներ որ շատ անգամ նըստումէին Երոսաղէմի մէջ. այս տեղ էր նոյնալէս վերին ծերակցուր՝ ինչպէս երկրորդական դատարան Հրեաց։ Այս Հրեաստանի վիճակը՝ երբ որ ծընաւ Մեսիան։

1. Շատ անգամ կրուսանելով բարին՝ հանաչումնեք նորա յարգը։
2. Մարդու հետութենով սովորամէ օտար վարքերի և ծէսերի, և հեշտաւութենով ընտանանումէ ուրիշների հետ։
3. Օտար մարդիկ շատ անգամ աւելի գործակից են մեր բազմաւորութեանը քան թէ մեր բարեկամքը, ծանօթքը և ազգականքը։ (Վերսո)
4. Ազտուած ոչ միշտ անառ է աւենում մարդուն. թէպէս զարկումէ նա, բայց և բըժըլուումէ դարձեալ։ (Հրեաց վերադարձը)
5. Մարդուն առաջն հոգացուութիւնը պէտք է լինի յաւիտենականի և և աստուածեղինի համար։ Հրեայը յետ դալով իւրեանց հայրենիքը՝ շենցին իսկցին մի նոր տաճար։
6. Երբ նեղամիւնը և վրտանելը շատ զօրացել է, այն ժամանակը մօտ է մեզ. և Ազտուած։ (Մասաթիան)
7. Մարդիկ ըստ մեծի մասին ինքեանը են իւրեանց ամենամեծ թըշնամիքը. (Ներքին խուռանութիւնը խօսիանեց Մակարայեցոց թագաւորութիւնը)։
8. Եթէ մեր բարեկործութիւնը պիտոյ է ունենար արժանաւորութիւն, ապա պիտոյ է որ լինելը նաև բարին սիրելով և առանց երկրորդական (մի սորիշ) նորասակի։

Զ.

Դաստիարակութեան. [Գ. Դաստիարակութեան. 6.]

Այն ձիգ ու երկար հինգ հարիւր տարու մի ջոցումը, որ Յուղայի և Խարայէլի թագաւորութեան կործանմանից յետոյ անցել էր մինչև Հերովդէս վերջին թագաւորը, գլուխնվել են զանազան մարդեր որոնց՝ յիշատակի արժանի պատմութիւնը պահել է իւր մէջ Սուրբ գիրքը, Սոցա մասին կամք ունէինը փոքր իշտու լըսել։ Այս մարդերից առաջնը է Դաստիարակութեան մասունուր թագաւորը ընտրեց նորան և մի քանի այլ իմաստուն և մոտցի մանուկներ, որ Յուղայի թագաւորի ցեղեց էին, որ պիտոյ է

թագաւորի դըրանը ծառայէին և ուսանէին Քաղզէացոց գիր և
լեզու։ Այն տեսակ տեսակ ազնիւ կերակուրները որ վայելումէին
արբայական սեղանի վերսց՝ արգելած էին հրէական օրէնքով.
վասն այս սպատճառի խընդրեց Դանիէլը որ տան իւրեան ընդեղէն
և ջուր։ Կա այնպէս շուտով յառաջացաւ իւր ուսման մէջ՝ որ
կարծ միջոցում մեծ պատուի հասաւ։ Վերըստին գըտանելով
այն երազը որ մոռացել էր թագաւորը, և պատմելով նորա մեկ-
նութիւնը՝ ինչպէս Աստուած աղղել էր Դանիէլի սրբոի մէջ,
փըրկեց նա ոչ թէ իւր կեանքը միայն, այլև իւր միւս երեք բա-
րեկամներինը։ Թագաւորը զարմանալով Դանիէլի Աստուածոյ կա-
րողութեան վերսց և ընդունելով նորան որպէս աստուածների
աստուած, իշխանների իշխան և թագաւորների թագաւոր, շատ
մեծացըրեց Դանիէլի աստիճանը և կարգեց նորան գըլխաւոր նա-
խարար Բարելացոց աշխարհի վերսց։

Կանապէս մեծարեալ էր Դանիէլը Նարուդող մնոսորի թոռն
Բէլլասարի ժամանակին. սորան մարգարէացաւ Դանիէլը թէ նորա
թագաւորութիւնը շուտով կանկանի Մարաց և Պարսից իշխա-
նութեան ներքոյ։ Այնքան ևս պատուելի և սիրելի գըտանվեցաւ
Դանիէլը Պարսից թագաւոր Դարեհի մօտ որ նորան կարգեց տէ-
րութեան կառավարիչ։ Բայց Դանիէլի բաղզաւորութիւնը մե-
ծամեծների մէջ նախանձ յառաջացըրեց, և սորա աշխատումէին
կործանել նորան. բայց որովհետեւ գիտէին թէ Դանիէլը իւր բա-
րեպաշտութենից հրաժարվող մարդ չէ, այս սպատճառով յորդո-
րեցին թագաւորը մի օրէնք զընել, որ 50 օրի միջոցում ոչ ով
չը համարձակվի ոչ Աստուծուց և ոչ մարդուց մի բան խընդրել,
բայց միայն թագաւորիցը. և ով որ այս հրամանից դուրս կը դայ,
նա պէտք է ձրգվի առիւծի փոսի մէջ։ Դանիէլը ազօթեց առ
Աստուած, և սորա համար ձրգեցին նորան վայրենի գաղանների
առաջնը։ Այս բանը ցաւելի էր Դարեհին որ և ահ ու դողի մէջ
լինելով իւր ազնիւ ծառայի կեանքի մասին ոչ հաց կերաւ և ոչ
քուն մըսաւ. առաւօտը լուսացած՝ բշուապեց զէպ ի առիւծի
փոսը. և ինչպէս ուրախացաւ թագաւորը՝ երբ Դանիէլը ողջ և
առողջ ձայն արձակեց. ով իմ թագաւոր, Աստուած քեզ եր-
կար կենդանութիւն պարգևել։ Դանիէլը ազատվելով այս վըտան-
գից՝ օրէ օր աւելի բարձրը աստիճանի հասաւ, և Դարեհը հրա-
մայեց որ ամենայն մարդ պատուէ Դանիէլի աստուածը։ Ահա
այսպէս Հրէից ազգը սովորեց օրբատօրէ առաւել ճանաչել իւր
Աստուածոյ կարողութիւնը և ողորմութիւնը։

1. Թայլ տուած բաներից զըրկել իւր անձը, և ինչքան կարելի էր տա կաւագէտ լինել՝ իմաստութիւն է:
2. Ժրադըլսութիւնը և քանքարաւորութիւնը չեն մընում անտես:
3. Փոքր առիթներ շատ անգամ լինումն եր բաղբաւորութեան պատճառը:
4. Գիտութենով և աջղակսութենով կարող է մարդը օգտել իւր անձին և ուրիշներին, և լինումէ անհրաժեշտէլի հարկաւոր:
5. Ավենայն բաղբաւոր մարդ թունայ, որ իւր ընկերների մէջ նախանձ կը յարուցանէ:
6. Եթէ չար մարդը կամենումէ մեղ կարծանել և չէ գլուխում մեր մէջ ոչինչ արած՝ որպանալ կարող էր մեղ լիսանել, ապա համարձակվումէ և մեր առաքինութիւնը մեր համար որորոյթ շնուր:
7. Արբարի աղօթքը մեծ ներդարձութիւն ունի ծանր գիտուածների մէջ, այս բանը շատ անգամ փորձով իմացաւ Դանիէլը:
8. Ընդդէմ մեր գերահասութեանը չունենք համարձակութիւն ոչինչ առանել և ոչինչ թոյլ տալ: (Դարեհ)
9. Մեր ծառաների երջանեկութեան և վըշափ համար ևս պարտական ենք ուրասայր գլուխովիլ: Ով է մեր ընկերը:
10. Եթէ Աստուած մեր հետ է, ով կարող է ընդդէմ մեր լինել:

5.

Երես Տուրքիւն պատոսն հերու մէջ. [Դան. 5.]

Վերայիշեալ Նարուդող ոնոսոր թագաւորը հրամացեց միանցամ շնուր մի ահազին պատկեր Բէլի անունով և հրաւիրել բոլոր մեծամեծները՝ որ գան և ներկայ գլուխովին այս պատկերի հանդիսաւոր նաւակատիքին: Երեք հրեայ մարդ Սեդրակ, Միսակ և Սրեղնագով որ իշխանաւոր անձինք լիներով տէրութեան մէջ, նոյնպէս պարտական էին այն պատկերին խոնարհել և երկրսպագութիւն տալ, յանձնն չառան այն աստուածընդդէմ բանք: Կարսուգողանոսորը լըսելով սոցա անհնաղանդութիւնը՝ ահ տուեց թէ նորանց կը ձբգէ վառած հնոցի մէջ: Եյն չըկացը հաստատ մնացին իւրեանց կամքի վերայ և այսպէս խօսեցին. այն երկնային աստուածը որ մեր պաշտումնը՝ կարող է մեղ փըրկել այդ կրակիցը. Եթէ ոչ. յարտ լինի քեզ այսրան, որ մեր քո ոսկեղէն աստուածը կամք չունիք պաշտել կամ երկիրպաղանել նորան: Ազահրամացեց զայրացած թագաւորը որ եօթ լինպատիկ աւելի սաստիկ վառեն հնոցը և ձբգէն նորանց այն տեղ: Բայց կենդանի Աստուծոյ պաշտողքը անվընաս մաս գալով բոցի մէջ՝ վառարանական երգ էին ասում իւրեանց Աստուծոյ վերայ: Երբ որ այն մարդի-

կը դուրս եկան կրակի մէջից, յայտնը վեցաւ որ հուրը ոչինչ ներգործութիւն չէ ունեցել նոցա վերայ, որովհետև ոչ նոցա գըլիսի մազը խանձատվել էր, ոչ նոցա հանդերձը այրվել էր և ոչ կրակի հոտ էր փրչում նորանցից: Այս բարանչելիքը տեսանելով Նարուգողոդնոսորը՝ խօսեց. Օքհնեալ է Սեղրակի, Միասկի և Աբեդնագովի աստուածը որ ուղարկելով իւր հըրեշտակները՝ փըրկեց իւր ծառայը, որ յուսացնել են դէպի ի նա: Ով որ այսուհետեւ կը հայհոյէ այդպիսի աստուածը, պիտոյ է որ գըլխով ու տընով կորընչ, սպատճառ որ չը կայ միւս աստուած որ կարող էր այդպիս փըրկել:

1. Աւելի բաւ էր հաւատաւոր մեռանել քան թէ ուրանալ իւր հաւատը:
2. Կան մարդիկ որ միայն հըրաշքներով կամենումն ճանաչել Աստուծոյ դոյութիւնը և օգնութիւնը: Երանե՛ նոցա որ չն տեսանում, բայց հաւատումնն:

4.

Տօբէն. Հայոց և Արէն. [Գ. Տօբէնայ.]

Այս երկիւղած տղամարդը՝ Սաղմանասարի ժամանակումը գերի գընալով Ասորեստան, ուրեմն օտար աշխարհի մէջ պանդուխտ լինելով, այնու ամենայնիւ հաստատ մընաց աստուածային բանի վերայ: Ճըշմարիտ մարդասիրութենով ամենայն տեղ օգնական էր սա, ինչ տեղ իւր եղարքը տառապահքի մէջ էին. նա ըզդեցուցանումը մերկերը, կերակըրումէր քաղցածները և թաղումէր իւր ազգի մեռեալքը, որ Աենեքերիմի հրամանով ըսպանած էին: Թագաւորը իմանալով Տօբիթի գործը և չը գտանելով ըսպանածների մարմինքը՝ կամենումէր պատժել նորան. բայց Տօբիթը փախստական եղաւ և Աենեքերիմի մեռանելուց յետոյ վերադառնով Նինուէ, ըսկըսեց նորուց օգնել կարօններին, թէպէտ միւսանգամ մօտ էր վըտանդի, և նորա բարեկամները ևս խըրատեցին նորան որ ըզդուշանայ: Այս Տօբիթը յետոյ կորուսանելով իւր տեսութիւնը՝ ասլրումէր իւր Աննա կընոջ ձեռքերի աշխատութենով, բայց նորա կինը միանգամ վերաւորվելով Տօբիթի մի խօսքից՝ երեսին զարկեց նորա թըշուառութիւնը: Այս կինը միանգամ մի ուշ էր ըստացել իրեւ աւելորդ վարձ իւր մանածի համար. Տօբիթը լսելով ու կայնը՝ հարցընումէ. ինչ տեղից բերեցիր այդ ուլը. մի՞ թէ գողացած է: Աորա վերայ այնպիս բարկացաւ կինը՝ որ Տօբիթը ցանկացաւ մեռանել, և կարծելով թէ իւր վերջը հասել է, գանչեց իւր մօտ Տօբիա որդին և տուեց

նորան պատուական խըրատներ, թէ ինչպէս պիտոյ է երկիւղած վարք ունենալ. խըրատներ, որ մինչև այսօր ևս հիսանալով կարգումնք Տօրիթի գըրքի մէջ: Հայրը յայտնեց նոյնպէս որդուն թէ իւր բարեկամ Գաբայէլին պահէ տուել տասը քանիքար արծաթ: Աւրեմն մասածիր՝ ասաց հայրը, թէ ինչպէս պէտք էր գտանել այն մարդը. բայց մի՛ հոգար որ մեր աղքատ ենք. դու կը ստանաս շատ բարութիւն, եթէ կը վախես Վատուծուց և բարեգործ կը լինիս: Երկիւղած զաւակը պատասխանեց այսպէս. Հայր, ինչ որ դու ինձ պատուիրել ես, կը կատարեմ բոլորովին: Երբ որդին կամենումէր ձանապարհ ելանել և ուղեկից էր խընդրում, գըտաւ Ուափայէլ հրեշտակը՝ առանց ձանաչելու նորան, որ և պատրաստ էր ընկերակից լինել Տօրիային: Ճերտոնի ծընողների օրհնութիւնը առած՝ ձանապարհ լնկան: Տիգրիս գետի եզերումը մի ահագին ձուկն դուրս եկաւ ջըրից՝ որ կլանէ այն պատանիքը: Տօրիան բազանեց նորան, բայց հրեշտակի հրամանովը վեր առեց նորա լեզին, սիրտը և լեարդը, ըստ որում բրժըշկական դեղ էր: Յետոյ իջևանեցին նորա Տօրիայի ազգական չուազուէի տանը. սա ունէր մի հատ աղջիկ Սառա անունով, որ՝ ինչպէս ասում Սուրբ գիրքը՝ դև կամ պլոյջ ոդի ունէր իւր մէջ, և եօթն անգամ մարդու գնացած՝ ամենէքեան մեռած էին հարսնարանումը: Թէպէտ սց Սառա աղջիկը բարի, ըզդաստ և իմաստուն անձն էր, բայց Տօրիան իմանալով նորա պակասաւորութիւնը կամք չունէր կին առնուլ նորան, երկիւղ ունենալով թէ մի՛ գուցէ և ինքը մեռանի, որ իւր ծընողների միամօր որդին էր Ուափայէլ հրեշտակը խորհուրդ տուեց Տօրիային որ դորա մասին անհօգ լինի, այլ՝ երբ որ հարսն ու վիեսան կը մոռանէին սենեակը՝ թող ծըխէ այն ձըկան սիրտը և լեարդը, որանով կը հալածվի դեր. և ապա թող լալով աղօթեն երկորեանքը դէպ ի Աստուած, և այսպէս կենդանի կը մընան և ողորմութիւն կը գտանեն: Այս բանը լըսելով Տօրիան, շատ սիրեց Սառային, և խօսեց նորան իւր համար կին, և ըստացաւ ծընողների հաւանութիւնը: Բարեպաշտ խօսեցեալքը (նշանածները) կատարելով Ուափայէլ հրեշտակի խրատը, այլև ջերմեռանդութեամբ աղօթելով դէպ ի Աստուած՝ անփորձ մնացին: Տօրիասը ուղարկեց հրեշտակը Գաբայէլի մօտ՝ որ բերէ այն արծաթը որին կարօտ էր չքաւոր հայրը, և նորան հարսանիք հրաւիրէ: Գաբայէլը խկցն եկաւ հրեշտակի հետ և խօսեց այսպէս: Աստուած օրհնել է քեզ, որովհետեւ դու մի բարեպաշտ հօր որդի ես, որ աղքատներին շատ լաւութիւն է արած: Մի քանի ժամանակից յետոյ Տօրիա և Սառա ամուսինքը Ուա-

փայէլի հետ ձանապարհ ընկան։ Տօրիսցի ծերունի ծընողներին շատ երկարացել էր իւրեանց մի հատիկ որդու վերադարձը, թէպէտ հայրը աշխատում, միշտ միխթարել իւր ամռափնը՝ ասելով. լուռ կաց և մի՛ հոգար, մեր որդեակը ողջ է։ Բայց ինչպէս ուրախացան նոքա՝ երբ որ տեսան նորա վերըստին դալուստը իւր նորահարսի հետ միասին։ Ճընողների սիրու շարժվեցաւ, ուրախութեան արտասուը թափեցին և գոհացան Աստուծուց։ Պատանի Տօրիան իւր հետ բերած ձըկան լեզուլը օծեց կյոր հօր աչքերը, և դուրս հանվելով լուսնը (փառը) վերադարձաւ տեսութիւնը։ Ըընորհակալ եմ քեզանից՝ Աստուծու, խօսեց սիրու շարժված ծերունին, որ դու խրատեցիր և ողորմեցիր ինձ, որ ես կարող եմ այժմ միւսանգամ տեսանել իւր Տօրիա որդին։ Բայց Տօրիթը ըս մոռացաւ որ պատճառը այս բոլոր ուրախութեան՝ որ պայծառացըրեց նորա վերջին օրերը, իւր որդու առաջնորդն էր, և կամեցաւ վարձատրել նորան իւր կայքի կէսովը. բայց ասաց հրեշտակը. Աստուծուն այսպէս հաջո էր՝ որ ձեզ հանդիպէի. Նորան գովեցիք և գոհաբաննեցիք։ Ճեղացեալ Տօրիթը ապրեց դեռ ևս 42 տարի. սորանից յետոյ Տօրիան տեղափոխվեցաւ իւր աներ չուագուէի մօտ և ժառանգեց նորա բոլոր կայքը։ Ահա թէ ինչպէս բարի է լինում երկիւղած մարդու վերջը։

1. Եւ ամբարիշտների մէջ կարելի է առաքենի մընաւ։
2. Մարդու առաւել ազնիւ գործը է՝ ողորմանիրա վարք ունենաւ։
3. Եւ անտպարտ ձախորդութիւնը յուսահասութիւնն է բերում երբեմ։
4. Խիստ արդարութիւնը կարող է երբեմն ցաւեցուցիչ լինել։ (Տօրիթի հարցումը)
5. Հօր վերջին խընդիրը՝ զաւակի ուրատի վերայ գրբած։ Թո՛ղ մըշտընջենաւոր պաշար լինի կեանիք համար։
6. Հայրը և մայրը թողլումնն ինձ, բայց Աստուծու ընդունումէ ինձ։
7. Աստուծու միշտ մէր հետ է. նորա բարի հոգին առաջնորդումէ մէջ հաւասար ձանապարհով։ (Ուափակէլ հրեշտակը)
8. Աստուծու երկիւղը ամենայն մասին օդակար է. նորանով կը ժառանցի այս և միւս կեանիքը։
9. Աքթուն կացէք և ազօթք արեցէք, որ փորձութեան մէջ ըսնկանիք, սրալշետե հոգին յօժար է, բայց մարմինը՝ տըկար։
10. Բարեպաշտ ծընովների զաւակը՝ ծընովների պատուի համար ընդունումն մարդասիրութենով և յօժարութեամբ։
11. Ոչինչ ուրախութիւնն այնպէս քաղցըր չէ, ինչպէս վերըստին տեսու-

թեան ուրախութիւնը։ Հոգու արա որ կըրկին տեսութիւնը միշտ ուրախութեամբ լինի։

12. Զաւակների բարձաւորութիւնը՝ ծընողների ամենամեծ և ըջանկութիւնն է։ Նոյս բարձաւորութեանը ականատես լինել՝ հօր և մօր մըշտընդեռնաւոր ցանկութիւնն է։

13. Ազնիւ մարդիկը՝ այն շնորհակալութիւնը որ մատուցմանումն նոցա իւրեանց բարեգործութեան համար, վերաբերումն զէպ և Ապուած, որանից աղքերանումէ ամենայն բարութիւն, ըստ որում նա է սիրո և երջանկութեան նախակառածաւը։

Յ.

Եղ և Կեեմա։ [Եղէ և Կեեմայէ Գիշտը։]

Հրէից անբաղդ աղդի օդոի համար Ապուածուստ լուսաւորեալ և գերազանց տղամարդների շարբումը գրտանվումն եղը և Կեեմիա մարդարէրը։ Մոքա կացել են այն ժամանակումը երբ Հրէից թոյլուտութիւն եղաւ վերադառնալ Պաղեստինա։ Այս Եղը որի մինչև այժմը պահված գրքի մէջ գըրած կայ Կիւրոս թագաւորի այն տնօրինութիւնը որանով Հրէից համարձակութիւն էր տուած յետ գընալ իւրեանց հայրենիքը, Երուաշէս թագաւորից նոյնպէս հրաման ըստացաւ մի բազմութիւն Հրէից դարձացանել իւրեանց աշխարհը։ այս գործը յառաջ տանելու համար՝ թագաւորը ցոյց տուեց նորան առանձին պաշտպանութիւն։ Երբ որ Եղը եկաւ Քանան, նորա ջանքը և փոյթը այն էր որ սանձահարէ այն վայրենաբարցութիւնը որ ամենայն տեղ տարած վել էր մինչև այն աստիճան, որ քահանայք ևս հեթանոս կանայք էին առել։ Եղը անկեղծ լացը և արտասուրը իւր վատթարացեալ հայրենակիցների վերայ որ Ապուած անբան յաճախ պատմել էր և ողորմել էր, բայց նոքա ապերախտ էին գըտանվել, Եղի Ըերմեռանդ ազօթքը շարժեց ժողովը սիրտը։ սա խոստացաւ ուղղել իւր գընացքը, և այսպէս յաջողեցաւ Եղին վերասուին նորոգել Տըշմարիտ աստուածակաշտութիւնը Երուսաղէմի մէջ։

Նոյնչափ, գուցէ աւելի ևս արդիւնաւոր գըտանվեցաւ իւրազգի համար Կեեմիա՝ Արտաշէս թագաւորի տակառապետը։ Կա հրաժարվելով իւր արքունի պաշտօնիցը՝ ըշտապեց օգնութիւն հասուցանել իւր հայրենակիցներին որ՝ ինչպէս լըսած էր՝ մեծ տառապանքի մէջ էին՝ քաղաքը և տաճարը միւսանգամ նորոգելու մասին, մանաւանդ որ Սամարացիքը այդ գործին շատ խա-

իան էին։ «Եւեմիան իւր սեպհական կայքը զոհ բերեց հասարակաց օգտին, պատճառ որ տաճարի շնութեան ծախքը մեծ աղքատութիւն էր յառաջացրել։ Այս աղքատութիւնը թեթևացընելու համար՝ հրամայեց նա որ օրը հարիւր յիսուն մարդ կերակրեն և արբուցանեն, և իւր եկամուտների մի մասը բաշխեց չքաւորներին։»

Կորա անձանձիր աշխատութենովը աւարտվեցաւ քաղաքի շնութիւնը։ Նա ժողովը միտքը ձգեց իւր շընորհակալութեան պարտականութիւնը դէպ ի Ավտուած, կարգադրուեց Աստուծոյ պաշտօնը, հրամայեց մովսիսական օրինագիրքը կարդալ ժողովը առաջեւը, պատմեց շաբաթ պլղծող Հրէայքը, ներս ըներեց Տաղաւորներուց դոն։ և իւր հայրենիքը հանդըստացընելով և բարեկարգելով՝ 12 տարուց յետոյ վերադարձաւ Պարսկաստան։ Բայց նոր նոր անկարգութիւններ յառաջանալով Հրէից մէջ, միւսանգամ հարկադրվեցաւ գալ Երուսաղէմ և արտաքսել ներս մըտած ապականութիւնը։ Իւր անդադար սըրտացաւ հոգատարութեամբը կրօնի և հայրենի աշխարհի համար, «Եւեմիան արժանի հանդիսացաւ նընչըն Մահմէտ ասվելու։

1. Բարեպաշտի ջրմեռանդ աղօթքը մի անհաւատալի տպաւորութիւնն ունի ականանողների և լըսանների վերաց։

2. Հայրենասիրութիւնը հալածումէ ամենայն անձնական շահասիրութիւն։

3. Եթէ կամենումներ մի բարի բան յառաջացընել, պարտական ենք օդնել և խորհըրդով և գործող։ Ըստ խօսքեր չունին այնքան ներդործութիւն ժողովը վերաց։

6.

Եւեմիան հականայ. [Բ. Մահմէտայէց. հւ. 6.]

Վանի որ Հրէաստանը Պարսից, Մակեդնացոց և Եգիպտացոց իշխանութեան ներբոյ էր, վերադարձած Հրէաների վեճակը որպէս և իցէ տանելի էր. այլև պատահումէր շատ անգամ որ հեթանոս թագաւորքը Երուսաղէմի տաճարին պարգևներ էին ընծայում։ Բայց Հրէից վիճակը ուրիշ էր Ավորեստանի արքոց Անտիոքոս Եպիփանէսի ժամանակը։ Սա մի ահարկու կատաղութեամբ թագաւորեց Երուսաղէմի մէջ։ Հրէից տաճարը նույիրեց ոլիմպիական դիսին, հրամայեց Մովսէսի օրինագիրքը պատառել և պահանջեց մանաւանդ՝ որ Հրէայքը հեթանոս դառնան։ Հատերը՝ մարդու երկիւղից և իւրեանց կեանքը սիրելով՝ հնազանդեցին այն բըռնակալին. բայց շատերը նոյնպէս հաւատարիմ կա-

ցան իւրեանց հայունի օրէնքին, և սորանցից էր իննըսուն տարօք Եղիազարոս դըպիրը՝ մի բարեկաշտ մարդ՝ ըսկըսեալ իւր մանկան հասակից։ Այս ըստ որում հրաժարվեցաւ խոզի միս ուտել, պարտական էր տան ջանքի տակ անկանիլ և մեռանել։ Եղիազարոսը քանի մի բարեկամներ ունէր թագաւորի ըսպասաւորների մէջ, որքա այն մի չոյցումը՝ որ պիտոյ է նահատակիլէր նա՝ խոստացան ծածուկ միս բերել որ ուտէ և գոնքա կեղծաւորութեամբ ցոյց տայ, որպէս թէ իւր կերածը խոզի միս էր, և այս հընարքովը ապրեցուցանէ իւր անձը. բայց այն ազնուամիտ ծերունին բերան բացեց այսպէս. Տարիէր զըբեցիլը ինձ հողի տակը. անարժան և անպատշաճ էր իմ հասակին կեղծաւորութիւն առնել և իմ կեղծաւորութենովը դայթակղութեան բար լինել մանուկներին։ Վաս թագաւորի դահիճը այնքան ծեծեցին նուրան, մինչեւ աւանդեց հոգին։

1. Ո՞չ կեանք և ո՞չ մահ, ո՞չ գալցը և ո՞չ ներկան, ո՞չ բարձրը և ո՞չ ցածը պիտոյ է բաժանեեր մեզ Ապառւծոյ սիրուցը։
2. Յածահոտի մարդը միայն՝ որպեսումէ որտութընով դահպանել իւր կեանքը։
3. Ամենայն որպիսութեան մէջ պարտական ենք մտածել, թէ նոչ օրինակ պիտոյ է տայինք մանուկներին, որ աչք էին ածում մեր վարքերի վերայ։

7.

Երեխ և Համան. [Երեխի Գիրքը.]

Երտաշէս թագաւորը Պարսկաստանի մի ոյնպիսի կարող իշխան էր, որ հնազանդումէին նորան 128 դաւառ։ «Կա միանգասմ հանդիսաւոր հացիերութիւն տուեց, որ՝ ինչուս պատմումէն՝ 180 օր տեած է։ Իւր բազգաւորութենովը և այս հանդիսի ուրախութենովը արբեցած լինելով՝ հրամայեց որ Աքմինէ թագուհին մեծամեծների առաջեր երեխ. բայց թագուհին անարժան համարեց իւր աստիճանին՝ տղամարդների հացիերութեան մէջ դուրս գալ, որ հին ժամանակներումը առհասարակ անսովոր մի բան էր։ Բարեկացաւ թագաւորը և մերժեց իւր կինը, որ մի գուցէ թագուհու անհնազանդութիւնը դէս ի թագաւոր ամուսինը օրինակ դառնայ միւս կանանց համար։ Արտաշէսը կամենաւ լով այլ ամուսին ընտրել իւր համար՝ հրամայեց որ ամենայն կյանք և գեղեցիկ աղջիները ներկայացրնեն թագաւորին։ Կյերկայացաւ նոյնպէս Եսթեր անունով մի հրեայ աղջիկ որ իւր հօրելզօրորդի Մուռթբէի հոգաբարձութենովը սնուցած էր. և այս Եսթերին թագուհի ընտրեց Արտաշէսը։ Եսթերը մընաց խոնարհ և եր-

կիւղած, բայց Մուրթքէն միշտ այցելու էր նորան և սըրտացաւ նորա որսիսութեանը։ Մուրթքէն կառավարիչ կարգվեցաւ թադառորի տան վերայ, սորա վերայ նախանձելով արքայի երկու ներքինիքը՝ միաբանվեցան բառնալ թագաւորի կեանքը։ Մուրթքէն իմանալով այս չար խորհուրդը՝ յայտնեց Արտաշէսին որ շընորհակալութեան աղագաւ հրամայեց նորա անոնք և հաւատարմութիւնը նշանակիւ տէրութեան պատմագըրքի մէջ։ Բայց Եսթերը այդպիսի բազդի հասանելով՝ չը մոռացաւ իւր առաջին վեճակը և իւր տառապեալ հայրենակիցը։ Մի մակեդոնացի մարդ՝ չաման Ամաղովթեան Ազգագեանց որ առանձին շընորհ էր գըտել թագաւորի մօտ՝ բամբասեց Հրէից ազգը որպէս թէ վըտանգաւոր մարդիկ էին, և հրաման գուրս հանեց՝ որ կտորեն բոլոր Հրէայքը։ Այս գարշելի դիտաւորութիւնը լըսելով Եսթերը Մուրթքէի բերանից, տաղնապ տարակիութի պաշարեց նորան, բատ որում արգելած էր թագուհուն առանց թագաւորի հրամանին մօտենալ նորան։ Բայց Եսթերը սիրելով իւր անօգնական ազգը՝ համարձակվեցաւ կարգից գուրս ելանել։ Թագաւորը ըսկրզբումը շատ զարմացած այս անսովոր գրնացքի վերայ, գութ շարժվեցաւ, երբ որ Եսթերը արբայական աթոռի փառահեղութիւնը տեսանելով՝ վայր գըտրվեցաւ, գոյնը փախչելով և սիրտը նուազելով։ Թագաւորը բարձրացրնելով և համբուրելով տիկինը, հարցըրեց քաղցրութեամբ, թէ ինչ խընդիր ունէր։ Թագուհին հրաւիրեց Արտաշէսը Համանի հետ միասին իւր մօտ ձաշ ուտել։ Հացկերութեան վերայ այնչափ գուարթ և ուրախ էր թագաւորը, մինչեւ թոյլ տուեց թագուհուն՝ որ իւր համար մի շընորհ աղաջէ։ Եսթերը մի օր մտածելու ժամանակ խընդիր և միւսանգամ իւր մօտ սեղան հրաւիրեց թագաւորը և Համանը։ Համանը գընումը իւր տուն։ Նորան հանդիպեց Մուրթքէն և ցոյց տուեց իւր արհամարհութիւնը դէպ ի նա։ Այս բանի վերայ զայրանալով Համանը՝ խորհուրդ կապեց իւր Ովսարրայ կընոջ հետ որ թագաւորի հաւամութենովը ըսպանել տայ Մուրթքէն։ Ան գիշերին անքրնութիւն պատահեց թագաւորին։ ժամանակ անցուցանելու համար հրամայեց իւր դըպրապետին՝ որ բերէ թագաւորութեան յիշատակարանը և կարգայ նորա առաջել։ Թագաւորը ականջ գընելով այն երկու ներքինի ըսպասաւորների պատմութեանը, որ կամեցած էին իւր կեանքը վերջացընել, զարմացաւ որ այն մարդը՝ որ այդ ամբարիշո խորհուրդը յայտնած էր՝ ոչինչ արժանաւոր վարձատրութիւն չէ ըստացել։ Առաւտուն

Համանը եկաւ Ալտաշչսի մօտ, որ նորանից թոյլտութիւն խընդուրէ Մուրթքէի լսպաննելու մասին; Բայց Համանը դեռևս խօսր չը բացած, թագաւորը հարցըրեց նորանից. «Ի՞նչ պիտոյ էր առնել այն մարդուն որին կամենումնը թագաւորը փառաւորել»: Համանը կարծելով թէ այս պատիւը իւր համար է սահմանած, պատասխան տուեց. «Եսդպիսի մարդը պիտոյ էր թագաւորի ձիու վերսոյ, արբայսկան ըզգեատով, թագը գըլիսին դրած՝ քաղաքի հրապարակներումը ման ածել և քարոզել. այսպէս ահա պատուեալ կը լինի ամենայն մարդ, որին փառաւորումը թագաւորը»: «Քարտոնիք խօսեցիր՝ ասաց թագաւորը՝ գընա այժմ, այդպէս արա Մուրթքէ չըէային և մի բան ևս չը պակասացընես խօսածիցըր»: Համանը պարտական էր հնազանդել. ապա տուն ըշտապեց՝ որ պատմէ իւր կընոջը այս անախորժ անցըրը, բայց նոյն րոպիտումը գանչեցին նորան ճաշ թագուհիու մօտ: Հացկերութեան վերսոյ միտք բերեց թագաւորը՝ որ խոստացել էր այսօր թագուհու խընդիրը կատարել: Եսթերը յարմար գըտանելով այս միջոցը՝ յայտնեց թագաւորին՝ որ ինքը հրէաց էր և խընդրումն ողորմել իւր աղդին որ կամենումնին բնաջնիք առնել: «Ո՛վ է համարձակվել այդ անգութ խորհուրդը առնել՝ հարցըրեց թագաւորը.» ահա այս Համանը՝ պատասխանեց թագուհին: Համանը խընդիրեց ողորմութիւն, բայց ի զնուր՝ որպէս ինքը, նյոնակէս և նորա որդիքը մահու պատիւթ ըստացան, և Մուրթքէն մեծ պատուի տէր եղաւ: Բայց այն անիրաւութիւնը՝ որ Եսթերը հեռացըրել էր իւր աղդիքից՝ գործ դըքեց այժմ՝ դէպ ի իւր թըշնամիքը, պատճառ որ խընդրեց թագաւորիցը մի օր՝ փոխարէն հատուցանելու իւր հակառակորդներին:

1. Մարդուս պաշտօնը չէ՝ որ սահմանումն նորա արժանաւորութիւնը:
2. Ամենայն ոք պարագան է մասնել թէ փոխիսական է բաղդը:
3. Բաղրաւորութեան մէջ խննարչ մընալը ճըշմարիս մեծահուզութիւն է:
4. Եմէն իմացել ես՝ որ քո ընկերին մօտ է մի վըտանդ, լուռ մի կենար:
5. Վըլէժինընիքի մարդու ձեռքումը ոչնիք հընար վաս չէ:
6. Ինքնահանութենաու մի տանջիր քո ընտանիքը:
7. Աէրը ամենայն բանի ձեռնարկումն և ըստանումն ամենայն բան:
8. Ու ու քեզ թըշնամի մի շինիր. դու չը գիտես թէ նա ինչպէս կարող է քեզ լսանել: (Մուրթքէ)
9. Ըընարհակալութեան պարտականութիւնը գէտ ի ըսրերաբքը՝ անվերջանալի է:
10. Բաղրաւորութեան մէջ մի մուանար ուրիշների ցաւը:

11. Ուշ որ ուրիշն փոս է փորում, նկար կընենի նորա մէջ : (Համան)
 12. Ծանոթ մեք աւելի բարի լինէինք քան թէ մեր թըշնամիքը . առա թէ ոչ . անարժան ենք այն օշնութեանը որ Աստուած հասուցանումէ մեղ լիսկէմ նոցա :

8.

Յանձնան . Մարդ . Յանձնան .

Ինչ տեղ Աստուած հաւատը վըտանգի մէջ էր տեսանում, այն տեղ ուղարկումէր իւր մարդարեքը՝ որ քարոզեն : Այս մարդարէ մարդերից մինը էր Յովնան, որի գըլխին առանձին բաներ եկան, բայց նառչ այնքան արժանի գըտանվեցաւ այն բարձը վըտահութեանը որ Աստուած ցոյց էր տուել դէպ ի նա :

Աստուած հրամայեց Յովնանին՝ որ գընայ Նինուէ և քարոզէ ասլաշխարութիւն և գարձ իւր մեղքերիցը . ապա թէ ոչ, կործանվելու է քաղաքը ; Յովնանը մտածելով որ այս գործից մեծ փառք հընձելու չէ, կամեցաւ հրամարվել նորանից, և նաւ մրտաւ որ գընայ թարսիս (Ըսպանիսայի մի քաղաք է) : Ճոպվի վերայ բարձրացաւ մի սաստիկ մըրրիկ որ նաւագընացներին մըտածել տուեց՝ գուցէ թէ իւրեանց մէջ մի մարդ կոյ որ Աստուծոյ բարկութիւնը շարժումէ դէպ ի նորա : Կիմակ ձրգեցին, և գուրս եկաւ վիճակը Յովնանի որ Աստուծոյ հրամանին անհնապանդ էր գըտանվել : Հանդիսա ոբրտով խընդրեց Յովնանը՝ որ իւրեան ծովը ձրգեն, նաւընկերը ըլ կամեցան այդ բանը առնել և ջանային նաւը դէպ ի ցամաք դարձուցանել, բայց ըլ կարողացան . ապա ազօթիք արեցին և Յովնանը ջուր ձրգեցին : Մի մեծ ծուկն կուլ տուեց նաւըն և երեք օր ու երեք գիշեր յետոյ դուրս թըրեց նորան դէպ ի ցամաք : Ազա Յովնանը գընաց Նինուէ և քարոզեց քաղաքի չարագործներին՝ թէ երեք օրից յետոյ կործանվելու է քաղաքը . լըսէցին մարդարէի ձայնին և դարձան իւրեանց չար ճանապարհներիցը : Մեզաւորների այսպէս շուտով դարձը մեծ աբրտմութիւն բերեց Յովնանի վերայ . նորան ցանկալի եղած կը լինէր՝ քաղաքի ժողովուրդը և ար կամակորութեան վերայ հաստատ տեսանել, որ և ինքը կարողանար ցոյց տալ իւր անձը որպէս մի շատ զօրաւոր աստուածառաք աղամարդ : Յովնանը դուրս եկաւ քաղաքից, մի հովանի շինեց և հանդըստանալով նորա տամիլը՝ նոյումը թէ ինչ կը լինի քաղաքի վերջը : Աստուած կամենալով իւր մարդարէի յիմարութիւնը պատժել և նորան դէպ ի գիտութիւն բերել, հրամայեց որ մի հովարար դրդմէնի բուսանի Յովնանի գըլսի վերայ, բայց միւս առաւօտուն ցամաքեցը այն գըդմե-

նին։ Առաջ վերայ այնքան տըրտուց Յովլանը՝ մինչեւ ցանկանում մըր մեռանել։ Բայց Ապառած խօսեց Յովլանի հետ. «Քեզ ինսպելի՞ է դըմենին, և ինձ չէր խնայելի կործանել Կինուէ՝ այն մեծ քաղաքը, որի մէջ կան 120000 մարդուց առելի որ չէին ճանաչում իւրեանց աջ ու ձախը։

1. Յիմար ջանք է կամենալ փախչել Ապառածոյ ձեռքից։
2. Ոչ առենայն ձախորդութիւն սպատիժ է գործած մեղքերի համար։
3. Ապառած մի մարդու անհաղանդութեան համար, շատ անմեղելեր մասնակից է առենում փորձութեան։
4. Չը կոյ պատճառ մասնելու, թէ վիճակ ձըբելով՝ Ճըմալառութիւնը կը յայտիրվէ։
5. Մի միայն ուղելով մեղ՝ կարո՞ղ ենք մեղքերի թողութիւնը գըտանել։
6. Տղայական գործ է մի յոյս ունայնացեալ տեսանելով այնպէս տըրտընչըլ՝ ինըլեռ Յովլանը։
7. Ունայնասիրութեան և նախանձու պատճառաւ՝ շատ անշամ ցանկանումնք որ ուրիշների գընոտքը այնպէս բարի ըլ լնեին, որ գորանով առելի պայծառապէս փայլեինք մեր նոյս հանդեպ։

9.


Յովլան. Գէտք Յովլան.

Որովհետեւ հաւասարի յայտնի չէ մեղ թէ որ ժամանակի միջոցումը ասլրել է այս տղամարդը, վասն այս պատճառի նորավարը դըմումենք չին կտակարանի պատմութենների վերջումը։ Սա մի հարուստ, մեծատուն և երկիւղած իշխան էր Ակսիդքաղարի մէջ որ Եղովմի աշխարհումն է։ Բաղդի փոփոխականութիւնը հանդիսեց այս մարդուն. փոքր միջոցում կորուսանումէնա ամենայն բան ինչ որ սիրելի է իւր սըրտի համար, թէպէտ իւր առաքինութիւնը և երկիւղածութիւնը արդարեւ նորանից հեռացած չէին և բաղդաւորութեան և հարբատութեան ժամանակումը, ինչպէս սորա հակառակը տեսանումենք շատ անդամ։ Բայց Ապառած թոյլ տուեց շարին փորձել Յովլը։ Յառաջ լուր են բերում սորան, թէ տաճակները յափըշտակեցին քո հօտը և ըսպանեցին հովեւները. կոյծակը սատակեց քո ոչխալները։ Փոքր մի յետոյ եկաւ միւսը և ասաց. քո մեծ որդու տունը՝ որի մէջ քո բոլոր տըրլացը և աղջիկները հաւաքված էին՝ կործանեց մի սաստիկ հողմ և ըսպանվեցան քո զաւակները։ Այս վերջին պատահարի համբաւը դըղըդեց ծնողական սըրտի խորը, բայց նորա հաւատը դէպ ի Ապառած ըլ խախտվեցաւ երբէք. ձայն ալ-

ձակեց նա. »Տէր ետ և Տէր էառ, եղիցի անուն Տեառն օրհնեալ: « Կորա տառապանքի չափը դեռևս չէր լրացած. ոտքից մինչեւ գըլուխ պատեցին նորա մարմինը ցաւալի և զազրալի խոցեր. բաւական չէր և այս իւր կինը վերաւորեց նորան հարցը նելով. մինչեւ երբ կամենումեւ համբերել՝ յուսալով փրկութեան: Յովեր պատասխանեց. եթէ բարին բառացել ենք Աստուծոյ ձեռքիցը, ընդէլը չէ սկիսոյ համբերէինք և չարին: Յովեի անբազութեան լուրը լըսելով՝ հաւաքվեցան նորա մօտ իւր կարեկից բարեկամբը Ելիփաղ, բաղատ և Աստիար: Յովեր գանգասեց սոցա իւր վեշոր որ հասել էր նորան որպէս թէ տարապարտուց, և ոլբարն ջումէ՝ որպէս թէ Աստուծոյ տան ջումէ արդարութիւնը: Յովեր ոչինչ միսիթարութիւն չէ տեսանում իւր բարեկամներիցը, որ մանաւանդ թէ մոտածումէն՝ թէ նա արժանի է իւր տառապանքին, պատճառ որ Աստուծոյ արդարադաս էր, առաջինութիւնը և բազրաւորութիւնը, յանցանքը և վատարազութիւնը միշտ կապակից էին այս աշխարհումը: Այսպիսի խօսուածներով յառաջանումէ երկար ու ձիգ վիճարանութիւն Յովեի և իւր բարեկամների մէջ, որ գըրած կոյ Յովեի գըրբումը: Ճըշմարիս է՝ Յովեի տառապանքը մինչեւ այն աստիճան զօրացաւ՝ որ նա անիծեց իւր կեանքը, բայց նորա հաւատաւոր սիրոր յաղթող հանդիսացաւ իւր ցաւերի վերայ, և միսիթարութեան ազբիւր գըտաւայն մոտածութեան մէջ՝ թէ »Կենդանի է իմ փրկիչը և միւսանցամ կը յարուցանէ ինձ հոգի տակից«: Ինքը Աստուծոյ վերջացրեց Յովեի հակամառութիւնը իւր բարեկամների հետ՝ զանազան հարցմունքներ նորա առաջնը դընելով և նորան անպատասխանի կացուցանելով, այլև ցոյց տալով թէ ինչպէս անկարող էր մարդկեղէն տրկար միտքը վերահասու լինել աստուծածային նախախնամութեան խորին խորհուրդներին: Բայց Յովեր իւր տառապանքի մէջ շընորհ գըտաւ Աստուծոյ առաջնեւ նա վարձատրեց Յովեի անխորստակելի համբերութիւնը և պարզեց նորան կըրկին անգամ աւելի քան թէ կորուսած էր: Յովեր օրհնեալ ուստըրներով և դուստըրներով ապրեց յետոյ դարձեալ 140 տարի:

1. Բաղդաւորութեան մէջ ցած կենաւ, և անբազութեան մէջ մեծ և ամուր գըտանվիլ՝ արժանի է Ճըշմարիս աստուծածպաշտին:
2. Ճննողական սէրը աւելի հեշտ տանումէ ամենայն միւս ցաւերի, քան թէ սիրելի զաւակների կորըսախին:
3. Միշտ և ամենայն աեղ կարող է մ.դ. հանդիպել մահը. վառն այս պատճառի պատրաստ կաց միշտ:

4. Ամենայն բան կարող է մարդըս կօրուանել, բայց գեռ ևս ապքան չէր, եթէ նորս խըզչմըտանքը մաքսւր է:
5. Մեր հաւաաի և բարեպաշտութեան օդինութիւնը չէ միշտ արտաքսուա տեսանելի, բայց մընալով մեր որբուի մէջ՝ աւելի աղաքալ հաստատում; մեր ճըշմարիս բարեկենդանութիւնը:
6. Ամենայն վաստավագութեան մէջ՝ որ պատահումէ քեզ, մտածիր թէ Ազուուած որ պարզեցէ քեզ բարին, ունի իրաւունք միւսանդամ առնուլ նորան քեզանից:
7. Մի՛ վեշտացրու հիւանդի սիրու, երեսին զարկելով նորս հիւանդութեան պատճառու:
8. Եթէ մարդուս համբերութիւնը քանի մի բողէ թաւզանում, ցաւիցը, այդու ամենայնիւ նա գեւես չէ ուրացել իւր հաւատը դէպ ի Ազուուած:
9. Մի՛ համարձակվիր Ազուուած դ գաղթնիքը քըննել և իմանալ, հաւատաց միայն:
10. Անպիսի մի արդարութիւն, հաւատ և համբերութիւն, ինչպէս ցոյց տուեց Յովել՝ անսարսկոյ կը վարձատը Ազուուած:



ՆՈՐ ԿՏԸՆԿԵՐԱՆԻ ՊԵՏՄՈՒԹԻՒՆՅԵՐ

Վայն սասանեցուցիչ փոփոխութիւնը որ սպատահել էին չըկից ազգի մէջ, նոյսա լատորակարդ դըրութիւնը այն հըգօր թագաւորութենների ներբայ որ տիրել էին նոցա, պիտոյ էր՝ բաւական ըզգակի ներգործութիւն ունենացին չըկից կրօնի և վարքի վերայ: Այս, ժողովըրդի կրօնը և վարքը այնպէս թուլացան և նուազեցին, ինչպէս աշխարհը՝ արտաքուստ: Ոչինչ բանի այլ մտադիր չէին բաց ի աստուածապաշտական ծիսակատարութենից: Քահանացըր՝ կեղծաւորներ գարձան, և քահանացապետի արժանաւորութիւնը՝ որ յառաջուց շընորհվումէր և պահվումէր ինչքան որ կենդանի էր այդպիսի կարգաւորը, այնուհետեւ կարելի էր արծաթով ձեռք բերել: Ուսումնական չըկացըր ըսկրսեցին օրէնքը մեկնել ինչպէս հաճոյ էր նոցա, և յաւելացընումէին իւրեանցից զանազան պատուիրանների: Եթէ համար ձրդենք նոյնպէս այն տառապանիքը՝ որի մէջ գրտանվումէին չըկացը՝ զանազան այլազգի թագաւորների համարակելով, մինչև վերջումը և չոռմայեցոց ծայրագոյն իշխանութեանը. եթէ միաք բերենք որ հրէից ազգի արժանապատիւ կրօնուսոյց մարդիկը վազուց խոստացած էին Ազտուծոյ անունով, թէ մի մեսիայի ձեռքով պիտոյ է նորա փըրկութիւն գրտանէին իւրեանց տառապանիքից, ապա տեղիք ըս կար զարմանալու որ չըկից ազգը որբան առաւել մօտացել էր իւր բարոյական և քաղաքական կորբատի անդընդքին, այնքան ևս կարօտ էր մեսիայի յայտնութեանը:

Բայց և աստուածացին նախախնամութիւնը բաւական հոգաբարձութիւն էր արած, որ այս փըրկչի յայտնութիւնը չըկից աչքի վերայովը անց ըս կենց. մարգարէր և սուրբ երգեցողը՝ ինչպէս Եսայիասը, Երեմիան և միւսները՝ վազուց մատնացոյց էին արել դալոց մեսիան, և դորանով ջանացել էին առ ժամանակ մի սիրտ տալ ժողովըրդին որ շատ անգամ յուսահատութեան մէջ էր: Կմանապէս՝ չըկալիանութեան մէջ տիրապետեալ մըսանութեան հաւատը, մովսիսական օրէնքի մէջ աւելի մաքուր կրօնագիտութիւնը, այլև այն կարծիքը թէ չըկացը՝ Աստուծու ընտրեալ և

սիրելի ժողովուրդն էին, վաղուց բացել էին ճանապարհը դէպ ի մի աւելի կատարեալ վարդապէտութիւն կրօնի: Վերջապէս՝ կրօնի կատարելագործութեանը ձեռ ընտու և զան մանաւանդ ազգը, աշխարհը, ժամանակը ևս որոնց մէջ պիտոյ է յառաջանար մի բարեկարգ վիճակ՝ մարդկութեան ազատը ձեռովլը: Աշխարհի և ազգի մասին պարան իմացիր. Պաղեստինայի գաւառը ունենալով իւր դիրքը այն աշխարհների մէջ տեղումը, ինչքան որ այն ժամանակը յայտնի էին երկրի վերայ, բազկացընումը; աշխարհի երեք բաժնների սահմանը, կապակցութիւն ունէր շատ ճանապարհորդած Փիւնիկեցոց հետ, և իւր դըրութեամբը միջներկրական ծովի վերայ՝ դէպ ի արևմուտք, և իւր դրացի Աքարիու աշխարհովը դէպ ի արեելք և հարաւ նայելով՝ ցուցանումը բազմօրինակ ճանապարհներ՝ նոր կրօնը տարածելու համար: Պաղեստինայի բնակիչքը սահմանված լինելով յառաջուց՝ ընդունել մի ընդհանուր կրօնի վարդապէտութիւն, յատկապէս յաջողակ էին այդ մասին իւրեանց բնական խառնուածովլը: Սորա ըլլինելով ըորբոքելի մինչև կրըի աստիճանը, ոչ շատ կրակոտ և ոչ շատ թոյլ բնութեան տէր լինելով, չըէից ազգիցը կարող էր Աստուծոյ սիրոյ աւետիքը Յիսուսի Քրիստոսի բերանով փըրկութիւն քարոզել բոլոր մարդկային ազգիս: Արդարեւ՝ ջերմ գօտիների մէջ բնակող ազգերի տարապայման ախտաւորութիւնը կարող էր այս աւետարանի ներգործութենովլը խաղաղանալ և հնազանդել առողջամիտ բանականութեանը, որպէս գարձեալ՝ թեւեռաբնակ, գիշերովլ, ցըրտով և տգիտութենովլ պաշարեալ մարդերի հաւատը կարող էր նորանովլ ջերմանալ և լուսաւորվիլ, և այսպէս ամենայն ազգեր երկրիս վերայ օրհնութիւն գտանել մի ազգի միջնորդութենովլ: Եթէ նայենք ժամանակին, երբ աշխարհի խոսացեալ փըրկիչը յայտնըվեցաւ, նոյնպէս յաջողակ պէտք էր անուանել դորան, Ռւղակի այն միջոցումը աւելի մօտ կապակցութիւն կար չըէից և Հռոմեցոց մէջ. սորա ոչինչ ժամանակ այնքան զօրել չէին, ինչպէս Օգոստոս Կայսրի օրերումը. Հռոմեցոց կըթութիւնը և գիտնականութիւնը ըլ մընաց առանց ազգեցութեան չըէից վերայ, և Օգոստոսի հրամանը՝ աշխարհագիր առնել չըէաստանի մէջ այն օրերումը երբ ծնանելոց էր մեր Տէրը, շատ օգնական դրսանվեցաւ այս մեծ և աշխարհի բաղդաւորող անցքի շուտով հրատարակվելուն:

Վայ ընդհանուր պատմական ծանօթութիւնը տուած այն ժողովը դիրքի դրութեան մասին, որի մէջ յայտնըվեցաւ աշխարհի

փըրկիչը որի կեանքը, չարչարանքը և վարդապետութիւնը պիտոյ է տեսանվին առաջիկայ թերթերիս մէջ, անցանումենք դէպի ոյն պատմութիւնքը որ պայտնակումէ իւր մէջ Նոր կոտակարանը:

Յանձնենք Ապահովէլ.

Ըաց ի այն նըշաններիցը որ աստուածային նախախնամութիւնը շատուց յառաջ քան թէ մեսիսյի յայտնութիւնը տուածէր թէ սա գալոց է մի օր, նա հոգաբարձու եղաւ և այն մասին որ մեսիսյի ծնանելուց փոքր ինչ յառաջ մի կարասիւտ յառաջ դընոց և պատրաստէ նորա ծանապարհը: Սա կարապետը եղաւ Յովհաննէս որդին Զաքարիա քահանայի և նորա Եղիսաբէթ ամուսնու, որ բարեպաշտ և երկիւղած անձինք էին, բայց ծերացած և անզաւակի: Զաքարիա քահանան միանգամ տաճարումը լինելով, նորան աւետիք տուեց Ապահուածոյ հրեշտակը թէ «Արսելի եղեն ազօթք քո», և կին քո Եղիսաբէթ ծընցի քեզ որդի և կոչեսցես զանուն նորա Յովհաննէս. և ինքըն եկեսցէ առաջի տեառն հոգւով զօրութեամբ Եղիսյի՝ պատրաստէլ տեառն ժողովուրդ կազմեալ»: Ինչպէս հրեշտակը ասած էր, այնպէս և պատրահեց, և Զաքարիա ծերունին կատարեց ինչ որ նորան հրամայած էր: Բայց նորա բարեկամքը զարմանումէին և ասումէին. «զինչ լինիցի մանուկըս այս», և բազգաւորեալ ծընողների հետ օրհնումէին Ապահուած: Ապահուածոյ ձեռը հովանի էր Յովհաննէս մանուկի վերայ, նա աճումէր և զօրանումէր հոգով, և բնակումէր անապատումը մինչև այն օրը՝ որ պիտոյ է երեկո Խարայի ժողովրդին: Բայց և այն միջոցումը՝ երբ Յովհաննէս կարապետը ըսկըսեց Հրէից ազգի սիրոը պատրաստէլ դէպի ի Յիսուսի վարդապետութեան ընդունելութիւնը, և իւր քաջալերական ձայնովը թէ՝ «Ապահուածութէցէր զի մերձեալ է արբայութիւն երկնից» ծանաղիր էր հաւանեցուցանել ժողովուրդը՝ որ փոխէ իւր սիրումը դէպի ի արդարութիւն, և այն միջոցումը բնակումէր նա անապատի մէջ և ապրումէր այնպիսի կերակըներով որ տալիս էր նորան բնութիւնը, և նորա հանդերձը շատ պարզ էր: «Նորա գըլսաւոր փոյթը ոյն էր՝ որ հասկացընէ Հրէից ազգին թէ առանց իւր սիրուր և վարբը ուղղելու անօգնութ էր մըսածել՝ թէ նոքա հայր Եթովհանի ցեղից էին, ըստ որում Ապահուածոյ աչքին հածոյ և բնդունելի է ամենայն մարդ որ բարի և երկիւղած էր: Այսպիսի ծանրակըշու խօսքերով դրզրդեց նա շատերի սիրուր Երուսաղէմից և բոլոր Հրէաստանից մեծ բազմութիւն գլուխումէին

նորա մօտ և մըկըրտվումէին նորա ձեռով Յորդանան գետի մէջ։
Այս մըկըրտութենուլը նկարագրաբար պարտականութիւն էր գը-
նում նոցա վերաց՝ որ սըրտով սուրբ լինին, և միշտ խօսումէր
Տիրոջ մասին, որին ինքը ինչպէս «ձայն բարբառոյ յանապատի»
յառաջնթաց է եղել։ «Երմակիս ծանուցանումէր նոցա թէ այն
Տէրը որ նորանից յետոյ գալու է, տւելի մեծ է քան թէ ինքը
որ արժանի չէր խօնարհէլ և նորա կօշիների խըրացները լու-
ծանել, այլև ասումէր թէ իւր հետեւից եկողը կը մըկըրտէ հո-
գով սըրբով և հըրով, բայց ինքը մըկըրտումէր միայն ջըրով։
Առ հասարակ խօսումէր նա գալոյ Յիսուսի մասին ամենամեծ պատ-
կառամքով և ակնածութենով։ Տեսանումէի՝ ասումէր նա՝ որ Ապ-
տուծոյ Հոգին ազանուակերպ իջանումէր երկրնքիցը և հանգչումէր
Յիսուսի վերաց. տեսայ և վկայումեմ որ նա է Ազտուծոյ որդին։

Հոգիաննէս կարապետը յանդիմանելով չերովդէս չըրրու-
դապետի ապօրէն ամուսնութիւնը՝ ըստ որում իւր եղբօր կընոջ
հետ զուգաւորված էր, թագաւորը հրամացեց բանտի մէջ գընել
նորան և ասպա գըլխատել, ինչպէս խընդրած էր նորա աղջիկը՝
լըսելով իւր անգութ մօր խորհըրդատուութենու։ «Նոր կտակա-
րանի մէջ պատմութիւն է լինում, թէ այս չերովդէսը միան-
դամ շատ հաւանելով իւր աղջրից գեղեցիկ կաբաւելուն, թոյլ
տուեց որ նա մի շընորհ խընդրէ հօրիցը. և սա խընդրեց Յով-
հաննէս մըկըրտը գըլուխը։ Չերովդէսը զարհուրեց, բայց՝ ըստ
որում երգումն էր կերել, ըը կամուցաւ անարգել իւր խօսը։

1. Ժեպէտե. մեր բոլորակն բաղդատարութենան համար պակաս էր մի բան,
որ կարող էր մեզ պարզեցել Աստուծոծ, այնու ամենայնիւ պարտական
էնք հնազանդել նորան, սիրել նորան և հաւատառ նորան։
2. Աստուծոյ մօս ոչինչ բան անկարելի չէ։
3. Ոչ ով. ը գիտէ թէ Ազտուծոյ անօրէնութիւնը այս կամ այն մարդու
մասին ինչ է։ Ուրիմն պարաւական էնք միշտ պատուել այն ակքըննելի
հանապարհը որոնցով նա առաջնորդումէ մեզ և ուրիշներին։
4. Մեծամեծ ձեռնարկութիւնք պատրաստելու համար՝ սկսածաւառոր էր
առանձնաւթիւնը։
5. Եթէ մի բանի համար օրինաւոր պատրաստված էնք, յօժար և ընդու-
նակ էնք օրինաւոր օգուտ քաղէլ նորանից։
6. Աւանց մեր պակասութիւնքը հանաչելու, անկարելի է ուղղէլ մեր անձը։
7. Ոչ թէ ազատական վիճակը, այլ աղնիւ ուրսոր տալիս է նախապատ-
վութիւն Ազտուծոյ առաջնը։
8. Ցածուն հեղութիւնը և աննախանձութիւնը օտարի արժանաւորութեան
վերաց՝ զարդ է ամենայն ուսուցչի համար։

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒՅՈ

1.

Յիսուսի Քրիստոնու ծընկերուց մինև նորա էլեկոնահայութ էլեկոնա դաշտեկուն հաստին, իստ մինև այս ժամանակն երբ սրինաց իւղ կարգապետական պաշտօնուց
[Աշետուք. Դուռ. հջլ. 1.]

Երբ վեց ամիս անցած էին այն ժամանակից յետոյ՝ որ Զաքարիա քահանայի Եղիսաբէթ կինը աւետիք էր ըստացել Ապառածոյ հրեշտակից՝ թէ իւր ծերութեան մէջ մայրական ուրախութիւն է տեսանելու, նոյն Դարբիէլ հրեշտակը եկաւ մի կուսի մօտ Մարիամ անունով, որ Դաւթի ազգատոհմիցն էր, բնակութիր Կազարէթ քաղաքումը Գալիլեայի մէջ և նշանած էր մի Յովսէփ անունով հիւսնի հետ։ Այս Մարիամին աւետիք տուեց հրեշտակը այսպէս. «ուրախ լեր, բերկերալըդ, Տէր ընդ քեզ։ Մարիամ կյուր խռովեցաւ և զարմացաւ այս ողջունի վերայ. ապա ասաց հրեշտակը. «մի երկենչըր, զի գըտեր շընորհը յԱպառածոյ. Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն Բարձրելոյ հովանի լիցի ի վերայ քո, քանզի որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է և որդի Ապառածոյ կոչեսցի։ «ա թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովայ ի յաւիտեանս, և թագաւորութեան նորա՝ վախճան մի լիցի։ Բարեպաշտ Մարիամը դեռևս ը կարողանալով ըմբռունել այն գերազանց պատուի մեծութիւնը, որին պիտոյ է Ապառած արժանացընէր նորան, խօսեց լի խռնարհութեամբ. «ահաւասիկ կամ աղախին տեառն, եղլիցի ինձ ըստ բանի քում։ Հրեշտակը հրաժարվեցաւ Մարիամից, բայց սա գընաց Տրէաստան իւր բարեկամ Եղիսաբէթի մօտ, որ ծանուցանէ նորան այն զարմանալի պատահումը։ Եղիսաբէթը ուրախանալով այն մեծ բազգի վերայ որ հանդիպել էր Մարիամին, ըստ որում պիտոյ է Փրըլէի մոյրը դառնար, ձայն արձակեց. «և ուստի է ինձ այս՝ զի եկեսցէ մայր տեառն իմոյ առիս։ Մարիամը այսպիսի պատուի արժանացեալ տեսանելով իւր անձը, ըսկըսեց հրաշալի կերպով օրհնել և փառաբանել ամենալիալ Ապառածը։ Մի քանի ամսից յետոյ Մարիամը դարձաւ իւր տուն։ Այն միջոցումը տեղեկացել էր և Յովսէփի այս բոլոր զարմանալի անցրերին. և որովհետև իւր սէլը դէպ ի իւր խօսեցեալը մարտուր և անարատ գիտէր, վասն այս պատճառի տըրտմեց արդարեւ, երբ որ իմացաւ թէ Մարիամը

մայրական յոյսեր ունի իւր սըրտումը. այս մըտքումը դըրեց որ
թողու այն կապակցութիւնը որանով ակլնկալութիւն չունէր եր-
ջանիկ ամուսին լինել: Այս ծանրակըշիռ բանի վերայ օր ու գի-
շեր մտածելով, ահա տեսիքի մէջ երևեցաւ նորան Տիրոջ հրեշ-
տակը և ասումէր. «Յովսէփ՝ որդի Դաւթի, մի՛ երկլնչըր առնուլ
առ քեզ ըզՄարիամ կին քո, քանզի որ ի նըմայն ծընեալ, ի հոգ-
ւոյն սըրբոց է. ծընցի որդի և կոչեսցես զանոն նորա Յիսուս,
զի նա փըրիեացէ ըզօղողովուրդ իւր ի մեղաց իւրեանց»: Այս յայտ-
նութենովը Մարիամի որպիսութեան մասին՝ խաղաղութիւն ըս-
տացաւ Յովսէփը և ընդունեց իւր կինը:

1. **Ավելիզ՝** իւր կեանքի մէջ համելիպած անսկլնկալ անցըերի մէջ ևս՝ խա-
ղաղ և անվըրդով է:
2. **Խոնարհամըառութիւնը** այս կեանքի անհամեալի բաների մէջ՝ ամենից
լաւ մասն է որ կարող էր ընտրել մարդը:
3. **Խնչողէս պատուականի** բան է ունենալ մի բայեկամ որպանց կարող էնք
մեք մասնակցութիւն յուտալ մեր կեանքի տրխուր և ուրախ անցըերի մէջ:
4. **Եւ բարեբաղզութեան մէջ՝** բարեկալաշը չի մուտայց իւր **Ազուածը:**
5. **Ուր ամուսինների մէջ՝** կարելի է փոխագարձ յարբանք, կարող է գը-
տանվիլ և ուր բնակումէ ուր, այն տեղ կարող է լինել և բար-
6. **Լաւ էր հոգմարդիլ** ամուսնութիւնից մի կընով հետ, եթէ նորս համ-
բաւը և նորս հետ ճշմարտապէս երջանիկ կենակցութիւնը՝ տալակու-
տակն էր թըրում քեզ:
7. **Ընկերի բնաւորութիւնը** և գործերը մի՛ դատիր, նայելով երեսութիւն.
ըշտապութիւնը շատ անդամ դրզնումն է յաւահաղըթել բցո մասին:
8. **Զը հանաշած անմեղութենին պաշտպան է Ազուած:**

2.

Յէսէւի ծննդութիւն. [Պահանջական 2.]

Մարիամը և Յովսէփը բնակումէին հազարէթ քաղաքումը:
Բայց որովհետեւ յառաջուց Միքիէ մարդարէի բերանովը ասած
կար, թէ Մեսիան՝ որին բապասումէին, պիտոյ է աշխարհ գոյ
թէթղահէմ քաղաքումը չըէտատանի, վասն այս պատճառի աստ-
ուածոյին նախախնամութիւնը այնպէս հանդիսիցըց՝ որ Օգոս-
տոս կայսրը հրամայէ աշխարհագիր առնել բոլոր չըէտատանումը,
և այս բանի համար սպարտ էր ամենայն չըէից ազգին գալ իւր-
եանց հայրենի աշխարհը: Յիսուսի ծընողը Դընողը Դաւթի ցեղից լինե-
լով՝ դիմեցին դէպ ի թէթղահէմ: Այս տեղ ծընաւ Մարիամը

իւր անդրանիկի որդին, պատեց նորան խանձարուրբով և դըռեց
մըսուրի մէջ, ըստ որում իջևանումը նեղուածք էր: Թռէպէտ
Յիսուսը այսպիսի անյայտութեան մէջ ծընաւ, բայց Աստուած
տնօրինել էր որ բոլոր աշխարհը լրակ և իմանայ նորա՝ օրհնու-
թիւն պարզեող ծընունդը: Հովիւները որ այն գիշերին Բէթ-
ղահէմի հանդէպ պահումէին խրեանց ոչխարները, մի երկնային
տեսիլ տեսան, որ ըսկըզբումը նոցա սիրալ երկիւղ ձրդեց: բայց
հրեշտակը ասաց նոցա. «մի՛ երկիւն չիք, զի ահա աւետարանեմ
ձեզ ուրախութիւն մեծ որ եղիցի ամենայն ժողովը եանն, զի
ծընաւ ձեզ այսօր փըրկիչ՝ որ է օձեալ տէր, ի քաղաքի Դաւ-
թի. և այս՝ նրշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ ի խան-
ձարուրս և եղեալ ի մըսուր»: Հովիւները այս աւետիքը լսած՝
երկնաւոր զօրութիւնքը՝ ուրախանալով այն բանի վերայ որ ամե-
նագըթած չայրը մըտքումը դըրել էր իւր որդու ձեռով ազա-
տել աշխարհը՝ ըսկըսեցին վերսկիցը օրհնել և փառաբանել Աստ-
ուած՝ ասելով. փառք ի բարձուն՝ Աստուծոյ, և յերկիր խաղա-
ղութիւն, ի մարդիկ՝ հաճութիւն: Հովիւները ըշտապէցին դէմլ
ի քաղաք, և պատմեցին ինչ որ իւրեանց պատահած էր դաշտու-
մը: Հովիւների պատմութեան վերայ զարմացան բոլորեքեան, և
Մարիամ աստուածամասյրը իւր լսած բաները խոր տըպաւորու-
մէր իւր սըրտի մէջ:

1. Ամենայն բանի մէջ որ Աստուած անօրինել է մարդուս համար, ընտ-
րումն նա միշտ ամենայարմասը հանապարհը, յաջող ժամանակը և տեղը:
2. Այսպատմեն խաւարիցը շատ անդում ծագումէ մեծ լցու. ամենայն
մեծ բան փոքրով է ըսկըսանում: ուրեմն մի՛ արհամարհիր այն բանը
որ ազգատին, փոքր և ցած է երևում:
3. Այն բարութիւնը՝ որ Յիսուսը բերեց երկրնեց, սահմանած էր աղ-
քասի և հարըստի համար: Ազքատ հովիւները եղան սցդ բանի առաջնի
լըրարերը:
4. Անակընկալ բանը յաւագուց միշտ երկիւղալի ազգեցութիւն ունի մար-
դուս վերայ:
5. Երկրիցի հրեշտակները ուրախանումն աշխարհի փըրկչի յայտնութեան
վերայ. ինչքան առաւել մարդկային ազգը՝ որի մօտ եկաւ նա:

5.

Յիսուսը Տանուիլ և նոյն Տոյլը ունացաւ Աշ. [Ղառնի. Գլւ. 2.]

Նըրէից մէջ սովորութիւն կար, որ ամենայն արու մանուկ
ութ օրից յետոյ թըլիատեն՝ ինչպէս որ սահմանադըրել էր Ար-

ըահամը, և տաճարումը ընծայելով Ապտուծուն՝ ընդունեն իւր հօրերի ուխտի մէջ և անուն դընեն նորան։ Թակալէտ Յիսուսը պիտոյ է լինէր մի աւելի կատարեալ աստուածդիտութեան և աստուածպաշտութեան առաջնորդ, բայց և նորան՝ հետեւ լով Հրեից օրէնքին՝ բերեցին տաճար, և ինչպէս Ապտուած հրամայել էր նորա ծընողներին, անուն դըրեցին Յիսուս։

Եւ Մարիամը՝ ինչպէս մովսիսական օրէնքումը մայրացեալ կանանց համար կանոն էր զըրած՝ քառասուն օր ծնննելուց յեւ ոսյ զընաց Երուսաղէմի տաճարը՝ իւր մանուկի հետ միասին, որ այն տեղ Ապտուծուն շընորհակալութիւն մատուցանէ նորա պարգևեալ ողորմած օգնութեան համար և իւր զաւակի կենդանութեան մասին։ Այս պարտականութիւնը պիտիլի էր նորան լըցուցանել, որքան առաւել հասկանումէր նա թէ ինչ հրաշալի անցըեր Ապտուած պատահեցուցել էր նորան, և թէ ինչ պէս իւր աղախնի խոնարհութիւնը բարձրացուցել էր։ Այն մի ջոցումը տաճարի մէջ ներկայ էր Սիմէոնն արդար և երկիւղած ծերունին, որ վաղուց հրաման էր բատացել չողին սուրբիցը՝ մահ չը տեսանել՝ մինչև որ տեսանէ աշխարհի Փերիկիչը։ Հառ անգամ՝ զընումէր նա տաճար՝ որ բապատէ աստուածային խոստման կատարվելուն։ Երբ Սիմէոնն ծերունին տեսաւ Յիսուս մանուկը իւր մօր գըրկումը, սիրտը վկացեց իսկցին՝ որ սա է Մեսիան։ «Արդ արձակեա՛ զգծառայս քո՝ Տէ՛ր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իւր ըզիցըկութիւն քո»։

1. Ավենայն ազգ, և ամենայն կըրօն հանդիսաւոր ծիսակատարութեամբ նուիրումէ միշտ իւր գտանալները որ սորանով պարտական են լինում՝ կատարել կարգած օրէնքները և մասնակց են լինում այն իրաւունքներին որ կըրօնը տալիս է նոյս։

2. Եթէ լինէիր գու և աւելի բանագէտ, և աւելի բարձը վիճակի մարդ, յարմարվիր այն մարդերի կարգերն և օրէնքներին որոնց մէջ ապրումէն։

3. Ավենայն նեղութենից, հպուից և վըտանդից թեթեսալով, մի՛ մուացիր Ապտուծուն պատիւ և շընորհակալութեան պատարագ մատուցանել։

4. Ինչպէս Սիմէոնը, այնպէս և ամենայն քրիստոնեայք կարող էին խաղաղութեամբ փոխվէլ այս աշխարհիցը, եթէ նոքա իւրեանց կեանքումը պյուպէս փափառէին Յիսուսի վարդապետութեանը, ինչպէս այն պատուական ծերունին։

5. Զերմեռանդ սըրտով ըսպառելը՝ մինչև որ աստուածային խոսսմունքը կատարվէին, անվարձ չէ մընում Ապտուծոյ առաջնեւ։

4.

Արևելքից եկած Մոհամ. [Մոդեն. հւ. 2.]

Վասուած կամենումը՝ որ մարդկային ազգը ուշադիր լինի Յիսուսի Քրիստոսի յայտնութեանը. այս պատճառաւ ընտրեց նա զանազան հմարներ այն միջոցումը որ նորա որդին աշխարհ էր եկել: Ահա այսպէս՝ Յիսուսի ծնելուց փոքր ինչ յետոյ երևեցան Երուսաղէմի մէջ աստեղագէտ և փորձառու թագաւոր մարդեր (Մոդը) որ հարցընումէին՝ թէ ուր է չըէից նորածին թագաւորը, ըստ որում եկած են երկրագագութիւն տալ նորան, որովհետեւ իւրեանց աշխարհումը տեսած էին նորա աստղը: Այս բանը լըսելով չերովդէսը՝ որ Հառմայեցց հրամանով թագաւոր էր չըէաստանի վերայ՝ զարհութեցաւ, ժողովեց իւր մօտ չըէից բոլոր քահանացապետը և դըմիրը և սորանցից հարցընելով իմացաւ թէ ինչպէս չին կատարանի մէջ ասած կայ՝ պիտոյ է Քրիստոսը ծննանի Բէթղահէմ քաղաքումը: Այն ժամանակը՝ չերովդէսը ծածուկ գանցեց իւր մօտ այն եկաւոր իմաստունքը, հարցուփորձ արեց նորանցից և հրամայեց նոցա որ՝ եթէ կը գտանեն այն նորածին մանուկը՝ յետ դառնան և իմաց տան իւրեան, որ ինքը ևս կարողանաց երկրագագութիւն մատուցանել նորան: Մոդը՝ առաջնորդելով նոցա իւրեանց տեսած աստղը՝ գընացին Բէթղահէմ, գլուխն ոյն տեղ Յիսուս մանուկը իւր մօր հետ միասին, վայր ընկան և երկրագագեցին նորան, բաց արեցին իւրեանց գանձերը և պատարագ բերեցին նորան՝ ոսկի, կընդրուկ և զըմուռս: Այս միջոցումը գուցէ թէ յետ կը դառնացին դէպ ի չերովդէս, եթէ չունեցած լինէին կամկածանք: Այս բանի վերայ մասածելով՝ տեսիլ տեսան և իմացան որ չերովդէսի դիտաւորութիւնը չար էր Յիսուս մանուկի մասին, վասն այս պատճառի ուրիշ ճանապարհով գընացին իւրեանց աշխարհը: Թահպէտ ըլ յաջողվեցաւ չերովդէսին այն մոգերի ձեռով հասանել իւր չար նպատակին դէպ ի Յիսուս մանուկը, բայց նորա անրգգամութիւնը ըլ դադարեց: Մի այլ հմար որոնեց նա իւր կարծեցեալ հակառակորդը վերացընելու. հրաման արեց որ կոսորեն Բէթղահէմի բոլոր մանուկները որ երկու տարեկանից ցած էին: Այս պէս՝ կարծումը չերովդէսը՝ անսպատճառ մեռանելու է և Յիսուսը. բայց Վատուած և այս վըտանգիցը փըրկեց իւր օծեալը: Վատուծոյ հրեշտակը երևեցաւ Յովակին երազի մէջ և ասաց նորան. «Արի՛ առ ըզմանուկը և ըզմանցը իւր և փախիր յեգիու»

տոս և անդ լինիջեր ցորժամ ատացից քեզ։ Յովսէփը կատարեց ինչն որ Աստուած հրամացել էր նորան. բայց երբ որ նա իւր ընտանիքով հեռացած էր, իսկայն կատարեց յաւ թագաւորի անողորմ հրամանը։

Հերովդէսի մեռանելուց յետոյ՝ Յովսէփը հրամանով նոյն հրեշտակի որ նորան ըզգուշացուցել էր, վերադարձաւ իւր հայրենիքը. բայց կամենալով հեռի մընալ չերովդէսի որդի Արքելոսուից որ այն ժամանակումը կառավարումէր Հրէաստան, կըրկին հաստատեց իւր տունը՝ ‘Կազարէթ քաղաքի մէջ։’

1. **Ճըշմարիա** առաքինութեան և իմաստութեան համբաւը տարածվում։ ամենայն աշխարհներում, և ամենայն տեղ հաւանութիւն է գլուխում։
2. **Զար խըլճմասների** հետ ընկերակցից է միշտ երկիւղը։
3. **Ճերովդէսը** արտաքուստ ցոյց էր սապէս՝ որպէս թէ ուրախ էր մի նոր արքայի ծընելու վերայ, բայց նորա սիրառ լի էր դաւաճանութենով և կեղծաւորութենով։
4. **Զար խորհուրդները** զիսէ Ալտուած ոչընչացուցանել։
5. **Ըատ մեծ կարծէք մի՛ ունեցիր երազների մասին.** Նոքա ծնանումնն միայն այն բանիցը որ մեք արթնութեան ժամանակը լրած էնիք, և յառաջանումնն այն սաստիկ տպաւորութենիցը որ արտաքին առարկոցը ներագրծումն մեր հոգու վերայ։ Ճըշմարիա է՛ երազները շատ անդամ կարողութիւն են տալիս մեզ նայելու մեր ուրսի մէջ, նոյնովէս շատ անդամ բաց են առնում մեր աչքերը՝ որ հանաշնկ այն բաները որոնց մեք առաւել յաճախ և աւելի սիրով պարագումնեք։ Բայց՝ այն մուգերի տեսիլը մի առտուածեղին աղջեցութիւն էր, և մի յատուել պատղամ էր առտուածակոյն կողմից։
6. **Յօժարութեամբ** հետեւիր այն ակնարկութեանը որ առտուածային նախախնամութիւնը առնում։ քեզ։
7. **Ըատ անդամ** բարի անձը մի տըխուր անդրի առիթ է լինում. այդ բանը թէպէտ արբանեցուցիչ էր բարի անձին համար, բայց չէր կարող իւրեան յանդիմանելու, սպառձառ դառնալ։
8. **Ալտուած իւր բարեկամներին պաշտպանումէ։**
9. **Զար մարդերիցը հեռացեր։**

5.

Տառերին դասօն Յէսուսը դամարի մէջ. [Ղաւակ. 41. 2, 41—52.]

Յիսուսը դեռ ևս փոքր հասակում նշանաւոր դրտանվեցաւ մեծամեծ հոգեղէն շընորհներով և մի անօրինակ հանձարով։ Առոք

դիրքը ասումն նորա մասին. «Եւ մանուկը ամէր և զօրանսյր լի խմաստութեամբ, և շընորհը Տեառն էին ի վերայ նորա»:

Այս բանը վկայութենով հաստատեց նա մի անգամ, երբ որ նորա բարեպաշտ ծընողքը՝ զատկի տօն կատարելու համար՝ նորա հետ միասին գնացած էին Երուսաղէմ: Այն ժամանակը տասերկու տարեկան էր Յիսուսը: Տօնի օրերը կատարելուց յետոյ՝ Մարիամը և Յափաէիլը պատրաստվումէին որ յետ դառնան, բայց ըլք գրտան իւրեանց որդին: Կարծելով՝ թէ նա միւսների հետ ուղեկից լինելով յառաջ է գնացել, հանգը բառացան ըսկրդը բումը. բայց երբ որ մի օրաչափ ճանապարհ անցել էին և ըլտեան իւրեանց մանուկը, ահ ու դող բրոնեց ծնողական սիրտը՝ մի գուցէ: Թէ իւրեանց զաւակը վլսուանդի հանդիպած լինի: Յետ դարձան Երուսաղէմ, և ըստ որում Յիսուսի հետ միասին եղած էին տաճարումը, այս տեղ որոնեցին և գրտան նորան՝ նըստած վարդապէտների հետ որոնց լըսումէր և հարցընումէր այնպիսի իմաստութենով, որ ամեններեան զարմանումէին նորա հապուն իմացականութեան վերաց: Բայց ծընողքը բարանչացած էին Յիսուսի արարքի վերաց, և Մարիամը բերան բացեց պապէս: «Ո՞րդ եակ՝ զի՞ն գործ գործեցեր դու ընդ մեզ. ահաւասիկ հայր քո և ես տառապէտաք, խընդրէաք ըզբէջո: Յիսուսը՝ որպէս թէ այն մեծախորհ հուրդ նապատակը որի համար Ազտուած առաքել էր նորան աշխարհ, յանկարծ լըսսափայլեալ պատկերացաւ նորա հոգու հանդէպ և այս առաջին անգամը բացայսայտվեցաւ. նորան, Յիսուսը պատասխանեց իւր ծընողներին այսպէս: «Զի խընդրէիք զիս, ոչ գիտէիք եթէ ի տան հօր իմց սլարտէ ինձ լինել»: ծընողքը ըլք հասկան նորա ասածի խորհուրդը, բայց նա նոցա հետ միասին յետ դընաց Կապարէթ, հնազանդ էր նոցա, և զարգանումէր իմաստութենով և շընորհքով Ազտուածանին և մարդուց: Այս անցը Մարիամի վերաց շատ խոր տըսպաւորութիւն էր արած:

1. Հատ անդամ՝ երեխայի մէջ երեւումն յառաջուց, թէ աշխարհը ե՞նչ պիտոյ է ըսպասէր նորանից ժամանակով:

2. Ո՛վ ծընողք՝ ըդդանս կացէք ձեր երեխաների մասին. Ծցը մի՛ տաք որ նոքա առանց ձեր հրամանին հեռանան ձեզանից, ո՛չ միշտ կը գըտունէք նորանց տաճարի մէջ, ինչպէս Ազտուածանինը՝ իւր որդին:

3. Ո՛վ զաւակ՝ աշխատնը ժեթեացընել այն հոգերը և տառապանքը որ դու պատրաստումն քո ծընողներին:

4. Որոնեցէք ձեր երեխաների համար առելի լսու ընկերակցութիւն:

5. Եւ գուե՛ երեխայք, հնազանդ կացէք ձեր ծընողների խօսքին, ինչպէս Յիսուսը հնազանդ էր իւր ծընողներին:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒՅԾ

Այն ժամանակիցը՝ երբ Յիսուս Քրիստոսը ըսկըսնց Խւր վարդապետական պաշտօնը, մինչև նորա վերջին Ճանապարհորդութիւնը Վրուսաղէմ՝ Զատկի տօն կատարելու համար։

4.

Յէսուս Տէղը բնութագութեան Յունանէն կուտակութէ յառաջ։

[Պահէ. հէ. 5. 21—25. 7. 18—28.]

Փլրկչի երիտասարդութեան և առաջին այրական հասակի անցքերը պատած են մըթութենուլ։ Սուրբ պատմագրութիւնը այդ մասին գրեթէ ոչնչէ տեղեկութիւն չէ տալիս։ Յովհաննէս կարապետը քանի մի ամիս ծեր լնելով քան թէ Յիսուսը՝ աւելի վաղ ուսուցիչ հանդիսացաւ՝ որ Խւր հայրենակիցը յորդորելի հաւանեցուցանէ հաճութենով լնդունել Յիսուսը։ Քաւ լիցի՝ թէ սց տղամարդներից մինը կամ թէ միւսը նախանձոտ աչքով նայած լիներ խւր ընկերի վերայ. ամեննեին ոչ. այլ նոցամօրերի բարեկամութիւնը փոխվել էր և նոցա զաւակների վերայ. Յովհաննէս կարապետը քաջ գիտէր՝ որ Խւր փառքը պիտոյ է նուազի, երբ որ Յիսուսը երեելու էր, բայց ի վերայ այդը ամենայնի ասումէր. «Որ ի վերուստն զայ, ի վերոյ է քան զամենայն. որ յերկրէ ասոի է, յերկրէ է և յերկրէ խօսի»։ Երբ Յիսուսը կամենումէր ըսկըսանել Խւր սուրբ և նուիրական պաշտօնը, այսինքն՝ ուսուցանել մարդկային ազգը, եկաւ Դավիթիցի գէոյ ի Յորդանան գետը և մըկըրտութիւն խընդրեց Յովհաննէս կարապետից՝ ինչպէս այլ մարդկիկը։ Յովհաննէսը չը կամենալով յանձն առնուլ Յիսուսի խընդիրը՝ ասումէր. ինձ պիտոյ է ի քէն մըկըրտիլ, և դու առիս գաս։ Բայց որովհետեւ Յիսուսը այսպէս վայել տեսաւ, թոյլ սուեց և միւսը։ Երբ որ Յիսուսը մըկըրտվել էր՝ խկցն բացվեցան նորա վերայ երկնքի գրունդութիւն չոգին սուրբ աղաւնակերպ իջաւ Յիսուսի վերայ, և ժողովրդին լըսելի եղաւ վերևիցը մի ձայն որ ասումէր. «Դա է որդի իմ սիրելի ընդ որ համեցայ»։ Այս գործողութենովը Աստ-

ուած որպէս թէ կընքեց և հաստատեց Յիսուսը՝ որ լինի մարդկութեան ուսուցիչ:

Տայց թէ միւս կողմից ինքը Փըրկիչը ինչպէս արդար սըրտով խոստովանեց Յովհաննէս կարապետի արժանաւորութիւնը, ոյդ բացայնու է ներքեւումը դըրած բանեցիցը:

Թէպէտ ինքը Յովհաննէս բոլորովին հաւաստի էր Յիսուսի աստուածոյին առաքելութեան մասին, բայց նորա աշակերտը ոչ ամենն էն: Այցա երկմոռութիւնը գըլխովին փարաստելու համար՝ Յովհաննէս մըկըրտիչը՝ երբ որ բանտի մէջ էր՝ ուզարկեց նորանցից երկու մարդ Յիսուսի մօտ, որ ականատես լինելով՝ հաւաստութիւն բատանան նորա բարձրութեան մասին: Երբ որ սոքա հարցըրեցին Յիսուսից՝ դու ես այն մեսիան որ գալոց էր, թէ ուրիշն ըստասենք. պատասխանեց Յիսուսը՝ գընացէք պատմեցէք ինչ որ տեսաք դուք. «Կոյցը տեսանեն, և կաղք գընան, բորոտք սըրբին, խուլք լըսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին»: Յովհաննէսի աշակերտը հեռացած՝ ըսկըսեց Յիսուսը նորա մասին սցավիւս խօսել ժողովըրդի հետ. Ի՞նչ գընացիք դուք անապատումը տեսանելու. եղէզգըն որ հողմից այս կրզի և այն կողմէ էր շարժվում. մի մարդ՝ փափկութեան հանդերձով զարդարված. այդ պիտիքը թագաւորների տըներումն են. ապա ինչ գընացիք տեսանելու անապատումը. մարգարէ. այս ասեմ ձեզ՝ առաւել ևս քան թէ մարգարէ. ձըշմարիտը ասեմ ձեզ՝ կանանց ծընունդների մէջ և մարգարէների մէջ ըը կայ ոչ մինը ես, որ մեծ լինի քան թէ Յովհաննէսը: Ահա թէ ինչքան պատմվումէր Յիսուսը Յովհաննէս կարապետի արժանաւորութիւնը:

1. Յովհաննէսից ուսէք համեստութիւն, Յիսուսից՝ օտարի արժանաւորութիւնը յարդել և խոստովանել. երկուսիցը միասին՝ հաւաստրիմ գործակցութիւնի բարի բանի մէջ:
2. Յիսուսի աստուածակցոյ կողմից առաքելութեան գործը անսուրակոյս հաստատեցաւ այն երկնային վրկայութենովը՝ թէ «Դա է իմ ուրեմնի և հաճոյական որդեն. գործն լըսեցէք»:
3. Դորձք առելի կենդանին են խօսում՝ քան թէ բերանի ստացուածքը:
4. Այն մարդուց՝ որ անկայուն է և չէ՝ սովորած «Հինչ պակասութեան տանել, չէ կարելի շատ բաներ յուսուալ»:
5. Յիսուսը ըը կամեցաւ մարդուհաճութիւն առնել. այս պատճառով ըսկըուց եւը գովաստմութիւնը Յովհաննէսի վերայ՝ երբ սորա աշակերտքը հեռացած էին:

2.

Յիսուսի էպիչառելուն. [Սաբա. 4. 4.]

Փըրկիչը Յորդանանի գետումը մըկըրտվելուց յետոյ՝ Առտուծոյ հոգովը վարվեցաւ դէմի և անապատ, որ հանդարտութեամբ մտածելով այն մեծ գործի վերաց՝ որ սիրաց է ըսկըսանէր՝ հաստատէ և ամրապլնդէ իւր սիրալը: Քառասուն օր և քառասուն գիշեր մընաց այն տեղ՝ հրաժարված սովորական կերակուրներիցը: յետոյ քաղցած էր: Փորձիչը երևեցաւ նորան և խօսեց այսպէս. Եթէ Աստուծոյ որդի ես, ասա՛ որ այս քարերը հաց գառնան. Յիսուսը պատասխանեց. ոչ թէ հացով միայն ապրումէ մարդը, այլ՝ ամենայն բանով որ եւանումէ Աստուծոյ բերանիցը: Միւս անգամ՝ տարաւ նորան սատանան և կանգնեցըրեց տաճարի աշտարակի վերաց և ասաց. եթէ դու Աստուծոյ որդի ես, վայր ձը գիր քեզ. Աստուծոյ հրեշտակիները վեր կ'առնուն քեզ ձեռքերի վերաց, և ոտք երբէք չի զարկի քարի: Տէրը պատասխանեց այսպէս. գըրած է՝ որ դու չը փորձես քո տէր Աստուծը: Սատանան դարձեալ առաւ տարաւ նորան մի շատ բարձր սարի գըրլուխ և ցոյց տուեց նորան աշխարհի բոլոր թագաւորութիւնները և նոցա փառքը, և ասաց նորան. ահա այս բոլոր հարցառութիւնը քը քեզ կը բաշխեմ, եթէ խոնարհելով երկիրպաղանես ինձ. այն ժամանակը զայրացաւ Յիսուսը և ասաց. գընա՞ կորի՞ր սատանայ, որովհետեւ գըրած կայ. քո տէր Աստուծուն միայն պիտոյ է երկիրպաղանես և նորան միայն պաշեսու: Ազա թողեց նորան փորձիչը, և հրեշտակիները մօտեցան և պաշտումէին նորան:

1. Աւանձնութիւնը աւելի պատշաճաւոր է ծանրակըշիւ մասածութենների համար, քան թէ աշխարհի խուլութիւնը. բոյց և առանձնութիւնը ունի իւր փորձութիւնը: Արթուն կացէք և ազօթք արեցէք:
2. Մարդը փորձվումէ երբ որ իւր սեղչական մարմանիրութենովը դըրգութիւնը: և հրապուրվումէ:
3. Դէպ ի չըրը մի՛ գործ ածիր Սուրբ գիլը և նորա մէջ պարանակած աստուծածային ասացուածքը, ըստ որում՝ դու կամք ունեիր՝ բառ և իւմաստ ծըռելով՝ քո թէ թեւամտութիւնը և վաս գիտաւորութիւնքը ծածկել կամ՝ արդարացընել:
4. Դարս հակառակ՝ այնպէս քաջ ծանօթացիր դու Աստուծաշընչի մէջ ասած բաների հէտ՝ որ դու փորձութեան ժամանակը կարտանան նորանց ինչողէս պահապան հընշտակ քո մօտ ունենալ, նորանցով զբահաւորիվ և ամրանալ:

5. Եթէ շարը տեսանումէ՝ թէ կարող չէ մեղ իւր կամքին հաւանեցացանել, հրաժարվումէ մեզանից ամօթալ. բայց մընումէ մեղ այն մեծագանձ վընդութիւնը ուրտախ՝ որ մեք առաւել Ազուուծոյ ենք հազանդէլ՝ քան թէ մարդու։

3.

Յիշուու ընդուռամբ իւր համար ողաջնորներ
[Մարտի. հւ. 4. Մարտ. 1. Դաստ. 5. 6.]

Կայելով այն սակաւամիջոց ժամանակին որ պիտոյ է Ազուուծութորդին մընար աշխարհիս վերաց, նորան հարկաւոր էին օդնականք կամ աշակերտք՝ որ կէս մի նորա աշխարհային կեանքի ժամանակումը ինքան կարելս էր աւելի տարածէին այն երկնային վարդապետութիւնը, և կէս մի Յիշուուից յետոյ շարունակէին ուսուցանել նոյն սըրտով և հոգով ինչպէս նա միշտ նոցա հետ լինելով՝ ուսուցել էր նոցա: Հարկաւոր չէր՝ որ այս աշակերտները լինէին երեւելի մարդեր՝ ըստ որում այդպիսիքը չէին ունենալու վըստահութիւն դէպ ի Յիշուուը, այլև չէին կամենալու հրաժարվել իւրեանց փառահեղ կեցութենիցք: Կա՛ որին պիտոյ է հետեւող լինէին իւր աշակերտքը, չունէը ինքը մի տեղ դընելու իւր գլուխը, ուրեմն ինչ կարող էր տալ իւր աշակերտներին: « Ամանապէս հարկաւոր չէին նորան առանձնահանք մարդիկ՝ բառ որում այս գործի մէջ առաւելապէս պիտոյ էին հաւաս և բնական բզգացողութիւն բարի և աստուածոցին բանի համար: Այս սպատմառաւ դարձուց նա իւր դէմքը դէպ ի ձըկնորսների խըրճիթը Գենենեսարեթ ծովալի մօտ: Այս տեղ հանդիպելով նա երկու եղբայր Ոիմովին Պետրոսին և Անդրէասին, որ իւրեանց ուուկանը ծովն էին ձրդել, ասաց նոցա՝ եկեցէք իմ հետ, ես ձեզ կ'ուսուցանեմ մարդիկ որաւալ: Նոքա իսկոյն բաց թողեցին իւրեանց ձըկնորսական գործիքը և գընացին Յիշուուի քամակից փոքր մի յետոյ ընկերացան նորա հետ Յակովոս Զերեգեայ և Յովհաննէս, և այս չորեկեանը էին Յիշուուի առաջին աշակերտքը: Բաց ի սորանցից՝ ընտրեց Տէրը և այլ աշակերտներ՝ որոնց անուանքը սոքա են. Փիլիպոս, Բարթողովմէոս, Թաովմաս, Մաթուէոս մաքսաւոր, Յակովոս Ալֆեայ, Ղարէոս՝ մականուանեալ Թաարդէոս, Ոիմովին կաննանացի և Յուդիտ ակարիովտացի, որ ի միասին ասվեցան պատճենական առանձնահանք Յիշուուի: Բայց Յիշուուը ունէր և 70 այլ աշակերտներ որ դեռևս իւր կենդանութեան ժամանակումը քարտով ուղարկեց հեռաւոր աշխարհներ: Ամեների սըրտի վերաց

կապեց այս խօսքը «ձըրի առել էր և ձըրի տուեցէր», առ հասարակ ին սիրով պատուէրներ տալով նոցա և խընդրելով որ սիրոց բանը սիրով .քարոզեն՝ արձակեց նորանց դէպ ի ժողովը:

1. Եթէ ընտրած ես դու որպէս բովանաւոր աստուածային մեծ խորհուրդներին, կամ՝ եթէ յանձն ես առնում մի մեծ և ազնիւ դործ, հոգ ապա որ քո պատրոցքը քո հոգովը շարունակեն և աւարտեն քո ըսկը աստուածը :
2. Ըզգուշութեամբ ընարիք այն մարդերը որոնց որ և իցէ մասնե ընծայումն քո աւանձին հաւատու: Փորձիք ամենները և վեր առ աւելի լաւերը :
3. Մի՛ մոածիր թէ միայն այն մարդերի մէջ՝ որ պարձենումն իւրեանց ընդունակութեններովը և գիտութեններովը՝ կարող էիր գըտանել առաւել իմաստութիւն և աւելի մեծ դործակցութիւն քո ազնիւ ձեռնարկութենների մասին: Աւաքինութիւնը, հաւատու և սէրը աւելի յանի ընակումն խըրճիթիւների մէջ՝ քան թէ ապարանքներումը:
4. Բարի բան արս՝ աւանց վարձատրութիւն յաւալու:
5. Հաչմախընդրութիւնը խափանում; ամեն ազնիւ բանի օդուալը:
6. Յօժարութեամբ զործ կատարիք, երբ որ մինը պահանջումէ քերպանեց մի բարի բան աւենել քո եղանցըակիցների համար:

4.

Յէսուս առաջանահան. [Յովանն. հլ. 2. 5.]

Եշարհի Փըրկչի առաջն և գրլխաւոր գործը այն էր՝ որ ժողովրդը, որ ուզզէ նորա կարծիքը Աստուծոյ և յաւիտենական կեանքի մասին, որ առաջնորդէ նորան դէպ ի ուղղութիւն, դէպ ի այն ձանապարհները որոնցով կարելի էր երկնացին շընորհին հասանել: «Որա նպատակը այն էր՝ որ մովսիսական օրէնքը մաքրէ մարդկեղէն սահմանադրութեններից, որ հաստատէ աստուածպաշտութիւն հոգով և ծըշմարտութենով, որ խափանէ կեղծաւորութիւնը և առ ի ցոյց (երեսից) բարեգործութիւնը, և Միրց սիատուիրանքովը այնպիսի՝ միայն երաննելի՝ հաղորդութիւն հիմնաւորէ մարդու և Աստուծոյ մէջ, ինչպէս բարի սրգինների և նոցա հօր մէջ տեսանվումէ:

Եյսպէս ուսուցանելով շըրջումէր Յիսուսը Պաղեստինայի մէջ, բայց աւելի յաձախ գըտանվումէր Գալիլեայի աշխարհումը, ըստ որում այս գաւառի բնակիչքը դեռևս աւելի անարատ էին և Հըրէից մէջ աւելի ընդունակ էին երկում Յիսուսի տուածկունի համար: Երբեմն լըսումէին նորա քարոզութիւնը տաճարի մէջ, երբեմն մասնաւոր տըներում և ուսումնարանի մէջ, երբեմն սարերի վերսց՝ ինչ տեղ հաւաքվումէին ջերմեռանդ անձինք,

երբեմն դաշտումը կամ թէ քաղաքների մէջ։ ‘Կա ջանադիր էր
մանաւանդ՝ որ Ապսուծոյ կամքը քարողէ հասարակ ժողովը թիւն,
որովհետեւ սոքա՝ կէս մի աւելի բազմաթիւ են, և կէս մի աւելի
կարօտ էին օգնութեան և աւելի անկարող էին ուղղել իւրեանց
ապահանեալ սիրտը և լրւսաւորել իւրեանց տրդէտ միտքը. թող
ոյս. հասարակ ժողովուրդը հեռի լինելով աշխարհի փափկու-
թենից և վայելութենից՝ Յիսուսը կարող էր նոցա սիրտը աւելի
պատրաստ գրանել իւր վարդապէտութեան համար, որ խըս-
տիւ և ծանրութեամբ պահանջում։ ամենից յառաջ խընդիրե-
ցէր Ապսուծոյ արքայութիւնը, և ամենայն միւս բաները ինքնին
կը յաւելանան ձեզ։ Յիսուսը իւր լոլոր ասացուածքը հաստա-
տումէր իւր յատուկ՝ նմանողութեան արժանի օրինակներով։

1. Եթէ ըսկըսանումես քս աշխատութիւնքը, մտածիր թէ նըը ամենից
հարկաւորն էր, և սորմեով կը սկըսանես քս օրական դործ։

2. Մինչեւ որ չես ըսկըսէլ առուցանել ուրիշներին, ծանօթացիք նոցա
հոգու և ուրբախ որպիսութեանը, որ կարսկանատ խնասալ թէ ենչ ձաւ-
նաղարհով ովարտ է գընալ՝ ուսանողներին Ճըշմարտապէս օդուակար իւ-
նելու համար։

3. Ամենայն աեղ՝ ուը կը գտանէիր դիսպակ ժամանակ, գործ ածա քս դո-
րութիւնքը մարդկութեան օդուի համար։

4. Վղրաներին քարողումէ Աւետարանը։

5. Ո՛ւ քրիստոնեայ. մսիթարիվիք քս ըստարակարտ վեճամի մէջ. ոյդ վի-
ճակը աւելի փոքր խափանարար է քս հաճոյանալուն Ապսուծոյ։

6. Մի վարդապէտութիւն ընդունելի աւենելու համար նոյն խէլ վարդապէ-
տի կենդանի օրինակը աւելի ներգործող էր քան թէ քըսնութիւնը։

5.

Յէսուսի Ապսուծոյը.

Յիսուս Քրիստոսը՝ ժողովուրդը ուսուցանելու ժամանակին
յարմարվելով իւր լրսողների հարկաւորութեանը՝ խօսումէր առակ-
ներով, որ աւելի լրսասիսյլ և հասկանալի լինէին իւր վարդա-
պէտութիւնքը։ Աս առակներին փոքր մի ուշադիր լինելով՝ կը
տեսանէինք նոցա մէջ աստուածային հոգոյ այն ձոխ և հարուստ
բըղխուածքը որոնցով Ապսուծոյ որդին կամենումէր մարդկացին
ազգը ուղղել, ուսուցանել և մսիթարել։ Ուրեմն թող ծանօթա-
նանք զորանցից քանի միներին։

Ա. Կըստումքալ ռդդին. [Պահպ. հա. 15.]

Փարփսեցիք և գըսպիրքը բամբառումէին Յիսուսը՝ թէ մաքսաւորների և մեղաւորների հետ հազորդութիւն ունի որ անարժան էր Աքտուծոյ որդուն, ինչու նա քարոզումէր իւր անձը՝ խօսեցնոց հետ այս գեղեցիկ նմանութենովը; Մի մարդ ունէր երկու որդի որոնցից մինը խընդրեց հօրիցը որ բաժին տայ նորան իւր կոյքից՝ ինչքան կը հասանէր: Հայրը կատարեց որդու խընդիրը, և աս իւր մասը վեր առած՝ գընաց հեռաւոր աշխարհ և անառակութենով վատնեց իւր ունեցածը: Վերջին քբաւորութեան մէջ լինելով՝ հարկադրվեցաւ մի ուրիշի խողարած դառնալ և ցանկանումէր լրցուցանել իւր կարեքը խոզի կերակրով, բայց և այս չէին հասուցանում նորան: Մտածելով իւր թըշուառական վիճակը և իմանալով իւր յանցաւորութիւնը՝ խօսումէր ինքը իւր հետ այսպէս. քանի վարձկանք իմ հօր տանը լիանումն հացով, բայց ևս այս տեղ սովամահ եմ լինում. կ'երթամ իմ հօր մօտ և կ'ասեմ նորան. իմ հայր. մեղանչել եմ Աքտուծոյ և քո առաջեր. արժանի չեմ ասվելու քո որդի, ընդունիր ինձ որսպէս քո վարձկանների մինը: Այսպէս յետ զարձաւ իւր հօր տունը: Հայրը միւսանգամ տեսանելով իւր կորուսեալ ու մեռեալ կարծեցած որդին, ուրախացաւ, գըրկեց և համբուրեց նորան, հրամայեց իւր ծառաներին որ բերեն հագցընեն նորան իւր առաջին ըզգեստը, մատանի դընեն ձեռքը և կօշիներ կապեն ոտերին, այլև ուրախութեան սեղան պատրաստեն: Այս մեծահանդէս պատրաստութիւնը տեսանելով հօր աւագ (աւելի հասակաւոր) որդին, տըրտմեցաւ և ըսկլաեց հօր հետ այսպէս խօսել. քանի՛ տարի է որ ես ծառայումեմ քեզ, երբէք քո պատուիրանից անցած չեմ, բայց մի ուլ ես չես տուած ինձ՝ որ իմ բարեկամներիս հետ վսիցէի. բայց այսօր հրամայեցիր մորթել պարարտ եզր այն քո որդու համար որ քո կոյքը պոռնիկների հետ կերած՝ եկել է այսօր: Պատասխանեց հայրը՝ որդի, զու միշտ իմ մօտ ես. ինչ որ իմն է՝ քոն է, բայց ուրախ լինել և խընդալ պարտ է՝ ըստ որում քո եղբայր մեռած էր և կենդանացաւ, կորած էր և գըտանվեցաւ:

1. Անկախ կեցութիւնը չէ միշտ մեր երջանկութեան աղբեւրը. պատանի մարդը շատ անդամ՝ քաղցր է կարծում այս աղատութիւնը. բայց այդ աղատութիւնը յաձախ անդամ՝ մի մոլորեցուցիչ մտածութիւն է:

2. Երանի՛ այն մարդուն որ զըլջումէ իւր սիսալանքների վերայ:

3. Բայց՝ ոչ թէ միայն բարի խորհուրդների է յըզանաւմ՝ իւր ոըրտի մէջ,
սյմ նարանց կատարումն է տալիս:
4. Յոյսը գեղ ի մի ներողամիտ հայրական ոիրան անպըսուղ և ամօնժալի
չէ մընաւմ:
5. Ուրախացիք՝ եթէ հարկաւոր չէր քո փըրկութեան վերայ ուրախութեան
տօն կասարել, սյու ուրախութեւնը՝ արասասուքի գին է:
6. Մի հայր չէ հրաժարվում և ոչ մինիցը իւր սրդների մշջ. նորան
հեշտ չէր հրաժարվել այն սրդուցը ևո՞ որ նորա անուանը ամօնժ էր
բերում և նորա ոըրտին ցաւ էր պատրաստում:
7. Դառ չեմ բարի, եթէ գըժաւարանումնը ոիրալը ուրախանուլ՝ երբ որ
բարի կողմը յաղթող է գըտանվել:

Ապահով է մասսան:

Վաղաշխարող մեղաւորը շընորհ է գըտանում Աստուծոյ առաջեւ:

Է. Եյթու Տէշիները. [Մասն. հլ. 20.]

Հիմուսը միանգամ խօսելով իւր աշակերտների հետ երկլն-
քի արբայութեան վերայ, բերեց այս առակից՝ Մի տանուտէր մարդ
դընաց առաւօսուն և վարձեց իւր այգու համար մըշակիներ, ա-
մեն մինին մի դահճեկան օրական վարձ նշանակելով: Յետոյ տե-
սանելով՝ որ այգու գործը կարօտ էր աւելի մըշակիների, գընաց և
չորս ջոկ ժոկ ժամերի մէջ վարձեց միւս մըշակիներ և ուզարից ց
սյդին, այնպէս որ վերջին եկողները՝ օրական գործը աւարտելուց
մի ժամը յառաջ բըռնած էին, ուրեմն և աշխատեցին միացն մի
ժամ: Երեկոյին ամեներեան լստացան մի դահճեկան, այս հա-
ւասարապիս վարձատորութիւնը ղըժուար թուեցաւ այն մըշակինե-
րին որ առաւօսից վաղ աշխատանքի մէջ քըրմնած էին. այս պատ-
ճառով տըրտըն ջումին տանուտիրոջից. սա պատասխան տուեց այն
մըշակիների մինին. լնկեր, ես չեմ զըրկում քեզ, ուու յանձնն
առար մի դահճեկանով գալ աշխատել իմ սյգումը. վեր առ ինչ
որ քեզ պատկանումէ և գընա. մի՞ թէ չունիմ ես իրաւոնք իմ
կոյքիցը տալ ինչքան կը կամենայի. կամ թէ չո՞ր է քո աչքը,
որովհետեւ ես առատ եմ: Ահա սյսպէս՝ երկլնքի արբայութեան
մէջ առաջնորդը կը լինին վերջինք. հրաւիրեալքը շատ են, բայց
ընտրեալքը՝ սակաւ:

1. Ըստ մարդու համար գըժաւար էր տեսանել որ մեք դէպ ի ուրիշնե-
րը առատածեւն ենք, ըստ սրում գէպ ի նոյց կողմը առատածեւն չենք:
2. Խընդիւը այն չէ որ մի մարդ երկար էր ապրում աշխարհիս վերայ, սյու-

այն է խընդիրը՝ թէ Ենցուս եր Նորա կեանքը։ Կարձ կեանքը կարսղ է շատ անդամ աւելի յարդ ունենալ Աստոծոյ առաջև՝ քան թէ մի շատ երկարաժիղը։

Աշունի իշտորը.

Մի՛ կարծիր թէ դու իրաւունք ունիս՝ երկնային երանութենից աւելի մեծ մասն պահանջել, բատ որում դու աւելի երկար քրիստոնէութեան անդամ էիր։ Ազագայ քրիստոնեայքը քեզանից սպակաս չեն լինելու, եթէ նորա Յիսուսի վարդապետութեանը հաւասարապէս կը հաւատան և հետեւող կը լինին։

Հ. Յէսուսան էսպէսէ աշքայուաննեւու նմոնէց լուսում դասն էպարանէ (Հոյ) առ առ լինին։
[Մատթ. հլ. 25.]

Տասը կուսանք՝ խօսումէ Յիսուսը՝ վեսային և հարսին յառաջ գընացին։ սորանցից հինգը յիմար էին, և հինգը՝ իմաստուն։ Յիմարը վեր առան իւրեանց հետ լապտերներ, բայց ձէթ՝ ոչ։ իմաստունքը վեր առան և ձէթ իւրեանց լապտերների հետ միասին։ Բայց որովհետեւ փեսայի գալրւստը երկարացաւ և կուսանքը ձանձրացան լապտաելով. այս պատճառաւ քուն մըսան ամեներեան։ Վէս գիշերին ձայն բարձրացաւ՝ թէ ահա գալիս է փեսան, հանդէպ ելքը։ Կուսանքը ըսկըսեցին իւրեանց լապտերները պատրաստել, բայց այն հինգ յիմարներին պակասեց ձէթը։ Նորա խընդրեցին միւսներիցը որ իւրեանց իւղեցը տան։ սորա ըսկ կամեցան տալ, որովհետեւ ինքեանք կարող էին յետոյ նոյնպէս կարօտ մընալ։ Այսպէս յիմար կուսանքը ըստիպվեցան գընալ վաճառանոց և իւղ գընել։ Այս միջոցումը եկաւ փեսան, և հինգ ներկայ գըտանված կուսանքը մաննակից եղան հարսանիքն։ Յետոյ հասանումն և միւս կուսանքը, բայց հարսանիքի դուռը փակած են տեսանում, և թէպէտ խընդրումն։ Տէր Տէր, բաց մեզ, բայց նա պատասխանումէ. ոչ գիտեմ ըզձեզ։ Պասն այս պատճառի արթան կացէր, բատ որում ըսկ գիտէր ոչ օրը և ոչ ժամը՝ երբ գալոց է որդին մարդոց։

Աշունի իշտորը.

Ով որ պատրաստութիւն տեսանելով կը համբերէ մինչեւ իվերծը նա կը գըտանէ կեանք. արթոնն կացէր որ չանկանիք փորձութեան մէջ։

Գ. Աւելաս ոչնդիքը. [Պատմ. հլ. 16.]

Սի մեծատռն ունէր տընտես, և սորանից գանգատեցին տիրոջը՝ որպէս թէ շըռայլութենով վատնումէր նորա կայրը: Տէրը պահանջեց նորանից տընտեսութեան համարը, և կամեցաւ հանել նորան իւր պաշտօնից: Տընտեսը մոտածեց իւր մէջ՝ որ այդ բանովը պիտոյ է զըրկվէ իւր հացիցը, որովհետև աշխատել չէր կարող, և մուրանաւ՝ ամաչումէր: Այս տարակուանքի մէջ՝ միտք բերեց թէ ինչ հընարք պիտոյ էր գործ դընել: Դանչեց իւր մօտ տիրոջ պարտապահնները և հարցըրեց նորանցից թէ ամեն մինը ինչքան պարտական էր իւր տիրոջը, և նոցա պարտըր ըստ մեծի մասին կիսով չափ թեթևացըրեց: Այս կերպով կարծումէր տընտեսը՝ որ այն պարտապահնքը որոնց լաւութիւն էր արած, ի՞րնդունէին նորան իւրեանց տունը, եւ տէրը գովեց անիրաւ տընտեսի գործը:

- Վատնպարթեան վերջը անհաւատարմութիւն է, և սորանից դարձեաւ յաւաջանումն այլ յանցանքներ:
- Տընտեսը արաւուցաւ իւր խռամառթենովը, բայց վընասելով իւր տիրոջը:

Առաջի է հասդիր.

Վախատեցէր այն վոքը հարցատութենովը, որ ձեզ տուած է՝ այնպիսի բարեկամներ ձեռք բերել, որ՝ եթէ մեռանէիք դուք՝ կարող էին առաջնորդել ձեզ դէպ ի յաւիտենական օթեանքը:

Ե. Աւելասահաննէ հառին. [Մատմ. հլ. 15.]

Յիսուսը միանգամ նըստած ծովի սիհումը՝ խօսումէր ժողովը ի հետ այսպէս: Մի սերմանահան սերմանումէր զաշտումը. քանի մի սերմեր ընկան ճանապարհի վերայ և ոտնակիս եղան, կամ թէ թըռչունների կորակուր դարձան. քանի մի սերմեր ընկան սակաւահող ապառաժի վերայ և բուսան շուտով, բայց արեգակի ջերմութենովը չորացան, բատ որում հողի հիւթը նուազ էր. միւս սերմերը ընկան փըշի մէջ, և փըշերը զօրանալով խեղդեցին նորանց: Բայց քանի մի այլ սերմեր թափվեցան լաւ հողի վերայ և պըտուղ բերեցին՝ որը հարիւրաւոր, որը վաթարնաւոր և որը երեսնաւոր: Ով որ լըսելու ականջներ ունի՝ թող լըսէ:

Առաջի է հասդիր.

Տեսակ տեսակ է մարդկեղին սրբափ անդաստանը որի վեցայ ընկնումէ Աստուծոյ բանի սերմը: Ամանք լըսումէն աղքայութեան

բանը, բայց մտառու չեն նորան, և չար մարդիկ գալիս են և յափըշտակումն նոցա սբրտի մէջ սերմանածը: Ոմանը լըսէլով ասուածային բանը՝ շուտով, ուրախութեամբ ընդունումն նորան, բայց որովհետեւ նա արմատ չունի իւր մէջ, այլ ժամանակաւորէ, վասն այս պատճառի այդպիսիքը հանդիպելով նեղութեան և հալածանքի խելոյն գայթակրովումն: Միւաները թէպէտ լրսումն փըրկութեան բանը՝ բայց թոյլ են տալիս որ այս կեանքի հոգսերը, փափիութիւնը և վայելութիւնը հեղձուցանեն աստուածային բանի բարձրածայն բարբառը, և այսպէս ոչինչ պըտուղ չեն բերում: Կերջապէս՝ ինչ տեղ Վասուծոյ բանը ընկնումն պատուական հոգի վերաց, պահպանվում այն տեղ և պըտուղ է բուսուցանում իւր ժամանակին. բայց և պատուական հոգի վերաց բուսած պըտուղը զանազան են, որը երեսնաւոր, որը վաթսընաւոր, և որը հարիւրաւոր:

Հ. Ուռեն սորչնէ հէւ. [Մարտ. հւ. 15.]

Մի և նայն խորհրդով ասաց Յիսուսը այս առակըս: Երկնքի արթայութիւնը նըմանն է սին մարդուն որ իւր ագարակումը բարի սերմ սերմանած լինելով՝ թըշնամին եկաւ թագուն, և որոմն ցանեց ցորենի մէջ: Բուսաւ խոտը և պըտուղ բերեց, երեւեցաւ և որոմնը. այս մասին ծառ այըը տեղեկութիւն տուեցին տանուափոքը՝ որ իմացաւ թէ դա թըշնամու արած բան է, բայց ըլթողեց որ այն մալախոտը քաղեն, պատճառ որ կասկածումը թէ մի՛ գուցէ որոմնի հետ միասին դուրս խըլեն և ցորեանը, այլ հրամացէց թոյլ տալ որ երկուըը ևս ամեն ի միասին մինչև հրնաձի ժամանակը. յետոյ՝ խօսեց տանուտէրը՝ կը հրամացէմ հրնազողներին որ նախ քաղեն որոմնը և խուրձ կապէն սցրելու համար, ապա ժողովէն ցորեանը իմ ըշտեմարանների մէջ:

Մարտէ հմատու.

Հարի և չար մարդիկ ապրումն ի միասին այս աշխարհիս վերաց. չարըը խանգարումն բարիների գործերը. այդու ամենայնիւ չէ կարելի նորանց միմեանցից անջատել: Բայց այս ժամանակաւոր կեանքից յետոյ հրեշտակները կը բաժանեն յանցաւորները արդարներից և կը ձրգեն նորանց դըժոխրի բորբոքեալ հընոյի մէջ. բայց արդարները կը փայլեն արեգակի պէս իւրեանց հօրարքայութենումը:

1. Ըստ անդամ՝ ամբարիշաները աշխատումն խոփանել քո ձեռնարկութելիւնը, բայց գընած դու չանչիստ քո ճանապարհը:
2. Ամսարիշտը եւր գործերը կտարաւմէ խուարի մէջ:
3. Կենցաղավարինը ամբարիշաների հետ, բայց ինքը ամբարիշտ մի՛ դարձիր:
4. Համարձակութելն ունեցիր գեղ և Ազտուած, որ գրատառանի օրումը քեզ և քո աղնիւ գործերը կ'աղատէ ամբարիշաների փորձութենիցը և չի թողու որ նոքա միւտանդամ կորողանան ներդործել քո վերաց:

Է. Փարիշինն և Մաքոնին. [Պ. ուն. հլ. 18.]

Երկու մարդ գընացին տաճարը՝ աղօթը կատարելու, մինը՝ փարիսեցի, և միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին աղօթումէր այսպէս. ով իմ Ազտուած՝ գոհանամ քեզանից որ չեմ ինչպէս այլ միւսները, ինչպէս յափըշտակողները, անիրաւները և շընացողը, կամ թէ՝ ինչպէս այս մաքսաւոր մարդը. այլ՝ երկու անդամ պահեմ պահում շարաթու մէջ և տասանորդ եմ տալս իմ կոցըիցը: Սորա հակառակ՝ մաքսաւորը հեռու կանգնած չէր համարձակիվում և աչքը անգամ դէպ ի երկինք բարձրացընել, այլ կուրձը կոծելով՝ ասումէր. ով Ազտուած, թողութիւն արա ինձ մեղաւորիս: — Ազտումեմ ձեզ. այս մաքսաւորը՝ արդարացեալ գընաց իւր տունը՝ քան թէ այն փարիսեցին:

1. Ազօթելու և ազօթելու մէջ զանազանութիւն շատ կայ:
2. Ազտուածոյ առաջին ըլ կոյ ակնաւութիւն (երեսուաշտութիւն):
3. Կրօնի լոկ արտաքին ծխակատարութիւնքը՝ ոչինչ արժանաւորութիւն շտանին Ազտուածոյ մօտ և ամեննենին անբնդաւնելի են նորան, եթէ դայտ հետ կըցորդ չէ ներքին և մասաւոր կրօնը. ներքին ուրբեութիւն, և եղաքայլութիւն:
4. Մեր գործերի պատուականութիւնը կըշուելու ժամանակը՝ ողիսոյ երքըննել այն շարժաբանքը (ներդործող պատճառները) որոնցով յառաջացել են մեր դործելը:
5. Ճշշմարիտ խոնարիտթիւնը խոռումէ այսպէս. եթէ ևս արած էի բարձրը, ինչ որ պահան էր ինձ առնել, ուրեմն արած եմ ինչ որ պարտական էի առնել, և կարօտ եմ Ազտուածոյ շընորհին:

Ազատ է ասուած.

Ով որ բարձրացընումէ իւր անձը, կը խոնարհի, և ով որ խոնարհեցընումէ իւր անձը՝ կը բարձրանայ:

Ա. Կոնտակելը և ընթիւնը. [Մարտ. հլ. 14.]

Մի մեծասուն հացիկերութիւն էր պատրաստել և հրամացեց
ծառային որ զբնայ ասէ հրաւիրածներին՝ թէ պատրաստ էս սե-
ղանը: Բայց ամենեքեան հրաժարվեցան ներկոյ գլուխնվել: Մի-
նը ասաց՝ թէ ազարակ եմ զբնել և պիտոյ է զբնալ և տեսա-
նել նորան: միւսը ասաց՝ թէ հինգ լուծ եզն եմ գրնել և եր-
թումերմ փորձել նորանց: Երբորդը ասաց՝ կին եմ առել և չեմ
կարող գալ: Կոչնատէրը լըսելով այս հրաժարական պատասխա-
նիքը, դուրս ուղարկեց իւր ծառան՝ որ քաղաքի հրազարակնե-
րումը և փողոցներումը ինչ մարդ որ գլուխնէ, թէ աղքատ, թէ
խեղ (մարմնով պակասաւոր), թէ կաղ և եթէ կյոր, թող տուն
բերէ: Ճառան կատարեց իւր տիրոջ հրամանը. բայց դեռևս մը-
նումէր տեղ՝ միւս հիւրերի համար, ուղարկեց տէրը որ ճանա-
պարհների վեցոց և ցանգերի մօտ եղած մարդիկը իւր մօտ ներա-
գան չեն՝ որ տունը լըցվի: Այս խօսեց կոչնատէրը սյսակէս: Աքա-
ջին հրաւիրածներից մինը ևս չէ ճաշակելու իմ սեղանիցը:

1. Մարդը շատ հնարագետ է իւր անհաջողութիւնը գէպ և Ապառած-
արդարացընելու: Համար, բայց այդ հնարագիտութիւնը անընդունելի է:

Ապառէ է մասունք.

Ոչ մի մարդ չէ զբրկվե բրկնաւոր երանութենիցը, եթէ ին-
քը իւր անձը չէ զբրկում դոշանից:

Ի. Անդրդուռ նըսին. [Մարտ. հլ. 21.]

Փըրկիչը միանդամ առաւօտուն դալս էր բեթանիսից ե-
րուսաղէմ: Ճանապարհին տեսանելով մի թըզենի, մօտ եկաւ և
որոնումէր պըստուղ, բայց ոչինչ չը գըտաւ բաց ի տերեսից: Տէ-
րը մասածելով՝ թէ այս ծառի տեղը կարող էր բըռնել մի այլ
ծառ որ ոչ թէ միայն տերեւազարդ էր, այլ զօրացուցիչ պը-
տուղներով պիտանի էր, խօսեց այսակէս: Թող այսուհետեւ չը լի-
նի քեզանից ոչինչ պըստուղ, և թըզենին չորացաւ իսկոն:

1. Աբարգին ցոյցը խաբումէ շատ անդամ:

Ապառէ է մասունք.

Ու որ բարեգործ չէ, չէ ժառանդելու յաւիտենական երանու-
թիւնը: մեր գործերովը կը ճանաչէ մեզ Ապառած: Այս՝ թըզե-
նին չորացուցանելով կամք ունէր Յիսուսը հացելի օրինակով ցու-

յանել իւր աշակերտներին, թէ հաւատաւորին կարելի էր ամենայն բան:

Ք. Ավետ Տէղակինը. [Առևէ. Գլ. 20.]

Մի մարդ սցգի տընկեց և յանձնեց նորան մըշակների. բայց ինքը գընաց ճանապարհ. Այդեկութի (սցգու պըտուղը քաղելու) ժամանակը հասած՝ տէրը ուղարկեց իւր ծառայն, որ ըստանայ սցգու պըտուղը. Մըշակները ծեծեցին նորան և արձակեցին դատարկածեռն: Ուղարկեց միսա ծառայ, բայց ինչ որ հանդիպել էր սուաջնին, հանդիպեց և սորան, վերջապէս՝ սցգու տէրը ուղարկեց իւր սիրելի որդին, կարծելով թէ մըշակը կը պատկառեն սուանից. բայց անըզգամ մըշակները մտածելով՝ թէ սա է սցգու ժառանգը, և ըսպանելով նորան՝ ժառանգութիւնը իւրեանց կը մընայ, դուրս հանեցին նորան սցգուցը և ըսպանեցին: Ապա խօսեց Յիսուսը. ինչպէս կը վարվի սցգու տէրը այն մըշակների հետ. մի թէ չէր գալու նա՝ որ կորուսանէ չարագործ մըշակները և իւր սցգին յանձնեց միւսներին:

Ազատէ է հասուրը.

Վատուած ուղարկեց իւր որդին աշխարհ՝ կարծելով թէ մարդիկը կը լսեն նորան, թէպէտե յառաջուց ուղարկած մարդարերը արհամարհէլ էին և ըսպանել էին. բայց և Ազտուծոյ որդին ըմբռնեցին և ըսպանեցին. բայց վայ նոցա որոնց ձեռքով ոլիտոյ է նա մահ գըտանէ:

Ք. Մէծոդունը և Դաշտակիութ. [Առևէ. Գլ. 16.]

Կար մի մեծատուն մարդ որ փառաւորապէս ընդեստաւորվումէր և ամենայն օր առատապէս ուրախ էր: «Որքա դըքան մօտ ընկած էր մի աղքատ մարդ՝ Նազարոս անունով, որ խոցերով պատած ցանկանումէր միայն կերակըրքիւ այն փըշանիներովը որ մեծատուն մարդու սեղանից վայր էին թափիւմ: Տըխնըր էր այս ցաւագար աղքատի վիճակը. շըները գալիս էին և լիզումէին նորա վէրբերը: Մեռաւ Նազարոսը, և հրեշտակները տարան նորան Աբրահամի գողը: Մեռաւ և մեծատունը. բայց երբ որ դըմոխի մէջ տանջլումէր, տեսաւ հեռուից Աբրահամը, և Նազարոսը նըստած նորա գողումը: Զայն տուեց. Հայր Աբրահամ, ողորմի՛ր ինձ և ուղարկի՛ր Նազարոսը որ իւր մատի ծայրը թաց առնէ ջըրի մէջ և զովացընէ իմ լեզուն, ըստ որում պատակ-

վումեր՝ այս կրակի մէջ։ Աբրահամը պատասխան տոռեց. Ո՞րդի, մի՞տք բեր՝ որ դու քո կենդանութեան ժամանակը վայելեցիր քո բարութիւնքը, և Ղազարոսը չարչարանքի մէջ էր. այժմ սա միփթարվումէ այս տեղ, և դու այդ տեղ պապակվումես. թող այդ բանը. մեր ու ձեր մէջ՝ մեծ փոս կայ, և ոչ ով կարող չէ այս կողմից դէպի ի ձեզ անցանել, և ոչ ձեր կողմից դէպի ի մեզ։ Ազա ովհ հայր՝ աղաչեց մեծատունը՝ արձակիր Ղազարոսը որ դընայ իմ հօր տունը և իմ հինգ եղբօններին վկայութիւն տայ և քարողէ՝ որ մի գուցէ թէ և նորա հասանեն այս տան ջանքին։ Աբրահամը ասաց. նորա ունին Մովսէսը և մարդարէրը, թող նոցա լըսեն։ Ո. Հայր Աբրահամ՝ պատասխանեց մեծատունը. մինչեւ մեռածներիցը չը գընայ մի մարդ նոցա մօտ, չեն ապաշխարելու։ Աբրահամը ասաց. եթէ Մովսէսին և մարդարէներին լըսող չեն, ապա չեն լըսելու ոչ ովի՝ թէպէտեւ գերեզմանիցը յետ դառնար։

1. Ոչնչ մարդ չի արդարանց և չի դատապարտվի Ազտուծուց, ըստ ուրում աղքատ կամ՝ հարսուու էր աշխարհիու վերսց։ Գործերին միայն նայելով դատաւմէ Ազտուած։
2. Արգարագատ է Ազտուած. նա յտելունական կեանքումը միւս անդամ հաւասարումէ; այն բաները՝ որ այս կեանքումը ճախ ու ծուռ էին։
3. Բարեգործքը և չարաշործքը՝ Երկլներումը ոչնչ հաղորդութիւն չունին միմեանց հետ։ Եթէ կամենումն որդիները իւրեանց վախճանեալ բարի ծնազների աեսութեանը արժանանաւ, պիտոյ է աշխատեն՝ որ այնպէս բարի լինին, ինչպէս նորա էին։
4. Եթէ մոածէիք, և ինչպէս հարկն է ճանաչենք այն ողբալի վիճակը որի մէջ ձըւումէ մեղ մեղքը, աղա աւելի քաջ կը ուստերապէինք ընդդէմ սուս։
5. Ազտուած՝ մարդու առաջնը գըրել է բաւական հընարներ և ճանապարհներ բարի դատաւու. բայց եթէ մարդը չի գործ ածում նորանց, ինքն է պարատաւոր։ Անսովոր հրաշքներ և նըշաններ նորա դարձի հումար չի կարող նա առնել. բաւական էր, ինչ որ մինչև այժմ արած էր։
6. Բայց դուք որոնց տուած է աւելի մեծ խմասութիւն՝ աստուածային ճըշմարտութիւնքը ճանաչելու համար, կամ դուք որ ձեր մեղերի ողքալի հետեանիքը ըզդալով այս կեանքումը՝ իմանումէք թէ ինչ ահացուցիչ կերպով պատմվումէ յանցաւորութիւնը, աղաչելով ճայն տուեցէք նոցա որ մոլորվումն։ յետ դարձէք՝ որ չը դացիք այն ատնջանքի օթեանիը։

Ազատութեամբ և հասարակութեամբ.

Նոքա որ արտասուբով են սերմանում, կը հընձեն ուրախութեամբ։ Պատճառ որ չը կաց այս աշխարհումըս կատարեալ բան. սորան կը գտանենք վերեւումը, այն տեղ ամենայն բան կը հաւասարվի։ Երանի այն մարդուն որ համբերութենով տանութեանքի վըշտին և չքաւորութեանը, և հաւատարիմ է մընում իւր Աստուծուն և իւր պարտականութեանը։ Կատարեալ վիճակը կը տեսանէ անմահութեան աշխարհումը և կը պըսակիվ բազդաւորութեամբ և երանութենավ։

6.

Յէսուս հայոցնէլը.

Յէսուսի Քրիստոսի խօսուածքը լինելով հասկանալի, սիրո շարժող և իւրեանց խարութեամբը հաւանեցուցիչ՝ շասոյժ և զօրութիւն ունէին իւրեանց մէջ. բայց որովհետև Յիսուսը գիտեր չըէից ազգի կամակրը բարբը ինչպէս ինքը ասումէլնոցայանին էթէ նըշաններ և արուեստներ չը տեսանէք, չէք հաւատում, վասն այս պատճառի իւր աստուածային առաքելութիւնը հաստատելու համար՝ անսովոր գործեր շատ գործեց, այնպիսի զարմանալի գործեր, որ ոչնչ մարդ բայց ի նորանից կարող չէր առնել, որ և Յիսուսը միշտ այնողէս տնօրինեց որ նորա հրաշագործութեններովը թեթևանայ նոյնպէս տառապեալ մարդկութեան վիշտը։ Բայց նա երբէք գործ չը դրբեց իւր աստուածեղէն զօրութիւնը՝ որ ըսբանչելիք առնելով՝ նորասիրութիւն զարթուցանէ, կամթէ պատիւ և հարցստութիւն առնու մարդուց։ Այդպիսի հըրաշքներ Յիսուսը չէր առնում երբէք, եթէ յառաջուց չունէր վըլկյութիւն ազաւաւորների ամուր հաւատի, ապաշխարութեան և ուղղութեան մասին։ Եւ մարդարէքը նորանից յառաջ արած էին հըրաշքներ, բայց այն զանազանութենով, որ Յիսուս Քրիստոսը որպէս հայութիւն առնումէր այդ հըրաշները իւր յաստուկ զօրութենովը, բայց մարդարէքը՝ յառաջուց կարողութիւն ըստանալով Աստուծուց։ Յիսուսի շատ հըրաշքները պատմումն մեզ Սուրբ գիրքը՝ աւետարանների մէջ. յիշատակներ այս տեղ աւելի դըլսաւորները նորանցից։

... Յէսուս՝ չուրչ էր ուրամբ գէնէ. [Յոհանն. 4.1.]

Յիսուս՝ անմեղ ուրախութեններին թըշնամի չէր. այդ մա-

սին վըրայութիւն դըրեց այն բանովը որ իւր մօր և աշակերտների հետ միասին յանձն առաւ հարսանիք գընալ Գալիլիայի Կանա քաղաքումը։ Հարսանիքի հացիերութեան վերջումը պահասեց գինին։ Յիսուսի մոյրը սորա մասին տեղեկութիւն տուեց նորան։ Յիսուսը, թէ, պէտք ըսկըզումը անհաւան գտանվելով իւր մօր ըշտապութեանը՝ հրամայեց ըստասաւորներին որ չըրով լրցուցանեն այն կըմեայ թակոյիները որ հիւրերի ձեռք լրանալու համար կային այն տեղ։ Ազա՝ խօսեց այսպէս. առէք պակայիները և տարէք տաճարապետի մօտ Երբ տաճարապետը այն գինի փոխված ջըրիցը ճաշակեց՝ զարմացաւ թէ ինչ տեղից էր այն. գանչեց իւր մօտ փեսան, և ասումէր. ամենայն մարդ անոյշ գինին յառաջագոյն է տալիս իւր հիւրերին, և երբ սոքա արքեցած էին, այն ժամանակը դուրս է բերում և ցածը. բայց դու անոյշ գինիդ պահէլ ես մինչև այժմը։ Այս առաջին հըրաշըն էր որ գործեց Յիսուսը և յայտնեց իւր վառըրը։ Եւ նորա աշակերտը հաւատացին նորան։

1. Կամակորութենով, հըպարտութենով կամ կեղծաւորութենով, որ կարծ ծումէիր թէ կը վայելէին քո վիճակին, մի՛ խափանիր քո ընկերի անմեղ ուրախութիւնը։
2. «Եսցիր միշտ, թէ ինչ բան դակաս էր քո ընկերին. բայց օկնիր միշտ այնպիսի կերպով որ ամօթալի և դրժուարացուցել չէր այն մարդուն, որին կամենումն օդնել։»
3. Մի՛ ըստափիր, մինչև քեզանից բարեկործութիւն պահանջնեն. բայց ընտրելը յաջողակ բռուեն այդ բանի համար։
4. Բարեկամութեան և սիրոյ գործերալ շատ հեշտ գըտանումնիք ուրիշ ների հաւատը։

Է. Հառնայինի հարկադրություն. [Մասն. հէ. 8. Պահ. հէ. 7.]

Հոռմայեցոց պահապան զինուորների մէջ Կայիրաւնառում քաղաքումը՝ կար նոյնպէս մի հարիւրապետ որ պատուելի էր ամենեցուն աչքին, ըստ որում սէր ունէր Ճըէից ազգի հետ և շինել էր նորա համար մի ժողովը զանոց (ազօթատեղի Ճըէից յունական բառով Սիւնագողէ ասացեալ)։ Այս հարիւրապետի պատուական ծառաներից մինը սաստիկ հիւանդացած և մեռանելու մօտ լինելով՝ ցանկանումէր տէրը պահպանել իւր ծառոցի կեանքը Յիսուսի հըրաշագործ զօրութենով՝ որի համբաւը լըսած էր։ Բայց հեթանոս մարդ լինելով՝ չէր համարձակվում ինքը գալ Յիսուսի մօտ և խընդրեց Ճըէից իշխաններիցը որ աղա-

չեն Յիսուսը դալ և ապրեցուցանել իւր ծառան։ Առքա ևս կամեմալով իւրեանց երախտագիտութիւնը ցոյց տալ այն մարդուն, դիմեցին Քրիստոսի մօտ և աղաքէլով նորան՝ ասումէին. արժանի է այն մարդը՝ որ այդ շընորհը առնես նորան։ Յիսուսը նանապարհ ընկաւ գէպի ի Հռոմայեցոց հարիւրապետի տունը և շատ հեռի չէր նորա օթևանից՝ երբ որ հարիւրապետը յառաջ ուզարկեց իւր բարեկամները որ իւր բերանով ասեն Յիսուսին. Տէր, աշխատ մի՛ լինիր. արժանի չեմ ընդունել քեզ իմ տան մէջ, և այս պատճառաւ չը համարձակվեցոյ քո մօտ դալ. ասա՞միսյն խօսքով, և իմ ըսպասաւորը կը ըլքէլչկվի. ինչպէս ես զինուորներ ունիմ ձեռքիս տակումը, և որին ասումէր՝ գընա. գընումէ՛, որին ասումէմ, եկ. գալիս է, կամ արա այս բանը, և առնումէ՛. Յիսուսը դարմանալով այս հեթանոսի այդքան ամուր հաւատի վերոյ, ասաց իւր հետ եկողներին. ջըշմարիտը առեմ ձեզ. այսչափ հաւատ իմրայիլ մէջ չեմ տեսած ես։ Հարիւրապետի ծառան առողջացաւ իմիցն, երբ որ ասաց Յիսուսը հարիւրապետին. գընա, ինչպէս որ հաւատացել ես դու, այնպէս ևս կը լինի քեզ։

1. Սիրոց և գըթութեան մասին գէղ ի հաւատարիմ՝ ծառայքը՝ հետևեր հումայեցի հարիւրապետի օրինակին։
2. Ամենայն բարեգործութենով՝ որ յառաջանումէ մեզանից, գարձեալ ճառ նասպահ։ Է բացվում մեղ՝ բարերարութիւնը ցոյց տալու ուրիշներին. և առ ամենալաւ վարձապարութիւնն է բարի մարդու համար։
3. Ամենայն յարմար միջոց գործ ածու քո երախտակիսութիւնը յայտնելու համար։
4. Գոտիք լու բանը՝ ինչ մարդու մէջ ևս աեսանեիր, թէ բարեկամի, թէ թըշնամու մէջ։
5. Մ' յաղակիք՝ երբ թընդումնն քո օգնութիւնը ձեռընտու լինել տառապեալ մարդերին. մի՛ մասածիր թէ կայ գեռ ևս ժամանակ։
6. Շատ անդամ՝ մեր գործերի բարի գիտաւորութիւնը ուրանումն առաւելապէս նորա որոնց օդափի համար էին նորա, բայց ուրիշները իմաս նումն յարգել նորանց։
7. Համարձակապէս խօսումէր Յիսուսը այն ընդդիմութեան մասին, որ նորա վարդապետութիւնը գտանումէր Իմրայէլայոց ազգի շատերի մէջ։
8. Արդարութեան գործիր, և ոչ ովեց մի՛ վախեցիր։

Դ. Թագավորութեան Դաշտեւմ ուշինչում ։ [Յոհան. 4.1]

Եւ Դավիթացիքը առաւելապէս ջերմահաւատ գրտանվեցան գէպի ի Յիսուսի վարդապետութիւնը քան թէ չըշաստանի քնա-

կիչքը որոնց դարանագործութենից պիտոյ էր Յիսուսին ըզդուշանալ շատ անգամ:

Պատահէց միանգամ որ Յիսուսը Սամարիայից դարձեալ եկաւ Կանա քաղաքը Դալբիսյի, և մի թագաւորազն Կափառնաում քաղաքից դիմեց նորա մօտ որ աղացէ նորան գալ և ըքժը կել իւր որդին որ մերձ ի մահ հիւանդ էր: Յիսուսը կամենալով յառաջուց փորձել այս մարդը, ասաց. «Եթէ նըշաններ և արուեստներ ըլ տեսանելը, չէք հաւատում դուք»: Տառապեալ հայրը ըլ հրաժարվեցաւ. կըրկին անգամ աղացեց. Տէր, արի, մինչեւ մանուկը չէ մեռած: Գընա՛, քո որդին կենդանի է՝ պատասխանեց նորան Փըրկիչը: Հայրը հաւատալով այս բանին գընաց: Դեռևս տուն չէր հասած, որ ծառացը աւետիք բերեցին նորան՝ թէ նորա մանուկը կենդանի է: Հարցը թէ մը ժամուն առողջացաւ հիւանդը. ասացին. երեկ եօթներորդ ժամուն. իմացաւ հայրը, որ այն ժամուն առողջացել է իւր զաւակը, երբ Յիսուսը ասած էր նորան. քո որդին կենդանի է, և սորանից եզրափակեց, որ մարդկութեան աստուածային բարեկամը հեռուից ևս փըրկաւէտ ներդորձել է նորա որդու առողջութեան վերոյ: Կա և նոշա բոլոր տունը հաւատաց Աղասողին:

1. Բարելսար զըտանիելուցը յառաջ փորձել մարդը, արժեօք արժանի կամ՝ կարօտ էր նո քո բարերաբաժեանը:

2. Ծակէտ և տըկաբութեան նըշան էր՝ որ այն թաղաւորազնը կարծումէր թէ պիտոյ էր Քրիստոնին նկանին ներկայ զըտանիլը նորա զաւակին օկնելու համար. բայց Յիսուսը այս մասին ներկապամիտ լինելով՝ անտես չարեց այն տաղնապեալ ծնողի նընդիրը:

3. Հօր համար ծանր չէր երկար ու ձիգ ճանապարհ գընալ՝ իւր հիւանդ զաւակի համար փըրկաւթիւն բերելու:

4. Մի բարեկործութիւն՝ շատերի սիրաը քարշումէ գէտ ի մեր կողմը:

Է. Յիսուսը հէնք հայով և երկու յանձնէլու մէջ 5,000 Տարու:

[Մատթ. ۱۴.]

Վամենայն տարի հաղարներով ժողովումը մարդիկ Երուսաղէմի մէջ որ զատկի տօն կատարեն այն տեղ. և այս միջոցումը մի փոքր աշխատութիւն յանձըն առնուլով գընումէին լըսելու Յիսուսի Նաղարեցոյ վարդապետութիւնը: Միանգամ Յիսուսը՝ Յովհաննէս մըկըրտչի գըլխատմանից յետոյ՝ անցանելով դալբիկացոց ծովեցը՝ իջևանեց Տիբերիա քաղաքի մօտ, և գտանելով այն տեղ մի մեծ բաղմութիւն՝ իւր աշակերտների հետ միասին

հանդըստացաւ մի ծովեղերեսյ սարի վերայ: Աչքը վեր բարձրացըրեց և տեսաւ որ գակս է մի ահագին ժողովուրդ, ոռութը շարժվեցաւ՝ մտածելով նոյցա թերի և անկատար կրօնագիտութիւնը և բակրակց ասել նոյցա մի երկար քարոզ, որին մտագիւր (յօժարութեամբ) ունկընդիր էր բազմութիւնը: Երեկոյին ասացին Յիսուսոյին իւր աշակերտըրը, տեղըս ամսապատ է, և օրը տարաժամեալ է, արձակիր ժողովուրդը որ գընայ կերակուր գընէ իւր համար շըրջակայ գիւղերումը: Յիսուսը հրամայեց աշակերտներին՝ ուտելիք տալ նոյցա. աշակերտըրը ասացին. այդպիսի մեծ բազմութիւն կերակրելու համար հազիւ թէ բաւական էր 200 դահեկանի հաց, բայց մեր ունինք միայն հինգ գարեղէն: Հաց և երկու ձուին: Տէրը հրամայեց որ բերեն ուտելիքը և բազմեցուցանեն (նըստեցընեն) ժողովուրդը խոտի վերայ. ապա վեր առեց այն հացը և ձուկը, օրհնեց և տուեց աշակերտներին որ բաժանեն ժողովըրդին. կերան ամեննեքեան և լիացան, և հացից մընացին դեռևս այնքան կոտորներ, որ նորանցով լրցուցին 12 սակառիք (ամաններ): Ժողովուրդը տեսանելով այս հրաշալի անցըրը, ասումըր. «սա է ճըշմարիտ մարդարէն, որ գալոց էր յաշխարհ»: Աս հըրաշըրից յետոյ Յիսուսը կատարեց մի այլ ըսրանչելիք:

Երբ որ Յիսուսը կերակրել էր ժողովուրդը, ազօթելու համար առանձնացաւ մի սարի վերայ, բայց յառաջուց նաւով ուղարկած էր իւր աշակերտները գէպի կափառնառում: Գիշերին ծովի վերայ հակառակ հողմ վեր կացաւ. բայց նաւը քըսան և հինգ կամ երեսոն ասպարէզ հեռացած լինելով ցամաքիցը՝ յանկարծ տեսան աշակերտըրը որ Յիսուսը ծովի երեսին գընալով մօտենումէ նաւին. զարհուրեցան կարծելով թէ առաջօք մի բան է, և ահ ու գողից աղաղակեցին. խկոյն խօսեց նոյցա հետ Յիսուսը՝ ասելով. քաջասիրտ կոցէր, ես եմ, մի վախենար: Աըսելով Յիսուսի ձայնը, պատասխանեց Պետրոսը. Տէր, եթէ գուես, հրամայիր ինձ որ գամ ջըրի վերայով քո մօտ: Ասաց Յիսուսը. արի. Պետրոսը զընաց ջըրի երեսին և մօտեցաւ Յիսուսին, բայց՝ մի սաստիկ հողմ վեր կենալով՝ զարհուրեցաւ և կամենումէր ընկըզմել. ձայն տուեց Յիսուսին. Տէր՝ փըրկիր ինձ: Յիսուսը ձեռք ձբգեց նորան՝ ասելով. թերահաւատ, ինչու երկրտուցիր: Երբ որ նաւի մէջ մըսան, հանդարտեց հողմը և նաւի մարդիկը մօտեցան և երկրշապագութիւն տալով ասումէին. արդարեւ Աստուծոյ որդի ես դու»:

Յիսուսի փըրկաւէտ հրաշագործութենների համբաւը տա-

բածվեցաւ օրէ օր առաւել, և ամենայն տեղից բերութին նորա մօտ ցաւագարներ, և ով օր մերձենութիր նորա հանդերձի քը- զանցըին (փէշին)՝ առողջութիւն էր գլուխանում:

1. Մէ բանի չես ծանօթանալաւ համար մի՛ վախեցիր ոչինչ աշխատանքից, ոչինչ ճանապարհից և ոչինչ նորագործութենից:
2. Յիսուսի արքունութիւնը իւր ըստեկամի Յովհաննէս մըկըստչի մահա- վերաց պատճառ եղաւ նորա հեռանալաւն մի անապատ տեղ:
3. Քէպէտեւ առաւածային օդնութեան տարացցները ահիյանդիման դըսած լինեն մեր առաջեւը, այսու ամենայնիւ մարդու շատ մազամ՝ ցուցանու- մէ իւրեան՝ փոքրութիւն:

Է. Մէ այլէ ինոչ միտօն ոչ ոչ Կոյշին ժողովածը. [Ղ. ուն. Գլ. 7.]

Յիսուսը ճանապարհորդելով գէպ ի Երուսաղէմ՝ հասաւ մի փոքր քաղաքի Կային անունով: Քաղաքի գրանը մօտենալով՝ տեսաւ որ մի մոռեալ դուրս են սամում: և մի սյրի կին գընու- մէր դագաղի հետեւցը՝ ըստ որում նորա մի հատ միսիթարու- թիւնը՝ իւր սիրելի որդին՝ գերեզման էին տանում: Անմիթար էր մոյրը և բազմութիւնը մասնակից էր նորա մայրական ցաւին: Յիսուսի գութը շարժվեցաւ սյն կընոջ տառապեալ վիճակի վե- րաց, նա խօսեց գէպ ի մոյրը. լաց մի՛ լինիր, և հրամայեց դա- դաղ տանողներին դադար առնուլ: Դէպ ի մտուեալը ձան արձա- կեց այսպէս, պատանի՝ քէզ եմ ասում. վեր կաց: Մեռեալը վեր կացաւ, նրանուց և ըսկըսեց խօսել: Յիսուսը յանձնեց որդին իւր մօ- րը: Բոլոր ժողովլրդի վերաց ահ ընկաւ. զարմանալով և հիմարով փառաւորութին Աստուած, և ասութին. «մի մեծ մարդարէ երեւել է մեր մէջ. Աստուած իւր ժողովը դին այցելութիւն է արել»:

1. Ոչինչ մեռածի կամ գերեզմանի մօնից անց չը կենատ առանց մոռածե- լու քո՛ գուցէ թէ մօնեցած վախճանի վերաց: Ըստէով ըստէով նկարա- գրընը մըտքով՝ որպէս թէ դու գերեզմանի մօն գըսած էիր, և քո առ- կերքը իջուցանումէին դէպ ի հող:
2. Մատնակից գըտանվիր օտարի ցաւին, աշխատիր թէթեացընել նորան:
3. Ի՞նչքան երանացուցիչ խընդութիւն էր մեր սըրտի համար՝ թէ կա- րութիւն էինք մի մօր որդի՝ մեր ձեւալով փըրկած՝ միւսանգամ տալ նորան:
4. Ո՛վ քըստոնեայ՝ ոչինչ յարմար միջոց ձեռքից մի՛ թող, եթէ կարող էիր քո եղանըը հոգեւոր և մարմնաւոր վրունդից ապատէլ:

Ն. Քանիսնացի էինը. [Մատն. Գլ. 15.]

Յիսուսը կամենալով հեռանալ Փարիսեցոց հալածանքից՝

սատուածային օրէնքները։ Կա նմանեցը նորանց՝ կոյր առաջ նորդերի, որ մը զուկները քամումէին, և ուղտերը կըլանումէին։ գեղեցիկ գերեզմանների որ դուրսից փառաւոր էին, բայց ներսից՝ մեռածի ոսկը լը թիւ ուղղութենով լի։ ոչխարազգեստ գոյլերի որ անտարակյա պիտոյ է դատապարտվին որպէս գըժուխրի որդիք։ Երուսաղէմ, Երուսաղէմ, ձայն արձակեց Յիսուսը, դուր կոտորեցիր քո մարդարէրը, որ քարկոծ արեցիր քո առաքալքը, քանի անգամ կամեցաց ես ժողովել քո մանուկները՝ ինչպէս հաւը ժողովումէ իւր ձագերը թեւերի տակ։ բայց դուք ըստ կամեցաք այդ, այժմ սաեմ ձեզ, որ ձեր տունը աւերակ կը դառնոյ։ Այս խօսքերովը կամենումէր Փըրկիչը բացայստել ժողովը որդին իւր տառապեալ վիճակը և ազատութեան հարկաւորութիւնը։

1. Բարեպաշտ մարդը ամեն բան ըսկըսանումէ Աստուծով։
2. Աստուծոյ տաճարի մէջ հրաման չը կա ոչինչ կերպով խսփանել ժողովը կը լըրդի չերմեռանութութիւնը։ Բայց ևս առաւել անարժան էր՝ ուրբարանը պըզծել շահախընդուակն աւուտառոքով։
3. Երեխանների գոլութիւնը և գոտաստաննը շատ անդամ ամենից ուղիղն է, ըստ սրբում ամենենին աներաշառք է։
4. Շատ ամեթալիէ, երբ երեխայք կրօնի և առաքինութեան մասին ցուցանումն առելի ուղիղ խմացութիւն և ըզդացողութիւն քան թէ չուփահառքը։
5. Յիսուսը իւր վերջին օրէրը աշխարհիս վերսց խաչէլութենից յառաջ՝ գործ գըրեց դեռ ևս քանի մի բաներ ուստացանելով ժողովը մինչ ամենայն մարդ մինչև իւր կեանքի երեկոյայեալ օրը ներգործական գըտանվի բարի բանի մէջ։

Երբ որ Յիսուսը տաճարից դուրս էր գրնում, աշակերտը խօսք ձըգեցին տաճարի գեղեցիկ քորաշէն և աշխարհազարդ կազմածի վերսց։ Յիսուսը ասաց. այդ բոլորը՝ որ տեսանումէք, մի ժամանակով այնպէս վեր ի վսոր կը կործանվի, որ քար քարի վերսց չէ մընալու։ Ազա խօսեց նա Ձիթենեաց սարի վերսց՝ քաղաքի հանդէպը կանգնած, մարդարէանալով նորա կործանումը, և առհասարակ այն տըխուր անցրերը որ գալոց էին, մինչ այս ազգը կենդանի էր, այլև զանազան ծանօթութիւնը տալով աշխարհի կատարածի (վերջի) մասին, որի ժամանակը ոչով չը գիտէ բաց ի Աստուծուց. այս պատճառաւ պարտ էր արթուն կենալ, բայց որում յայտնի չէր թէ երբ կը գայ Տէրը, որ մի գուցէ թէ նա երեկոյին կամ կէս դիշերին հասանելով՝ քընի

մէջ գտանէր մեզ։ Խւր խօսուածքը կընթեց Յիսուսը սյապէս։ Երկինք և երկիր կ'անցանեն, բայց իմ ասածները չեն անցանելու։

1. Ամենայն աշխարհական բան՝ թէեւ շատ և շատ գեղեցիկ լինէր, թէեւ երկարուժիդ տեսողական լինէր, սյնու ամենայնիւ անցաւոր է, այն միայն որ Ազատուծուց էր՝ հաստան է։ «, որս բանը կը մընաց միշտ և յաւիտեան։
2. Մի՛ քըննիր աշխարհի վախճանի կամ՝ քո մահու ժամը և ժամանակը։ շընորհակալ կաց Ազատուծուց, որ դու չը գիտես այդ, բայց միշտ պատրաստ կաց այդ անցքերին։

5.

Յէսուսը սահմանականութեան Հաղորդութեան իռէկուառութեան։

[Մատթ. հւ. 26. Մարկ. 14. Ղուկ. 22. Յոհ., 13, 1.]

Տօնի օրերը մօտենումէին և հասանումէին. բոլոր Երուսաղէմումը պատրաստութիւն կար դորա համար։ Եւ Յիսուսը՝ թէպէտ ինքն էր այն դառը որ պիտոյ է մօրթվէր այս տօնումը, պատուիրեց իւր Պետրոս և Յովհաննէս աշակերտներին՝ ասելով. գնացէք քաղաք այս անունով մարդու մօտ և ծանուցէք նորան թէ վարդապէտը ասումէ. իմ ժամանակըս մօտեցած է. կամքունիմ քո ատանը զատիկ առնել իմ աշակերտներիս հետ։ Այս էր Բաղարջակերաց առաջին օրումը. երեկոյին գնացին և գրտան պասեքը մի մեծ զարդարած վերնատընում պատրաստեալ՝ ինչպէս որ հրամայած էր։ Երբ որ սեղան նըստեցին և ուտումէին, ասաց Յիսուսը. ձըշմարիտը ասեմ ձեզ. ձեր մէջնը մատնելու է ինձ։ Աշակերտը արրտմեցան, և ամեն մինը նորանցից ըսկըսեցին հարցընել. մի՞ թէ ես եմ, Տէր. նա պատասխանեց. ով որ իւր ձեռը իմ հետ մըսնեց ամանի մէջ, նա է մատնելու ինձ։ Երբ որ Յուղասը հարցըրեց. մի՞ թէ ես եմ, վարդապէտ. ասաց նորան Յիսուսը. զու ասացիր։

Այս վերջն ընթրիք (երեկոյեան հայկերութիւնը) որ Յիսուսը վայելեց իւր աշակերտների հետ, պիտոյ է նորա պաշտուների համար մըշտընջենաւոր յիշատակի սեղան լինէր, և նմանապէս մի հընար՝ որանով նորա պիտոյ է ամրանային հաւատապահութեան և առաքինութեան մէջ։ Այս պատճառով Յիսուսը այս միջոցումը սահմանադրեց մի հանդիսաւոր արարողութիւն որ յաճախ կըրկնել պատուիրումէ իւր հետեղըների ամեն մինին։ Մինչեւ նորա սեղանի վերաց էին, Յիսուսը վեր կալաւ հացը, օրհնեց և կտորեց և տուեց իւր աշակերտներին՝ ասելով. «առէք, կերէք՝ այս է մարմին իմ»։ ապա վեր կալաւ բաժակը, գոհացաւ

և տուեց նոյս՝ ասելով. « ըմպեցէք սորանից ամենեքեանքը. այս է նոր ուխտը՝ հաստատած իմ արիւնովը որ թափվում վասն ձեր՝ մեղքի քաւութեան համար. Այս բանը կ'առնէք դուք իմ յիշատակիս համար»:

Հետոյ սեղանից վեր կացաւ Յիսուսը, հանդերձը հանեց վերայից, մի զենջակ (ձեռքի ուրբիկ) կապեց մէջքին, ջուր ածեց կոնքի մէջ և ըսկըսեց իւր աշակերտների ոտերը լուանալ, և սրբություն այն զենջակովը որ կապել էր մէջքին: Կարգը Սիմոնի Պետրոսին հասած, սա չը կամեցաւ բնդունել այդպիսի ըսպասաւորութիւն իւր վարդապետիցը բայց ասաց Յիսուսը, եթէ քո ոտերը չը լուանամ, մասրն չունիս իմ հետ: Այս խօսեց Սիմոնի Պետրոսը. Տէ՛ր ոչ թէ միայն ոտերըս, այլև ձեռերըս և գլուխըս պիտոյ էր լուանալ. ոչ՝ ասաց Յիսուսը. այդ հարկաւոր չէր, պատճառ՝ որի ոտերը լուացած են, նա սուրբ է, և դուք սուրբ էք, բայց ոչ ամենեքեան: Օրինակ մի տուեցի, որ և դուք այնպէս առնէք, ինչպէս ես ձեզ արեցի: Ընթրիքից յետոյ այլ բաներ ևս խօսեց Յիսուսը աշակերտների հետ, և յայնեց նոյսա, որ թէպէտ մերձ էր հրաժարական ժամանք, բայց նա երթալու է հօր մօտ՝ նոյա համար տեղ պատրաստելու: Ես եմ ձանապարհն և ձրշմարտութիւն և կեանք, ասաց նա. ոչ ով չէ կարող ձօր մօտը գալ՝ եթէ ոչ ինձանով. կ'ազաքեմ չայրը միփթարիչ ուղարկել ձեզ ձրշմարտութեան հոդին՝ որ բնակէ ձեր մօտ, միշտ ձեր հետ լինի և առաջնորդէ ձեզ ամենայն ձրշմարտութենով. միայն՝ հաստատուն կացէք իմ սիրոյ վերայ, ըստ որում ինչպէս ուռը (խաղողի ծառի ծիւղը) պըտուղ բերել կարող չէ՝ եթէ հաստատեալ չէ որթի (նոյն խոկ խաղողի ծառի) վերայ, նոյնպէս և դուք, եթէ հաստատեալ չէք իմ վերայ, անպըտուղ էիք: Այս է իմ պատուէրը, որ դուք սիրէիք միմեանց, ինչպէս ես ձեզ սիրեցի. սորանից մեծ սէր չը կայ՝ եթէ մի մարդ դընէր իւր անձը իւր բարեկամների վերայ: Թողլ չը խռովին և չը վախենան ձեր սիրութը. ամենայն բան, որ իմ անունովը կը խընդրէք ձօրիցը՝ կը ստանաք: Այս խօսակցութենից յետոյ՝ աչքը դէպ կ'էպ ի երկինք բարձրացուցանելով՝ մի հրաշալի աղօթք ասեց (Յովհ. գլ. 17), և իւր աշակերտները՝ որոնց ծանուցել էր աստուածային կալքը՝ յանձն արեց երկնաւոր ձօր պաշտպանութեանը:

1. Վերջին ուրախութիւնը որ վայելումէնք մեր բարեկամի կամ բարեկամի հետ, անմուտանակէ մընում մեղ, թէկ չը ստանայինք մի առանձին յիշատակ այդ մասին:

2. Ապահելքը տէրունակին սեղանը՝ շրնօրհակալութեամբ միտք բերելով այն շարադրանքը որ և քո համար յանձն առաւ Տէրը։ Կատարիք այդ արարողութիւնը՝ խըստութեամբ փորձելով։ Քո բարոյական որդիուութիւնը, որ այդ կարողանաց էնել քեզ զարթուցանուղական խըթան գէտ ի առաքենութիւն։ Ապահելքը այդ սեղանը՝ յահան, բայց միայն երբ որ դու ըստ բարականին ժաղավիլ ես քո միտքը և սիրաց, և ըղգումես քո մէջ կարօտութիւն այդ մատին։ Հաղորդութիւնը մի՛ համարիք երբէք թոյլառութիւնն միւսոն մեղանչըլու։
3. Ավեարը ըստութեան հետ սովորաբար կատակից է և անըլլամութիւն։ Յուրաքանչ ունեցը երկուուը եւս, պատճառ որ համարձակվեցաւ հարցընել մի՛ թէ ես և մէ։
4. Ինչուս Յիսուսը սիրումէր իւր աշակերանները, նոյնուս և մեզ պարու է սիրել նորան։
5. Եթէ մարդը կամնաւմէ երկնաւոր կեանքը ժառանդէլ, ապա պարտական էր իւր անձը բոլորովն նուրիել Աստածուն։
6. Յիսուսը միայն ունինք մեղ բարեխոս Աստածոյ առաջեց, և նա է մեր մի՛նորդը։ Տէս Յովէ. գլ. 14, 13. գլ. 16, 25. Յովէ. Աստ. գլ. 2, 1. Ա. [Ճ. Պատրոսի առ Տիմոթ. գլ. 2, 5։
7. Հրաժարումը ցաւեցուցիչ է, բայց միւսոննեամ առանութեան յոյսը միսի թարումէ մեզ։

4.

Յէնուան Դէնուէմանէ հէնուաճը. [Դէնու. հլ. 22, 3. Մատթ. հլ. 26.]

Երբ որ Յիսուսը՝ ինչուս սովորութիւն ունէր՝ գոհաբանական երգով աւարտեց ընթրիքը, գընաց իւր աշակերտների հետ դէպ ի Զիթենեաց սարը։ Ճանապարհին ասաց նոցա Յիսուսը. այս գիշերիս ամեներեանքը գայթակելոց էր ինձանից. և Պետրոսը հաստատելով. թէպէտե ամեներեան գայթակեին քեզանից, բայց ես՝ ոչ երբէք. պատասխաննեց Յիսուսը, ճըշմարիտը ասեմ քեզ. այս գիշերիս երեք անգամ կ'ուրանաս ինձ, մինչեւ հաւը խօսած ըլլին։

Խելքի մօտ բան էր՝ թէ Յուդա իսկարիովտացին Սիմովն ըստի տանը յանդիմանութիւն ըստանալով Յիսուսիցը իւր խօսուածքի մատին՝ որպէս թէ խնայելի էր այն ազնիւ իւղը՝ որանով Մարիամ կինը պատուեց և սիրեց Տէրը, դըրեց մըտքումը որ մատնէ իւր վարդապետը։ Այս պատճառաւ գընաց Փարիսեցիների մօտ և հարցըրեց թէ ինչքան կը տային իւրեան՝ եթէ նոցանուքը տար Յիսուսը։ Փարիսեցիքը խոստացան տալ նորան 30

արծաթ. նա յանձն առաւ, և որոնումէր պարապ կատարելու իւր պայմանադ ըրութիւնը: Այն երեկոյից յետոյ որ Յիսուսը աշակերտների հետ կերաւ վերջին զատկական գառը, պիտոյ է նա ըմբըոնալէր գիշերով: Տէրը կամենալով դէսլ ի Աստուած աղօթքով զօրացուցանել իւր անձը ընդդէմ մօտեցած մահու տագնապին, միւսանգամ գլուխ գեմեմանի գեղը, որ մի հանդարտ տեղ էր Զիթենեաց արի մօտ, ուր և յառաջուց շատ անգամ գրտանված էր իւր աշակերտների հետ: Աիրոտ շարժօղ մի բան է՝ թէ որպէս այն մարդկային փրկութեան միջնորդը ըղգալով իւր անարգանին և մահու տառապանքի մօտենալը, ուղղեցուցանումը իւր սիրտը դէսլ ի Աստուած և Հայրը: Տըրառում է իմ հոգին մինչև ի մահ՝ ասաց Յիսուսը, որ աղօթելու համար փոքր մի հեռացել էր իւր աշակերտների շատերիցը: Պետրոսին, Յակովին և Յովհաննէսին որ իւր հետ ունէր, պատուիրեց արթուն մընալ իւր հետ միասին. ապա երեսի վերայ ընկած՝ բսկըսեց աղօթել. Հայր իմ, եթէ հընար է, թող այս բաժակը անց կենայ ինձանից, բոցը ոչ՝ որպէս ես եմ կամենում, այլ՝ որպէս դու: Երեք անգամ աղօթեց պատկէս. և նոյնպէս երեք անգամ ահ ուղղողի մէջ յետ դալով իւր աշակերտների մօտ, և տեսանելով թէ քընած են, բարկացաւ և ասաց. սցուհետեւ կարող էր նրնջել և հանգըստանալ. այժմ վեր կացեր՝ գլուխնը. ահա եկել է մատնիչը: Աստուծոյ հրեշտակը զօրացուցանումը Յիսուսին աղօթելու ժամանակը: Յիսուսը եռուս խօսումէր աշակերտների հետ, երբ Յուղա խկարիովացին վերայ հասաւ բերելով իւր հետ քահանայապետների և Փարիսեցոց ծառացըր, որ ջահերով, լապտերներով և զէնքով մօտեցան Յիսուսին: Աւմ համբայր կը տամ ես՝ թընամիների հետ խօսք էր կապել Յուղաար, նաև է. ապա մերձեցաւ Յիսուսին և ասաց. ողջին քեզ՝ վարդապետ, և համբուրեց նորան: Այն ժամանակը ձեռք ձբգեցին Յիսուսի վերայ և կապեցին. Ամսովն Պետրոսը զայրանալով այս անարժան վարեցողութեան վերայ դէսլ ի իւր Տէրը, սուրը քարշեց և քահանայապետի ըսպասաւորի ականջը ներքեւ կըտրեց. Յիսուսը ոչ թէ միսցն անհաւան գլուխն վեցաւ այս բանին, այլև իսկոյն բըմբըշկեց այն վերաւորված ծառան: Այն ժամանակը ասաց Յիսուսը ամբոխին. այդ ինչ բան է որ դուք սըրով և բըրով եկաք ըմբըոնել ինձ, որպէս թէ աւազակի վերայ էիք գլուխամ. ես միշտ ձեր մօտ նրատած էի տաճարի մէջ և ուսուցանումէի, բայց ըմբըոնեցիք ինձ:

Ապա տարան Յիսուսը Կայիախա քահանայապետի առաջեւ.

Աշակերտները թողեցին նորան և փախան. բայց Յուղան տեսաւ նելով թէ պարտաւորվեցաւ Յիսուսը, զըզջացաւ իւր գործի վերայ. իւր առած արծաթը տարաւ յետ տուեց քահանայապետներին և գընաց, խեղդվեցաւ:

1. **Աքահութիւնը** և արծաթութիւնը պատճառ էին Յուղայի սկարիով. առցոյ աղիլուսութեանը (յանցաւոր գործին):

2. **Ի՞նչքան փոքր էր շատ անդամ՝ այն օդուտը որի համար մարդիկ վաճառումն իւրեանց ուղարի խաղաղութիւնը և իւրեանց հոգու փըրկութիւնը:**

3. **Իմ ամենալաւ մինիթարութիւնը այս կեանքումը՝ է աղօթք առ իմ Աստուածը:**

4. **Իւրեան յանձն առնել Աստուծոյ կամքին՝ միշտ վայել է քրիստոնէին:**

5. **Եւ Յիսուսի մէջ երեցաւ տաղնազ և երկիւզ այն վրասանդիցը որ մօտացն էր նորան. բայց նա յալթեց նոյս՝ վրասանդինով. դէպ և Աստուած, և այն հաւասուլը թէ արգար է իւր գործը:**

6. **Մի՛ ցաւեցրու քո բարեկամները և բարեկարները՝ սաւասակը գըտանդիլով այն ժամերումը երբ նորա տաղնազի մէջ են:**

7. **Հաս անդամ մեր ընկերի քաղցը կերպարանքի ասկ ծածկած է մի գաւաճան օձ:**

8. **Ավելի շատը՝ իւր գործերը կատարելու համար ժամանակ է ընարում միշտ գեշերը և խաւարը:**

9. **Ճնազնիդ կաց այն մեծաւորներներին որ իշխանութիւն ունին քո վերայ:**

10. **Փորձութեան ժամանակին շատ անդամ բարեկամ բարեկամից հրաժարագում:**

11. **Արգեօք օրինաւո՞ր էր Յուղայի զըզջումը:**

5.

Ընոռուուն հոգացնենամն առնենի մեջ և դադապապապամն առ է հոկ.

[Պատէ. հէլ. 22.]

Ժողովը ծերակայտը, քահանայապետը և դըպիրը հաւաքվեցան Կայիշափայի մօտ որ հարցուփորձ առնեն Յիսուսի վերայ. նախ՝ սուտ վկաներ յառաջ բերեցին, բայց բոլոր վկայութիւնը հակառակելով միմեանց՝ անպատճող գըտանվեցան: Ազաինը քահանայապետը դարձաւ դէպ ի Յիսուսը՝ այսպէս խօսելով. երդեմնեցուցանումեմ քեզ կենդանի աստուծովը՝ որ ասես մեզ, եթէ դու ես Քրիստոս օրդին Աստուծոյ. Յիսուսը պատասխանեց, դու ես ասում: Այս էին կամենում և նորա ոսոխը.

քահանասյապետը իսկոյն պատառեց իւր հանդերձը և աղաղակից ահա հայհոյեց դա Աստուած, ինչ հարկաւոր են մեզ այլ վեկայք։ Ամենեքեան համաձայնեցին նորա հետ և դատեցին, թէ Յիսուսը մահապարտ է. ոմանք բակլսեցին թքանել նորա երեսին, կըսփել նորան և ասել. մարդարէացիր թէ ո՞լ էր որ զարկեց քեզ։ Աւաւոտը լուսացած՝ ուղարկեցին դատապարտեալը պօնտացի Պիղատոսի մօտ, և չարախօսումէին Յիսուսի մասին որպէս թէ մոլորեցուցանումէ չքէից ազգը, արգելումէ՝ կայսրին հարկ տալ և ասումէ իւր համար թէ Քրիստոսը թագաւոր է։ Յիսուսը ոչինչ ըստ խօսեց. և Պիղատոսը հարցընելով նորանից. չունիս ոչինչ պատասխան ընդդէմ գոյց որ այդքան գանգատաւոր են քեզանից, ոչինչ չասաց Յիսուսը։ Պիղատոսը լըսելով թէ Յիսուսը դավելսացի է, ուղարկեց նորան չերովզէսի մօտ. որ և իւր զօրականների հետ միասին անպատիւ արեց Յիսուսը և ըսպիտակ հանդերձ հագցըրած նորա վերայ՝ հրամայեց դարձեալ տանել Պիղատոս դատաւորի ատեանը։ Այս գանչեց ապա քահանասյապետները և խօսեց նոցա հետ սցավէս. ահա ձեր առաջներ դատեցի և վընաս ըս գըտայ այս մարդուս մէջ. և չերովզէսը ոչինչ պատճառ չէ գըտած դորա մէջ, ըստ որում ոչինչ մահու արժանի բան չէ գործել. ուրեմն կը խրատեմ դորան և կ'արձակեմ, ինչպէս սովորութիւն էր ձեր մէջ տօնի օրերում արձակել մի դատապարտեալ (որովհետև գիտէր Պիղատոսը թէ Յիսուսը մատնած է նախանձու պատճառով)։ Բայց ամբոխը հաւանեցուցած դըպիրների խօսքով՝ աղաղակեց. վերացրու դորան և արձակիր Բարաբան (որ խոռովութեան և ըսպանութեան աղաղակ բանտ էր դըրած)։ Միւս անգամ հարցըրեց Պիղատոսը, ինչ պիտոյ էր առնել Յիսուսին որ անուանած է Քրիստոս, որ և ոչ մի չար բան չէ արել։ Աղաղակեցին ամենեքեան. խաչ հանիր դորան, խաչ հանիր դորան։ Պիղատոսը տեսանելով որ չէ կարողանում գործ յառաջացընել, այլ առաւել խոռովութիւն է լինում ժողովըրդի մէջ, հաւանեց կատարել նոցա խրնիրը. բայց Պիղատոսի կինը անցեալ գիշերին տեսիլ տեսանելով՝ իմաց տուեց իւր տղամարդին՝ ասելով. բան չունիս այդ արդար մարդու հետ. վասն այս պատճառի Պիղատոսը դատաւորը վըմիռ կապեց սցավէս. ես ոչինչ վընաս չեմ գըտանում այս մարդու մէջ. ապա վեր առեց ջուր և լուաց ձեռերը ժողովըրդի առաջն, և ասաց. ես անպարտ եմ այդ արդար մարդու արիւնիցը. ո՞նք գիտէր։ Բոլոր ժողովուրդը աղաղակեց. դորա արիւնը թող լինի մեր վերայ և մեր որդիների վերայ. Յեւ

այս Պիղատոնը արձակեց Բարաբրայ մարտասպանը և Յիսուսին ծեծ տուած՝ յանձնեց ժողովրդին որ խաչ հանէ նորան:

1. Շռէպէտ մի մարդու անմեղութեւնը ակընօյտնի երևումէր, բայց այդու ամենայնիւ երբեմ յաջողումն ամրարշտութեանը յապէջող զըտանիթէ:
2. Ծղամարդի գործ չէ, այն սկասաւառով մի բան ուրիշների կամքին թաղում, որ չէինք կամննում՝ պատասխանատու լինել:
3. Արդարագաս լինել և ոչինչ մարդու անհանոց չը գըտանվիլ:
4. Ընդդէմ իւր ուրախ վեցութեանը գործ կատարել և ձանապարհ առաջ ըար ըանին՝ որ կարելի էր խափանել, մեղք է:
5. Ժաղովըրդի մուշրութիւնը և Պիղատոսի երկիւլը մարդու երեսից՝ Յիսուսին մո՛: բերեց:
6. Ի՞նչ յիմար բան է Աստուծոյ պատիժը խընդրել իւր վերայ և իւր զաւահների վերայ. մի թէ առանց գործն ես՝ չէինք գըտանվում պատճի արժանիք:
7. Եթէ ձանաշանծ ենք մի մարդու անմեղութիւնն, սպա և ամենափոքր պատիժը որ տալիս էինք նորան՝ մեղք էր ընդդէմ արդարութեան:

6.

Պետրոս առանաւմք իւր կայ կայ կայ կայ. [Առաջ. 41. 26.]

Յիսուսի աշակերտներից մի միայն Պետրոսը նորա հետեւից գնացած էր մինչև քահանայապետի սրահը. նա ըբ կամեցաւ խսկոյն անհաւատարիմ գրտանվիլ այն քաջասիրտ խօսքին որ տուած էր ինքը: Եթէ հասանէր ինձ մռանել ևս քո հետ միասին, չեմ ուրանալու քեզ՝ ասած էր Պետրոսը յառաջուց. բայց այժըմ հեռի նըստած էր ասլարանիքի գաւիթի մէջ. մօտեցաւ նորան մի աղախին և հարցըրեց այսպէս. և զու գալիքացի Յիսուսի հետ էիր. պատասխանեց Պետրոսը. ըը գիտեմ՝ թէ ինչ ես խօսում դու: Ապա մի այլ կին ասաց այն տեղ կանգնածներին. և սա Կաղովրեցի Յիսուսի հետ էր. միւսանգամ ուրացաւ Պետրոսը և երգումն կերաւ, թէ ըը գիտեմ այն մարդը: Սակաւ մի յետոյ ձայն տուեցին և միւս ներկայ գըտանվողքը. արդարն գու ևս նորանցից ես. բատ որում քո խօսուածքը ևս յցանումէ: Այն ժամանակը ըսկըսեց նա նզովել, և երգնուլ, թէ չեմ ձանաչում այն մարդը: Եւ խալիյն խօսեց հաւը: Պետրոսի միտքը եկաւ Յիսուսի ասած բանը. դուրս գընաց և լաց եղաւ դառնալիս:

1. Ամեր աւելի հաւասա ունէնք գեղ ի մեզ, քան թէ գործով կատարել
կարող էնք. սովորելի հանաշել քո անձը:
2. Բողէական գութը և այն բարի գետառութիւնը որ առանձնական
ժամանում ծընել են մեր ուրսի մէջ, շատ անդամ ոչընդնեմնեն, եթէ
որ փորձութիւն ենք տեսանում ուրիշների հետ կնյաղաղավարվելով:
3. Արժան եր քեզ՝ Աջառածուն աւելի հնագանել քան թէ մարդուն:
4. Ահաւատարմութիւնը մի սովորված (զարհուրելի) յանցանք է:
5. Ես չեմ ամաչում խստավանել Աշեարանը, պատճառ որ աս այնողի-
ով մի տառածածոյն զօրս թիւն է որ երանութիւն է պարզւում իւր
հաւատացովներին:

7.

Յիսուսը հունական լուսէ կերպոյ և նախագահ. [Մատթ. հ. 27.]

Վհա թէ ինչպէս անիրաւ դատաստանով դատապարտվեցաւ
Յիսուսը Համբերութենով յանձն առաւ նա իւր անարդանըը.
ուսի վերաց դրած իւր խաչը՝ տաճումնչը ինքը, մինչև ըմբռոնե-
ցին մի կիւրենացի մարդ՝ Սիմոնն անունով որ անդիցը դալիս
էր, և սորա վերաց դրեցին խաչափայտը որ տանէ Յիսուսի հե-
տից: Երբ որ հասել էն Դոլգոթա սարին, Յիսուսը ձեռքերից
և ստերից թե եռեցին խաչի վերաց. Ճանապարհից անյանողները
ամենայն կերպով հայդումնին նորան, այն և քահանացավետը
արհամարհումին նորան և ասումին, ուրիշները կարողացաւ
ապրեցուցանել, բայց ինքը իւրեան չէ կարող ապրեցուցանել.
և այն երկու աւազակները՝ որ խաչած էն նորա հետ միասին,
նախատումնին նորան. բայց Յիսուսը իւր չարչարանքի սաստիկ
ցաւի մէջ՝ խօսեց այսպէս. Հայր՝ թաղ գոյց մեղքը, բատ որում
ցը գիտեն թէ ինչ են գործում: Այն ժամանակը՝ խաչից ա-
ռազակների մինը զբացաւ և ազակեց Յիսուսը՝ ասելով. յիշեր
ինձ Տէր, երբ որ կը գաս քո արբայութենովը. Տէրը ասաց. Ճշ-
մարիտը ասեմ քեզ. այսօր դու իմ հետ կը լինիս դրախտումը:

Յիսուսի մայրը և սիրելի աշակերտ Յովհաննէսը՝ խաչի մօտ
կանգնած մորմբքի լով արտասվումին, մինը իւր որդու, և միւ-
րը իւր վարդապետի տրխուր վերջի վերաց. դէպ ի մայրը ձայն
տուեց Յիսուսը. կին դու, ահա քո որդին. դէպ ի Յովհաննէսը
խօսեց ահա. քո մայրը: Էսկըսեալ վեց ժամից խաւար սպատեց ըո-
խուեց՝ ահա. քո մայրը: Էսկըսեալ վեց ժամից խաւար սպատեց ըո-

թողեր զիս: Այրվելով ծարաւից՝ խօսումնշ նա յետոյ. ծարաւի եմ. զինուորներից մինը վեր առաւ լսապունդ լի քացախով և լեղով, մօտեցրեց նորա բերանին: Ամժը ըղգալով Յիսուսը որ մինչեւ ի մահ խաչի վերայ հնազանդ է գրտանվել երկնաւոր հօրը, կարող էր ասել. ամենային ինչ կատարեալ է: Խննեբորդ ժամն էր (մեր հաշուովը՝ երրորդ ժամը ճամփոյ յետոյ), երբ Փերկիչը իւր աստուածային հոգին դուրս փըցեց, աղազակելով. Հայր, ի ձեռ բո աւանդեմ ըղհոգի իմ: Տաճարի վայրագոյրը պատառվեցու մէջցը, երկիրը շարժվեցաւ և շատ նընջեցեալ ոըըբերի մարմինք յարութիւն ըստացան:

Վայսկէս պարտ էր Յիսուսին չարչարվել և մտանել իւր փառքի մէջ: Ճռոմայեցի հարիւրագետը և միւսները վըկայ լինելով սյս զարմանալի անցքերին, խոստովանեցին. արդարեւ՝ սյս մարդը Ազառուծոյ որդի էր:

Հյետոյ՝ որպէս թէ Յիսուսի անարդանքը լցուցանելու համար՝ կամք ունէին նորա բարձքերը խորտակել, բայց Յիսուսը մեռած էր յառաջուց՝ երբ որ մօտեցան նորան. վասն սյս պատճառի բաւական համարեցին խոցել նորա կողը, որից դուրս թափակեցաւ արիւն և ջուր, որպէս նրշան՝ թէ բոլորովին մեռած էր:

Կատ կերպերով յայտնըվեցաւ այժմ այն մարդերի սէրը որ ծածկապէս պատվումէին Յիսուսը. սյս ազնիւ մարդերից մինը՝ էր Յովսէփ արեմաթացին որ յառաջ Հրէից ծերակուտի անդամ՝ էր: Սա զընաց Պիղատոսի մօտ և խընդրեց թոյլտուութիւն՝ Յիսուսը մարմինը թաղելու համար. Պիղատոսը թոյլ տուեց: Եկաւ և Նիկոդեմոսը որ միանգամ գիշերով տեսութիւն էր գնացել Յիսուսին, որ և ծերակուտի մէջ պահանջել էր որ՝ դատապարտելուց յառաջ՝ հարցուվորձ առնեն Յիսուսի մասին: Ապա երկուքը գնացին գոլգոթա, իջուցին Յիսուսի մարմինը, պատեցին նորան կրտաւներով և խընդերով՝ ինչպէս օրէն էր Հրէից մէջ, և թաղեցին մի մերձակայս սպարտէզը մէջ, մի նորաշէն գերեզմանում: Վզա ծածկեցին գերեզմանը մի մեծ քարով: Եւ Պիղատոսը հրամայեց կընքել գերեզմանը և պահապաններ դընել նորա մօտ, որ մի՛ գուցէ՝ ինչպէս կասկած ունէին քահանայապետքը՝ Յիսուսի աշակերտը գային գիշերով և գողանային նորա մարմինը, և ապա համբաւ տարածէին ժողովը մէջ, թէ Յիսուսը յարութիւն առաւ մեռելութենից:

1. Վոլթէնը և քո թընեամիների համար. ոիբեր նորանց:

2. Եւքը այս կեանքից է մուտքը յաւատենականութեան մէջ։ Այսօր՝ առաջ փըրկիչը աւազակին՝ կը լինիս իմ հետ գըրախտումը։
3. Ճըշմարիտ ուրատով զըզդումը դըրանումէ շընորհ։
4. Հըաժարվող սիրելին հողաբարձու է և նոյս համար, որոնցից հըաժարվումէ։
5. Քրիստոնեայ մարդը չէ յաւահատվում, այլ խընդրումէ պիտի։ Տէ՛ աղասի՞ր ինձ չարեցը։
6. Մեռանողի վերջն խընդիրը թողութեան ուրատումը լինի քո համար։ յօժարութեամբ քաղցրացրուե նորա սիրաբը։
7. Ինքը Աղտուծոծ դործակատար է արդարի համար։ «Ես՝ այն անցքելով բնութեան մէջ ցոյց տուեց իւր տչաճութիւնը այն անըսելի չարագործների վերայ։
8. Ու որ Աղտուծոյ կամքը կատարել է, կալող է իւր հողին խաղաղութեամբ յանձն առնել Աղտուծուն։
9. Հագու արա որ և դու կեանքիդ վերջումը կարողնաս տոել ամենայն ինչ կատարեալ է։
10. Երանեի մեղ՝ եթէ մի հաւատարիմ ուեր և մեղ կ'ամփոփէր գերեզմանի մէջ։
11. Չար խընձմբանքը երկիւղ ունի մինչև մեռածներիցը ևս։

8.

Քըլէստոն յաղետու է հետեւը։ [Մատուն. Գլ. 28.]

Ինչու ամենի՞ որ Յիսուսը յառաջուց ասել էր, կատարվեցաւ, նոյնպէս Ճըշմարտվեցաւ այն խօսքը որ յառաջուց ասած էր Փարիսեցը։ այսինքըն ոքանդեցէր այդ տաճարը, և ես կը նորոգեմ դորան երեք օդի մէջ։

Երբ որ միաշաբաթը լուսանումէր, Մարիամ մազդաղենացին, Մարիամ Յակովի մայրը և Պաղովմէն խունկեր պատրաստած գնացին դէպ ի Տիրոջ գերեզմանը, որ օծեն իւրեանց բարեկամի մարմինը։ Բայց գերեզմանը դատարկ գրտան։ նորա վերայ դըրած քարը բաց էր գըլորած, և պահապանքը փախած էին։ Տեսան միայն մի հրեշտակ որ խօսեց այն կանանց հետ։ մի վախեցէր դուք, գիտեմ որ խաչելեալ Յիսուսն էք որոնում։ նա չէ ասու, այլ յարութիւն է առել, եկէք տեսէք այն տեղը ուր ո ըրած էին նորան, գնացէք շուտով և պատմեցէք նորա աշակերտներին՝ թէ յարուցեալ է Յիսուսը։ Եկան Պետրոսը և Յովհաննէսը և ըստուգելով ինչ որ նոյս պատմած էր՝ դարձան և գնացին։ բայց Մարիամը մընաց լարվ գերեզմանի վերայ և յետ նայելով՝ տե-

սաւ Յիսուսը կանգնած, թէպէտ չը ճանաչեց նորան, և կարծելով թէ պարտիզանն էր, ասաց նորան. Տէր, եթէ դու ես իմ տէրը հանել այս գերեզմանից, ասա ինձ ուր դըրեցիր նորան։ Ազա ձայն տուեց Յիսուսը. Մարիամ. և աս ձայնիցը ճանաչելով Յիսուսը՝ պատասխանեց իսկցն. վարդապէտ։ Գընաց Մարիամ մագդաղենացին և պատմեց աշակերտներին, թէ տեսայ Տէրը և խօսեցի նորա հետ։

1. Թռող մեք շցա շցա գընանք տեսութիւն մերայնների գերեզմաններին։ Ամենայն գերեզմանի մօս Ազառծոց ուերը փըռումէ մեջ մէջ նոր հաւատ դէղ ի անմահութիւն և յարութիւն։
2. Ոչ ամենայն սիրո կարող է շրատով խելամուտ լինել անցըերի վախութեաննը։ Մարիամը գեռ ևո մընումէր գերեզմանի մօտ, բայց միւս ները որոնումէին յարուցեալը հեռի տեղում։

9.

Յայուցեալը նըստամէ իւր աշուշըրանեցն։ Յեսուսը մնացին իւնացութեալ նոյն հետ. [Ղուկ. Գլ. 24. Յով. Գլ. 20.]

Յիսուսի աշակերտներից երկուքը գնումէին Եմմառու ասած գեղը որ հարիւր և վաթսուն ասպարէս հեռի էր Երուսաղէմից, և խօսումէին միմեանց հետ վերջն օրերի տըխուր անցըերի վերայ։ Այս միջոցումը մօտեցաւ նոցա Յիսուսը և ճանապարհակից եղաւ իւր աշակերտներին, բայց սորա չէին ճանաչում նորան։ Ազա ըսկըսեց Յիսուսը այսպէս խօսել. ինչ բանի վերս էր վեծում, և ինչու տըրումած էր։ Աշակերտները պատասխանեցին. մի՛ թէ դու միայն Երուսաղէմի մէջ չեմացար թէ ինչ բան է պատահէլ այն տեղ այս օրերումը։ ըս դիտե՞ս որ Յիսուս նազարէցին քահանացավետների և իշխանների ձեռքովը դատապարտվեցաւ և խաչ հանվեցաւ։ Բայց մեք ակրնկալութիւն ունէինք թէ նա փրբկելու էր Խարացէլի աղդը. ահա երրորդ օրն է որ այդ բանը հանդիսել է, և քանի մի կանացը մեղանից՝ առաւօտուն վաղ գընացել էին նորա գերեզմանը և չեն գրած նորա մարմինը. բայց հրեշտակներ երեկով նոյս՝ ասած են, թէ նա կենդանի է։ Յիսուսը յանդիմնեց նորանց՝ ասելով. ոլ անմիտը և հեղգասիրտը, որ դըժուարանումէք հաւատալ այն բոլոր բաներին որ ասած են մարդարէքը. մի՛ թէ պարտ չէր Քրիստոսին այդպէս չարչարվել և ապա իւր փառքի մէջ մոտանել։ Երբ որ մօտեցան Եմմառու գեղին, Յիսուսը պատճառեց որպէս թէ աւելի հեռի տեղ ունէր գնալու. բայց աշակերտը ըստիպե-

ցին նորան ասելով. Տէր, մեր մօտ մընա՛, բատ որում դէպի երեկոյ է. Յիսուսը իջևանեցաւ նոցա մօտ, և նըստելով սեղան նոցա հետ, վեր առաւ հայրը, օրհնեց, կըտրեց և տուեց նոցա: Այն ժամանակը բացվեցան աշակերտների աչքերը և ճանաչեցին նորան. բայց Յիսուսը աներեսութեցաւ: Աշակերտները վեր կացան խիզին և գնացին Նրուսաղէմ և լըսեցին այս տեղ, որ Յիսուսը երեւել էր նոյնպէս Պետրոսին, և պատմեցին ինքեանք ևս ինչ որ իւրեանց հանդիպել էր ճանապարհին:

Կոյն միաշաբաթի երեկոյին՝ աշակերտը Երուսաղէմի մէջ միասին ժողոված էին և փակել էին դըռները՝ բատ որում երկուզ ունէին ձրէից կողմից: Յարուցեալը յանկարծ երեւեց նոցա մէջ և ողջոյն տուեց ասելով. խաղաղութիւն բնդ ձեզ: Աշակերտը զարհուրեցան և կարծումէին տեսանել մի ոգի. բայց երբ որ ըստուգեցին իւրեանց տեսածի ձրշմարտութիւնը, խընդացին Տիրոջ տեսութեան վերայ: Միւսանգամ ողջոյն տուեց նոցա՝ ասելով. ինչպէս իմ հայրը առաքել է ինձ, այնպէս և ես առաքումեմ ձեզ, այս խօսրից յետոյ փըսէց նոցա՝ վերայ ասելով. առէք հոգի սուրբ. եթէ մինի մեղքը կը թողուք, թողեալ լինի, եթէ մինը կը կապէք, կապեալ լինի:

Վայուհետեւ բոլոր աշակերտը հաւատացին նորա յարութեանը. մինը միայն որ ներկայ չէր հանդիպած այդ միջոցին՝ երբ Յիսուսը ներս մըտաւ՝ խաղաղութեան ողջոյն տալով, տարակոյս ունէր գեռես. այս աշակերտը թառվման էր. սա ութ օրից յետոյ տեսանելով Յիսուս՝ դարձեալ չէր հաւատում, մինչև որ շօշափելով և քըննելով նորա խաչելութեան նրշանները, հաւատաց որ իւր տեսածը Յիսուսն էր, և ամօթապարտ լինելով ձայն արձակեց. Տէր իմ և Աստուած իմ. բոյց Յիսուսը ցոյց տալով թառվմասին իւր վէրբը ձեռերի և կողի վերայ՝ ասաց. Թռվմաս, դու հաւատացիր, բատ որում տեսար, բայց երանի նոցա որ կը հաւատան առանց տեսանելու:

Ունչւ Յիսուսը իւր աշակերտների հետ էր, աշխատեց բանալ նոցա միտքը որ իմանան Սուրբ գըրբի զօրութիւնը: Դուք՝ ասաց նոցա՝ վըլաց էք իմ գըլսի բոլոր անցքերին, և գիտէք թէ այս բոլոր բաները յառաջուց ասած կային Սուրբ գրրբի մէջ մարգարէների բերանովը: Ապա գընաց Յիսուսը Դամբիսա, որ և այն տեղ ծանուցանէ իւր յարութիւնը. այս տեղ կըրկին հանդիպեց Պետրոսին Տիբերիու ծովեզրի մօտ, և իւր անձը, բայտնեց մի լի և առատ ձընորսութեան հրաշագործութենով, և հաց կերաւ նորա

Հետ։ Հացկերութենից յետոյ երեք անգամ հարցըրեց Պետրոսից։ սիրումես ինձ։ երբ Պետրոսը նոյնպէս երեք անգամ պատասխան տուեց։ այս Տէր, գիտես որ ես սիրումեմ քեզ։ ասաց Յիսուսը՝ արածեցրու իմ ոչխարները։

Տէրը իւր վերջին օրերը աշխարհիս վերայ գործ դրբեց առաւելագիտ այն բանի վերայ, որ իւր աշակերտները քաջալերէ և սլատրատէ իւր վարդապետութիւնը տարածելու համար։ խոստացաւ նոցա Հոգւոյն սըրբոյ գալուստը, ասաց նոցա՝ թէ ինքը մնայու է նոցա հետ մինչեւ աշխարհի վերջը, կատարելագիտ ու ուռումն տուեց նոցա իւր կրօնի մասին և յատկապէս՝ Աստուծոյ արքոցութեան վերայ։

1. Դու չես ճանաչում միշտ այն մարդեկը, որ կենաքի զանազնն ճանապարհների վերայ լնեկերանումնեն քո հետ։ Ըզգուշացին որ ըս լնիս ոչ անխոհեմ և ոչ շատ կատկածուս։
2. Խնազէս աշխարհուցոցիւ պիտոյ է լնեկը Յիսուսին՝ լռել միշտ իւր աշխարհների բերաննեցը։ » Բայց մեք կարծումէինք թէ նա պիտոյ է փըրկ կը խարցէլի աղքը։
3. Խաշաղութիւն ձեր հետ։ այս ողջոնը և այժըմ՝ զատկի տօնին պատշաճաւոր ողջայն էր բոլոր Քրիստոնէից աղքին, պատճառ որ Քրիստոսի յարութենավը խաղաղութիւն եկաւ մարդկային ալբասում և զըլցադող ուրոտի մէջ։
4. «Եւրոպամիտ կաց գէպ ի ուրիշների պահառաւորութիւնքը։
5. Եթէ այն բանին միոյն պիտոյ է հաւատոյինք, ինչ որ տեսանումնեք, առա ո՛րջափ անմիտթար աջապ կը նայէր մեր սիրալ պատկայի վերայ։
6. Տէր իմ և Ապօստոլն իմ։ սորա մէջ պարունակած է զըլցացող ուրատի խոստալանութիւնը։ ինչողէս ամսացնուցանումնես գու ինձ անհաւատիու, ներիք ինձ ո՛վ գու բարձրեալրդ։
7. Հոգաբարձութիւնը իւր եզօրների աղաղայի համար՝ մի հարկաւոր բան է սիրող և հաւատարիմ ուրոտի համար։

40.

Յիսուսի պապէջը էւր Հօդ Տօթ։ [Գորչէս Ապօստոլ. հ. 1, 3 և այլն.]

Փըրկիչը իւր յարութենից յետոյ քառասուն օր կացաւ աշխարհիս վերայ, և այս բոլոր ժամանակը նուիրեց իւր աշակերտներին։ Հեռի մնալով իւր թըշնամիների աչքից։ Դարիլխայի աշխարհումը մի սարի վերայ պատուիրելով իւր աշակերտներին՝ գընալ և ուսուցանել բոլոր հեթանոսները և մըկլըրտել նորանց Հօր Աստուծոյ, Որդուոյ և Հոգւոյն սըրբոյ անունով, ասաց նոցա որ

մընան Երուսաղէմ՝ քաղաքումը։ Վերջապէս տեսանելով Յիսուսը՝
թէ իւր առաքչի բոլոր կամբը կատարել է, դուրս բերեց աշա-
կերտները մինչև Բեթանիա և հանեց Զիթենեաց սարի վերաց։
այս տեղ բարձրացըրեց ձեռքերը, օրհնեց նորանց և հրաժար-
վեցաւ նորանցից՝ մի ամազ ծածկելով նորան աշակերտների աչքից։
Սորա զարմացած և հիացած՝ անդարձ աչքով նայում էին Յիսուսի
քամակից, բայց երեւ եցան նոցա երկու տղամարդ ըսպիտակ հան-
գերձով և ասում էին, Գալիլիացի՝ մարդեր, ինչու համար կանգ-
նած այս տեղ՝ նայում էի դէպ ի վեր։ այս Յիսուսը որ ձեզանից
վերացաւ դէպ ի երկինք՝ գալոց է այնպէս, ինչպէս որ դուք տե-
սաք նորա վերանալը։

Ուրախ և հանգիստ սըրտով տասն և մի աշակերտքը դար-
ձան Երուսաղէմ և մընացին այն տեղ, ինչպէս հրամայած էր նո-
ցա Յիսուսը, մինչև ի վերուստ գորութիւն ըստանային։

1. Ավենայն քրիստոնեաց իւր կեանքի վերջին օրերը աշխարհին վերաց՝ յօ-
ժարութեամբ կը նուիրէ իւր սիրելիներին միայն։
2. Ի՞նչքան խաղաղ սըրտով դարձաւ Յիսուսը դէպ ի իւր հայրը։
3. Երկինքը որ մեր ամենապատուական յոյսերի նոպատակն է, լժեթեացը-
նումէ մեղ մեր աշխատութիւնքը՝ Աստուծոյ արքայութեան համար գոր-
ծող գըտանվիլ։
4. Բարի անձը օրհնելով և աղօթելով հրաժարվումէ իւրայիններիցը։
5. Գեղեցիկ մի բան է՝ երկինք և երկիր գաշնակից միմեանց հետ։

ՅՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՒՄԾ

Քրիստոնէութեան առաջին տարածումը Առաքելոց ձեռքով։

1.

Հոգեւոյն ուլույ առաջնությ. [Գորչէ Աստ. 42. 2.]

Այն միսիթարիչը՝ որ Յիսուսը իւր հրաժարման ժամանակը
խոստացել էր աշակերտներին, և զորանով սիրտ էր տուել նոցա
իւրեանց ծանրակլշխ պաշտօնի մասին, շուտով հասաւ նոցա,
որ ծանաչէին նորա այն բանի ճշշմարտութիւնը՝ թէ և լաւ է, ձեզ՝
եթէ ես երթամ։

Տասն օր Յիսուսի համբարձմանից յետոյ՝ աշակերտները մի-

արան նըստած էին միասին, յանկարծակի դըղըրդումն եղաւ երկնքից մի սաստիկ հոգմի պէս և շարժեց բոլոր տունը, ուր նըստած էին նորա: Երևեցան նոցա որպէս թէ հրեղէն լրդուք, և վայր իջանելով նլատեցին ամեն մինի վերայ: Ամենեթեան լըցիցան սուրբ հոգով և ըսկրսեցին խօսել այլեայլ լեզուներ, ինչպէս հոգին հրամացումէր նոցա խօսել: Զարմացաւ այս բանի վերաց Երուսաղէմի մէջ հաւաքված ժողովուրդը, թէ հրէայ և թէ սոյլազգի, և ասումէին միմեանց. մի՞ թէ սորա որ խօսումեն, գալիքացիք չեն: այս ինչ հրաշք է, որ լըսումենը դոցա բերանից մեր ջոկ ջոկ բարբառները որոնց մէջ ծընած էինք մեր. միւսները ծազր առնելով ասումէին: քաղցուալիցը (նոր գինով արթեցած) են դորա: Դեր կացաւ Պետրոսը, բարձրացըրեց ձայնը և խելամուտ արեց ժողովուրդը՝ ասելով. ոչ թէ՝ որպէս դուք էք կարծում՝ արբեցած են սորա, այլ այս է՝ ինչ որ յառաջուց ասել է Յովեն մարդարէն՝ թէ Ազտուած վերջին օրերումը կը թափէ իւր հոգին ամենայն մարմնի վերայ: Ազգա ըսկրսեց Պետրոսը այնպիսի եռանդուն և ազդու կերպով քարոզ տալ խաչեալ Յիսուսի վերայ՝ ինչպէս երեւէ չէր լըսկած նորանից. նոյն օրի մէջ մըկրտավեցան մինչեւ երեւէ հազար մարդ:

1. Ինչ որ Ազտուած խստանումէ կատարելոց է անշուշտ (Ճըշմարտապէս):
2. Մի՛ համարձակիլիք այն բանի վերայ ծազր առնել՝ ինչ որ դու չես հսկանում:
3. Եւ սոյօր ևս Ազտուածոյ հոգին իջանումէ այն մարդերի վերայ որ այդ մասին խընդուռումնեն: Այն միջոցները՝ որոնց մէջ մեր սիրու երկիւազծ խորհրդներով ըլցաստանումեն, են նոյնպէս աստուածային զօրութեան ազդեցութիւնքը:

2.

Պատմութեան. (Գրուծ Ազուա. էլ. 9.)

Այն բաները որ Գործք Առաքելոցի մէջ գըրած կան՝ նախ և յառաջ տեղեկութիւն են տալիս մեզ՝ թէ ինչպէս Հրէից ծերակիցտը Երուսաղէմի մէջ խորհուրդ արեց որ Յիսուսի աշակերտները բանտ գընէ և առ ի մահ դատապարտէ, պատճառ որ նորա արձակ համարձակ ուսուցանումէին ժողովուրդը, և ընդդէմի Սպառուկեցոց քարոզումէին յարութիւն մեռելոց՝ Քրիստոսի օրինակովը: Կմանապէս պատմութիւն է լինում այն գըրքի մէջ թէ Հրէից ծերակիցտը՝ Գալակիւլ օրէնսուսոյց և ժողովը դի մէջ պատռելի Փարիսեցց խօսքով՝ բաւական համարեց ա-

տեան գանչել Առաքեալքը, ծեծ տալ նոցա և պատուիրել որ
այլ ևս ըբ խօսեն Յիսուսի մասին: Ծատ գեղեցիկ էր Դամաթիշ-
լի ասածը Առաքելոց հալածողների համար. «Զե՞ոք վեր առէք
այդ մարդերիցը և թո՛լ տուեցիք դոցա. պատճառ՝ եթէ այդ
խորհուրդը մարդուց է՝ կը քակորդի, բայց եթէ Աստուծուց է,
ոչ ով չէ կարող դորան քանդել. ասլա թէ ոչ, կը լինիք պա-
տերազմողը ընդդէմ Աստուծոյ»: Եւ Առաքեալքը ասենի մէջ,
երբ որ Ճրէից քահանայապետը ասումէր նոցա՝ մի՞ թէ ըբ պատ-
ուիրեցինք ձեզ որ չուսուցանէր Յիսուսի անունով, բայց դուք
այժմ լըցըրեցիք Երուսաղէմ ձեր ուսումնովը, շատ պատշաճա-
ւոր պատասխան տուեցին. «Հնազանդել պարտ է Աստուծոյ ա-
ռաւել քան թէ մարդկանու: (գլ. ե.)

Առաքելոց հալածմանը առաւելապէս գործակից գըտանվե-
ցաւ մի տարսոնայի Ճրէայ Սաւուղ անունով, որ ջանադիր էր
իւր զօրաւոր կարողութենովը բնաջնիջ առն և լ Յիսուսի պաշտող-
ները: Այս Սաւուղը՝ որ կամակից էր Ստեփանոսի քարիզմանը,
որ և Երուսաղէմի մէջ տընէ տուն մտանելով՝ տղամարդ ու
կնամարդ դուրս էր քարշում և բանտ էր դընում, — այս՝ Քիս-
տոսի եկեղեցուն վնասակար Սաւուղը միանգամմ քահանայապետ-
ներից թուղթ խընդրեց Դամասկոսի մողոնների վերայ, որ գը-
նայ այն տեղ և Քրիստոսի խոստովանողքը կապէ և բերէ Երու-
սաղէմ: Մօտեցած Դամասկոսին, յանկարծակի շըրջապատեց նո-
րան մի այնապիսի փայլատակով լցու երկընթիցը, որ նա խմոյն դէպ
ի գետին զարկիլեցաւ և լըսեց այս խօսքերը. Սաւուղ, Սաւուղ,
ինչու ես հայածում ինձ: Կա հարցըրեց, ով ես դու՝ Տէր. ձայն
եկաւ. Ես լմ Յիսուսը որ հալածումես դու. բայց դըտուար էր
քեզ արացել (քացի տալ) ընդդէմ խըթանի: Այս տեսիլքիցը
սըրտաթափ լինելով խօսեց Սաւուղը. Տէր՝ ինչ ես կամենում
ո՞ր առնեմ ես. զարձեալ ձայն եկաւ. վեր կաց, զընա Դամաս-
կոս, այն տեղ կը լըսես թէ ինչ պիտոյ էր առնել քեզ: Դա-
մասկոս քաղաքումը հեթանոս Սաւուղը՝ որ այն տեսիլքից յետոց
կուրացել էր և երեք օր ոչնչ կերակուր բերանը չէր դըրել,
աստուածային տնօրէնութենովը՝ Անանիա Յիսուսի աշակերտի
մօտ ուսումն առաւ և մըկըրտվեցաւ: Մըկըրտութենից յետոյ ան-
ուանվեցաւ Պաւղոս և Հիմնարկեց քրիստոնեայ եկեղեցիք հեթա-
նոս աշխարհների մէջ, բայց և Աւետարանի համար աւելի չար-
չարանը կըրեց քան թէ Տիրոջ միւս առաքեալքը:

Պաւղոսը, Պետրոսը և Ստեփանոսը որպէս և այլ քրիստոն-

հայր որ կային այն ժամանակումը՝ կատարվեցան մարտիրոսական մահով։ Մի միսյն Յովհաննէս աւետարանիչը հասաւ 99 տարեկան հասալի. նա ականատես գըտանվեցաւ Երուսաղէմի կործանմանը (Տիտոս Հռոմացի կայսրի օրերումը, 70 տարի Ք. յ. տոյ), ինչու յառաջուց ասել էր Յիսուսը, և բնական մահով վախճանեց Եփեսոս քաղաքի մէջ։

1. ՄԵ ազնիւ տղամարդ շատ անդամ՝ մեծ աղքեցութիւն ունի ամեալը աղքերի վերայ։
2. Հալածումես գու ինձ այսպէս ձայն տալու մեզ՝ թող Յիսուսը պատճու չունենար երեկ։
3. Եթէ մի գործ Աղտուծուց է՝ կը մընաց հատոտառան. եթէ մարդուց է՝ կը կործանիի. ովլ տըխար մարդ, գու չ'ո կարող Աղտուծոյ գործը ու ընչացուցանել։
4. Աղտուած ամեն մարդու նորանըշան ակնարկութիւններ է աւնում իւր կեանքի մէջ. սյդ ակնարկութեններին միտք գիր։
5. Պարսսկանութեան և պաշտօնի համար արքան է՝ որ քրիստոնեայ մարդը յանձն առնու մի ամենաղղժուար բան, այն մահ ևս։

ՎԵՐԱԿԲԵՐԻ

»Ուրիշ շատ բաներ արած է Յիսուսը (և նորա Առաքեալքը), որ չեն գըրած այս գըրքի մէջ. բայց այսքանը գըրվեցաւ որ հաւատաք դուք թէ Յիսուս Քրիստոսը՝ որդի Աղտուծոյ է, և հաւատալով ըստանայիք յաւիտենական կեանքը՝ նորա անունով«։ Յովհ. գլ. 20, 30, 31. գլ. 21, 25։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	ԵՐԵՒ.
Յառաջարան	5 — 10.
Հասարակարար խօսուածք Կրօնի ուսման վերաց . . .	11 — 22.
1. Ազաթին մտածելի բանը,	
2. Մարդը,	
3. Թէ ինչ է և որպէս է մարդը.	
4. Միտք և բանականութիւն.	
5. Անձնիշխան կամք. Խըղճմշտանք.	
6. Թէ ինչ է մարդու վախճանը.	
7. Թէ ինչ բանէր խափան են լինում՝ այս նպատակիս հասանելու.	
8. Շարունակութիւն.	
9. Թէ ազնիւ հոգիքը ինչպէս կարօտ են լուսաւ որութեան, զօրութեան և մսիթարութեան.	
10. Աստուած.	
11. Աստուած Ճանաչելը Բնութենից.	
12. Բնական օրէնք.	
13. Աստուած Ճանաչելը Յայտնեալ կրօնից.	
14. Յայտնեալ կրօնի յիշատակարանքը.	
15. Հին կտակարանը.	
16. Կոր կտակարանը.	
17. Սուրբ գլորի գործադրութիւնը.	
18. Սուրբ գլորի ներգործութիւնը:	

Ա. Քո ինդուն ետիւն հաստիք ուսումնական.

ԱՌԱՋԻՆ, ՀԱՏՈՒԱՅ.

Աստուծոյ մասին	22 — 38.
1. Աստուծոյ գոյութիւնը.	
2. ----- միութիւնը.	
3. ----- միասնական երրորդութիւնը.	
4. ----- յաւիտենականութիւնը.	
5. Աստուած հոգի է.	
6. Աստուծոյ ամենակարողութիւնը.	
7. ----- ամենայն տեղ ներկայութիւնը.	
8. ----- ամենագիտութիւնը.	
9. ----- ամենիմաստութիւնը.	

10. Ապտուծոյ սըրբութիւնը.
11. ——— արդարութիւնը.
12. ——— գլխութիւնը:
13. Ապտուած ամենամեծապէս երանելի է.
14. ——— աշխարհի արարիչ է.
15. ——— աշխարհի պահպանող է.
16. ——— աշխարհի կառավար է.
17. Ապտուծոյ նախախնամութիւնը:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒՅՃ.

Ապտուծոյ տնօրէնութիւնը մարդկային ազգի փըրկութեան համար Յիսուսի Քրիստոսի միջնորդութենուլ. 39 - 58.

1. Յիսուս Քրիստոս.
2. Յիսուս Ապտուծոյ և մարդոյ որդին.
3. Կորա յայտնութեան նպատակը.
4. Յիսուս՝ որպէս վարդապետ.
5. Յիսուս՝ որպէս օրինակ առաքինութեան.
6. Յիսուս՝ որպէս փըրկիչ.
7. Հարունակութիւն.
8. Քրիստոսի յարութիւնը և համբարձումը.
9. Հոգւցին սըրբոյ հեղումը.
10. Հաւատը դէպ ի Քրիստոս.
11. Հաւատը և գործը.
12. Գործերի անկատարութիւնը.
13. Ուղղութեան հարկաւորութիւնը.
14. Ուղղութեան ճանապարհը (Անձնաճանաչութիւն).
15. Զըդիումն. Ապաշխարութիւն.
16. Ուղղութեան դիտաւորութիւնը.
17. Սըրբութիւն.
18. Ուղղութեան հընարհները.
19. Ապտուծոյ բանը.
20. Հարունակութիւն.
21. Սուրբ մըկըրտութիւնը և Դորշմը.
22. Հաղորդութիւն, Աեղան Տեառն, Հաց Տեառն.
23. Քահանայութիւն կամ Սըրբաւլաշութիւն.
24. Ամուսնութիւն.
25. Օծումն հիւանդների.
26. Զգաստութիւն՝ այս ուղղութեան հընարները
գործ դընելու մէջ:

ԵՐԻՈՐԴԻ ՀԱՏՈՒՅՃԱ.

ԵՐԻ.

Թռէ ինչ յոյս և ակընկալութիւն ունի
քրիստոնեան հանդերձեալ կեանքումը 60 — 66.

1. Մահը.

2. Չարութիւն և անմահութիւն.

3. Ահեղ կամ վերջին դատաստան.

4. Յաւիտենականութիւն . . յաւիտենական երաւնութիւն և յաւիտենական դատապարտութիւն:

Բ. Քրիստոնեան բարյուղականութեան.

Հասարակաբար խօսուածք 66 — 68.

1. Գործելու հիմք.

2. Բարցյական օրէնք.

3. Պարտականութիւն.

4. Գործերի օրինագատշաճութիւնը
և բարցյականութիւնը.

5. Առաքինութիւն.

6. Մեղք և արատ.

7. Մեղքի հետեւանքը.

8. Քրիստոնէական պարտավճարութեան
երեք հայեցուածքը:

ԱՖ-ԸՆԴԻՆ ՀԱՏՈՒՅՃԱ.

Մեր պարտականութիւնը դէպ ի Աստուած. 69 — 74.

1. Աստուծոյ պաշտօն.

2. Երկիւզածութիւն դէպ ի Աստուած.

3. Այս երկիւզածութեան յայտնութիւնը.

4. Հնազանդութիւն դէպ ի Աստուած.

5. Հարունակութիւն.

6. Մէր դէպ ի Աստուած.

7. Հնորհակալութիւն Աստուծուց.

8. Վլատահութիւն դէպ ի Աստուած:

ԵՐԿՐՈՐԴԻ ՀԱՏՈՒՅՃԱ.

Պարտականութիւնը դէպ ի մեր անձը. 75 — 85.

1. Անայարգութիւն.

2. Անասիրութիւն.

3. Խնամատարութիւն հոգու համար.

4. Խնամատարութիւն մարմնի համար.

5. Հարունակութիւն.

6. Հարունակութիւն.
7. Հարունակութիւն.
8. Հարունակութիւն.
9. Հարունակութիւն.
10. Անձնազոհութիւն.
11. Հոգածութիւն ժամանակաւոր լստացուածի համար.
12. Ըրուայլութիւն, ագահութիւն, պընդութիւն (Ճըշդութիւն), չափաւորութիւն.
13. Հոգածութիւն իւր պատուի և բարի անուան համար:

ԵՐԵՎԱՆ ՀԱՏՈՒԵՃ.

Մեղ պայտահանութեանը քէպ է ընէլը.

- | | | |
|-----|---|----------|
| Ա. | Ընդհանուրը. | 86 – 98. |
| 1. | Թէ ի՞նչ բանի վերայ են հիմնած այս պարագանութիւնը. | |
| 2. | Յարգութիւն դէպ ի իւր եղբայրները. | |
| 3. | Ընդհանուր մարդասիրութիւն. | |
| 4. | Հոգատարութիւն մեր ընկերի հոգեոր և մարմաւոր օգտի համար. | |
| 5. | Հոգաբարձութիւն մեր ընկերների բարոյական և իմացական լուսաւորութեան համար. | |
| 6. | Մեր ընկերների պատուի և բարի անուան հոգատարութիւնը. | |
| 7. | Ստութիւն և խարեւութիւն. | |
| 8. | Կենցաղավարութիւն ընկերի հետ (խաղաղափրութիւն, հաշտականութիւն). | |
| 9. | Ախտակցութիւն, վըշտակցութիւն. | |
| 10. | Բարեբարութիւն և հաճոյականութիւն. | |
| 11. | Ծընորհայտութիւն. | |
| 12. | Օտարի սեփականութեանը ձեռնամուխ չը լինել. | |
| 13. | Հոգածութիւն իւր ընկերի առողջութեան և կենդանութեան համար. | |
| 14. | Հարունակութիւն: | |

ԶՈՐՅՈՒԴ ՀԱՏՈՒԵՃ.

Պայտահանութեանը քէպ է ընէլը.

- | | | |
|----|---|-----------|
| Բ. | Առանձինք. | 98 – 112. |
| 1. | Պատիւ դէպ ի օտարի հաւատը. | |
| 2. | Տէրութեան քաղաքացիների պարտականութիւնը. Հայրենասիրութիւն. | |

3. Հարունակութիւն. Հպատակների պարտականութիւնքը.
 4. Բարեկամի պարտականութիւնքը.
 5. Ամուսինների պարտականութիւնքը.
 6. Ճշնողների պարտականութիւնքը.
 7. Երեխայական պարտականութիւնքը.
 8. Աւատցիչների և աշակերտների պարտականութիւնքը.
 9. Պարոնների և ծառաների պարտականութիւնքը.
 10. Հարլատականների և աղքատների պարտականութիւնքը.
 11. Փորձների և հասակաւորների պարտականութիւնքը.
 12. Պարտականութիւնք դէպի օտարականները և ձանապարհորդները.
 13. Պարտականութիւնք դէպի հիւանդները, մեռածները.
 14. Պարտականութիւնք դէպի անշունչ և անբան արարածները:
-

ՍՈՒՐԵ ՊԵՏՈՎՔՐՈՒԹԻՒՆ

Հին կոտակարանի պատմութիւնք 115 — 182.

ՍՈՒՐԵԿԻ ՀԱՏՈՒՅՃԱ

Սշնկուհի սովորական հանդիպութիւններ միւսն Մակարակութիւններ .

1. Ստեղծագործութիւն.
2. Առաջին երկու մարդու կեանքը
և նոյա գըլսի անցրերը.
3. Կային և Հարէլ.
4. Կոյ.
5. Կոյի սերունդը.
6. Արրահամբ.
7. Դովտ.
8. Յակովը.
9. Յովանէփի:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒՅՃԱ

Մակարակութիւններ միւսն Սահմանակութիւններ .

1. Մովսէս.
2. Յեսու Կաւեայ.
3. Տասն և չորս Դատաւորը.
4. Արիմելէր.
5. Յեփիթայէ.
6. Սամիսոն.

7. Հեղի քահանայ.

8. Սամուել:

ԵՐԻՌՈՐԴԻ ՀԱՏՈՒՅԾ.

Սահմանական միևնույն բառներնեւ հերթական են.

1. Սաւուդ.

2. Դաւիթ.

3. Սողոմոն.

4. Յերոբոամ և նորա յաջորդը Խարայէլի արքայական աթոռի վերաց.

Արաաբ.

Յէռու.

Յերոբոամ Երկրորդը.

Ովսէէ՝ Խարայէլի վերջին թագաւորը:

5. Որբովամ և նորա յաջորդը Յուղայի թագաւորութեան աթոռի վերաց.

Ացա.

Յովսակիատ.

Ոզիաս.

Եղեկիաս.

Յովսիաս.

Մեղեկիա:

ԶՈՐԻՌՈՐԴԻ ՀԱՏՈՒՅԾ.

Բառներնեւ հերթական բառնույթաւ միևնույն բառներնեւ են:

1. Հրէից գըլսի անցըերը Բաբելոնի գերութեան մէջ և նորանից յետոյ.

2. Դանիել.

3. Երեք մարդէկիլ վառած հնոցի մէջ.

4. Տօրիթ. Հոյրը և Որդին.

5. Եզր և Կեկմիա.

6. Եղեալարոս քահանայ.

7. Եսթեր և Համան.

8. Յովսան.

9. Յովլը:

Կոր կոսակարանի պատմութիւնը 183 — 257.

Յովսաննեն Տպէլլունեւ.

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒՅԾ.

1. Յիսուսի Քրիստոսի ծընընդիցը մինչև նորա Երես-

- Նամեայ հասակը, կամ մինչեւ այն ժամանակը երբ ըստ
կըսեց իւր վարդապետական պաշտօնը.
2. Յիսուսի ծընունդը.
 3. Յիսուս մանուկը և նորա մայրը տաճարի մէջ.
 4. Արևելքից եկած մոգքը.
 5. Տասերկու տարօք Յիսուսը տաճարի մէջ։

ԵՐԿՐՈՐԴԻ ՀՍՏՈՒՅԾԸ.

Այս ժամանակից՝ երբ Յիսուսը Քրիստոսը չունեցեց իւր կարգապետական պաշտօնը, միայն նոյն մեջնէն ճանապարհութեանունուն Երանակնէն՝ լուսնի առև կուրուցու համար։

1. Յիսուսի մըկըրտութիւնը Յովհաննէս կարապետի ձեռքով.
2. Յիսուսի փորձութիւնը.
3. Յիսուսը ընտրումէ իւր համար աշակերտներ.
4. Յիսուսը ուսուցանումէ.
5. Յիսուսի Աքակիները.
 - ա. Կորուսեալ որդին.
 - բ. Այգու մըշակները.
 - տ. Յիսուսը երկնիրի արքոյութիւնը նմանեցընումը տասն կուսանիրի (կոյս աղջիկների).
 - թ. Խիրաւ տընտեսը.
 - է. Սերմանահանի մասին.
 - շ. Որո՞նը ցորենի մէջ.
 - է. Փարիսեցին և Մաքսաւորը.
 - տ. Կոչնարէրը և ընթրիքը.
 - է. Անպրառուղ թզենին.
 - ժ. Այգու մըշակները.
 - ժ. Մեծատունը և Պազարոսը։

6. Յիսուսի Հըրաշքները.
 - ա. Յիսուսը՝ ջուրը փոխումէ գինի.
 - բ. Հռոմայեցի հարիւրապետը.
 - տ. Թագաւորազնը Գալիլիայի աշխարհումը.
 - թ. Յիսուսը հինգ հացով և երկու ձընով կերակրումէ 5000 մարդ.
 - է. Մի այրի կընոջ միամօր որդի Կային քաղաքումը.
 - շ. Քանանացի կինը.
 - է. Յայրոսի աղջևից և Պազարոսի յարութիւնը.
 - տ. Անդամալցը Բեթհեղպատականի մօտ.
 - թ. Յիսուսը լուսաւորումէ մի կոյր ծընած մարդու աչքեր։

- Ք. Տասերկու տարի տեռատեսութեամբ չարչար-
եալ կինը.
- Ք. Մըրրիկը ծովի վերայ և երկու դիւահաբքը.
- Ք. Տասը բորսոքը:
7. Նիկողեմոսը Յիսուսի մօտ.
8. Յիսուս՝ Երեխաների բարեկամը.
9. Յիսուսը Սամարիայի աշխարհումը.
10. Աֆամացցը և մաքսաւորը.
11. Փըրկիչը Ամմովի տան մէջ.
12. Յիսուսի բարեգործութիւնը շարաթ օրի մէջ.
13. Մեծատուն պատանին.
14. Մարթա և Մարիամ.
15. Տիրոջ այլակերպութիւնը.
16. Զակըսու.
17. Այրի կինը գանձանակի մօտ.
18. Դըժուարացուցիչ հարցմունք.
19. Յիսուսի աշակերտների վէճը առաւելութեան մասին:

ԵՐՈՐԴԻ ՀԱՏՈՒՅՃԱ.

- Յիսուսի վերջին անհամ ժառնելուց Երուսաղեմ մինչև նորս դասուհանը Հոգ Տօռ.
1. Յիսուսի վերջին անգամ գնալը Երուսաղէմ զատկի
տօն կատարելու համար.
2. Յիսուսը տաճարի մէջ.
3. Յիսուսը սահմանադրութ; Հաղորդութեան խորհուրդը.
4. Յիսուսը Գեթսեմանի գեղումը.
5. Յիսուսը հարցաքըննումեն ատենի մէջ և դատապար-
տումեն առ ի մահ.
6. Պետրոսը ուրանումէ իւր վարդապետը.
7. Յիսուսը մեռանումէ խաչ վերայ և թաղվումէ.
8. Քրիստոս յարեաւ ի մեռելոց.
9. Յարուցեալը Երևումէ իւր աշակերտներին. Յիսուսի
վերջին կենակցութիւնը նոցա հետ.
10. Յիսուսի դարձը իւր Հօր մօտ:


ՉՈՐՐՈՐԴԻ ՀԱՏՈՒՅՃԱ.


Քիւրունէռնէրան առաջին դաշտում Ապոստոլը յետուն.

1. Հոգւոյն սըրբոյ առաքումը.

2. Պաւլոս.

Վերջաբան:





ՀՀ Ազգային գրադարան



NL0339556

